



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1897

Յ Ո Ւ Ն Ի Ս

1897 № 6

Ի Ն Ն Ե Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի

	Երես	
1 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.	751	Անդադր (փիլիսոփայական զրույց)
2 ՊՈՒՇԿԻՆԻՅ Յ. ՏԷՐ-ԳԵՈՐԳԵԱՆ	774	Աւաղակ եղբայրներ (պոեմա):
3 ԱՐՂՈՒԹԵԱՆ, ՍՈՖԻԱ ԻՇԽ. . .	782	Հաւատն ինձ կը փրկի: Կանանց խնդիր. (վերջ)
4 ՇԱՆԹ.	802	Պանթաղի (բանաստեղծութիւն):
5 "	803	Տուր նախածքդ (բանաստեղծութ.):
6 ԿՈՒՍԻԿԵԱՆ, Կ.	804	Բանաստեղծ քաղաքացի: — Ու. Պատկանեան (վերջ):
7 ԶԱՐԳԻՃԵԱՆ, ԱՐԱՄ.	827	Հալ պոետին (բանաստեղծութ.):
8 " "	828	Անդրշիրմեան իդձ (բանաստեղծ.):
9 ՎԱՆՅԵԱՆ, Գ.	829	Հալեւի նազաւնութիւնը:
10 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	848	Անգլիան Վիկտորիայի ժամանակ:
11 ՎԱՐԿԱՆԵԱՆՅ, Գ.	862	Գ. Բարկենցի—«Նորեկ»:
12 Ա. Ա.	866	Տէր-Միքայէլեանցի—«Ալբրեհտարան»:
13 Յ. Տ.-Մ.	869	Հալուհու—«Մօքոս»:
14 ՎԱՆՅԵԱՆ, Գ.	870	Յովնանեանի «Հետադարձութիւնը նախնեաց ուսմանին վրայ»:
15 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	873	Ժամանակակից Տեոսթիւն: — Գաւառական ինքնալարութեան խնդիրը Կովկասում. II:
16 Ա.	886	Թաւրոնի շուրջը:
17 ԽՄԲ.	889	Չանաղան լուրեր:
18 ԽՄԲ.	910	Բովանդակութիւն Մուրճ № 1—6:


Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротшидана, Гол. пр., д. № 41.

1897



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1897

Յ Ո Ւ Ն Ի Ս

1897 № 6

ԻՆՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ա. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр. д. № 41.

1897

Дозволено цензурою. Тифлисъ, 12-го Іюня 1897 г.

ԱՆՅԱԳԸ

(Փիլիսոփայական զրոյց)

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ

«...Եւ տեսալ որ մարդկութիւնը խորին կեղծութեան մէջ է սնանուում եւ նրանով երջանիկ համարուում.

«Եւ տեսալ, որ ալգ ահաւոր կեղծութիւնը անկեղծութեան զիմակով է ապականութիւն սփռում...»

«Եւ մահու չափ վշտացալ...»

Մի հին գրքից.

I

Այնտեղ հեռու, Արաբիայի մի անդորր անկիւնում, սրանից շատ ժամանակ առաջ, ապրում էր մի իմաստուն։ Յրիտասարդութեան տարիները անցկացնելով նա կեանքի մէջ, փորձել էր նրա քաղցրութիւնը, նրա թոյնը և երկար ուսումնասիրել-հետախուզելուց յետոյ եկել էր այն եզրակացութեան թէ՛ քանի մարդուս գոյութեան վերջնական նպատակը անյայտ մնաց, խուսափի մեր հասկացողութիւնից այնքան կեանքը մնալու է միշտ այսպէս դառն ու տանջալից։

Ինչո՞ւ ապրել, ի՞նչու ծնել և ինչո՞ւ մեռնել. ի՞նչ էր այդ բոլորի նպատակը։ Ինչու աշխարհի, տիեզերքի գոյութիւնը. զէպի ի՞նչ նպատակի էր ձգտում տիեզերային այն յորձանքը (tourbillon), որի իւրաքանչիւր հիւլէն ճախրում է, շարժւում անընդհատ, անհանդարտ և չաւիտեան...

Ի՞նչու մարդուս—իրեն գոյութիւնը, մահն ու ձեւափոխութիւնը։ Այդ բոլորը ի՞նչ լէրջնական նպատակի է ծառայում։ Դէպի

սուր է դնում գոյութեան յորձանքը—այդ բազմակնճիւռ, միմեանց արտադրող, միմեանց ոսնատակ անող ու կլանող, միմեանց ծնող ու մեռցնող օրգանական էութիւնը...

Այդ և այդպիսի այլ հարցեր տանջում էին իմաստունին, որովհետև ոչինչ չէր գտնում, ոչինչ չէր թափանցում: Որքան աշխատում էր ինքնախաբէութեամբ մտածել, որ այդ բոլորը այս ինչ կամ այն ինչ նպատակի համար էր, բայց երբ վերլուծում էր «այդ ինչ» կամ «այն ինչ» նպատակը, գտնում էր որ դրանք ոչ թէ նպատակներ էին, այլ միջոցներ միայն, հասնելու դէպի մի անյայտ, խորհրդաւոր ու անհասկանալի նպատակի. միջոցներ, որոնք երկար քննելուց յետոյ և ոչ իսկ գլխաւոր էին թւում, այլ շնչին, յաճախ ստորացուցիչ և բուսական...

Ի՞նչ անել ուրեմն. չ'ապրել: Բայց մի՞թէ եթէ մեռնէր՝ պիտի հասկանար: Ո՞վ կարող էր երաշխաւորել որ մեռնելուց յետոյ պիտի ունենար փնտռելու, խուզարկելու տենչանք կամ հոգեկան գոյութիւն. և կամ եթէ նիւթական մարմնից դուրս գնար, հոգեկան էութեամբը կարճ պիտի լինէր հասկանալ մեծ ու խորհրդաւոր նպատակը:

Որ այդպիսի մի վերջնական նպատակ պէտք է լինէր—դրա մէջ նա համոզւած էր. որովհետև չէր կարող ըմբռնել թէ ինչպէս կարելի էր որ այդ ներդաշնակաւոր, որոշ օրէնքների ենթարկւած յորձանքը չունենար մի կէտ նպատակի և որ այդ բոլորը գոյութիւն ունենար աննպատակ, դիպւածով միայն. .

Եւ երբ մտաւ իմաստունը այդպիսի բնազանցական խնդիրների մէջ, պահ մի կասկածեց թէ գուցէ ոչ մի նպատակ գոյութիւն չ'ունէր: Բայց դա մի ակնթարթ միայն տևեց, որովհետև համոզւած էր որ այդ այդպէս չպէտք է լինէր, որ կ'սր մի վերջնական, ծայրագոյն նպատակ և որ այս բոլորը ձգտում էր դէպի նա, գործում էր՝ նրան հասնելու համար...

Բայց զորն էր այդ նպատակը. ինչո՞ւ ուրեմն թաղնւում էր նա, եթէ կար. ինչո՞ւ ոչ իսկ հասկացողութեան համար մատչելի էր լինում, ոչ իսկ մտովին հնարաւոր էր լինում երևակայել:

Եւ երբ խորապէս գիտակից եղաւ դրան, մահացու տանջանք զգաց:

Մոլորած, ընկճած, այդ ծանր հարցերի տակ ծիւրում էր, երբ նրան խորհուրդ տւին գնալ պտտել, օդ ծծել և իր տանջանքը մեղմացնելու համար ճանապարհորդել:

Լսեց իմաստունը: Ո՞վ գիտէ, մտածեց նա, դուցէ հիւանդ եմ և դրանից է որ այսպիսի փիլիսոփայական յուսահատեցուցիչ մտքերով ճնշւում եմ: Փորձեմ զւարճանալու. դուցէ, ստամոքսս յափրացնելով, տրամաբանական այդպիսի թռիչքներ չ'անեմ այլ ևս և բաւականանամ անտրամաբանութեան մէջ բոյսի պէս աճելու:

Ու գնաց: Մի կողմից էլ մտադրեց ճանապարհին հանդիպած այնպիսի անձերից, որոնք նրա ուշադրութիւնը կը հրաւիրէին իրենց վրայ, հարցնել այն բանի մասին, որն իրեն յուսահատեցնում էր:

Քայլեց նա շատ երկար ու մի ամսից յետոյ հասաւ մի սուրբ երկիր, ուր կանաչ, կապոյտ ու սպիտակ փաթթոցաւոր գլուխներ վիտտում էին քաղաքների փողոցներում, ուր մինարէների ծայրերը համբուրում էին երկնքի վրայից սահող ամպերի և ուր վանքեր և ուխտատեղիներ աւելի շատ էին քան աղօթողներ և ուխտաւորներ:

Երբ քաղաք էր մտնում, կամուրջի վրայ մի մեծ իրարանցում տեսաւ և ձիաւորների հանդիպեց, որոնք երկար գաւազաններ ձեռքերին՝ սրարշաւ զաւլիս էին և դռնում:

—Ճանապարհ, ճանապարհ...

Քիչ մնաց ուղքի տակ զնար: Ետ թռաւ ու կպաւ կամուրջի թմբին: Մի բոպէից յետոյ, երբ 10—15 ձիաւորներ անցել էին, անցաւ նաև ոսկեզոծ ու շքեղ մի կտոր, որի մէջ բազմել էր երկար մօրուքով պատկառելի սպիտակագգեստ ծերունի, մի ձեռքին ոսկեձոյլ կոթով դաւազան, միւսում սաթէ վարդարան: Եւ ծերունու վարդագոյն նուրբ շրթունքները շարժւում էին, աչքերը կարծես մոռացել էին այս աշխարհը...

—Ահա մի սուրբ կրօնաւոր, մտածեց իմաստունը և հարցրեց թէ ով էր անցնողը:

—Մի՞թէ չգիտես. դա հաւատացեալների մեծ կրօնապետն է, մի իմաստուն մարդ:

—Իմաստուն:

—Այո, չկայ մի բան որ չ'իմանայ:

Իմաստունը մտածեց թէ արդեօք չգիմէ՞ր այդ կրօնաւորին հարցնելու այն բանի մասին, որն իրեն տանջում էր:

Իմացաւ թէ որտեղ էր ապրում մեծ կրօնապետը և ընտրելով երեկոյեան ժամանակ որ կարողանար աւելի երկար խօսել ծերունու հետ, գնաց նրա պալատը:

Ամբողջ փողոցը լիքն էր ամեն կարգի ու տեսակի կրօնաւորներով, որոնք կկղած ապարանի այս այն պատի տակ, սենեակի մէջ, ուտում էին, խմում և զւարճանում: Նրան չ'արգելեցին և նա հապաւ այն բազը, ուր շինւած էր իմաստուն կրօնաւորի առանձնարանը:

Ներս մտաւ: Կրօնապետը մի քանի ուրիշ խնդրարկունների հետ մեծ քաղցրութեամբ խօսելուց յետոյ, դարձաւ իմաստունին և հարցրեց սիրալիր.

— Իսկ դո՞ւ, որդի, դո՞ւ ինչ ունիս հարցնելու:

Իմաստունին զիւր եկաւ այդ համեստութիւնն ու սիրալիրութիւնը. սիրտ առաւ, մի վայրկեան ամփոփեց միտքը և ապա այսպէս խօսեց.

— Ով պետ հաւատացեալների—ասաց նա—ես գալիս եմ հեռու տեղից: Կեանքս ամբողջ անցուցի կեանքն ու մարդիկ, բնութիւնն ու իր զաղանիքները, իր օրէնքներն ու ներդաշնակութիւնը ուսումնասիրելու մէջ և այսօր, երբ գրեթէ գիտեմ ինչ որ կարելի էր գիտենալ, գտնում եմ որ դեռ ոչինչ չեմ հասկացել: Սա յուսահատական չէ...

Կրօնապետը թափանցող ակնարկով նրան նայեց երկար և ապա շփելով մօրուքն ասաց.

— Դու իրաւունք ունիս. այդ հարցը տանջել է նաև ինձ. դրանից յուսահատական բան չկայ, երբ մարդ գիտէ որ ինքը ոչինչ չգիտէ. երբ երկար յոգնելուց, իր ամբողջ կեանքը զոհելուց յետոյ տեսնում է որ ուսել է միայն սովորելը և դեռ նոր պիտի սկսի հասկանալ. այն ժամանակ միայն, երբ այլ ևս յոգնել է, մաշել...

— Այդպէս չէ, հայր իմ, միջահատեց նրան իմաստունը—այնքան սպանիչ չէ երբ տեսնում է որ դեռ նոր պիտի հասկանայ, այլ երբ տեսնում է որ չպիտի հասկանայ. երբ իր ամբողջ էութեամբը ուսանելու նւիրւելուց յետոյ, գալիս է այն եզրակացու-

Թեան թէ իզուր էին այդ բոլորը, որովհետեւ ոչինչ չէր կարողանալու հասկանալ և թէ իր բոլոր տանջանքը միայն նրա համար էր որ համոզւի թէ ոչինչ չգիտէ, և, որն աւելի սպանիչ է—ոչինչ էլ չէ կարողանալու գիտենալ:

—Այդ էլ ճիշտ է, որդիս, ասաց կրօնապետը—մարդս, ինչ որ կուզի թող անի, չէ կարողանալու ըմբռնել Աստածային գաղտնիքները...

—Ներեցէք հայր, միջահատեց նորից իմաստունը—իմ ամբողջ վիշաքը նրանումն է թէ ինչո՞ւ չեմ կարողանում կամ ինչո՞ւ մարդս չէ յաջողում ըմբռնել, զօրեղ երեւակայութեամբ անգամ ենթադրել գաղտնիքը. թէ ի՞նչն է արգելք լինում այդ կարելիութեանը, ինչո՞ւ է որ կարելի չէ լինում թափանցել, հասկանալ...

Կրօնապետը գլուխը խոնարհեցրեց, երկար և լռութեամբ դարձրեց վարդարանի հատերը, օրօրեց ու մտածեց, յետոյ գլուխը նորից բարձրացրեց ու ասաց խուլ ձայնով.

—Միայն մի խրատ կայ քեզ տալու, որդեակ, միայն այդ խրատը...

Ու աջ ձեռքը դէպի երկինք բարձրացնելով, ասաց.

—Դիմիր բարձրեալին և նա թող կամ լուսաւորէ քո միտքը և կամ խաւարեցնէ. որ կամ գտնես ինչ որ փնտռում ես, կամ թէ չ'ոչնեմաս փնտռելու այդ փափագը... Դիմիր Աստծուն, ներիր քեզ նրան և տէր ընդ քեզ...

II

Նւիրւել Աստծուն!

Արդեօք այդ նւիրւելը պիտի հասկացնէր նրան, աւելի՞ գիտակցական ու աւելի՞ բարձր մտային մթնոլորտի պիտի հասցնէր և արդեօք դա՞ պիտի լինէր փնտռածը գտնելու միջոց:

Եւ ի՞նչպէս նւիրւել: Հազնել քուրձ, քաշւել մի խղիկ, ծով պահել, տանջել իր անձը, զրկւել ամէն բանից և ինքն իր մէջ ամփոփւելով խորհել միայն երկնային մտացածին բաների վրայ?

Ու երբ երկար մտածեց իմաստունը, գտաւ որ Աստծուն նւիրւել՝ նշանակում էր ձգտել դէպի նա, այսինքն դէպի ամենակատարեալ մի նպատակի:

Բայց չէ որ հէնց դա էր փնտռածը:

Ուրեմն հարկաւոր էր փորձել. բայց ոչ թէ մենակեցութեամբ ու ձգնութեամբ, այլ ձգտելով դէպի նա, տանել իր հետ իր ամբողջ շրջապատողներին էլ: Հաւատալ և հաւատքի բերելով բոլորին, դործել միահամուռ ուժով՝ հասնելու այդ նպատակին:

Ու տխուր էր նա երբ իջաւ այդպէս դէպի Աստծուն նւիրւելու նպատակը և սկսեց խորհել դէպի նրան հասնելու միջոցների վրայ:

Այնուամենայնիւ գնաց նա ժողովրդեան մէջ ու սովորեցրեց Աստուածի: Սովորեցրեց գիտենալ և գիտենալու համար էլ ուսանիլ. այսինքն կասկածել. զննել, վերլուծել ու բազադրել: Սովորեցրեց լինել անկեղծ ու համեստ, սովորեցրեց ոչ թէ վախենալ Աստծուց, այլ սիրել նրան, ոչ թէ նրան ստրուկ համարել, այլ որդի, ոչ թէ պատիժ մտածել, այլ վարձատրութիւն և ձգտել նմանելու այն երեւակայական մարդ-տիպարին, որն հրեշտակ է կոչուում և որին իսկապէս գուցէ նման դառնայ ապագայ մարդը նոյն իսկ Ֆիզիքսպէս, այսինքն մի զլուխ և մի զոյգ թւեր նրանցով սրանալ—կտրել թափանցելու համար անհասկանալի, հեռւոր և ծայրագոյն նպատակը: Սովորեցրեց հրեշտակ լինել այդպէս:

Եւ քարոզեց նա այդ կրօնը: Մի կրօն, որի միջից դուրս նետեց կեղծիքն ու ստրկութիւնը, վախն ու պատիժը, չարիքն ու լրբութիւնը, պատւարն ու մտավախութիւնը: Մի կրօն, որի տաճարը բնութիւն էր, Ս. գիրքը՝ բնութեան օրէնքները, սեղանը՝ գիտակցութիւնը և պատարագը՝ գործունէութիւնը...

Ու մարդիկ լսում էին նրան ապշած, սրտի խորքից վրդովւած ճշմարտութեան զուտ խօսքերով, անկեղծ ցուցմունքներով:

Եւ երբ անցնում էր նա երկիրներից, ուսուցանում էր փարիսեցիների դէմ, սովորեցնում պարզութիւն ու սէր, գիտակցութիւն և քննադատութիւն... յանկարծ, մոլլայական ամբողջ դասակարգը, կատաղած այդ «հերետիկոսի», հերձաճողի, խռովարարի և աղանդաւորի դէմ, մի օր, երբ նա ոգևորւած սրաթուիչ երազներով, ապագայ մաքուր և երջանիկ կեանքի մասին էր խօսում, բռնեցին ու տարան բանտ:

Բանտի մէջ իմաստունը բաւական երազեց. բայց երբ դուրս եկաւ իր էքստազային վիճակից և հանգստացաւ, սկսեց խորհրդա-

Ծել իր դրութեան մասին: Ինչո՞ւ էին բռնել իրեն, ինչո՞ւ բանտարկել: Որովհետեւ նա դործել էր կեղծութեան դէմ և դործել էր համարձակ ու անվախ, համոզւած լինելով որ այդ էր միակ ճանապարհը դէպի կատարեալը ելնելու, դէպի բարձրը ձգտելու?... Ախ', որքան խոր կերպով վարժ էր կեղծիքի՝ աշխարհն ու մարդկութիւնը, մինչև իսկ վարժ՝ կեղծիքն իբր անկեղծութիւն ընդունելու և ապշել էր, յուզւել, երբ լսել էր նրա քարոզած որոշ, անգոյն ու անդիմակ ճշմարտութիւնները:

Եւ այն դասակարգը, որ դարերից ՚ի վեր յեղաշրջել էր անկեղծութիւնը՝ կեղծութեան, պարզ ճշմարտութիւնը խեղտել էր բարդ ստութիւնների մէջ—այդ դասակարգը, շգալով վերանորոգչին՝ ուղեցել էր աղատուել նրանից:

Անշուշտ այդպէս էր որ բռնել էին Նազովրեցուն, զրա համար էր որ խաչել էին նրան—ստութեան ու կեղծիքի դէմ՝ քարոզող և անկեղծութեան ու ճշմարտութեան մեծ զոհին: Եւ անշուշտ, Նազովրեցին, երբ զնում էր դէպի խաչը, նոյնն էր մտածել. խորհել էր որ խաչում էր յանուն ճշմարտութեան, յանուն ամենակատարեալի...

Անցել էին դարեր, շատ շատերը նոյն կերպով խաչւել էին ու տանջւել, որովհետեւ ցեխի կոյտի միջից համարձակւել էին դէմ ելնել այն եօթնազլխեան հիդրային, որ կեղծութեան կրակի մէջ սպանում է ամբողջ մարդկութիւնը...

Այդպէս էր խորհում իմաստունը նստած իր բանտի խոնաւ յատակի վրայ, երբ դուռը ճռնչաց, երևեց մի աղօտ լոյս և մի ծերունի առաջ եկաւ դէպի նա:

Հաւատացեալների մեծ կրօնապետն էր լապտերը ձեռին, տխուր, տժգոյն ու դողդոջիւն:

Երբ մօտեցաւ, երկուսն էլ իրար նայեցին: Երկար ժամանակ էր անցել միմեանց տեսնելուց ՚ի վեր և կրօնապետը խիստ ծերացել էր, գրէթէ զառամել:

—Ողջոյն, ծերունի, խօսեց իմաստունը—քեզ երկրորդ անգամն է տեսնում եմ. տարիքիցդ առաջ ծերացել ես:

Նստեց ծերունին գիտնի վրայ, իմաստունի կողքին և դողդոջիւն ձայնով ասաց.

— Ես ծերացել եմ այո, ով իմաստուն. իսկ դժ... դու երիտասարդացել ես: Տեսնում եմ աչքերիդ մէջ աչն կրակը, որը չի մարում բանտի խաւարի մէջ իսկ և որ լոյս է սփռում աչնտեղի խորշերում. աչն կրակը որ գոյանում է խորին համոզմունքով և անկեղծութեամբ հաւատացած իդէալի գոյութիւնից: Գուհաւատացել ես, անկեղծութեամբ հաւատացել նպատակին, քո բոլոր կեանքի մէջ կեղծութիւն չես դրել, գործունէութեանդ մէջ ստու-թիւն չես ամփոփել և դա քեզ կեանք է տւել... Ձգիտես, իմաստուն, թէ որքան է մաշում մարդու՝ գիտակցական կեղծիքն ու ստութիւնը. երբ մարդ զիտէ որ կեղծում է, գիտէ որ ստում է և աչնու ամենաչնիւ ստիպւած է կեղծել ու ստել: Գիտես որ խաբե-բայութիւն է այս ինչը կամ աչնինչը և ստիպւած ես կեանքիդ ընթացքում կատարել նրան ու մինչև իսկ զգոյշ լինել չսխալելու, կատարել ու պնդել նորան, պնդել ու քեզ համոզւած ձեւացնել նրա ճշմարիտ լինելու մէջ. . Ձգիտեմ որդի, դու ինձ հասկանում ես, թէ ոչ:

Իմաստունը ծնօտը ձեռքերի մէջ առաւ, նայեց տեղոյն ալեորին և պատասխանեց.

— Քեզ ես հասկանում եմ... Ձեռք եկել արդեօք իմ տեղս խընդ-րելու, իմ շղթաներիս ընկերակցելու...

— Այո, հասկացար ինձ... օրհնեալ լինիս... այո, շատ ապրեցի մաշող ստութեան փառքի մէջ, երանի թէ կարողանայի մեռնել գոնէ մաքուր ճշմարտութեան շղթաների տակ...

Ու երկուսն էլ լուռ, երկուսն էլ մշտաւից էին: Մէկն իր վըշտով, միւսը իր նմանի ամենջանքով:

Վերջապէս իմաստունը ոտքի ելաւ, դարձաւ կուշ եկած ծերունուն և ասաց տխրութեամբ:

— Ե՛ս առ ուրեմն խրատդ, հաւատացեալների պետ, որովհե-տե նրան ինձ տալու ժամանակ իսկ՝ դու լաւ գիտէիր որ կամ հարկաւոր էր շղթայ վաստակել և կամ՝ կեղծել... Ես չկեղծեցի. նւի-րեցի ինձ ամենապատարեալի, պատուար դրի անհունութեան մէջ մոլորեող իմ խորհրդածութեան, կասկածի և վարանման առաջ, ծառայեցի ո՛չ թէ իմ մարմնի զոհացման, այլ հոգեկան բարձ-րութեան, հասկանալու համար և տեսա՜յ որ հոգեկան անգոհու-

Թիւնը խենթութիւն, հիւանդութիւն է համարուում... «Կեր, խմիր, զւարճացիր միշտ» ասում էին ինձ—և ոչ կը խորհես, ոչ մտային, խորհրդածական տանջանք կ'ունենաս, ոչ կը կասկածես և ոչ էլ մտային սլացումների կը ձգտես... Իսկ ինձ սխալ ճանապարհի վրայ դրիր, ծերունի.

Ու Թոթափեց իրեն իմաստունը. և նորից փնտռողութեան անյատակ վիճ դոյացաւ նրա մտածութեան մէջ: Նորից ձգտումն դէպի ծայրագոյն նպատակի ըմբռնողութիւնը, նորից հարցական մեծ նշան, էնիգմա, նորից կասկած...

Ու մի րոպէի մէջ մարեց նրա աչքերի կայծը, կնճռաւեց նրա ճակատը: Նւ նա տխուր էր, յուսահատ: Ինչո՞ւ այդ բոլորը, դէպի ո՞ւր և դէպի ի՞նչ նպատակի էր ձգտում օրհեղերային յորձանքը, այդ բոլոր թէ՛ կեղծ, թէ՛ անկեղծ, թէ՛ սուտ և թէ՛ ճշմարիտ մոլեգին շարժումը, առաջդիմութիւնը, եռանդազին պտոյտը...

Եւ թէ ի՞նչու էր թագնւում նա՝ որին ձգտում էր ամէն ինչ, ինչն էր նրան ծածկում, անհասկանալի դարձնում...

III

Նրան ազատեցին բանտից: Մեծ կրօնապետը հաղիւ կարողացաւ հանել կրօնաւորութեան ճիրաններից, խենթ հռչակելով միայն:

Ու գնաց իմաստունը գլխիկոր, շտարած: Ամեն ինչ այլ ևս կեղծ էր թւում նրան: Նա ականատես էր եղել աւազակների, որոնք տաճարների դռներն էին համբուրում և բարեպաշտ հռչակում. հարստահարողների, որոնք Աստուծոյ սեղանի կանթեղի մէջ իւղ էին լցնում և մոլլաների, որոնք այդ բոլոր խաբեբաներին ու կեղեքիչներին օրհնում էին, նրանց բարեպաշտութիւնը հռչակելով և Աստուծոյ սլաշտամունքը նրանց ծառայեցնելով...

Եւ տեսել էր նա որ ժողովուրդն ամբողջ գոհ էր այդ փոխադարձ, սխտեմատիկական կեղծիքով, գոհ՝ խաբէութեան մէջ, սովոր նրան, շնչում էր նրանով, մեծացել էր ու սնել նրա մէջ ու ճշմարտութիւնը սարսափեցնում էր նրանց, անկեղծութիւնը մահացնում...

—Այս ժողովուրդը ոչ թէ օդ է շնչում, այլ կեղծիք և սուտ:

Ասաց իմաստունը և գնաց դէպի անապատ, հեռու ամբօխից, զգլած նրա կեղտերից:

Երկար նա քայլեց, շատ երկար. վայելեց անապատի միացնող-
թիւնը, որոնեց, խորհեց, օրերով իրեն նւիրեց խնդրի լուծումը
գտնելուն. բայց քանի խորհրդածում էր, քանի վերլուծում, քանի
որոնում էր, քանի հարցը քրքրում, այն զգում էր որ ոչինչ չէ
գտնում ու ոչինչ չէր գտնելու...

Եւ մի օր, երբ աննպատակ քայլում էր ամաչի տեղերում,
դէմ առ դէմ եկաւ մի կարավանի, որ իջել արմաւենիների տակ՝
հանգչում էր: Երկու աղաներ էին, 5—6 ծառաներ: Տէրերից մէկը,
որ մի պատկառելի ծերունի էր, հրաւիրեց իմաստունին մօտ գնալ,
նստել իրենց սեղանի մօտ և հանգստանալ զովացուցիչ ըմպելիներով:

Ու երբ զովացրել ու կշտացրել էր նրան, այսպէս ասաց.

—Ներիր, դէրժիշ, եթէ հարց տամ քեզ թէ ի՞նչու համար
ժամանակդ անց ես կացնում՝ թափառելով այս անապատի մէջ.
արդեօք կարծում ես թէ Աստուած ամաչի տեղերի մէջն է և դու
նրան կը գտնես աղօթքներով ու ճգնութեամբ. կամ արդեօք կեանքը
քեզ համար այլ ևս ոչինչ չ'արժէ և դու կեանքի համար ոչ մի
օգուտ չունիս. թէ՞ արդեօք դու մի յուսահատ մարդ ես, որ ոչ մի
նպատակ չունի և ապրում է մինչև մեռնելը՝ աննպատակ ու ան-
տարբեր...

Իմաստունը որ լսում էր ծերունուն, դառն ժպիտ դէմքին՝
թողեց որ նա վերջացնէր և ապա պատասխանեց.

—Իսկ դու, ծերունի, ասաց նա—դու, որ կեանքը տեսել ես
և երկար վայելել, ասա ինձ, ունի՞ս նպատակ և եթէ ունիս, որն
է այդ. վերջականապէս ինչի՞ ես ձգտում, ի՞նչ է քո ապրելու, գո-
յութեանդ նպատակը...

Ու նրա աչքերի մէջ փայլեց գիտնալու և իմանալու փափագի
մի այնպիսի բուռն կրակ, որ նրան լսողները վախեցան: Վախեցան
այդ ահաւոր և խորին փափագից, այդ անյագ ու անվերջ ցանկու-
թեան անշէջ կրակից:

—Ասա ինձ, շարունակեց իմաստունը—դու, որ կարծում ես
թէ միացնութեան ու ինքնամոռացութեան մէջ չէ նաև երջանիկ
անգիտութեան ապաւէնը, դու որ մղում ես ինձ նետելու

Վեհափառի մէջ, կարծում ես թէ կարող ես ցոյց տալ ինձ ծայրագոյն նպատակը և նրան գնալու ուղիղ ճանապարհը .. խօսիր.

Բայց ծերուն շիւղե մօրուքը և փոխանակ ոգևորելու, փոխանակ քաջութեամբ պատասխանելու և վառած գիտակցութեան կրակով՝ անյոյս իմաստունին ուսուցանելու—կորացրեց զլուսը և մեղմ, խուլ ձայնով ասաց.

—Մեծ է և խոր, անհուն է և անսահմանափակ քո փափագը, զէրւիշ, և իմ գիտցած, իմ գտած նպատակը շատ փոքրիկ է, շատ չնչին դրա համեմատութեամբ...

—Ահ, այդպէս, բացակոնչեց իմաստունը—ուրեմն դու էլ բաւականացել ես միջոցներից մէկը ընտրելով իբր նպատակ. քեզ խաբել ես և նրանով ոգևորել, մտածութեանդ անհունութիւնը պատւարել ու փոքրիկով գոհ եղել: Ասա տեսնենք բայց, որն է զոնէ այդ միջոցը, որին դու նպատակ ես անւանել: Ատո՞ւն նւիրւե՞լն արդեօք. գնալ կեղծիքի մէջ փառքի, կամ ճշմարտութիւնով խենթութեան անւան և շղթայի արժանանալ. յանուն Մեծ—անյայտի խաբել, ստել և ստութեան մէջ ընկղմելով շրջապատդ՝ օգտւել նրա կուրութիւնից և մարմինդ պարարել ու ճարպացնել և կամ այնքան խաբել, որ խաբէութիւնը նւիրագործելով իբր ճշմարտութիւն համարել... Օ, դրանք ես տեսայ, փորձեցի և գտայ որ մեծ նպատակը, վերջին, ծայրագոյն նպատակը խուսափում է, թաղնում մեղմից, որովհետև մի բան արդելք է դառնում մեղ հասկանալու, գիտենալու նրան...

Երկրորդ տէրը, որ մի երիտասարդ էր, սակայն բովածի ու փորձածի դիմագծերով և որ լռութեամբ լսում էր իմաստունին, յանկարծ մի թեթև շարժում գործեց, ընդհատեց նրան և ասաց.

—Մի խօսք, զէրւիշ:

Նրա ձայնը մեղմ էր բայց խոր և թափանցող. իմաստունը վառ գառաւ և լսեց: Այն ժամանակ երիտասարդը, ճակատն ափօսած մտախոհական կնճիւռներով, խօսեց ծանրութեամբ.

—Իսկ այժմ—ասաց նա—ասա ինձ ով իմաստուն, որոնող ու անյադ զէրւիշ, ասա, դու որ տանջւում ես այդքան՝ չգտնելով թէ ուր է գնում այս բոլորը, կարո՞ղ ես ասել զոնէ թէ որտե-

ղից է եկել նա, ինչից գոյացել և թէ վերջապէս ինչպէս, ինչո՞ւ և որտեղից է էութիւն ստացել առաջին հիւլէն...

Իմաստունը մի քիչ լռութեամբ նայեց երիտասարդին, յետոյ ձեռքը նրա ուսին դրաւ և ասաց.

— Տանջւիր, երիտասարդ ընկեր, տանջւիր դու էլ. երկուսիս հարցը նոյնն է, երկուսս էլ դէպի նոյն անըմբռնելի նպատակն ենք գնում, չնայելով որ դու փնտռում ես ծագումը, իսկ ես վերջը Բայց երկու ծայրերը մօտենում են իրար. ամեն ինչ, ինձ թւում է, որ կը որ է բնութեան մէջ, նիւթ կամ մտածութիւն. եթէ վերջը փնտռես՝ ծայրին ես հասնելու. ծայր ու վերջ՝ միեւնոյն կէտից են բաժանւում և միմեանց հակառակ գնում: Ամեն ինչ պտոյտ է գործում, մի անհուն, անըմբռնելի պտոյտ, որի մէջ ոչ ծայր է երևում, ոչ վերջ, ոչ սկիզբ, ոչ վախճան, այլ միայն անսկիզբ ծագում, անվախճան տեղութիւն... Բայց ի՞նչու այդ, ի՞նչ մի վերջնական նպատակի համար— ահա այդ է գլխաւոր առեղծւածը. մի՞ փնտռիր սկիզբ, այլ նպատակ. մի՞ սրունիր սկիզբ— չես գտնելու— այլ փնտռենք քեզ հետ թէ այդ պտոյտը ի՞նչու է գործւում, ի՞նչ մի ծարագոյն նպատակի համար...

— Դու բնագանցագէտ (մետաֆիզիկ) ես, ասաց երիտասարդը բարձրանալով— և քանի փնտռես, այնքան պիտի խորասուզես առեղծւածների, անհասկանալի ու բնագանցական եթերի մէջ և ոչինչ չես գտնելու, ոչինչ իմանալու... որովհետեւ բնութիւնից դուրս ես գնում:

— Իսկ դո՞ւ, ժպտեց իմաստունը— Դու, որ բնագէտ ես, կարծում ես քանի փնտռես այնքան պիտի լուծես բնութեան գաղտնեքն և հասկանալի եթերի մէջ մի բան գտնես, մի բան իմանաս? Դու կարծում ես որ պիտի հասկանաս, որովհետեւ բնութիւնից դուրս չես գնում...

— Ինձ թւում է որ, ասաց երիտասարդը— բնութիւնը դեռ շատ և շատ գաղտնիքներ ունի իր մէջ՝ զբաղեցնելու արարածներին յաւիտենապէս և ժամանակ չտալու որ նոքա դուրս գան անհունութեան մէջ՝ մոացածին բաներով զբաղւելու: Ճանաչել ես օրինակ հէնց այն աշխարհը, որի վրայ կեանք ես վարում, այն օրէնքները, որոնք այդ աշխարհն են կառավարում, փոփոխութեան

ենթարկում, նրա արարածների վրայ ազդում, աճեցնում, մեռցնում, ձևափոխում և կերպարանափոխում... Ճանաչել ես այն հողը, որի ծնունդն ենք մենք, առանց որի չենք կարող ապրել մենք և որի մէջ ենք վերադառնալու մենք. այն բազմաթիւ տարրերը որոնցից բաղկացել ենք մենք և որոնցից առնւած լինելով, պիտի էլի լուծւենք ու նրանց խառնւենք. ճանաչել ես այն վերի պսպղուն աշխարհները, այն արեւը, որոնք փոխադարձ ազդեցութիւնով երազել են տալիս մեզ անհունապէս միմեանցից կատարելագործւած մոլորակների և նրանց վրայ գտնուող միմեանցից կատարեալ օրգանական կեանքի մասին... ճանաչել ես նոյն իսկ այն նիւթը որից առաջացել են տարրերը քիմիական դեռ ևս շատ խորհրդաւոր պրոցեսներով և որը իր անընդհատ շարժողութեամբ, անընդհատ կերպարանափոխութեամբ ով զիտէ ապագայում քանի հարիւրաւոր տարրեր, քանի հաղարաւոր քիմիական բաղադրութիւններ և հետեւապէս քանի միլիոնաւոր տեսակ էակներ կը լեցնի բնութեան մէջ. այն նիւթը, որ մայր է ամեն ինչի... ճանաչել ես այդ բոլորը, որ թողած դրանք, որոնում ես թէ ի՞նչու է թագնւում այդ նպատակը: Այդպէս չէ, իմաստուն: Արարչին կամ արարչագործութեան նպատակը ճանաչելու համար ամենից առաջ հարկաւոր է լաւ ճանաչել արարածը. հէնց որ լաւ և կատարելապէս ճանաչեցինք արարածին, նպատակը, ինչ որ էլ լինէր նա, ճանաչելի է դառնալու. եթէ լաւ ճանաչենք նիւթը և նրա բոլոր յատկութիւնները, պիտի կարողանանք ուրեմն ճանաչել և նրա ոյժը... Արդ, չեմ գտնում, ով իմաստուն, որ մի անգամ նիւթն և ոյժը գտնւած ու ճանաչւած, կարող է իսկոյն ճանաչւել նաև նրա ձգտման, շարժման նպատակը...

Ճանաչել նիւթը, այսինքն մեզ շրջապատող իրերը, ճանաչել նրանց էութիւնը և կազմութիւնը, ապա նրանց էութեան ու կազմութեան ոյժը—ահա միակ միջոց՝ ըմբռնելու համար այն նպատակը, որ մնում է անըմբռնելի... բայց թէ երբ կը լինի այդ, էակաների ո՞ր երջանիկ տեսակի ժամանակ, քանի միլիոն դարեր յետոյ—չգիտեմ: Ես փնտռում եմ, տանջւելով փնտռում, յաճախ ջուսահատւում եմ, սակայն փնտռում եմ ու միշտ փնտռում. ես հետեւում եմ այն արհեստին, որի գործը փնտռելն է, ես հետեւում եմ

գիտութեան, աշխատում եմ իմ շրջապատողներին էլ նրան հետևողներ դարձնել և հաւատում եմ որ դա է մայն միակ ճանապարհը, որ մարդկութեան պիտի հասցնի հասկանալու կէտին. .

Ու լռեց: Նրա տանջւած դէմքը պարզւել էր և ոգևորութիւնը գծւել ճակատի վրայ, չնայելով որ գիտէր թէ ինքը իր համար ոչինչ չէր փնտռում, որ ինքն իր համար չէր ոգևորւում և որ իր բոլոր ոյժն ու միտքը ծառայեցնում էր միմիայն ապագային, երբ իրենից ոչինչ չէր մնալու այլ ևս, եթէ ոչ մի աննիւթ էութիւն—մտային արտադրութեան մի հիւլէ...

Իմաստունը որ նայում էր երիտասարդ իդէալիստին և լսում նրա ոգևորւած խօսքերը, թողեց որ մի քանի բոպէ խոր լուծեան մէջ միայն ծառերի տերեւները ստափեն, թռչունները ճլլան, յետոյ, մտախոհ գլուխը բարձրացրեց ու ասաց.

—Այո, երիտասարդ գիտուն, որ բնութիւնն ես ուզում ուսումնասիրել և գիտութիւնն ես համարում ծարագոյն նպատակը ըմբռնելու միակ միջոցը. այո, զու շատ կէտերում իրաւունք ունիս, բայց իրաւունք չունիս արհամարհելու այն բուռն փափագը, որ ձգտում է որոնելու արարածի գոյութեան իրաւունքը՝ մտածութեան ճանապարհով և որ գիտութեան մէջ չէ գտնում ծայրագոյն նպատակը ճանաչելու ճանապարհը...

—Մայրագոյն նպատակ. միջահատեց նրան երիտասարդ բնագէտը—ոչ, ես չեմ արհամարում այդպիսի որոնողների ջանքը, այլ անհետեանք աշխատութիւն միայն համարում... Մայրագոյն նպատակը, «վերջնական» կէտը գտնելու համար նախ պիտի համոզւել որ կայ նա... Կայ նա. և եթէ չկայ, կարելի է որ չլինի. հասկանալի է այդ ոչ—էութիւնը... Օ, դրա համար հարկաւոր կը լինի ապրել այնքան, որքան գոյութիւն կունենայ նիւթը, այսինքն ապրիլ անվերջ, զննել ու զիտել անվերջ, տենչալ, սոլորել և... տանջւել...

—Գիտենալով որ միշտ ազէտ ես, միշտ ոչինչ չգիտես և չես կարող գիտենալ... աւելացրեց իմաստունը տխրութեան խոր շեշտով և ծանրացած գլուխը խոնարհեցրեց կրծքի վրայ:

Մերունի ճանապարհորդը այն ժամանակ շարժւեց և խօսեց այսպէս.

— Լսեցէք այժմ թէ ինչ կը խրատէ երկուսիդ էլ մի ծերունի, որ աւելի երկար է ապրել քան զուք, աւելի երկար է տանջուել քան երկուսդ... Լինելով երկրի ծնունդ, մնացէք երկրի վրայ ու թող ձեր մտածութիւնն ու որոնելու տենչանքը թափառեն այնտեղ, ուր դեռ շատ և շատ բան կայ ուսումնասիրելու, զննելու... Բոլոր երևոյթները զոյանում են որոշ օրէնքների մի շղթայից, որի միայն մի քանի օղակն է մեզ ծանօթ. օրէնքների մի շղթա, որի մի ծայրը երկրի վրայ է և միւսը կորսւում է անհունութեան մէջ: Եթէ ուզում էք տեսնել նրա վերջին կէտը, ցատկել անհնար է, գնացէք օդակ առ օդակ. թող ձեր միտքը որոնէ օղակների յաջորդական շարքը և նրանց վրայից, որպէս աստիճաններով՝ թող բարձրանայ դէպի կատարեալը: Մի ուստեք. ուսումնասիրեցէք երկիրը, որի ծնունդն ենք մենք, ուսումնասիրեցէք մարդկութիւնը: Մարդիցէք նրա ուղին, նւիրւեցէք միմեանց օգնելու, միմեանց բարձրացնելու գործին և այդպէս միահամուռ ոյժով որոնեցէք իմաստութիւնն ու ճշմարտութիւնը... Նւիրւեցէք ձեր նմանների բարեխառութեան, բարձրանալու գործին — ահա այն միակ միջոցը, որ պիտի տանի ձեզ հասկանալու կէտին... Եւ օրհնեալ լինիք զուք ձեր անյադ, որոնող ձգտումներով. օրհնեալ լինի նաև նա, ով այդպէս կ'օրհնի ձեզ...

Ասաց պատկառելի ծերը ու թիկն տալով բարձերին, ակնարկը սեւեռեց անապատի անհունութեան:

Ամեն ինչ լուռ էր շրջակայքում. տերեւներն իսկ չէին սոսափում. քամին հեռւում, հորիզոնի վրայ աւազի ծուռ ու մոռ սիւնեակներ էր յօրինում և դէպի օդը տարածում. իսկ արևը կռացած՝ արնեղոյն շողք էր սփռում աւազի անծայրածիր տարածութեան վրայ...

Այդ միջոցին էր, այդպիսի խոր լուութեան մէջ, որ յանկարծ մի ահեղ մռնչիւն թնդացրեց օդին ու անապատը: Ձիերը խրինջացին, ծառերի տերեւների տակ թառած թռչունները ճչացին և օաղիսի խորքերից հասնող այդ կատաղի մռնչիւնին հետեւեց մի մարդկային երկար սրտապատառ աղաղակ, ապա մի քանի հրացանաձգութիւն:

— Մի դժբաղդութիւն... գուցէ երիտասարդը վաղելով ձայնի կողմը — առիւծի մռնչիւն էր դա:

Եւ աշխոյժով դէմ զնաց դէպի նրան եկող ծառան:

Օազիսի խորքում, ծառերի հովանու տակ կար մի խոր ընկած աղբիւր: Անապատի բնակիչները գիտեն որ այդպիսի աղբիւրներէ մօտ հաւաքուով են երբեմն անապատի գազանները, իրենց ծարաւը յագեցնելու կամ պարզապէս զովութիւն ունենալու համար. և երբ երեք ծառաներ լաւ զինւած՝ իջել էին ջուր վերցնելու, աղբիւրի մէջ գտնուող մի վիթխարի առիւծ յարձակել էր նրանց վրայ, տապալել մէկին, ճանկերը մղել նրա մէջքի մէջ և անշուշտ պիտի պատառոտէր: Եթէ միւսները չազաղակէին և զնտակ չտեղաջին նրա վրայ: Մի քանի զնտակ թիկունքում՝ առիւծը դուրս էր ցատկել և անհետացել, թողնելով իր զոհին գետնի վրայ արիւնտաշաղախ:

Հազիւ թէ ծառան պատմել էր այդ, որ երիտասարդ բնագէտը արագութեամբ դարձաւ իրենց նստած տեղը, կորզեց մի փոքրիկ արկղ և գոչեց ծառային.

—Շուտ առաջնորդիր ինձ դէպի վիրաւորը:

Եւ երեք ճանապարհորդները գրէթէ վազելով իջան աղբիւրի խորքը: Այնտեղ, գետնի վրայ տարածել էին վիրաւորին և մի քանի ծառաներ, հանած նրա շորերը, վէրքն էին լւանում:

—Շատ լաւ էք ալել, ասաց երիտասարդը—մնացածը լողէք ինձ:

Յետոյ չոգեց վիրաւորի մօտ, ավով ջուր հանեց աղբիւրից, շարունակեց խնամքով լւալ, արկղիկից դուրս բերեց դեղեր, դադարեցրեց արիւնհոսութիւնը, կապեց—փաթաթեց վէրքը և երբ վերցրին վիրաւորին վրանը տանելու, զնաց նրա ետևից ու նստեց սնարի մօտ:

Ու մոռացաւ այնուհետեւ հօրը, իմաստունին և ուշադրութիւնը կետրոնացրեց միմիայն վիրաւորի վրայ: Եւ նրա դէմքը արտայայտում էր խնամկոտ հոգատարութիւն. ճակատի վրայ ակօս կազմեցին արգահատական խորշոմներ և նա, բժշկական մի զիրք բաց արած կարդում էր, նորից կրկնում այդպիսի վէրքեր վարմանելու խրատները:

Միայն, երբ ծերունի հայրը հարցրեց թէ ինչպէս կը լինէր հիւանդը, պատասխանեց.

—Վտանգաւոր է, եթէ տաքութիւնը բարձրանայ...

Եւ այլ ևս չնայեց նրանց. մոռացաւ նրանց գոյութիւնը:

Այն ժամանակ ծերունին դարձաւ իմաստունին և սասաց.

—Գնանք այլ ևս, մենք աւելորդ ենք այստեղ, քանի որ ոչնչով չենք կարող օգնել վիրաւորին:

—Իսկ երիտասարդը.

—Այլ ևս նրան ոչ ոք չէ կարող պոկ տալ հիւանդի սնարից, մինչև որ ապահով չլինի թէ կամ պիտի ազատի նրան, կամ ձեռք քաշի: Դա է նրա պարտքը...

Ու դուրս գնացին: Իմաստունը յուզւած էր, սրտի մինչև խորքը յուզւած: Զիտեց նա այլ ևս ոչ մի բառ: Գիշերը անցկացրեց մի արմաւենու տակ՝ փռւած մէջքի վրայ և անհունութեան մէջ պլպլացող աստղերը դիտելով ու երիտասարդ բժշկի արածի վրայ մտածելով:

Երկու անգամ, կէս գիշերից անց, դնաց նա վիրաւորի վրանը և գտաւ երիտասարդին միշտ նստած, արթուն, հոգատար և ուշադրութեամբ հետևող վիրաւորի քնելուն, շարժումներին և հիւանդութեան ընթացքին:

Զհամարձակեց խօսել և ոչ մի բառ: Երկրորդ անգամին բժիշկը դուրսը բարձրացրեց, նայեց իմաստունին մի վարկեան, ժպտեց և սասաց.

—Պիտի ազատեմ սրան...

Եւ ազատեց. Միւս առաւօտ դուրս եկաւ նա վիրաւորի վրանից զւարթ դէմքով, բաց յոգնած և երբ տեսաւ ընկերներին, սասաց ուրախութեամբ.

—Ազատւած է...

Ապա ժպտեց երջանկութեամբ, ընկաւ անկողնի վրայ և քնեց:

Այն ժամանակ ելաւ իմաստունը, երկար զննեց երիտասարդ իդէալիստի երանաւէտ դէմքը, մի նշանաւոր դործ տեսնելուց յետոյ հանգիստ ու երջանիկ քնողի դիմագծերը, բարեւեց ծերունուն և առաւ իր գաւազանը:

—Գնում ես, իմաստուն, հարցրեց նրան ծերունին—Ի՞նչ անելու ես գնամ, նորից թափառելու և միայնութեան, անապատի և կամ գլխի մէջ ճշմարտութիւն ու նպատակը որոնելու...

Իմաստունը դարձաւ, մի լոպէ կանգ առաւ և ասաց.

—Ո՛չ, ծերունի, գնում եմ մարդկանց մէջ և պիտի փորձեմ իմ նմանների վշտերը ամօքելու միջոցը գործադրել. գուցէ այդ է այն ճանապարհը, որ ես որոնում եմ. գուցէ դրա մէջ գտնեմ մխիթարութիւն, զոհացումն և կամ գուցէ այդպիսի վսեմ շրջափակով կարողանում փակել նպատակախոյզ խորհրդածութեանս անդունդը:

—Օրհնեալ լինիս, բարձրացրեց ձեռքը նրա վրայ ծերունին— Իմաստութիւնը քեզ հետ, գնա՛, նւիրելի քո նմաններին, սփոփիր նրանց ցաւերը և թող քո խիստ անջանքը թեթեանայ դրանով:

IV

Նւիրելի իր նմանին!

Արդեօք այդ նւիրելը պիտի հասնացնէր նրան, աւելի գիտակցական ու աւելի բարձր մտային մթնոլորտի հասցնէր և արդեօք դա՞ պիտի լինէր փնտռածը գտնելու ճանապարհը:

Եւ ի՞նչպէս նւիրել:

Ձգնալ—գտնել թշուառին, հասկանալ նրա թշուառութեան պատճառը, կուէլ այդ պատճառի դէմ, վերացնել նրան?

Ձգնալ—գտնել զրկւածին, փնտռել—ճանաչել զրկողին և ոչնչացնել նրա զէնքը?

Ձգնալ—տեսնել հարստահարւածին, մարտ մղել հարստահարողների դէմ, թիկունք դառնալ ընկճւածին, բարձրացնել ընկճւածին, գիտուն դարձնել տգէտին, լոյս տալ խաւարամտին, հանել ցեխի մէջ ապրողին, բուժել վիրաւորւածին...:

Եւ կամ չկուե՛լ արդեօք զրկողի, մարտնչել բռնաւորի, ճակատ տալ մահուան դէմ և ազատել մանուկին տգիտութիւնից ու կեղտից, խլտողին՝ խլողից, վիրաւորւածներին՝ վիրաւորողների ճիրաններից...:

Եւ գնաց նա, շատ տարիներ զոհեց գիտութիւն ուսանելու, յետոյ մտաւ թշուառների, ցաւազարների մէջ: Մէկին մխիթարեց, քաջալերեց, բողոքելու յորդորեց, միւսին դարմանեց, վէրքերն սփռեց...:

Այնքան էր զբաղմունքը և այնքան էին մարդկային վշտերը, որ մոռացաւ ամեն բան, նւիրւեց միայն գրան:

Իայց ցաւերն ու զրկանքները աւելանում էին, աճում ու բազ-

մանում. շատանում էր թշւառների թիւը, կուտակում էին զրկւածներն ու անօթութիւնից, կեղտի, տգիտութեան մէջ վիրալից՝ մեռնում էին. և իմաստունի ջանքերը, այդ բոլորից գոնէ մի՞ հիւլէի դէմն առնելու՝ ապարդիւն էին անցնում: Հարստահարութիւնն ու անիրաւութիւնը հեղեղ էր դառնում և մարդկութիւնը կլանում:

Եւ նա տեսաւ որ մարդկութեան մի փոքրիկ մասը ապրում էր միւս մեծ մասին կլանելով, գրկել-գջլելով. գտաւ որ այդ մեծ մասը այնքան հարւածւած, այնքան ստրկացած է, որ ոչխարի պէս տանում է թշւառութիւնը, ճանճերի պէս կոտորւում, իր վաստակը ուրիշին տալիս և չէ տրոնջում, չէ բողոքում, այլ իր որդիներին իսկ յանձնում է որպէս նրանց գործակից...

Եւ զայրացաւ իմաստունը արդար բարկութեամբ, Ասուածային կրակով վառւած դէն ձգեց իր ամոքիչ, շատ չնչին օգուտ տուող բոլոր դարմանները, պարզեց իր երկար հասակը, առաջ անցաւ, ճշմարիտ գիտութիւնն ու անկեղծութիւնը որպէս դէւիզ գրեց իր դրոշակի վրայ ու մտաւ հալածւած և հարստահարւած ամբոխի մէջ: Հարւածեց աջ ու ահեակ թառած անզղերի, որոնք կոծում են մարդկութեան սիրտը. սարկերի, որոնք ծծում են ընկերութեան հիւթը, դործողի վաստակը և որոնք ճարպացած՝ պաշարել են ընկերութեան առաջդիմութեան ճանապարհը:

Հարւածեց նա մարդու ցաւեր հասցնող, մահացնող պարազիաների, մատը զրեց այն վշտերի և վէրքերի վրայ, որոնք աւելի շատ գոյանում են եղբօր կողմից, քան օտարի և նա, զայրոյթով դռաց, որ ոչ թէ ուրիշ արարած է մարդուն թշւառացնում, այլ մարդն է մարդուն ուտում, յօշոտում, պատառոտում և հարստահարում և որ եթէ այդ չլինէր, մարդկութիւնը վաղուց ի վեր աղաւաւած կը լինէր դագանների կամ ալ արարածների հարւածներից, տիրապետած կը լինէր բնութեան երևոյթներին, ըմբռնած կը լինէր նրա շատ գաղտնիքները և իր ճակատագրի տէրը եղած:

Գուռաց ու գոչեց նա համարձակ որ տգիտութիւնն ու խաւարը, վիշտն ու թշւառութիւնը մարդու համար գոյացնում է իր ընկերը, իր զրացին, իր եղբայրը և որ այդ եղբայրասպան, եղբայրազաւ վարմունքն է միակ պատճառը բոլոր կեղտերի, անիրաւութիւնների և թշւառութիւնների...

Բայց նրան ծաղրեցին, նրա «միամտութեան» վրայ ծիծաղեցին, անձնանկիրութեանն էլ «խենթութիւն» անունը դրին:

— Ինչի՞ դէմ ես կռուում, ասացին նրան—չէ որ գոյութեան կռիւը անհրաժեշտ պայման է առաջդիմութեան, կատարելագործութեան. իսկ գոյութեան կռիւը ունի այդպիսի հետեւանքներ. ուրեմն և այդ բոլորը բնական է:

— Մի՞թէ այդ բոլորը բնական է, աղաղակեց նա—մի՞թէ աշխարհքը կեղծութեան ու անիրաւութեան պէտք ունի, մարդկութիւնը ստութեան ու միմեանց պատառոտելու պահանջ՝ որպէս զի գոյութիւն ունենայ, յառաջադիմի...

— Այո՛, պատասխանեցին նրան—արարածները միմեանց ուտելով գոյութիւն ունին. եղբայրները միմեանց զրկելով են աճում, իսկ այդ անելու համար հարկաւոր է կեղծութիւն, սուտ և անիրաւութիւն...

— Մի՞թէ ես յորորեւէ եմ. մտածեց նա յուսահատաբար. մի՞թէ դարձեալ խաբւեցի...

Եւ այդպէս, իմաստունը իր ոգևորութեան մէջ յանկարծակի դալով շփոթւեց և չգիտէր ինչ անել: Գիտէր, զգում էր որ մարդկանց ասածը ճիշտ չէր և որ այդ՝ այդպէս չպիտի լինէր: Նա լաւ գիտէր որ նիւթական հաւասարութիւնը կարող էր վերջ տալ բոլոր անիրաւութիւնների և անօգուտ գործիքի փոխել կեղծութիւնն ու ստութիւնը, բայց նրա յուսահատ շարմունքը գոյանում էր այն հանգամանքից, որ եղած դրութեան արդար անւանողը, բնական գտնողը նոյն իսկ իրենք—զրկւածներն էին, իրենք—հարստահարւողներն ու թշւառները:

— Չգիտեն թէ ինչ են անում... ցոլաց յանկարծ Նազովրեցու խօսքերը նրա մտքում—հարկաւոր է ուրեմն հասկացնել իրենց դրութիւնը, հարկաւոր է ապացուցանել որ հնարաւոր է աւելի լաւ դրութեան հասնել, ապրել որպէս մարդ:

Եւ ահա այդ միջոցին էր, որ մի ոչ-իմաստուն մօտեցաւ նրան ու ասաց.

— Իզուր ես կռիւ մղում դանակների դէմ, պէտք է դանակ բռնող ձեռքերը գոսացնել:

Ասաց և անհետացաւ, թողնելով իմաստունին ապշութեան մէջ:

—Ո՛վ անյատակ իմաստութիւն, աղաղակեց նա—որքան ան-
պառ ես դու:

Յետոյ քայլեց, կանգնեց հրապարակի վրայ, հաւաքեց իր
շուրջը բոլոր վիրաւորներին և ասաց.

—Դարմանեցի ես ձեր վէրքերը, բայց վաղը էլի դուք վէրք
կը ստանաք: Փշրեցի ես շատ դանակներ, բայց նրանց բռնող ձեռ-
քերն էլի կը շինեն դանակներ. փշրինք այդ ձեռքերը:

—Փշրենք ձեռքերը... ոո՞նց ամբոխը, թնդացրեց հրապար-
ակը, փառարանեց իմաստունին: Բայց երբ դանակ բռնող ձեռ-
քերը մօտ եկան և կամենալով մի անգամ ընդ միշտ ազատուել
խենթից, բռնեցին իմաստունին—ամբոխը ցրեց ու նրա խօսքե-
րով ոգևորւողները թողին նրան ու փախան:

Ու դնաց իմաստունը շղթայի մէջ կապկապւած ու մտածեց
Յիսուսի վրայ:

Անշուշտ այդպէս էր որ բռնել էին նրան—անհասարու-
թեան ու կեղծիքի դէմ քարոզողին: Եւ անշուշտ երբ բռնում էին
նրան, «ովստննա» կանոնող ամբոխը նոյնպէս ցրեց, մոռացաւ մեծ
մխիթարչին:

Միայն մոռացան... Բայց ոչ. ահա ներկայանում է նրա առաջ
Գողգոթան, խաչը, նրա ստորոտում շարժւող այն ամբոխը, որ քիչ
առաջ «ովստննա» էր գոչել, իսկ այժմ նոյնքան ոգևորութեամբ
ռնում էր—«ի խաչ, ի խաչ հան զդա»:

—Ի ջուր, ի ջուր խենթին.

Ոռնում էր ամբոխը իմաստունի կռիւից և քարեր ու ցեխ
չպրտում նրա վրայ: Աէին սպանել, այլ դուրս էին վռնտում քա-
ղաքաքից:

Եւ այժմ գնում էր նա զաւազանը ձեռքին, վերարկուի մէջ
փաթաթւած. վազում—փախչում էր իր կռիւից տրձակւող քարե-
րից, որոնք ջարդում էին նրա թիկունքը, վիրաւորում զլուսը.
փախչում էր քիչ առաջ փառաբանող և այժմ ծաղրող ու հայ-
հոյող ամբոխից:

—Հիւ, հիւ... քարկոծեցէք խռովարարին, ցեխ նետեցէք խ-
լազարին:

Ու զնաց նա Խառնէր, յոգնած, դուրս փախաւ քաղաքից, վազեց հեալով, խուսափեց քարերից և ծաղրից. և այդպէս խորը խոցւած, դառնութեամբ լցւած, ուշաթափ՝ ընկաւ մի ծառի տակ:

Իսկ երբ ուշքի եկաւ, գտաւ որ իրեն զրել էին մի պատմութեան վրայ և երկու հոգի նստել զլսի վերելք: Մէկը երիտասարդ, միւսը ծերունի: Երկուսն էլ վշտացած, թախծալից գէմքերով, երկուսն էլ լուռ և մտախոհ:

Ճանաչեց նրանց. ծերունի փիլիսոփան էր և բնագէտ որդին: Երեքի հայեացքներն էլ մի բոլի լուռ՝ մնացին միմեանց վրայ. երեքն էլ երկար ժամանակ չէին տեսնուել և շատ փոխուել էին: Ծերունին զառամել էր, երիտասարդը ալեխառն դարձել և իմաստունը արեակէզ ու մաշւած:

—Այդ դժբէք էք, ասաց վերջապէս իմաստունը—ճանաչեցի ձեզ. այդ դժբէք էք որ ինձ զրկեք սխալ շաւղի վրայ, և ինձ ըմբռնել աւել թէ իղուր է նւիրել իր նմաններին, որովհետեւ նրանք սիրում են ապրել ցեխի և կեղծութեան մէջ և այդպիսի կեանքի դէմ խօսողներին հալածում են, ծաղրում ու քարկոծում... Նայեցէք ինձ: Կեանքիս շատ տարիները նւիրեցի օգտակար դատնալու իմ նմաններին, ուսումնասիրեցի նրանց ցաւերը, գտայ վերքերը, մասսա զրի նրանց վրայ, բարձրաձայն քարոզեցի հարստահարողների, զրկողների, խլողների և մանաւանդ կեղծողների դէմ. ոչինչ չժածկեցի, մերկ ճշմարտութիւնը հրապարակի վրայ զրի և... վիրալիցներն ու զրկածները, հալածւածներն ու խաբւողներն էին, որոնք ծաղր ու ծանակ դարձրին ինձ, քարեր նետեցին իմ անկեղծութեան վրայ, պղծեցին մերկ ճշմարտութիւնը, թքեցին նրա վրայ, նրա մերկութիւնը անբարոյականութեան հետեանք հռչակեցին և զոչեցին ինձ:

—Կորիւր քո անկեղծութեամբ ու ազատախօսութեամբ. մենք աւելի լաւ ենք զգում մեզ կեղծութեան և ստութեան մէջ. կորիւր...

Ու վռնտեցին... Դուք մոլորեցրիք ինձ. այդ չէր իմ փնտռածը: Լուռ էին ծերունին ու երիտասարդը և ոչինչ չէին կարողանում ասել:

—Նւիրուել իմ նմաններին!... շարունակեց վշտացած ձայնով իմաստունը—Նս այդ արի, բայց տեսայ որ այդտեղ հարկաւոր

էր կեղծութիւն, ստուծութիւն. այդտեղ հարկաւոր էր խաբել, անկեղծաբար ու լրբաբար կեղծել, նոյն իսկ յանուն իւրեաների, յանուն ճշմարտութեան՝ անամօթաբար կեղծել. տասին կեղեքել—մէկին օգնել. մարդկանց կողոպտել և Աստծուն նւէր տալով բարեպաշտ հռչակել. հասարակական մի չնչին գործ կատարել և բարեգործ անունով հռչակել. տասով գժլել, մէկով խլուողներին աչքը շլացնել... խաբել, խաբել ու խաբել...

Ո՛չ, այդ չէ իմ որոնած ճանապարհը: Միթէ մեծ նպատակին հասնելու համար այդ է միջոցը, ինչ որ մարդկութիւնն է բռնել—այսինքն միմեանց պատառօտելու, միմեանց խաբելու, միմեանցով կերակրելու այդ մոլեղին ուղղութիւնը:

Ի՞նչ է ուրեմն այդ մեծ նպատակը, որին գնում են այդպիսի կեղտոտ շաւղով:

Եւ չնայելով որ յոգնած էր, այդ ասելուց յետոյ ոտքի ելաւ, առաւ գաւազանը, պնդեց կոշիկի կաշիները, պահ մի կռթնած ծառին՝ նայեց երկու անձերի վրայ և պատրաստեց գնալու:

Այն ժամանակ ծերունին ասաց մեղմ ու թախծալից ձայնով.

—Գնա, որդիս, ճշմարտութեան ճանապարհը փշոտ է, խիստ փշոտ և այդ փշերը անուամ են ու ոռոգում նրանց վրայից քայլողների կարմիր արիւնով, բեղմնաւորում նրանց մէջ ընկնող նահատակների ածիւնով:

—Իսկ այդ ճշմարտութիւնը, աղաղակեց իմաստունը—այնքան վսեմ է, որ կարելի չի ինի առանց յուզւելու դիտել դէպի նրան գնալու աղտոտ ճանապարհները, որ կարելի չի ինի այդ նախճիրները արդարացնել, բնական համարել, առանց զգանքի ու սոսկումի ականատես լինել և նրա դէմ խօսողներին խենթ, անորմալ համարել... Ո՛չ, հազար անգամ ոչ. այդ չէ այն ճանապարհը, որ ինձ հարկաւոր է՝ գտնելու համար բարձրը, մաքուրը և ճշմարիտը:

Եւ երբ ասաց, ողջունեց ու հեռացաւ:

Ու մի վայրկեանում մարեց նորից նրա խանդը, աւելի և աւելի կնճռեց ճակատը, կորացաւ մէջքը: Նորից անյուսուածեան, փնտռողութեան անյատակ վիճը բացւեց նրա մտքի մէջ, նորից հարցական մեծ նշանը, սոսկալի փափագը:

(Վերջը լաջորդ համարում):

ԱՒԱԶԱԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Պ Ո Է Մ Ա

Վ. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ — Թարգմ. Յակոբ Տէր-Գէորգեանցի

Ինչպէս ագռաւներն — որ թռչում էին
Նեխուած, աւերած լէշերի գլխով —
Կրակների չուրջը, Վոլգայի ափին
Քաջ կտրիճների խումբն էր հաւաքւում:
Տեսէք, ինչ խառնուրդ ցեղի ու գէմքի,
Լեզւի, հանդերձի, նաև վիճակի.

Խրճթից, խցից

Նոյն իսկ բանտերից

Թափւել են այնտեղ զոնեկու վաստակ,

Եւ ողջի համար կայ մի նպատակ —

Ձգտում են ապրել թռչունի նման՝

Առանց օրէնքի, ազատ, ինքնիշխան:

Կը տեսնէք այնտեղ փախստականին —

Ռազմասէր Դոնի հեռու ափերից,

Գանդուրներ թողած ճարպիկ հրէային,

Ղալմուխ, բաշկիրին — անապատներից.

Կը տեսնէք նոյնպէս շիկահեր ֆիննին,

Եւ թափառական ու ծոյլ գնչուին:

Զեղխութիւն, փտանդ,

Արիւն ու պատրանք —

Ահա ողջ կապերն այս ընտանիքի.

Նրբանցն է միայն

Զարագործու թեան

Քովից զուրս ելած այն չարահոգին,
 Որ կտրտում է, մորթում սառնարիւն,
 Այրիին—իւր խեղճ որբիկը գրկում:
 Ով որ ծաղրում է մանկական ճշիւնն,
 Ով որ չէ խնայում, և ոչ էլ ներում,
 Որին սպանութիւնն ուրախացնում է,
 Ինչպէս պատանուն—սիրոյ տեսութիւն:

Ամեն բան լռեց: Այժմ՝ լուսնեակը
 Իւր դժգոյն լոյսն է նրանց վրայ սփռում:
 Եւ փրփրացող գինու բաժակը
 Հերթով մէկ-մէկի ձեռքըն է անցնում:
 Փռած են նրանք խոնաւ գետնի վրայ,
 Ոմանք նիրհում են զգոյշ, թեթեւ քնով
 Եւ չարագուշակ երազներ ահա
 Պտոյտ են գործում նոցա զլիսներով:
 Ոմանք կարծում են մռայլ գիշերի
 Պարապ ժամերը—քաղցր գրոյցներով:
 Բայց ահա յանկարծ ողջը լռեցին,
 Եւ պատմութեանը՝ մի այլ նորեկի
 Շուրջը՝ բոլորը ուշադիր էին:

«Մենք երկուս էինք, եղբայրս Խ. Ես.
 Մի տեղ մեծացանք, մանուկ հասակում:
 Օտար ընտանիք սնուցել է մեզ.
 Կեանքը մեզ համար օխուր էր անցնում:
 Կարիքի ձայնը արդէն գիտէինք,
 Դառնն անարգանք միշտ կըրում էինք.
 Եւ ղեռ վաղ ժամից վրդովում էին
 Սաստիկ նախանձի անգութ տանջանքներ:
 Խղճուկ որբերը նոյն իսկ չունէին
 Մի աղքատ խրճիթ և ոչ էլ դաշտեր:
 Դառնութիւնների, հոգսերի միջին
 Մենք ապրում էինք:

Բայց այդ վիճակը շուտով ձանձրացրեց.
 Մի այլ բախտ դանել—համաձայնեցինք.
 Եւ այնուհետեւ վերցրինք մեզ ընկեր
 Պողոստէ դանակն ու խաւար գիշեր.
 Շուտով մուացանք թէ վախ և թէ վիշտ,
 Իսկ խիղճը—հեռու վանեցինք ընդ միշտ:

Ա՛խ, ափսոս, ափսոս մեր ջահելութիւն —
 Ահա երբ էինք կեանքը վայելում.
 Երբ անվանիս—մահը արհամարհելով,
 Ամեն ինչ մի տեղ հաւասար կիսում:
 Լինում էր, երբ որ լուսինը պայծառ
 Բարձր կանգնում էր երկնքի միջին,
 Մենք գեանափորից զէպի մութ անտառ.
 Մի վտանգաւոր դնում էինք գործին:
 Նստած, սպասում ենք ծառերի յետև—
 Յիւշ, մեր ուղիով չէ՞ անցնում արդեօք
 Մի հարուստ ջհուգ, կամ մի խեղճ տէրտէր—
 Մերն է—ամեն բան մեզ է պատկանում:
 Երբեմն էլ ձմռան խուլ գիշերներով
 Լծում եռածի սահնակն, և ահա
 Ուղիղ, նետի պէս երգ ու սուրճով
 Սլանում էինք խոր ձիւնի վերայ:
 Մեզ հանդիպելուց ո՞վ չէր վախենում.
 Տեսնում ես հեռու, մի լոյս պանդոկում,
 Դէ, շիտակ այնտեղ, դէ, դուր թակիր...
 Ներս մտանք—ձրի ուտում ենք, խմում,
 Եւ աղջիկներին քաղցր փառաքշում:

Բայց ինչ, մեր աղերքը ծուղակն ընկան.
 Եւ եղբայրները շատ չգարձացան,
 Շուտով բռնեցինք. և դարբինները
 Իրար մօտ, ամուր մեզ շղթայեցին,
 Եւ պահակներով բանտ ուղարկեցին:
 Հինգ տարով էի մեծ իմ եղբորից—

Յաւին աւելի երկար դիմացայ.
 Խեղդիչ պատերում ամուր շղթայւած
 Ես ողջ մընացի, նա հիւանդացաւ:
 Հազիւ շնչելով, վշտերից տանջւած,
 Տենդով իւր դլուխը մոռացութեան մէջ,
 Իմ ուսիս վըրայ անգոր խոնարհած—
 Նա մեռանում էր և կրկնում անվերջ.
 Էիեղլուում եմ այստեղ, ջուր տւէք ինձ, ջուր.
 Գնանք, շուտ, անտառ.—բայց խեղճին իզուր
 Ջուր էի տալիս.
 Ծարաւը նորան տանջում էր նորից.
 Կարկուտի նման քրտինք էր թափւում
 Նորա երեսից:
 Եւ այն թունալից ախտի ջերմութիւնն
 Ցուզում էր նորա միտքը և արիւնն:
 Եղբայրս արդէն ինձ չէր ճանաչում.
 Եւ ամեն բոլէ իւր բարեկամին
 Եւ ընկերոջը մօտն էր կանչում:
 Ասում էր նորան—«Ո՛ւր անյայտացար,
 Ո՞ր կողմն ես ուղղել արդ քո ճանապարհ,
 Ինչո՞ւ այս մռայլ, անեղ խաւարում
 Իմ եղբայրս ինձ մենակ է թողնում.
 Այդ նա չէ՞ր արդեօք, որ դէպի անտառ
 Խաղաղ դաշտերից ինձ հրապուրեց
 Եւ գիշերն այնտեղ, հզօր, սոսկալի,
 Ինքն առաջինը սպանել սովրացրեց:
 Այժմ, առանց ինձ, ազատ-համարձակ
 Մաքուր դաշտերում զբօսնում է մենակ.
 Ծանր կացինը ծօծում է ձեռքին,
 Եւ նախանձելի քաղցր վիճակում
 Մոռացաւ նա իւր դժբախտ ընկերին:
 Մերթ վառւում էին նորից նրա սրտում
 Զանճրացնող խղճի սուր-սուր խաչթոցներ.
 Տեսնում էր նոյնպէս խառն տեսիլներ,

Որ մատով էին հեռից սպառնում
Ամենից յաճախ—շատ առաջ մորթած
Ծերի պատկերը մտաբերում էր.
Եւ թոյլ աչքերը ձեռքերով ծածկած,
Այն ծերի համար նա աղերսում էր.
—Խղճա՛, եղբայր իմ, նրա արցունքները.
Մի սպանիր նորան այդ ծեր հասակում,
Մի ծաղրիր, եղբայր, իւր ալիքները,
Տաք արեան կաթիլ չը կայ նորանում.
Սոսկում եմ նորա զառամած ճշից.
Վտանգաւոր չէ... արձակիր նորան.
Մի տանջիր, գուցէ իւր աղօթքներով
Աստծոյ բարկութիւնն կը մեղմացնէ...»
Ես լսում էի սարսափից ճնշւած.
Սրբել, ամոքել ցանկանում էի

Իւր արցունքները.

Եւ հեռացնել հիւանդի աչքից

Դատարկ ցնորքները:

Մերթ տեսնում էր նա անտառից եկած
Ննջեցեալների խմբով պարերը.
Մերթ լսում նոցա սոսկալի շշիւն,
Մերթ հալածանքի մօտագայ դոփիւն,
Կատաղի փայլով դէմքը փայլում էր,
Մազերը գլխին բիզ-բիզ վեր ելնում,
Տերեւի նման նա ողջ դողում էր.
Մերթ էլ աւաջին տեսնում էր կարծես.
Մարդիկ հաւաքւած հրապարակի վրայ,
Եւ դաժան դահճի մորակը նոյնպէս,
Եւ ահեղ գնացքը մինչեւ պատժարան:
Սաստիկ վախեցած, եղբայրս անզգայ
Ընկնում էր ուղիղ իմ կրծքի վերայ:
Անց էի կացնում այսպէս օր-գիշեր,
Հնար չունէի հանգստանալու,
Եւ մեր աչքերը քուն չէին տեսել

Բայց ջահիլութիւնն իրանը արաւ.
 Նորից յետ եկան եղբօրս ոյժերը.
 Սոսկալի ցաւը գնաց ու անցաւ,
 Անցան և նորա դատարկ ցնորքները:
 Յարութիւն առանք. այնժամ աւելի
 Թախծեցիք նախկին մեր կեանքի համար.
 Դաշտերի օդը տենչում էր հոգին,
 Եւ սլանում էր դէպի մութ անտառ:
 Մենք զղւում էինք բանտի խաւարից,
 Վանտակով մոնող արևի լոյսից,
 Պահակի ձայնից, տարագնաց թռչնի
 Թեթև աղմուկից և շղթաների
 Խուլ զրնգոցներից:
 Մի օր միասին մենք փողոցներում
 Շղթայւած, յօգուտ քաղաքի բանտի
 Ողորմութիւն էինք հաւաքում:
 Եւ որոշեցինք այդ խաղաղ ժամին
 Ի կատար ածել մեր հին ցանկութիւնն:
 Մեզնից ոչ հեռու մի դետ էր շաշում:
 Մենք դէպի գետը վազեցինք արագ,
 Եւ բարձր ափից բոհ—խոր ջրերում
 Սկսեցինք լող տալ մէկ տեղ համարձակ.
 Մեզ կապող շղթան ուժգին հնչում էր,
 Իսկ մենք ոտներով ալիքը ծեծում:
 Աւաղոտ կղզի տեսնում ենք զիմաց—
 Ճեղքում ենք գետի հոսանքը սրնթաց
 Եւ այնկողմ դիմում:
 Եւ մեր յետևից բարձր գոռում են.
 «Բռնեցէք, շուտով, բռնեցէք, փախան».
 Հեռւից լող տւին երկու սահապան.
 Բայց մենք հասել ենք կղզու ափն արդէն.
 Քարով ջարդեցինք մեր շղթաները,
 Եւ սպառառեցինք թաց ցնցոտիներ:
 Շատ հեռու չէին հալածողները.

Բայց մենք սպասում ենք վստահ, համարձակ.
 Նոցանից մէկը խեղդւում ուժասպառ,
 Մերթ ջուր կուլ տալիս, յատակը սուզւում,
 Եւ մերթ հառաչում. և ինչպէս կ'սպար

Ձրի խորքն անցաւ:

Միւսը լող տւեց ջրի խոր տեղով.
 Հրացանը ձեռքին յամառ դիմում է
 Մանձաղը—կանչիս ուշք չը դարձնելով.
 Բայց նորա գլխին երկու քար դիպաւ,
 Կարմիր արիւնով ալիքը ներկւեց,

Եւ նա էլ խեղդւեց:

Նորից ջուրն ընկանք—չցանդգնեցին
 Մեզ հետապնդել. և դէպի անտառ,
 Ափը հասնելուց՝ բռնեցինք ուղին:

Բայց խեղճ իմ եղբայր.

Տանջանքն ու աշնան ջրերի ցուրտը

Ուժասպառ արին...

Իւր հին ցաւերը նորից զարթեցին,
 Այա հին ցնորքներն եկան չարաչար:
 Հիւանդն երեք օր ոչինչ չէր խօսում,
 Նիրհը չէր իջնում նորա աչքերին.
 Իսկ չորրորդ օրը մի հոգս վշտահար,
 Կարծես, պատել էր իւր միտքն ու հոգին:
 Կանչեց ինձ. տխուր, ձեռքս պինդ սեղմեց...
 Մարած հայեացքը արտայայտում էր
 Նրան յաղթահարող սպանիչ տանջանքը...
 Ձեռքը զողզողաց, թողեց մի հառաչ,

Եւ նիրհեց ընդմիշտ

Իմ կրծքի վերայ, իմ աչքի առաջ:

Ես սպասում էի դեռ երեք գիշեր
 Եղբորս սառած դիակի մօտին.
 Միշտ սպասում էի—չի՞ վարթի արդեօք.
 Եւ արցունքներս տաք հոսում էին:

Ես վերջ ի վերջոյ ձեռքս բահ առայ,
 Եւ աղօթեցի մեղաւոր բերնով
 Իմ սիրած եղբոր դերեզմանի վրայ.
 Ու նորան այնտեղ թաղեցի վշտով:

Բայց էլ չեմ տեսնի մեր անցած օրեր,
 Ուրախ գիշերներ, քէֆ-խնձոյք անյագ.
 Եւ նաեւ յանդուգն մեր արշաւանքներ...
 Էլ չեն դառնալու, անցան յաւիտեան,
 Ամեն բան տարաւ եղբոր դերեզման:

Միայնակ ու մռայլ շրջում եմ թափառ.
 Քարացել է իմ խստասիրտ հոգին.
 Ես սարսափում եմ մորթել չարաշար
 Խորշոռներ պատած անդօր ծերուկին.
 Խիղճը իմ սրտում հանգաւ չաւիտեան,
 Բայց ձեռքս չէ դնում նորա ալիքին...
 Յիշում եմ ինչպէս դեռ դաժան բանտում
 Եղբայրս շղթայած, հիւանդ, ուժաստատ
 Եւ ուշակորոյս, թախծալից, տրտում
 Սղերս էր խնդրում ծերուկի համար:

Լսեց աւազակն և կրծքի վըրան
 Կատաղի գլուխը խոնարհեց վշտով,
 Եւ տաք արցունքներ աղբիւրի նման
 Հոսեցին նորա դժընդալ՝ դէմքով:

Դու լաց ես լինում—ինչ յիմարութիւն,
 Ի՞նչ հարկաւոր է յիշել մեռածին.
 Արի քէֆ անենք՝ քանի կեանք ունինք—
 Միւս աւազակներն նորան ասացին:
 Բաժակը նորից ձեռքից ձեռք անցաւ.
 Եւ առ ժամ լռած զրոյցը վերստին
 Գինով շունչ առաւ:

ՀԱՒԱՏՆ ԻՆՁ ԿԸ ՓՐԿԻ

(ՆԻԷՐ ՕՐ. Ծ. A-ԻՆ)

Իշխանունի Սոֆիա Երկայնաքաղուկ-Արդութեանի

(Շարունակութիւն ե վերջ ¹)

Սիրելի Նազեա!

Քո նամակը Կլաւդիայի Պետերբուրգից գրած նամակի հետ
ստացանք: Բոլոր ընկեր-վարժուհիներս մի տեղ էինք հաւաքւած:
Հէնց նոր սկսել էինք կարդալ Եանժուլի „Въ поискахъ лучшаго
будущаго“, որ ներս ընկաւ Նինոյկա՛ն նամակները ձեռին: Նամակ-
ներից մեր առաջ կարդանք, ահա քեզ մի դժուար հարց: Քո նա-
մակները այնպիսի հաճելի խորհրդածութիւններ են առաջ բերում
և այնքան վէճեր են յարուցանում, որ ամենքը միաձայն գոռացին.
արտասահմանինը, արտասահմանինը կարդանք!»: Մի պիտի տես-
նէիր՝ թէ ի՞նչ ոգևորութիւն տիրեց, ի՞նչ վիճաբանութիւն առաջ
եկաւ, ի՞նչ խօսակցութիւն մէջ ընկաւ! Մեր անտարբեր Նատաշան
ի՞նչ է, մինչև անգամ նա էլ բերանը բաց արւաւ, կենդանացաւ...
Խելքը թռել էր Աւզանստանի Էմիրի լէյք-բժիշկ անգլուհուց:

Յետոյ կարդացինք Կլաւդիայի նամակը... Ինչպէս խեղդիչ կլի-
մայում բուսած դուռնաթափ վարդը զանազանում է այդու բաց
ու թարմ ողում ապրած վարդից, այնպէս էլ Կլաւդիայի նամակի
բովանդակութիւնը՝ քո նամակի բովանդակութիւնից: Զարմանալի,

¹) Տես Մուրճ 1897 թ. № 5.

անբացատրելի տալաորութիւն է անում նրա նամակը! Բնորոշելու համար մի քանի քաղաժներ եմ մէջ բերում։ Ի հարկէ, քեզ արդէն յայտնի է, որ նա այս տարի երկրորդ կուրսն է անցնում։ Հայրը բաւականին նշանաւոր պաշտօն է ստացել մինիստրութեան մէջ, այնպէս որ շատ լաւ են ապրում։ Ահա թէ ինչ է գրում։ «Այս օրերս մեր կուրսերի օգտին մի բալ ունէինք։ Ինչ Պետերբուրգ եմ, այս առաջին անգամն էր, որ սրտանց շատ ուրախ ժամանակ անցկացրի։ Այնքան լաւ, այնքան դուրեկան էր ինձ համար զարգարուն ընկեր-կուրսիստուհիների այդ խաչտաճամուկ տմբոսի մէջ լինելը, որ պատրաստ էի ամեն բան, ամբողջ կեանքս ու աշխարհի միւս բարիքները փոխել այդ անվերջ ուրախութեան հետ։ Երբեմն ինձ ինչ որ անբացատրելի թախիժ էր պատում, բացց ես աշխատում էի շուտով պտոյտներ անել, շրջան կազմել և թափ տալ ինձանից կաշող այդ մեղամաղձութիւնը։ Բալն աչքի էր ընկնում իր ուրախ բնաւորութեամբ և հաղուստների շքեղութեամբ։ Չարմանալի կերպով ամենքը սիրուն ու պարզ էին! Բալի թագուհին մաթեմատիկա սովորող ուսանողուհիներից մէկն էր։ Որքան գեղեցիկ էր նա! Կարճ՝ հրաշք էր էլի, հրաշք! Կարելի էր կարծել, որ նա ոչ թէ կենդանի մարդ, այլ մարմարէ արձան է! Քեզ, ի հարկ է, այս զարմացում է և, հաւանօրէն, զայրացնում։ Անցել է նիհիլիզմի ժամանակը, երբ կին ուսանողները ման էին դալիս բլուզ ու երկար կօշիկներ հագած! Անցել է «բազարովչէինայի» ժամանակը! Այո, ամեն բանում հարկաւոր է պարզութիւն և բնականութիւն!»։

Ձեմ հասկանում թէ ինչու է այդպէս մաղձով խօսում բազարովչէինայի, պարզութեան և բնականութեան մասին! Յետոյ առանձին հիացմունքով գրում է մի խորհրդաւոր անձնաւորութեան մասին, որին իրէալ է դարձնում։ «Այս գիտակցում եմ, որ նա անբարոյական, զժուժ և դուցէ, մինչև անգամ, ստոր մարդ է, բաց նրան շատ եմ սիրում նրա համար, որ այնպէս չէ, ինչպէս ամենքն են։ Առանձին ոգեւորութեամբ գրում է թէ ինչպէս չափշտակել է նրան գեղարւեստը և ընդարձակ խօսում թէ ինչ նշանակութիւն ունի գեղարւեստը մարդու կեանքի համար։ Բացի կուրսերից, նա երգի դասեր է առնում, նկարչութեան ուսումնարանն է յաճախում և երաժշտութեամբ պարապում կոնսերւատո-

րիայի ուսուցչապետի մօտ: Որ ծնողներին ցանկութիւնը չլինէր, զրուժ է նա, ևս վաղուց թողած կը լինէի այդ կուրսերը և նւիրւած՝ բացառապէս գեղարեստին: Նամակը վերջացնում է հետեւեալ խօսքերով. «Ամեն բան շատ լաւ կը լինէր, եթէ հօրս ու մօրս առանձին հոգացողութիւնը չլինէր, որ ինձ երբեմն ուղղակի յուսահատութեան է հասցնում: Թէև ևս շատ, չափազանց շատ եմ սիրում նրանց, բայց յաճախ թւում է, որ ինձ սարսափելի կերպով ձանձրացրել են: Ծիծաղելի է հայրս! Զգիտեմ ինչո՞ւ, բայց նրան թւում է, որ կուրսերն աւարտելուց յետոյ ես պիտի գնամ ինչ որ Տուլայի նահանգը և այնտեղ գիւղական ուսումնարան բանամ: Մինչև անգամ ծիծաղս գալիս է, որ մայրս այդ մասին մի ինչ որ առանձին յափշտակութեամբ է խօսում: Ինչի՞ համար պիտի գնամ ընկնեմ ինչ որ Տուլայի նահանգը, երբ ուզում եմ ինձ նւիրել բացառապէս գեղարեստին և ամեն բան, կեանքի ամբողջ ճշմարտութիւնը գեղարեստի մէջ գտնել: Ահա մի իդէալ, ուր իրար են կցւում և՛ ուէրը, և՛ բաւականութիւնը, և՛ տանջանքը, և՛ ինքը բաղդը: Որպէս զի մարդ հեռանայ ցեխից, մարդկային ամեն տեսակ անարդարութիւններից և կենսական յուզմունքներից, որպէս զի մարդ մի կողմ քաշւած լինի «անուղղելից», պիտի իրան նւիրի գեղարեստին և այնտեղ բոլորովին մոռանայ իրան: Ընդհանրապէս նրա դատողութիւնների մէջ այնքան տարօրինակութիւն կայ, որ մարդ մտածում է—այդ մարդու խելքը զլխին է արդեօք: Մեր ընկերուհիների մեծ մասն այդ վերագրում է բարձր շրջանի ազդեցութեան և կեանքի չափից դուրս լաւ պայմաններին: Ո՛չ, ես նրանց հետ իսկի համաձայն չեմ: Նա մի բացառութիւն չէ այժմ: Միթէ լաւ պայմանները մարդուն միշտ պիտի փծացնեն: Զէ որ Կլաւդիայի թէ հայրը և թէ մայրը վերին աստիճանի համակրելի մարդիկ են: Նրա բոլոր դատողութիւններն ու արարմունքները ընդդէմ են նրանց համոզմունքներին: Ակամայ միտս է գալիս 80-ական թ-ի. մի այլ ուսանողուհի, որ Կլաւդիայի պէս լաւ պայմանների մէջ՝ ու բարձր շրջանի աղջիկ էր, բայց և որը իդէալ էր ուսուցանանց համար: Ահա թէ ինչ էին գրում նրա մասին հասարակութեան լաւագոյն ներկայացուցիչները. «Նա իրան նւիրել էր բժշկականութեան, բայց ոչ որպէս բժշկականութիւն-գիտութեան, այլ որպէս մի միջոցի»:

որով կարող էր կուլի և աղքատութեան ճնշման տակ հեծող դժբաղդ մարդկանց վիճակը իւրովսանն թեթեւացնել: Քանի անգամ են նրան հանդիպել ձեռնտու, փայլուն փեսացուներ, որքան դալթակղու-թիւններ է զրել նրա առաջ բարձր շրջանի կեանքն» իր վայել-չութիւններով, զւարճութիւններով և այլն! Վերջապէս ինչպէս հեշտ կարող էր այդ բոլորին նա հասնել իր ահագին միջոցներով! Բայց նա համր, խուլ ու կոյր էր դէպի իր մօտիկն ու շրջապա-տը... Նա ձգտում էր այնտեղ, հեռու, ուր հազիւ է ոտք դնում ու աչք ածում բարձր շրջանի մարդը. կամքը նրան ձգում էր այն մարդկանց մօտ, որոնք ամեն բան համբերութեամբ տանում են յանուն Քրիստոսին:

Յիշում ես, Նադեա, թէ ինչպէս էր յափշտակում մեզ Կլա-դիան և ինչպէս էինք նրանից մի ինչ որ առանձին բան սպասում: Եւս հարուստ բնաւորութիւն ունի, շատ անգամ կրկնում էր նրա մասին վիճելիս. դեռ մի թոյլ տէք, որ նա ջոկջրկի, որոշի իր զգաց-մունքները, և կը տեսնէք՝ որ ուժեղ աղջիկ կը դառնայ: Քո յոյսն ինչ որ չի արդարանում. և ինձ թւում է նրա համար՝ որ այդ տեսակ աղջիկներն իսկապէս այնքան հարուստ չեն, ինչպէս մեզ թւում է, այլ մենք ցանկանում ենք, որ այնպէս լինէին, ինչպէս մենք կ'ուզէինք նրանց տեսնել:

Ինձ թւում է, որ նա ուղղակի մի անսիրտ ու չոր, եսասէր աղ-ջիկ է, որ մոռածում է միայն իր յարմարութիւնների և զւարճու-թիւնների մասին: Պարշելի, զգեւի ու ծանր է լինում դրու-թիւնդ, երբ շուրջդ տեսնում ես այդպիսի սառնութիւն և անուար-բերութիւն:

Գիտե՞ս որ Վալոդեա՞ն մնաս բարով առաւ կեանքին, տեսնելով որ նա շատ անգոյն է և անպէտք, թողնելով մօրը մի շատ խիստ նամակ. Եւս սարսափելի յանցանք եմ զործում, գրում է մօրը, զրկելով սիրող մօրը իր միակ սիրելի որդուց: Ի՞նչ արած: Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես: Դու սիրելով սեփական ձեռքով սպանեցիր քո որդուն: Դու ինձ ծնած օրից զրկեցիր կեանքից. այն, այն կեանքից, որով պարծենում են իմ ընկերները, իրանց կենսութեամբ մանկութիւնը չիշելով: Իսկ ես. միթէ ես ունեցել եմ մանկութիւն: Ամեն բան մէջս դատարկ է: Անցեալում չկայ ոչ մի

փողովուն չիշողութիւն, ներկաս չիմարութիւն է, իսկ ապագան...
ապագային ես չեմ հաւատում...: Մի մտածիր է, որ աստիճանի
պիտի խիստ լինես, որ աչդպէս պատժես այն մարդուն, որ իր
կեանքը չի խնայել քեզ համար! Ինչո՞վ, ասա, ինչո՞վ բացատրել
այսպիսի անսովոր երեւոյթները, սիրելի Նադեա! Եթէ ամբողջ
կեանքն իրանց որդիների դաստիարակութեանը նւիրող ինտելիգենտ
ծնողների որդիներն այսպիսի անսիրտներ են դուրս գալիս, էլ
ի՞նչ պիտի լինեն միւսները: Ներիր, Նադեա, որ նամակս վերջացրի
բաւականին ցաւալի լուրով: Ի՞նչ արած, մէկը չլինի, միւսը կը
լինի... Վերջերս ընդհանրապէս թոյլ ու վատառողջ եմ: Մաշկ
մտքերն ինձ հանգիստ չեն տալիս: Աշխատում ես, չարչարում,
քափ ու քրտնքի մէջ կորչում... Ինչի՞ համար, որ ի՞նչ: Ո՞ւմն է
պէտք իմ կեանքը: Մնաս բարեւ. գրիր, գոնէ դու քո կենսալի յոս-
մակներով մխիթարիր ինձ:

Զո Սիրան:

Յիւրիս 18. .

Թանկագին Սիրան!

Զնայած որ ամբողջովին խրաժ եմ շտապ աշխատանքների
մէջ, բայց հէնց որ նամակդ ստացայ, իսկոյն նստեցի, որ պո-
տախտանեմ: Սիրելիս, քո նամակի տոնն ինձ իսկի դուր չեկաւ:
Զափազանց անասորժ է հոգեկան տրամադրութիւնդ: Անհրաժեշտ է,
որ անպատճառ փոխես դրութիւնդ: Փոքրիկ փոփոխութիւնը կեան-
քիդ մէջ մի բոլորովին նոր հոսանք կը մտցնի և չի թողնի, որ
միւսնոյն շրջապատը ընդմիշտ ստորադասի մարդուն և վրան միօրի-
նակութեան կնիք դնի: Այդ փոփոխութիւնը մի կողմ կը քշի այն
բոլոր յոռետեսական ուէակցիաները, որ առաջանում են քո մէջ:

Վրաս չափազանց ծանր տպաւորութիւն արաւ Վալդեմարի
ինքնասպանութեան լուրը: Խեղճ Եւգենիա Կարպովնա! Նրա դե-
ւիզն էր՝ ամեն բան որդկերանց համար, ոչինչ՝ իր համար: Շատ
իմ խօսել նրա հետ դաստիարակութեան մասին ունեցած հաշեացք-
ների ստիժով: Իր ինքնազոհ սիրով որդուն դարձրաւ խստաբարոյ
հրէշ-բռնակալ: Մանուկ հասակում նա ի՞նչ զարմացում էր իր

խելքով և ընդունակութիւններով: Ախր մայրը նրան աչքի լոյսի պէս ամեն փնասակար բանից հեռու էր պահում. միայն և միայն նրա պատճառով էր, որ ինքը զրկւում էր հասարակութիւնից, զւարճութիւններից: Ինչէր ասես որ չունէր երեխան: Որպէս զի Վալուգեան տարւի բնական գիտութիւններով, նրա համար առել էր շքեղ բուսաբանական ատլաս, խոշորացոյց, կազմել էր մի փոքրիկ ֆիզիկական կաբինէտ բոլոր յարմարութիւններով: Մի խօսքով, երեխան օրէցօր աւելի ու աւելի էր համոզւում, որ ինքն—Աստուած է և որ աշխարհը պիտի միայն նրա համար գոյութիւն ունենայ: Յիշում ես, Սիրան, թէ ինչպէս մենք զարմանում էինք նրա զարգացման վրայ: 10—12 տարեկան հասակում արդէն կարգացել էր բոլոր ուռւ գրողների գործերը և, որքան գիտեմ, դեռ մի անգամ էլ սկսել էր փիլիսոփայութիւն: Վժռող գրաւի. չի հասկանա՞յ՝ կը ձգի, հակաճառում էր իմ նկատողութիւններին Եւգենիա Կարպովնան, զժգո՞ր որ իմ գործը չի, և խառնւում եմ: Լաւ ճանաչելով այդ ընտանիքը, տեսնում եմ թէ մինչև որ աստիճան զայրացնող է այդ անսիրտ պատանու յանցանքը և, բացի այդ՝ թէ մինչև որ աստիճան պարզ է այդ ընտանիքի տւած կրթութեան հետեւանքը: Միթէ Վալուգեան չգիտէր մանուկ հասակից, որ Եւգենիա Կարպովնան զոհել է ընտանիքի գլխի՝ հօր և իր անձնական շահերը նրա համար: Անկասկած է, որ մանկան հոգին արտաքին յայտնի ներազդումներ է կրում և փոփոխութիւնների ենթարկւում իր զանազան դրութիւններում: Ոչ մի դրութիւն, որի մէջ եղել է մանկան հոգին, անհետ չի կորչում, քանի որ հոգեկան դրութիւնները ծնունդ են առնում այն ժամանակ, երբ կան արտաքին տպաւորութիւններ. եթէ այդ այդպէս է, այն ժամանակ հասկանալի է, որ ամբողջ շրջապատը, ուղղակի ամեն բան, որ մանկան շուրջն է, կարող է նրա հոգեկան կիանքի վրայ դնել այս կամ այն կնիքը: Աւելի բնական կը լինէր, որ նա այս բովանդակութեամբ տոմսակ թողնէր. «Բաւականաչափ կամք չունէի եսականութեանս յաղթելու համար»:

Ինչ վերաբերում է Կլաւդիային, մի՞թէ այստեղ ևս կամքի նոյն բացակայութիւնը չէ, որ խանգարում է ամուր հիմքերի վրայ կանգնել: Այդ բանում մասամբ ծնողները չէն մեղաւորները:

Որդեկերանց անձնական կեանքում նրանց միջամտութիւնը չափազանց չէ: Արդեօք ծնողները չափազանց յամառ կերպով չեն ստիպում իրանց զաւակներին, որ շարունակեն ծնողների սկսած շէնքի կառուցումը թափաճ-մնացած հին նիւթով, առանց որ իրանք համակերպեն ժամանակի պահանջներին և կեանքի պայմաններին: Հասկանալի է, որ մենակ ծնողներին մեղադրել չի կարելի, քանի որ շատ ու շատ այլ պատճառներ կան, որոնք օգնում են այդ խեղճ ու անկամք մարդկանց առաջանալուն!

Ընդհանրապէս բոլոր քաղաքակիրթ ինտելիգենցիան այժմ սարսափելի դրութեան մէջ է: Նախկին իդէալները կործանւած են, նորերը չեն ծնւում. այն ամենը, ինչին մենք հաւատում ենք, շատերի համար կորցրել է իր հրապոյրը. առողջ սպեկուլուցութեան տեղը հիւանդն է բռնել. ինչ որ հիասթափութիւն է երևում: Կարգա Նորդաուի Վատասեռութիւն գիրքը: Առանձին ուշադրութիւն դարձրու յառաջաբանի վրայ: Ահա թէ այնտեղ ինչ է գրած այդ դրութեան մասին: «Այդ դրութիւնը շատ պարզ արտայայտւել է ժամանակակից ֆիլոսոֆայութեան մէջ: Մէկը միւսի չեռելից ֆիլոսոֆայական նոր աշխարհայեացքներ են որ առաջ են գալիս, աշխարհայեացքներ՝ որոնք կատարեալ հակադրութիւն են քիչ առաջ եղած կենսութափ տրամադրութեան: Հէնց բաւական է յիշել Դոպենհայուէրին և նրա չգոյութեան քարոզը, Նիցշէին և նրա արհամարհանքը դէպի խուժանն ու ընտրեալ, արիստոկրատ բնաւորութիւններին բարձրացնելը, Տոլստոյին և նրա հրաւերը կեանքում նմանել խաւար ժողովուրդի զանգւածին, և այլն, որ մարդ հասկանայ՝ թէ որքան խոր է այն բեկումն, որ առաջ է եկել ժամանակակից ինտելիգենցիայի աշխարհայեացքի մէջ»:

Հէնց համաշխարհային երևոյթների այդ փոփոխութեան պայմանը սկսում է աւելի ու աւելի պարզ որոշւել մի աշխարհայեացք, որ մեր առաջ բաց է անում լաւագոյն ասպագայի հեռանկարը, որ հիմնւած է ոչ թէ այն ամենը բացասելու վրայ, ինչ թանկ է մեզ համար կեանքում, ինչ մեզ համար սուրբ է եղել, այլ հիմնւած՝ քաղաքական, հասարակական և անհատական այն սկզբունքների ամբողջման և զարգացման վրայ, որոնց չաղթանակի համար կռուել են մեր հայրերն ու պապերը և որոնց մենք ևս կուլած ենք պաշտ-

պանելու վերահաս «աղջամուղջից»։ Ես հաւատում եմ գիտութեան և ազատութեան մոռացող, բայց ոչ մոռացած իդէալների վրայ հիմնած ապագային։ Մեզ հարկաւոր է միայն ինքնադաստիարակութեամբ շատ պարապել մեր մի քանի ընդհանուր հիւանդութիւնների և պակասութիւնների դէմ կռելու և նրանց սանձելու համար. այդպէս են, օրինակ, իր մասին մեծ կարծիք ունենալու հիւանդութիւնը, եսականութիւնը, սկեպտիկական անհիմն վերաբերմունքը, ինքնագոհութիւնն ու անտարբերութիւնը, որ իր յետեւից միշտ քարշ է տալիս անշարժութիւն։ Այդտեղ, ահա, կարծում եմ, որ առաջին անգամ մենք պիտի դիմենք գիտութեան դաստիարակիչ նշանակութեան օգնութեանը։ Այո, գիտութիւնը կը բանայ մեր աչքերը և ցիր ու ցան կ'անի մեր առաջ փռւած մշուշը։

Այս րոպէին առաջս թափւած են զանազան դրքեր հոգեբանութեան, կենսաբանութեան և ֆիզիոլոգիայի մասին։ Այս բոլորը պիտի կարգալ, ուսումնասիրել։ Մէկը միւսից կարեւոր է, մէկը միւսից հեռաքրքրական։ Նրանք բաց են անում մեր առաջ մի նոր աշխարհ, որ առաջ ծածկւած էր մեր աչքից, մի ամբողջ աշխարհ երևոյթների, որոնք առաջ մեզ այնքան պարզ ու չնչին էին թւում, բայց և որոնք այնքան մեծ նշանակութիւն ունին մարդկային հասարակութեան և կեանքի համար... Ճիշտ է ասում Բիլ ինէրն իր դասախօսութիւնների յառաջաբանում թէ գպրոցում մեր գլուխը լցնում են գիտութեան չոր հատուածներով և մեզանում ոչնչացնում մարդկային մտքի նշանաւոր գծերից մէկը — ռիտմը ընդունակութիւնը. և այդ բանն աւելի շատ այն մարդկանց վրայ է նկատւում, որոնք լաւ թւանշաններ են ստանում։ Եւ միթէ նրա ասածը սո՛ւտ է։

Զո Նադեա:

Լայքցիգ 18...

Սիրելի Սիրան!

Երկու շաբաթ է ինչ ձգել-թողել եմ իմ խաղաղ անկիւնն ու բնակութիւն հաստատել Լայքցիգում։ Հաճելի չէր և ծանր էր ինձ համար Զւիցերիայից բաժանւելը. այնտեղ են անցել ուսանող

դուժեանս լաւագոյն տարիները: Համոզւած եմ, որ անպայտում ամենալաւ տպաւորութիւններս Զւիցերիայից կը լինեն: Ոչ մի բան մարդու վրայ այնպէս ուժեղ տպաւորութիւն չի կարող անել, ինչպէս բնութեան զեղեցկութիւնը! Մարդու ձեռքի արգասիքները շատ չնչին խաղալիքներ են թուում լեռների և լճերի, հովիտների և գետերի յափշտակիչ զեղեցկութեան առաջ: Ո՛րքան զեղեցկութիւն է սփռած այդ փոքրիկ Շամոնի հովտում, որքան հրապոյր այդ հսկայական սառցադաշտերում՝ շրջապատւած ձիւնապսակ լեռներով, որոնցից թափ առած իջնում են անհամար մանր ջրէփներ... Նկարչութիւնն էլ, երաժշտութիւնն էլ, բանաստեղծութիւնն էլ — բոլորն էլ այդտեղ ի մի են ձուլւած:

Ոչ մի տեղ մարդկային հասարակութիւնը հասարակական կեանքի այնպիսի շէնք չի կառուցել, ինչպէս այստեղ, ուր նա իդէալի աստիճանին է հասնում: Եւ ազատ զւիցերիացին կարող է հսկարտութեամբ ասել՝ թէ ինքը «Զւիցերիայի քաղաքացի» է: Այդ հսկարտութիւնը, որ այնպէս նկատելի է զւիցերիացու թէ դէմքի վրայ, թէ խօսակցութեան, թէ պրականութեան և թէ անհամար հայրենասիրական երգերի մէջ, մի անպատուութիւն չէ նրա համար. նա իրան անարժան կը համարէր այդ ազատութեան, եթէ նրանից հսկարտութեամբ չօգտւէր: Ո՛չ պրուսացու շովինիզմն է այդ, և ո՛չ անգլիացու իր վրայ մեծ կարծիք ունենալը: Այո, հէնց Զւիցերիայի բազմն այնտեղ է բանել, որ արտաքինից փոքր է և թույլ, իսկ ներսից, ընդհակառակ, ուժեղ և երջանիկ: Համաշխարհային արտաքին քաղաքականութիւնը, որ հիմնւած է ազգերի եսականութեան վրայ և որն ընդունակ է միայն եսականութեան թունաւոր պոտղաներ բերել, Զւիցերիայից շատ է հեռու: Եթէ կան հարցեր, որոնք իր սահմաններից դուրս հետաքրքրում են նրան, այդ մարդկութեան, արդարութեան, համերաշխութեան և ճշմարիտ քաղաքական կըրթութեան հարցերն են:

Թախծիս երկրորդ պատճառն էլ շատ հասկանալի է. միսս Բեռտիից բաժանւելս էր, որին այդ չորս տարւայ ընթացքում շատ խիստ էի ընտելացել: Նա առաջինն էր, որ ինձ համար պարզեց ազատութեան նշանակութիւնն ու մէջս ներշնչեց լուազոյն զգացմունքներ, հաւատ զարթեցրաւ դէպի փայլուն ապագան... Նրա եռանդի և

ձեռներէցութեան շնորհիւ ես շատ քան սովորեցի: Արտասահմանցի աչդ կին ուսանողները ինչ որ կարողանում են ազատ ժամանակից ալ կերպ օգտուել: Նրանց վերաբերմունքը դէպի պարսպմունքները շատ խիստ, նոյն իսկ պեղանտական է: Բանը որ հասնաւ զւարճութիւններին, այդտեղ էլ են կարողանում հաճելին օգտակարի հետ միացնել: Մեր միսս Բետտին ընկերուհիների շրջանում համարւում էր նախաձեռնութիւնների և ճանբորգութիւնների առաջնորդ: Նա շատ լաւ գիտէր թէ որ քաղաքում աչքի ընկնող երկրի ցուցահանդէս կաշ, որտեղ՝ համերգների սեզոն և ուր՝ նշանաւոր մարդկանց դերիւաներ, որտեղ կոնքրէսներ, ժողովներ և ուր՝ տեսելու, ուշադրութեան արժանի բաներ, և այլն: Նա ինչ որ ամենքին կարողանում էր ոգևորել և գրաւել, իր յետեից ամբողջ խումբ քաշ տալ: Անկարելի է որ ես երբ և իցէ մոռանամ Զւիցերիայում արած մեր ճանբորգութիւններն ու հարիզում անցկացրած ուրախ օրերը! Ազատութեան աչդ պաշտպանն ու ջատագովը, իր խիստ, միապետին յատուկ պահանջներով, իր հպատակ ճանբորգ կանանց յուսահատութեան հասցրաւ: Առաւօտից սկսած մինչև երեկոյ մենք զգւածի պէս վազում էինք նրա յետեից: Ինչեք ասես, որ չենք տեսել աչդ կարճ միջոցում: Այժմ, երբ ես բաժանւել եմ նրանից, կրկնակի գնահատում եմ նրա բարեկամութիւնն ու զիտակցում նրա բարեկամութեան արած բարեբար ազդեցութիւնը: Ի՛նչ ողորմելի է այն եկւոր ուսանողուհու վիճակը, որ միայն պիտի բաւականանայ իր տանտիրուհու ընկերութեամբ, դասախօսութիւններով և զիտական դրքերով: Դասախօսութիւններն ու դրքերը շատ լաւ են, բայց այն՝ ինչ տալիս է ինքը՝ արտասահմանի եռուն կեանքը, չի կարող տալ ոչ մի գիտական գրւածք: Գուցէ դու ասես՝ դէ ամեն անգամ հօ չի կարող աչդպէս բաղդաւոր դիպած պատահել: Ա՛յ. միշտ—միայն թէ ցանկութիւն լինի: Փնտռիր՝ կը գտնես:

Ճիշտն ասած ես նոր եմ կառարելապէս հասկանում թէ ինչու Աշխատաւորեանն ինձ խորհուրդ չէր տալիս այնպիսի տեղ գնալ, ուր շատ մարդիկ կան մեր հայրենիքից: Հայրենակիցների մըշտական մօտիկութիւնն ու նրանց հովանաւորող վերաբերմունքը դէպի եկւոր աղջիկները, միջոց չեն տալիս, որ նրանք բացեն, շրջահայեաց լինեն, ինքնուրոյնութիւն մշակեն: Բոլորովին հեռու

մնալով եւրոպական կուլտուրայից, նրանք չեն նկատում հասարակական կեանքի հոսանքը: «Կենդանի մարդկանցից» անջատ լինելն ու առանձնութիւնը յայտնի կնիք են դնում նրանց վրայ: Նրանք կամ չափից դուրս կենդրոնացած են պարապմունքների վրայ և ապագայ «բա-բլէօներ»¹⁾ են պատրաստուում՝ բոլորովին անպէտք հասարակական գործունէութեան համար, կամ թէ, միակողմանի, շարունակական կեանքի պատճառով, սառչում մնում են յայտնի դադափարների վրայ: Իմ կարծիքով ոչ միայն աղջիկն է որ պիտի ձգտէ առնչութիւն ունենալ օտարերկրացիների հետ, այլ և ուսանողները, որոնք դաստիարակութեամբ խկի չեն տարբերում իրանց քոյրերից: Եկւորը՝ ուսանող լինի թէ ուսանողուհի՝ բոլորովին նոյն պայմանների մէջ է դրած:

Ասում են՝ թէ մեր հասարակութիւնն առանձին հաւատ չունի դէպի արտասահմանի ուսանողները. ինչքան տարօրինակ բան է այդ! Մեր երիտասարդները հազարներով են գնում ուսւ համալսարանները. միթէ բոլորը աչքի ընկնող հասարակական գործիչներ ու ազնիւ մշակիւնք են դառնում: Ինչո՞ւ հասարակութիւնն այնպէս զիջող է, երբ բանը զախս հասնում է այդ հազարներին, և այնքան խիստ է դէպի արտասահմանի ուսանողները: Նա կարծիք է կազմում նայելով այն պարոններին, որոնք արտասահմանում քամուն են տալիս հայրական փողերը դրանց քաղաքակրթութիւնը հազիւ մի քիչ քսել է, անցել: Մի՞թէ կարող է եւրոպական կուլտուրան ազդել մի մարդու վրայ, որ ներսից է փուճ: Բաւական է, որ այդ մարդն իր արտասահմանի վերարկուն մաշի, որ էլի նոյն կոշտ ու կոպիտ նիւթը դառնայ, ինչ որ առաջ էր: Բոլոր եկւորներն այստեղ իրանց ուսանող են հռչակում. մինչդեռ իսկապէս ամենափոքր մասն է միայն, որ ուսանող կարող է համարւել: Մի մասն այն գերուկներն են, որոնք քամուն են տալիս հայրական փողերը, միւս մասը՝ «թերուսներն են» — քաղաքակրթութեան սիրողները, մի մասն էլ «գործնական մարդիկ», որոնք ճանաչում են կրթութեան կարեւոր նշանակութիւնը, միայն

¹⁾ Չգիտեմ ինչպէս ասեմ հայերէն bas bleu կամ сивіе чулки.

Նադեա:

ասում են, որ կրթութեան և գիտութիւնների համար ժամանակ է հարկաւոր, իսկ ժամանակը մեզ չի նայում: Պալով զուտ ուսանողներին, պիտի ասել, որ զործի վրայ վերին աստիճանի լուրջ նայող մարդիկ են: Մանաւանդ հաճելի տպաւորութիւն են անում Գերմանիայի ուսանողները, որոնք գերմանացի ուսանողների նման կազմել են Վերայն-ներ, աշխատում են մօտենալ օտարերկրեայ ուսանողներին, մոտում են նրանց կեանքը, հետաքրքրւում նրանց հասարակական շարժումներով: Այդ հասարակութիւնը, որ այնքան էլ հաւատ չունի արտասահմանի ուսանողների վրայ, իսկի իրան հարց է տւել թէ ինչ մտաւոր ու բարոյական կրթութիւն են ստացել կեանքի պայմաններից ու ընտանեկան դաստիարակութիւնից այն ջահիլները, որոնք արտասահման են դիմում: Ուսանողները գալիս են այստեղ գիտելիքների այնպիսի աղքատ պաշարով և դաստիարակութեան այնպիսի պակասներով, որ սկզբում ուղղակի չեն իմանում թէ ինչ և ինչպէս սովորեն ու ինչ անեն կեանքում: Քնդհանրապէս մեր կեանքի պայմանների և արտասահմանեան կեանքի միջև այնպիսի խոր անդունդ կայ, որ դեռ շատ դժւարութիւն պիտի քաշեն, որ նոր ընտելանան այդ կեանքին:

Մենք շատ մեծ կարիք ունենք այնպիսի մարդկանց, որոնցից շատ բան կարելի լինէր ստանալ, ասում են հայրենակից նորեկ ուսանողները: Նրանց ղեկավարող դերն անհրաժեշտ է գիտութեան այլ և այլ բնագաւառներում: Մանաւանդ այն հասակում, երբ մարդ յողորդ է իր հայեացքներով և անկարող է ինքնուրոյն կերպով վճռական գերակշռութիւն տալ որ և է խնդրում որ և է կողմին: Բնոյթի երկւութեան հասակն է այդ. ամեն բան պրոբլեմ է թւում, ամեն տեղ՝ իրար հակասող ապացոյցներ, ամեն տեղ՝ առանց չբացատրած իրողութիւններ ու տւեալներ: Խեղճ ուսանողի օրն ամեն տեղ վատ է, առանձնապէս՝ արտասահմանում:

Այստեղ լաւագոյն ընտանիքներում մոռաք ունենալու համար անհրաժեշտ է, որ փող ունենաս ու լաւ հաղնւած լինես, դանգաւում էին մօտ օրերս ջահիլ ուսանողները: Միւս կողմից էլ արտասահմանի կեանքն այնքան շատ բան է տալիս նրանց, այնքան բարձր զգացմունքներ է արթնացնում նրանց մէջ, որ դժւար է երեւակայել թէ ապագայում նրանք չեն լինելու աշխատաւոր և

ուժեղ կամքի տէր մարդիկ: Շատ հասկանալի է, որ ես ներքին բովանդակութեան տէր մարդկանցն ունիմ աչքիս առաջ:

Մօտ օրերս այստեղ էր աղատութեան մեծ պաշտպանը՝ Բէբէլ, որ բացառապէս զբաղւած է բանւորների, մասնաւորապէս՝ կին բանւորի վիճակով: Նրա անունն այստեղ ծծից նոր կտրածն անգամ զիտէ: Պիտի տեսնէիր թէ ինչ ուրախ ճիշերով ու շքով հանդիպեց նրան հազարանգամ ամբօխը! Չեն կարող գրչի տակ ընկնել այն զգացմունքները, որ մեր մէջ զարթնում էին այդ մեծ ճառախօսին լսելիս: Այդ հօօր, անմիտ անբօխը, որ կատաղած ովկեանոսի պէս ընդունակ է կլանել ամեն բան, մեծ մարդը երեաց թէ չէ՝ միանգամից համրացաւ և սառած՝ մնաց տեղն ու տեղը մեխած: Ամբօխը լսում էր երկիւղածութեամբ: Ահա այն խօսքերը, որ վերջ դրին նրա ոգևորիչ ճառին. «Մեր անտեսական կազմակերպութեան մէջ մի սարսափելի ակտ կայ, որ աղքատութիւն առաջ բերողն է և որին, ինչ էլ լինի, պիտի յաղթել, եթէ չէք ուզում ոչնչանալ. այդ—ընտանեկան կեանքի ոչնչանալն է: Կինը, բանւոր դառնալով, դադարում է կին լինել: Այդ աչքից հեռու, համեստ, լծանկ կապերով շրջապատւած կեանքի տեղ, որ այնքան հարկաւոր է թէ նրա և թէ մեր երջանկութեան համար—որպէս անխուսափելի, թէև ոչ ուղղակի, հետևանք—նա ապրում է քարգահի իշխանութեան տակ, կասկածելի բարոյականութեան տէր ընկերուհիների շրջանում, անդադար շփման մէջ աղամարդկանց հետ, հեռու ամուսնուց և երեխաներից: Վերականգնէք ընտանեկան օջախը: Կամքի դպրոցը—օջախն է: Այդ օրհնած կենդրոնից են ծագում մեծ կապերը և աշխատանքի ու կուէի համար ամուր կոփւած բնութորութիւնները»:

Պիտի ասել, որ Գերմանիայի հասարակական կեանքում ներկայումս ամենահետաքրքրական հարցը—բանւորական հարցն է: Մօտ օրերս Համբուրգում մի մեծ բանւորական գործադուլ եղաւ, որն իւր յամառութեամբ հասարակութեան զարմանքն է բերում: Բանն այն է, որ գործատէրերը ոչ միայն չեն ուզում բանւորների պահանջներին բաւարարութիւն տալ, այլ և սկզբունքով չեն ցանկանում ճանաչել բանւորների կապակցութեան իրաւունքը և հրաժարում են նրանց հետ՝ որպէս հաւասար ուժի հետ՝ որևէ փոխադարձ բա-

նակցութիւն ունենալ: Եւթ թող մի նրանք անձնատուր լինեն, դիմեն մեր ողորմածութեան և վերսկսեն աշխատանքը, ապա միայն մենք կը հարցնենք թէ ինչ են ուզում, ասում են գործատէրերը: Գործատէրերի այս վերաբերմունքն աւելի ևս արմատացրաւ բանւորների յամառութիւնը, որոնց միակ պաշտպանութեան զէնքը՝ կապակցութիւնների իրաւունքն էլ ուզում են խլել: Այսպիսով վէճը դառնում է սկզբունքի վէճ: Հասարակական կարծիքի լաւագոյն մասը բանւորների կողմն է. այդ թւում, մինչև անգամ, մի քանի պահպանողական օրգաններ ևս:

Գիտե՞ս ինչ, Սիրան. թէ և միջին և բարձր դասի գերմանուհին եւրոպացի բոլոր կանանց հետ համեմատած շատ ողորմելի դրութեան մէջ է, բայց գերմանուհի-բանւորը իր եղբայրների շրջանում շատ նշանաւոր դեր է խաղում: Բանւոր կանանց մէջ կան ազիտատորներ, որոնք զէնք են դարձնում բանւորների մի ամբողջ խումբ. շատ անգամ պրոպագանդայի համար նրանք ստիպւած են լինում մի գործորանական քաղաքից միւսը գնալ: Այդ կանանց մէջ ուղղակի հերոսուհիներ կան: Չնայած իր ստոր դրութեան՝ Լեռնապացի կնոջ մէջ ձգտումն է նկատում դէպի ներգործական հասարակական դերը: Ես բախտ ունեցայ Ձւիցերիայում ծանօթանալու մի աւքի ընկնող կնոջ՝ Տիկ. Պորտուգալի հետ, որ յայտնի է իր մանկավարժական գրւածներով և դասախօսութիւններով: Նա իր պարտականութիւնն է համարում քարոզել մանկապարտէզների դադափարը. և գնալ-գալով Ձւիցերական քաղաքները, դասախօսութիւններ կարդալով նրանց մեծ նշանակութեան մասին, յամառութեամբ ու եռանդով օգնում է մանկապարտէզների բանալուն:

Նրա նման մի ուրիշն էլ Լալբրիգում՝ տիկ. Հենրիէտ Գոլդսմիտը՝ն է, որ իր ձեռներէց բնաւորութեան և եռանդի շնորհիւ ընտանեկան և ժողովրդական դաստիարակութեան զարգացմանն օգնող մի ընկերութիւն է հիմնել: Ընկերութեան նպատակն է՝ կազմել բեկերատներ դաստիարակչութեան բնագաւառից, տարածել մանկավարժական հարցերին ներած ամապիրներ ու գրւածքներ, առիթ տալ վէճերի, ուր գիտութեան հիմնական կանոնների շարքում տեղ կը լինի տւած և մտածող մայրերի փորձառութեան. նա ձգտում է կանանց մէջ ամրացնել դէպի ժողովրդի և սեփական

ընտանիքն ունեցած պարտականութեան գիտակցական կատարումը, որ այդպիսով, մեր ժամանակի հոգուն համաձայն, կինը կարողանայ դառնալ իւր ամուսնու օգնականն ու աճող սերունդի դաստիարակչուհին: Հարկաւոր է ասել ընդհանրապէս, որ վերջերս զրեթէ բոլոր պետութիւնների մէջ կանանց հարցին վերաբերող մի ուժեղ շարժում է նկատուում:

Թէև Ֆրանսիացու ազգային բնաւորութեան մէջ շատ խիստ է արմատացած դէպի կինը «թեթև» վերաբերելու սովորութիւնը, բայց Օրլէանի կոյսը, որ հրաշալի դեր է խաղացել Ֆրանսիայի ազատութեան գործում անգլիացիների արշաւանքից, Մարիա Մեդիչին, որ իրան ներում էր ամեն բան, բայց և որին ոչինչ չի ներել սերունդը. տ. տ. Մենտենոն, Պոմպադուր, Դիւրարի՝ յայտնի ժամանակաշրջանի ամենազօր թագուհիները, իր իշխանութեամբ հպարտ և այդ հպարտութեան մէջ ոտքերի տակ գտնւող հրաբուխը մոռացած Մարիա Անտուանետը, նշանաւոր Ռուանը, յայտնի Շարլոտ Կորդիէն՝ Մարտի ջղացոյց սպանողը, աիկիներ Ստալ, Ժ. Զանդ, Լուիզ Միշել և շատ ուրիշները, միթէ կենդանի օրինակներ չեն Ֆրանսուհու մէջ միշտ գոյութիւն ունեցող ձգտման դէպի ներգործական հասարակական դերը: (Ի միջի այլոց. ինչ սպաւորութիւններ եմ կրել բոլոր վերը յիշած անձերի թանգարաններում համապատասխան կահաւորութեան մէջ տեսնելիս!): Ֆրանսիան հաշուեց վերջապէս իր աւանդութիւնների հետ և համալսարանի դռները բաց արաւ Ֆրանսուհու առաջ: Բացի դրանից, եթէ չեմ սխալւում, նա առաջինն էր, որ հիմնեց կանանց կրթութեան կապակցութիւն: Այդ տեսակ կապակցութիւններ այժմ բոլոր պետութիւնների մէջ կան: Այդ կապակցութեան նպատակն է զարթեցնել հասարակական կարծիքը ընդհանրապէս դաստիարակութեան վերաբերող հարցերի մանաւանդ կանանց դաստիարակութեան համար, որ շատ կարեւոր է ամբողջ ժողովուրդի համար: Ամեն ջանք գործ դնել ու տարածել միջոցներ, որոնք հնար տան կանանց, դպրոցական շրջանից յետոյ, բարձրագոյն կրթութեամբ զբաղւելու:

Պիտի յուսալ, որ Ռուսաստանն էլ կամաց կամաց կանանց կրթութեան կապակցութիւններ կ'ունենայ և համբերութեամբ սպասող ռուս կինն էլ շուտով կ'արժանանայ այն օրին, երբ նրա եղբայրները բաց կ'անեն համալսարանի դռները նրա առաջ:

Զւիցերիայում եղած կանանց վերջին կոնգրեսը, ուր յաջող-
վեց ինձ ներկայ լինել Բեռտոլի հետ, ահագին նշանակութիւն ու-
նէր եւրոպացի կնոջ համար: Իրաւական կողմից կնոջ դրութիւնը
Զւիցերիայում, չնայած երկրի քաղաքական ազատութեան, նոյն ցած
աստիճանի վրայ է, ինչ որ Ֆրանսիայում: Կանանց այդ ազգային
կոնգրէսը նրանց ճնշման դէմ կռւելու առաջին քայլը պիտի անէր:
Ուստի շատ պարզ է, որ բեֆերատների մեծագոյն մասը կանանց
տնտեսական և իրաւական ազատութեան էր վերաբերում: Կոնգրէսն
ընդունեց հետեւեալ վերջնական որոշումները. պահանջել, որ աշխա-
տանքը վարձատրւի իր արժանիքի համեմատ, առանց ուշադրու-
թիւն դարձնելու թէ ով է այդ աշխատանքի կատարողը, կանանց
հաւասար իրաւունք և մոռցը տալ բոլոր տնտեսական և ապա-
հովազրական ընկերութիւնների մէջ մտնելու, տալ սեփական կայք
ունենալու և այդ կայքը կառավարելու իրաւունք, իրաւունք՝ դա-
տարաններում վկայ լինելու, և այլն: Կին վերատեսուչներ նշանա-
կել գործարանների վրայ. մի խօսքով, քաղաքական կատարեալ
նոյնիրաւութիւն Զւիցերիայում: Հեռու լինելով, սակայն, քաղա-
քական կեանքից, Զւիցերիայի կինն իր գործունէութիւնն աւելի շատ
հասարակական կեանքում է զարգացրել: Մի բեֆերատից երևաց,
որ այդ փոքրիկ երկրում, ուր $1\frac{1}{2}$ միլիոն կին կայ, մօտ 5,200 կան-
անց ընկերութիւններ կան, որոնց համարեա կէսը՝ բարեգործական:
Որքան էլ լաւ էին կոնգրէսի որոշումները, բայց իմ ստացած տպա-
ւորութիւնն այնքան էլ մխիթարական չէր: Կոնգրէսին, բացի մի
տաս-քսան տղամարդից, միայն կանայք էին մասնակցում: Բե-
ֆերատները մեծ մասամբ կարդում էին տղամարդիկ. վիճողներն էլ
նրանք էին: Կանայք, որ քիչ էր մնում թէ դաշնակցութեան խոր-
հրդում նախագահելու իրաւունք պահանջէին, հէնց իրանց սեփա-
կան գործի մասին խօսելու ընդունակութիւն չէին ցոյց տալիս:
Ոչ առանձին ոգևորութիւն էր նկատուում, ոչ էլ առանձին իտելի-
զենցիա, որ կարելի էր սպասել մի այդպիսի ազգային կոնգրէսում:
Ի հարկէ, այդ չի նշանակում՝ թէ նրանց պահանջներն իրաւացի
չեն. հէնց կանանց անվճռականութիւնը շատ լաւ օրինակ էր, որ
նրանց արած պահանջներն անհրաժեշտ են:

Մանկավարժական հարցերից երկար վիճաբանութիւն առաջ

բերաւ աղջիկների և տղաների միատեղ դաստիարակելու հարցը: Կոնգրեսը որոշեց, որ առանց ուսման ֆինասելու, կարելի է գլուխ բերել միատեղ դաստիարակելը մինչև աշակերտների 12—13 տարին:

Մենք եղանք նաև մարդաբանների կոնգրեսում, ուր շատ հետաքրքրական հարցեր էին քննուում, որոնք թէ գիտական և թէ սոցիալական բնաւորութիւն են կրում: Առանձնապէս հետաքրքրական էին Խալիլայի ներկայացուցիչների՝ Լոմբրոզոյի և Ֆերրիի բարձրացրած հարցերը: Առաջինը, որ մի իսկական մարդաբան է և պիտիատր, ներկայացրաւ իր տեսութիւնը «բնականից ոճրագործ ծնւածներին» մասին: Նրան հակաճառեցին Փրանսիական դպրոցի ներկայացուցիչները, հակադրելով «ոճրագործներ», որպէս շրջապատող միջավայրի և բոցիալական պայմանների արդասիք: Հարկաւոր է նշատել, որ այստեղ խօսում էին գիտութեան մարդիկը հզօր ֆակտերի և զիւտոլոյիստների զէնքը ձեռներին, իսկ այնտեղ՝ կանանց կոնգրեսում, կնոջն օյնելու մարդասիրական ցանկութիւններով լի մարդիկ, որոնք չունէին գիտական հայեացք իրանց հետաքրքրող հարցի մասին և բոցիալական երևոյթներն այնքան էլ խորը չէին քննած: Ընդհանրապէս այդ երկու՝ մարդու և ամբողջ կորպորացիաների մոտճոյութեան և գործողութեան՝ կոտեգորիաները ոգեւորում են ինձ և սովորեցնում աւելի լուրջ վերաբերմունքի թէ՛ զէպի իմ անձը և իմ է՛ զէպի շրջապատող հասարակութիւնը: Մենք այժմ համարձակ կարող ենք ասել, որ մեզ հիմի հանճարներ չեն հարկաւոր, այլ գիտութեան և քրտնաջան աշխատանքի մարդիկ: Մեք էլ հերոսների մամանակը. այժմ հասել է աշխատաւորների մամանակը: Այդ ետեւ, անսանձ կեանքի ազդեցութեան տակ իմ մէջ լուրջում է աղնիւ ու զժւար, դժւար, բայց օգտակար գործունէութեան ծարաւը: Ես ուզում եմ թուշել հայրենիք, ինչպէս սիրող մայրը հացը ձեռին շտապում է քաղցած որդիների մօտ: Մի քանի ամիս՝ և ես տանն եմ!

Քո նաղես:

Ք. Տ. Հէնց այն է ուզում էի նամակս փակել, որ ներս մտաւ հայրենակից երիտասարդ ուսանողներից մէկը, ձեռին մի նամակ, և հաղորդեց մի մեծ նորութիւն: Հեռագրով տեղեկացնում են Յիւրիսից,

որ կանտոնի խորհուրդը ձայների մեծամասնութեամբ ընդունել է կանանց ընտրողական իրաւունքի ծրագիրը: Այսպէս ուրեմն Յիւրիսի կանտոնի կանայք առաջինն եղան, որ ձեռք բերին ընտրողական իրաւունքը: Անգլիական պարլամենտում ևս քննուում մի ծրագիր, որով կանայք իրաւունք են ստանալու պարլամենտական ընտրութիւններ անելու: Հաւանօրէն հետեւեալ ընտրութիւններին կինն էլ ձայն կ'ունենայ պարլամենտում: Այս պարագոյս ու անխրոնիզմ մեր ականջի համար! Այնպէս չէ, Սիրան: Իսկ նամակը Աշխատաւորեանն էր գրել, առանձին ոգևորութեամբ գրում է իր նոր գործունէութեան մասին և ինձ հրաւիրում իր կալածքը հիւանդանոց բանալու:

Նոյն:

Թիֆլիս 18...

Թանկագին Նազեա!

Իսկի հաւատալս չի գալիս թէ վերջին անգամն եմ քեզ նամակ գրում: Միթէ իրկու ամսից յետոյ քեզ Թիֆլիսում եմ տեսնելու: Քո գալովը կեանքիս մէջ ինչ որ փոփոխութիւն եմ սպասում: Ինձ թւում է, որ այն ժամանակ միայն ես կ'ըզգամ կեանքի լիութիւնն ու վայելչութիւնը: Քո գալուց երկու ամիս յետոյ Նինոյկաս էլ կը վերջացնի քննութիւնները և մանկավարժութիւնն աւարտած՝ կը դառնայ այստեղ: Կը հաւատամ, կարծես նոր է ինչ ծնել եմ, որովհետեւ մինչև այժմ իմ կեանքն ինձ շատ անգոյն ու անգործ էր թւում, իսկ այժմ՝ կեանքի նպատակ ունիմ: Նինան կուրսը կը վերջացնի և հաւանօրէն դաւառում որ և է տեղ դպրոց կը բանայ: Նատաշան պաշտօն ունի մի մասնաւոր դպրոցում, այնպէս որ առանձին անհրաժեշտութիւն չկայ ընտանիքին մօտ լինելու: Զարմանալի աղջիկ է այդ Նատաշան! Դպրոցի և մասնաւոր դասերից ամսական 60 ռ. է ստանում և տան համար ոչ մի կոպէկ չի մսխում: Դպրոցն ու դասերն ամենեւին չեն հետաքրքրում նրան: Ամբողջ աշխատանքը զուբսի ու վայելքների վրայ է ծախսում և զոնէ մի բոպէ չի մտածում ապագայի մասին: Կարծում եմ, որ տանից դուրս գամ՝ նրա համար լաւ դաս կը լինի!... Քրոջս նմանները

շատ անգամ յոյս ունին, թէ բարեկամներն ու ազգականները նրանց կը տան ապրուստի լաւ միջոցներ, ապաստում են՝ տեսնեն արդեօք չի հանդիպի մի յարմար զոյգ, որ սեփական աշխատանքով ապրելու անհրաժեշտութիւնից ազատի իրանց, անգործ նստած՝ դրսից են օգնութիւն սպասում, մինչ դեռ ժամանակն անցնում է, և շատ է պատահում, որ բարեկամներն ու ազգականները օգնութիւն չեն տալիս, ոչ մի յարմար զոյգ նրանց չի հանդիպում, հանդիպածն էլ համապատասխան չի սպասածին, և այսպիսով ջահիլ աղջիկը, ծնողների մահից չետոյ, առանց ապրուստի միջոցների է մնում: Մինչ դեռ անցնում են ջահիլ օրերը, աշխատանքի լաւագոյն ժամանակը և երբ այդ տեսակ աղջիկը փորձ է անում իր հացը սեփական աշխատանքով ճարելու՝ տեսնում է որ այլևս ընդունակ չէ աշխատանքի: Բայց ընդհանրապէս որքան աւելի երջանիկ են գործունեաց կեանքով ապրողները, քան պարապութեան դատապարտւածները! Սկի, ևկի, բարեկամ, սկսի ծրագիրներդ իրականացնել: միայն պարզն ասած, ես ցաւում եմ քո վրայ: Այդ կեանքից չետոյ, ուր այդպիսի յարգանք կայ դէպի ուրիշի անձնաւորութիւնը, ուր ամեն երեխայ զիտակցում է՝ որ ինքը «մարդ» է, ուր չկան նախապաշարութիւններ, ուր ամեն բան ձեռք է բերում ինքն իրան, ուր հասարակական կեանքի հոսանքը այնքան մօտ չի քսւում քեզ, ուր դու աւելի հանդիսատես ես, քան զերակատար, պիտի դաս աչտոնդ և ընկնես բոլորովին այլ պայմանների մէջ: Աչտոնդ, տանը պիտի երես առ երես կանգնես կեանքի ծանր կռիւ հետ, աչտոնդ ամեն բան քո կաշւին վերաբերմունք կ'ունենայ: Արիացիր, սիրելիս, աւելի և աւելի ուժ ու կամք հաւաքիր, քեզ միշտ յաղթող զգալու համար: Քո անվախութեամբ ոգևորիր մեզ՝ որ հոգով ընկած ենք, վերականգնիր մեր միջի ուժերը: Քո եռանդոտ զորքերի ազդեցութեան տակ զուցէ մեր արիւնն էլ կայտառ հոսի և սիրտն աւելի ամուր բաբախի!

Ըն Սիրսն:

Լայպցիգ. 18...

Թանկագին Սիրան!

Վերջապէս, ես էլ պատրաստուում եմ ճանապարհ ընկնել «այնտեղ, դէպ այնտեղ, հայրենի լիւնները»: Այս րոպէին նստած եմ սենեակումս, ցիր ու ցան իրերի մէջ, շրջապատւած հայրենակիցներով. նրանց եղբայրական վերաբերմունքը ուղղակի լացս բերում է: Նրեկ ինձ համար մնաս-բարովի քէֆ էին սարքել: Ո՛րքան ճառեր, որքան բարեմասթուլութիւններ! Նրանցից ամեն մէկը զարմանալի պերճախօս էր դառել և իր պարտքն էր համարում մի քանի ճառ ասել այդ երեկոյ: Միայն պակասում էր քրոնիկէօր մեր պարբերական կեանքի համար, որ մեր բոլոր ասածները թղթի վրայ առնէր ու ցոյց տար մեզ 20 տարի յետոյ: Թէև հազիւ թէ իրական կեանքը մեզ կարողանայ ցիտտել և իր սովորական տղմի մէջ խրել: Խօսում էինք լուրջ կրթութեան, մեր գիտելիքների մասնագիտացման, բազմակողմանիութեան, ինտելիգենտութեան մասին, կնոջ շարգելու և սիրոյ սրբութեան մասին... Մի խօսքով, դու շատ լաւ գիտես, թէ այդ հասակում որքան զեղեցիկ և պերճ լեզու կարելի է դործ ածել: Ես հաւատում եմ, որ այդ բոլորն անկեղծութեամբ էր ասւում, համոզմունքով, որ այդ բոլորն առաջին անգամը է՛ք լն՛ք ասւում է, այլ կրկնել է մեր նախորդների՝ նախորդ ուսանող սերունդների օրով: Բայց ո՛ւր են, ո՛ւր այդ սերունդները: Մենք ճանաչում ենք անձնաւորութիւններ, բայց սերունդներ—ամենևին: Իմ խորին համոզմունքն է, որ այս երիտասարդութիւնը դիմելով գիտութեան ճշմարիտ որ դաստիարակիչ նշանակութեան, ցիր ու ցան կ'անի այն անվստահութիւնն ու կանխակալ կարծիքները, որ ունի հասարակութիւնը ժամանակակից երիտասարդութեան մասին:

Այսօր ցերեկւայ ժամի 12-ին դուրս եմ գալիս Տաս օրից ետոյ արդէն քեզ հետ եմ, թանկագին բարեկամներին շրջանում! Մի վախենա, բարեկամ: Ինձ միայն հաւատն է, որ դրդում է կուի մէջ մղւել, առանց նայելու խոչնդոտներին, մեծամասնութեան անտարբերութեան, ոմանց երկչոտութեան և ոմանց ծաղրին... Այո, հաւատը դէպի ապագան, դէպի լուսաւորը... Խորին համոզմունքս է, որ հէնդ այդ հաւատն ինձ կը փրկի!...

Մինչև շուտով տեսնուիլ՝

Նադեա:

ՖԱՆԹԱԶԻ

Շ Ա Ն Թ Ի

Ես անթարթ կը նայիմ աստղերուն,
Ու ինձի կը թւի, թէ մթին
Երկրնքի կամարէն շատ անդին
Լուսածին նոր աշխարհ մ'է անհուն,
Եւ թէ այդ աստղերը, որ վերէն
Մեր մտքին թռիչքը կը գերեն,
Ծակեր են, լոկ ճեղքեր, ուրկէ մենք
Կը ջանանք հայեացքնիս ներս նետենք.
Ներս, ուր բոց էակներ հուր կեանքով
Դարէդար կը վառին իրար քով,
Ուր ժպտէն կը կաթի շէկ լոյսեր,
Ուր կրակ կիզում է ամեն սէր,
Ու կ'սցծ մը՝ ամեն վիշտ, ամեն յոյս,
Արցունքը՝ ջինջ շիթ մը բոցալոյս,
Եւ ինքը ապրիլը անվերջ, ճիգ՝
Կայծակի սարսուռ մը սլացիկ:

1893 թ. սեպտ. Պոլիս:

ՏՈՒՐ ՆԱՅԻԱԾՔԴ

Շ Ա Ն Թ Ի

Տո՛ւր նայւածքդ, այդ սուր սրով
Մակեմ կուրծքս սիրակէզ
Ու բզըկտեմ անգութ ձեռքով
Շինեմ լարեր սրտիկէս.

Գուցէ հաւտաս, երբ հեգնօրէն
Ջարնեմ այդ թարմ թելերուն
Եւ երբ անոնք քեզ նկարեն
Կաշձիդ վառած բոցն անհուն.

Սակայն չարժես. թող դեռ կիսատ
Թելերն յանկարծ փեթըռտին,
Դո՛ւն խենթ-յոյսով, կրքոտ, գունատ
Ջո՛ւր սպասես յաջորդին...

ԲԵՆԵՍԵՂԾ-ՔԵՂԸ-ՔԱՅԻ

(Ռ. Պատկանեանի գրական գործունէութեան ընդհանուր ընազիծը)

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

III

Գամառ-Քաթիպան բանաստեղծ է բառիս վեհ նշանակութեամբ: Մերթ քնարերգակ, մերթ վիպասան նա անդադրուն մտածում է և դիտում: Անձնական կսկիծները, յետադիմական երևոյթները հասարակութեան մէջ երբեք չեն վհատեցնում նրան. նա չի քողարկում բայրոնական հիասթափութեամբ, նա չէ ձևանում Զաչլի Հարոյի, Թէպէտե կեանքի դառնութիւնները, հայ հասարակական մոքի յետամնացութիւնը և անշարժութիւնը, ինչպէս անառիկ ժայռեր, կարող էին տապալել նրա մէջ ամեն մի եռանդ, գործելու ամեն մի փորձ:

Բնորոշ է, որ Գ. Ք.-յի բանաստեղծութեան մէջ բացակայ է անձնական վշտի և զգացմունքների եղանակը, անձնական անբաւականութիւնը կեանքից և աշխարհի անիրաւութիւնից, ինչպէս այդ յատուկ է մեր արդի բանաստեղծութեան:

Ասում են, որ բանաստեղծին հարկաւոր է ոգու լարածութիւն, ազդումն ի վերուստ՝ ստեղծագործելու համար: Գ. Ք.-ան չի

¹⁾ Տես «Մուրճ» 1897 թ. № 5:

կարող բարձրից նայել կեանքի վրայ և սպասել նեարդերի փորժ զրգուման: Կեանքը իւր պէսպէս պատկերներով և բազմազան տպաւորութիւններով ստեղծագործութեան անսահման ասպարէզ է նրա համար: Մարդը իւր բարոյական և հասարակական էութեամբ, բնութիւնը իւր տեսարաններով միշտ պիտի մատակարարեն կենդանի նիւթ բանաստեղծի մոտաներին, նրա բոլորէնող երևակացութեան, նրա քաղաքացիական ձգտումներին: Գ. Ք.-ան չափազանց տպաւորող է և զիտող, որ փախչի եռուն կեանքից և սրա հարածող երևոյթներին: Կեանքի անցամաքն ի աղբիւրները միշտ հրաւէր են կարգում դէպի նրա քաղաքակիրթ միտքը, առաջացնելով նրա մէջ մերթ ուրախութեան զրգիւ, մերթ վշտացնող զգացմունքներ: Նրա հաւատը դէպի տպագան անքան հաստատուն է, առաջդիմելու դիտակցութիւնը նրա մէջ անքան վառ է, որ նա չի կարող սպասել Ապոլոնի հրաւէրին և տրամադրուել գրելու միայն Ուլիսսի դազութից:

Լայնատարած կենսահանդիսում՝ մարդիկ, Աստուծոյ այդ համապատկեր արարածները, ազատ ապրում են ու շնչում, ազատ մտածում են ու գործում, հասունանում ու կատարելագործւում, մաքառում են չարիքի դէմ և ծառայում բարիքի յաղթանակին, միայն հայն է անշարժ, միայն սա է վարում սորիկի չարքաշ ու բծաւոր կեանքը: Հասարակութեան այս վիճակի պատկերացումը հանգիստ չի տալիս բանաստեղծին. նա ըզնում է, որ հայն էլ մի կռում, մի անկիւն ունենալու ձգտում զգայ. նա տեսնում է, որ հայերը ազգ են կռում, բայց չունեն ազատութիւն և քիչ են մտածում սրան ձեռք բերելու, որ նոքա զուրկ են հասարակացութեան ամենատարբական հիմքերից: Այս դառն դիտողութիւնը լիովին նւաճում է նրան: Նա անձնատուր է լինում այդ զիտողութեան տպաւորութիւններին և ներշնչւում է հասարակական կարիքների հոգսերով: Նա համարեալ չի ճանաչում ուրիշ եղանակներ, նա չի կարող և չի ուզում նազել հանրամարդկային եղանակներ: Նրա բնութիւնը, նրա միտքն ու ամբողջ էութիւնը կաշկանդւած են հայրենի վշտով: Նրա նշանաբանն է ազգայնութիւն, ինքնաճանաչութիւն և վերածնութիւն: Այս իդէալի իրականացումը նրա նպատակների նպատակն է... Այս գաղափարը կլանում է նրա

բոլոր մտաւոր և բարոյական ձգտումները: Սա է յառաջադիմութեան և ազգային բարիքների հիմքը, և սրա համար պիտի զործադրեն հայ քաղաքացու բոլոր յոյժերը:

Խոչընդոտները, բարոյական հարւածները չեն կոտորում նրա թևերը... Նա հաւատում է իւր իղէալի յաղթանակին, հաւատ է ներշնչում և ընթերցողի մէջ: Նրա զաւանանքը հաստատ է, ինչպէս ժայռ. նրա իւրաքանչիւր տողից բուրում է անկեղծութիւն, հաւատ և յոյս զէպի վերածնութեան զործը, անհուն և անսահման սէր զէպի հայրենիքը.

Սիրէ ազգդ ոչ լոկ խօսքով, սիրէ ինչպէս քու անձը,
 Նորա օգտին, թէ պէտք լինի, զոհէ բոլոր քո գանձը.
 Մի խնայիլ կեանքդ անգամ, արիւնդ բեր նրան զոհ.
 Ոչ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզնից զոհ.
 Իստակ սէրը չի պահանջում ամենևին տըրիտուր.
 Թէ տւածը յետ առնել՝ դորան կ'ասեն առուուոր

.

Նա արհամարհում է հային, որ աղքատ է հոգով և անշարժ մոգով, բաց կաթոգին սիրով սիրում է հայութեան գաղափարը, որին և զոհում է իւր մեծ քանքարը: Նա երգում է ոգու և ներքին տրամադրութեան պահանջով, սրտի բոլոր լարերով, և այդ՝ նրա բանաստեղծական բնութեան օրէնքն է: Նրա օպտիմիստականութիւնը ազդում է մեզ վրայ. մենք ակամայ վարակւում ենք նրա կրքերով և հակումներով, նրա ծաղրով ու բողբոջով:

Ժամանակի մաճմունքներն ու ձգտումները, նրա տիրապետող տրամադրութիւնն ու իղէալներն արձանագրելը, ինքն ըստ ինքեան, քաղաքացիական պարտաճանաչութեան մի բարի նշան է, բաց երբ այդ անում է, ոչ փառքի և անուն վաստակելու տենչից, այլ ճշմարիտ հայրենասիրի մորմոքւող սրտի պահանջով, լուրջ քաղաքացիական մտքի յորդորով, այն ժամանակ մտքի այդ տեսակ արդասիքը մի ուսանելի երևոյթ է, որ՝ մոցնելով հասարակական ինքնազիտակցութեան մէջ մաքուր ու թարմ հոսանք, կրթում է սերունդներ:

«Մի կարծէք, որ ես սին փառքի համար
 Իմ հառաչանքով լցրի... աշխարհ.

Այս հէգ ամբոխի ծափին ու գովքին
Կարօտ չէր բնաւ իմ հպարտ հոգին:

Այո՛, իմ քնարի տխուր ձայները
Ցնցեցին հայի հոգու լարերը,
Արիւն էլ ազնիւ սրտէ քամեցին,
Կտրիճի աչքէ քունը փախուցին:

Ինչո՞ւ, չգիտեմ: Ասէք, հէր բարդ-բարդ
Բացուում է զարնան կարմիր, հոտոտ վարդ,
Լեռնիփայր ինչո՞ւ անուշ կարկաչով
Վազում է առուն դալարի միջով:

Զեփուռը ինչո՞ւ տերւէ տերւ
Անցնելով, ասես, տալիս է բարւ,
Ինչո՞ւ սոխակն էլ մօտ կանաչ թրփին
Անմըռունչ ձայնում է իւր մեղեդին:

1888 թ.

Բանաստեղծը, ճակատագրի այդ քմահաճ զաւակը, բնութիւնից օժտւած և փաղաքշւած այդ երգիչը, պէտք է միշտ մասնակցի կենսական աններդաշնակ նւագախմբին: Չարիքը գերակշռում է բարին, և այն աստուածային կայծը, որ ձգտել է տալիս մարդկանց դէպի մշտնջենական կռիւ չարիքի հետ, ևս առաւել պիտի յորդորի բանաստեղծին իւր ստեղծագործական ոյժերը գործադրելու յօգուտ հասարակութեան:

Այս գիտակցութիւնը հաստատ է Գ. Ք.-յի մէջ՝ այս աշխարհահայեացքը նրա գրականական գործունէութեան տիրող տարրն է:

Գ. Ք.-ան ոչ միայն քանքարաւոր բանաստեղծ է, այլ և համոզւած քաղաքացի, որի սրտի մէջ արձագանք է գտնում ամեն մի հասարակական երևույթ: Ամենախիստ քննադատոր կը գտնի նրա բանաստեղծութեան մէջ քնարերգութեան ամենաընտիր յատկութիւնները—և նուրբ զգացողութիւն, և մոքի թռիչք. նրա լեզուն կոկ և գողտրիկ, նրա մուսան կենդանի, եռանդուն և անվեհեր, ներշնչւած բուռն զգացմունքով և ատելութեամբ դէպի այն

ամենը, որ հարւածում է մեր բարոյական զղացմունքը, արգելում է հասարակական զարգացման և ինքնազործունէութեան: Նա հպարտ է, և ձեռնադրանքի անարգանքը իւր անւանը շուք ու փառք է՝ համարում, նա երբէք չի մտածում «վարդ քաղել տառասկոտ տեղից»:

Քաղաքացի Գ. Ք. ան զարմանալի զգայուն սիրտ ունի: Քաղաքացիական պատիւը, պարտականութեան զգացմունքը և խղճի յորդորը նրա բնորոշ յատկութիւններն են:

Երիտասարդին յատուկ ոգևորութեամբ և եռանդով նա ղինւորում է տգիտութեան և բռնակալութեան ներկայացուցիչների դէմ, և մի կողմ ղնելով իւր արտօնութիւնը՝ երգել „по призыву Аполлона къ священной жертвѣ“, կատաղի կռիւ է մղում հասարակական կեանքի մէջ տիրող շահամոլութեան և կեղծաւոր բարեմտութեան ախտերի դէմ: Նա ջերմագին պաշտպան է ճնշածին, կեղեքւածին և թշնամի ճնշողին — հարստահարողին. սրտակից բարեկամ է հայ մշեցուն, հայ դիւղացուն, մեր հասարակութեան այդ ամենաազնիւ, գործունեայ և առողջ տարրին — նրա մէջ, և միայն նրա մէջ է տեսնում բանաստեղծը ազգային ոյժը. նրանով է յառնելու ազգային ոգին, նրա ղիմացիուն բազուկը և անմիջական զգացմունքը պիտի փշրեն զարեւոր շղթան:

Իսկ ինչպիսի գոթիսային կրակով է բորբոքւում բանաստեղծը հայ մեծատունների, հայ փողաւորի, մեր այդ կեղեքիչ և ազգութիւնը արատաւորող տարրի դէմ ¹⁾:

Հայ մեծատունը, որ իւր հարստութիւնը դիզել է հաղար ու մի անագնիւ միջոցներով, որ գիտէ ստորանալ և հաճոյանալ, երբ այդ պահանջում են հաշիւը և սնտփառութիւնը, հայ վաճառականը, որ եկեղեցի գնալով և փխաւ ուտելով՝ կատարած է համարում իւր բոլոր մարդկային պարտականութիւնները, Գ. Ք. չի մտալի սովորական առարկան է: Նա անդադար ծաղրում է նոցա սիրտը, պարսաւում է «խաչեր ու սրտիւ» ղնելու նոցա ախորժակը: Այստեղ՝ նրա բանաստեղծութիւնը եռում է և փրփրում

¹⁾ Տե՛ս «Ամիրալ», «Ազգաւոր», «Հայերու բաղձանքը», «Բարոյավէպ», Նախիջևանի բարբառով՝ «Ուռտ աղար», «Աղալի սիրելիքը» և այլն:

ալէճուփ հեղեղաւորի նման: Բայց ինչո՞ւ Գ. Ք.-ան այդպէս կատաղի է զինւորեալ հայ աղայի դէմ:

Լինում են հասարակական կեանքի մէջ այնպիսի մոմէնտներ, երբ մտաւոր կեանքը կանգ է առնում, երբ բացակայում են ազնիւ, անշահասէր ձգտումներ և իդէալներ ու վաճառւում են մտքերը և համոզմունքները, երբ, վերջապէս, փողը և բարոյական շղթան կաշկանդում են ամենքին. երբ „МЫСЛИ ГОНЯТЪ, ТОРГУЮТЪ ВОЛЕЮ СВОЕЙ, ГЛАВЫ ПРЕДЪ ИДОЛАМИ КЛОНЯТЪ, И ПРОСЯТЪ ДЕНЕГЪ, ЗА ПѢПЕЙ“:

Հայ մեծատունը մեծ դեր էր խաղում մեր հասարակական կեանքի մէջ—և դպրոցի, և ժողովրդի, և հոգևորականութեան մէջ նա մի առանձին, պատուաւոր դիրք էր բռնում, դիրք, որ ձեռք էր բերել իւր ճոխ սեղանի փշրանքներով, և ո՞վ կը համարձակէր քննադատել նրան: Ոչժը իմն է, իմն է և իրաւունքը, դատում էր նա:

Կեանքը մի շքեղ կերուխում է նրա աչքում և իւր վսեմ կոչումն է այդ կերուխումի մէջ թամազայի դերը կատարել: Մարդկային հանրակեցութիւնը մի տօնախմբութիւն է, իսկ հայ աղան այդ հանդիսի բնական ղեկավարն է ու կարգադրիչը: Մարդիկ, ժողովուրդ՝ դատարկ բաներ են, և նոցա գոյութեան նպատակն է փառաբանել հայ մեծաւորին: Եկեղեցին և հոգևորականութիւնը ինձ համար, բոլորը և բոլորեքեանք ինձ համար, որովհետեւ աշխարհը և նրա մէջ ապրող երկոտանիները կանգուն են փողով, իսկ փողի տէրը ես եմ, մտածում է հայ աղան. նրա աչքում կեանքը բազար է, իսկ հայրենիքը—մէջլան: Գրպանի մէջ պարունակող փողի քանակութիւնը պայմանաւորում է նրա բարոյական չափսը: Ամեն բան ապրանք է—խելքը ու բարոյականութիւնը, համոզմունքը ու պատիւը, և այս բոլորը կարելի է գնել, գնահատել և ծախել, ինչպէս ապրանք՝ կեանքի բազարում: Եթէ ձեր գրպանում մի ուրբի է, ուրիմն ձեր զիտութիւնը և դադափարները, ձեր իրաւունքը և պատիւը արժեն նոյնքան:

Մեծամիտ և անձնասէր հայ մեծատունը փնասակար էր մեր յառաջադիմութեան համար: Պէտք էր հանել նրա դիմակը և ցոյց տալ նրա ներքին աշխարհի իսկական պատկերը, պէտք էր ցոյց տալ, որ նա շատ ծիծաղելի է, երբ, կանգնած գետի ափում հրճւնքով

դիտում է մաքուր ջրի մէջ իւր կերպարանքի կասկածելի գեղեցկութիւնները և հրաւիրում է մեզ ևս խնդակից լինել իւր անձնազմայւանքին. պէտք էր, վերջապէս, պարզել, որ աղուաւը իւր զաղայով սոխակ չի դառնալ և միայն սիրամարդի պոչով՝ սիրամարդ չի լինի:

Բալոյսպէս սնանկ և մոաւորապէս աղքատ մարդկանց համար Բելինսկին ասում է. „Что живые пасквилы на челоуѣчество“. վատթարութիւնը և վատթարամիտները միշտ եղել են և կը լինեն, քանի աշխարհը կանգուն է, բայց քաղաքակրթութեան նպատակն է մտրակել այդպիսիներին, հեռացնել նոցա ասպարիզից և ազատել հասարակութիւնը այդ վարակիչ միկրոբներից:

Ահա ինչու Գ. Ք. ան առանձին եռանդով մաքառում է հայ աղայի դէմ՝ նա պարզ տեսնում է, որ քմահաճ հայ աղան անբարոյականացնող տարր է, թշնամի առաջադիմութեան և հասարակական խիղճը ու ձայնը ոտնակոխող ոյժ. նա անհրաժեշտ համարեց խորտակել նրա ճնշող նշանակութիւնը. իրան յատուկ քաղաքացիական քաջութիւնով նա առաջինը գրականութեան մէջ պատերազմ յայտնեց նրան, հասցրեց մեծ հարւած և փշրեց այն շղթան, որով կաշկանդել էր հասարակութեան ինքնագործունէութիւնը:

Հայ մեծատունը չի սիրում Գ. Ք. յին և ահա ինչու.

Ղուին ինձ չիս սիրիլ, Խալեմս սուր է,
Մի րէքէփս է լեղի ու զէհիր,
Վրասք քսածա՝ չամուռ ու մուր է,
Ու ասոր համար դուն ինձ չիս սիրիլ:
Ե՛րբ սիրեց աղան թիթիզ հէքիմին,
Որ տայմա աղու ճար կ'ուտայ նարան.
.....
Խեղճ ողորմելիդ պէթէր արմընցար
Որ սուտ աղաներ առի թախտէդ վար,
Ու սնխէլքութեամբ դառցար, ինձ ասիր,
Զուգիմ ազատ կեանք, թող քնամ եսիր:

Ղուին ինձ չիս սիրիլ. ինչո՞ւ, քեզ ասիմ.
Զէրէ սուրբ պարտքդ միտքդ կը ձգիմ...

Աղէկ մարդ լալու ու ազգի պարծանք,
Շատ զոհեր կ'ուզէ ու շատ աշխատանք..

.

Զարմանալի նուրբ—հոգեբանական տեսողութեամբ ճանաչեց Գամառ-Քաթիպան հայի էական յատկութիւնները: Գործնական, բարձր շահերից զուրկ հայը ներկայանում է մեզ բանաստեղծի երկերի մէջ իւր դարաւոր ու ժառանգական արատներով,—բռնակալ ու ամբարտաւան, հայ հալածելիս վազր համարձակ, օտարի առջև վախկոտ նապաստակ, մեծամիտ իւր նիւթական ոյժերով, նախանձոտ և չարամիտ իւր ոչնչութեամբ, բարեացակամ, երբ գործ էի պահանջում, անսիրտ ու մարդատենաց գործի մէջ: Իւր բաղձանքներով, որոնք արտայայտուում են լոկ խօսքերով և բացականչութիւններով, հայը ոգեզմայլ է և իղէալիստ. նա բաղձում է իւր ազգին ամեն տեսակ բարիքներ, և ուսում, և կրթութիւն, և ազատութիւն, անգամ զէնքի միջոցով, միայն թէ իրանից զոհ չպահանջւի, միայն թէ ինքը զրաղը լինի. իսկ երբ իրագործւեն նրա բարեացակամութիւնները՝ զաղափարակիր և եռանդուն մարդկանց շնորհիւ, երբ հայը դասի ազատ ազգերի շարք, նա անշուշտ կը պահանջի իւր բարի ցանկութիւնների փոխարէնը՝ իրան տէր ու իշխան ճանաչեն, գահ նստացնեն:

Շահ չի տեսնում բանաստեղծը և հոգևորականութիւնից ¹⁾, որ կանգնած չէ իւր կոչման բարձրութեան վրայ, որ միշտ և ամեն դէպքում ունեցել է միջոց իւր հոտի արժանաւոր հոտապետ լինել, սփոփիչ ոյժ հանդիսանալ, նաև կարապետել ժողովուրդը դէպի լուսաւորութիւն, սակայն այդ ի բնէ յարգւած դասակարգը պակասաւոր է, թէ իւր անմիջական պարտականութիւնների նկատմամբ՝—վառ պահել ժողովրդի մէջ կրօնական զգացմունքը, և թէ իւր բացառիկ դիրքից բղխող պարտականութեան՝—դեկավարել և ուղղել մեր դպրոցական կեանքը:

Մեծ է նրա գործունէութեան ասպարէզը, մեծ է և նրա կատարելիք դերը, բայց նա միշտ աշխատել է սահմանափակել իւր

¹⁾ Տե՛ս. «Օրօրք Հայաստանի», «Անվերջ գանգատ», «Յուսահատութիւն», «Տէրտէր» և այլն:

պարտականութիւնների շրջանակը: Ուր գործ կայ, կենդանի գործ, աշխտեղ նա, կարծես, գոյութիւն չունի: Ուր ժամանակի ոգին առաջացնում է նոր պահանջներ, մտածողութեան և գործունէութեան նոր եղանակներ, և իւր ձեռքումն է իրերին ցանկալի հոսանքը տալու, իւր պատիւն է գործին գլուխ կանգնելու, նա զլա-նում է խռովել իւր անվրդով կեանքը. նա գերադասում է լինել անդէմ ու անձայն, միայն թէ փոփոխութիւն չլինի նրա մի օրի-նակ կենցաղի մէջ, միայն թէ չբեռնաւորւի նրա միտքը: Փոփոխ-կեաց և անփոյթ, երզնալ սեղանակից և դաշնակից մեծատունների, կողմնակից ոյժի և հալածիչ թոյլի, շարժուն և եռանդուն, որտեղ շօշափւում են նրա դասակարգային շահերը, փառասէր փոքրիկ գոր-ծերում և անզաղափար՝ խոշոր ազգային հասարակական նշանակու-թիւն ունեցող հարցերում՝ կղերը նպաստել է մոքերի անշարժու-թեան ու քնսփութեան. նա դիմադրել է ամեն մի կենդանի հո-սանքի և նորաձեւութեան:

Հոգեորականութիւնը ապրուն է ժողովրդով և սրան է պար-տական իւր արտօնւած դիրքով, սակայն նա միշտ թոյլ է ճանաչել սրա ձայնն ու իրաւունքները, և ազգային ոյժը տեսել է միայն նիւթի ներկայացուցիչների մէջ: Սահմանափակ էր նրա մտաւոր հորիզոնը. նա չէր հասկանում այն մեծ գրքի մշտագոյ իմասները, որ ամենայն օր պաշտօնապէս կարդում է, մինչև իսկ անգիր գիտէ. նա չէր ըմբռնում քրիստոնէութեան ոգին և իւրացրել էր միայն նրա դաւանաբանութիւնը, ձևական և ծիսական նրբութիւնները: Քրիստոնէական զաղափարի վեհութիւնն ու պարզութիւնը նա միշտ աշխատել է վարագուրել ահարկու խորհրդաւորութիւններով, շատ անգամ ի պէտս դասակարգային շահերի, և այդ վսեմ՝ ու բարձր ուսմունքը դարձրել էր ծէսերի և ձևականութեան մի անբովանդակ պաշտամունք: Նա համոզւած էր, որ «մաքուր կրօնը պատի մէջն է. ժամուց տալը պատուոյ հարց, կուշտ ուտելը, ճոխ ապրելը—այդ է վախճան իւր կենաց»: Բայց ինչպիսի գգանքով է վերաբերւում Պ. Ք.-ան դէպի հոգեոր հօր կոչումը. «քահանայ է նա, որ կանգ-նած է ամբիոնի վրայ և զողորջուն ձեռքերը երկինք ամբարձած՝ քաւում մեր մեղքերը, որ անխոնջ հովիւ է Քրիստոսի հօտին և արթուն դէտ երկնաձիր գանձին»: Նա է պաշտօնեայ այն մեծ հիմ-

Նարկոթեան, որի մէջ ժողովուրդը սփռուած է որոնում իւր հաւու մաշ սրտի կսկիծներին:

Բանաստեղծը որոնում է իրականութեան մէջ անխոնջ հովիւներ, «երկնային գանձի» պահապաններ, բարիքի ու կարեկցութեան սերմնացաններ, բայց նրա վերացական պատկերացումը դժուար է օղի մէջ. նա գտնում է միայն ծխակատար փարաշակիրներ և փափկակեաց ու անպարտաճանաչ վեղարաւորներ:

Վրդովեց Գ. Ք.-ան կղերի քաղցր հանգիստը, քանդեց այն չինական պատերը, որ բաժանում էր հոգեւորականութիւնը ժողովրդից և վարագուրում նրա անգործունէութիւնը. նա ստիպեց նրան ճանաչել և յարգել ժողովրդի պէտքերն ու կարիքները, և զարկ տուեց այն կենդանի հոսանքին, որ այսօր նկատելի է արդի հոգեւորականութեան մի աննշան մասի մէջ. նա առաջացրեց պարտք ու պարտաճանաչութիւն հասկացող հովիւներ, ժամանակի պահանջի առաջնաւորող գործիչներ:

«Առանց կրօնի խտրութեան» բարձր սկզբունքը համարւում է իրաւամբ մեր ժամանակների ինքնագիտակցութեան գիւտ, բայց այդ գաղափարի, այդ կրօնական համբերատարութեան սերմը դրցել է Գ. Ք.-ան:

«Արուեստ, ուսում, շքեղարուեստ տարածէ հայ ազգի մէջ,
Բայց բռնութեամբ միշտ հեռացնուր նորա մէջէն կրօնի վէճ.
Քեզ ինչ շահ է, թէ դու կ'ասես՝ հոգին բղխել է Հօրից,
Կամ թէ Որդին Հոգեով սրբով անսերմ ծնունդ է Մօրից...»

1857 թ.

Զինացեց Գ. Ք.-ան և մեր նոր սերունդը. նա ղիտեց ինտելիգենցիայի մի քանի բնորոշ յատկութիւնները—նրա ընդհանուր կերպարանքը, բայց չուեց մեզ այդ կերպարանքի լիակատար պատկերը: Նա չի ընդդրկում ամբողջ ինտելիգենցիայի ներքին աշխարհը, չի խորասուզում այդ աշխարհի խորշերը, այդ լաբիրինթոսի մութ անկիւնները, այլ միայն համառօտ տեսութիւն է անում: Կուրբը և և թշնամիադրը, ճոխութիւնը և կենսական չարմարութիւնները, հարուստ հարսնացուն և չաղ պաշտօնը—ահա կրթւած սերունդի

մտածողութեան նիւթերը ըստ բանաստեղծի ¹⁾։ Բայց ժամանակը և հասարակական կեանքի նոր պայմանները պառուստել են նրան և ուրիշ յատկութիւններ, առաջացրել են նրա մէջ այլ հակումներ ու ձգտումներ, բարդացրել են նրա բնաւորութիւնը։

Ճարպիկ և եռանդուն օգտաւէտ գործերում, չափաւոր և քաղցրակեղու հզօրների առաջ, բնութեամբ բարեմիտ և զգաստ, մլրտակող և լիբերալ անկիւններում՝ մեր ինտելիգենցիան մոնում է կեանք պատրաստ ու մշակած ծրագրով, շքով և հանդիսով, բարձրածիչ ֆրազներով և բարձր տոնով։ Հազիւ անցած դպրոցական շէմքից՝ նա կենսապէս իմաստուն է հանդիսանում։ Մի թուուցիկ հայեացք ձգելով իրականութեան վրայ՝ նա իսկոյն ըմբռնում է տիրող ոգու պահանջները, յարմարւում է նոցա, և կարճ միջոցում հասնում է իւր էթանագին փափագներին։ Խորամանկ և զիւռող՝ նա գիտէ, երբ պէտք է փամփուշտներ արձակել և պղտոր ջրի մէջ ձուկ որսալ։ Չունենալով իւր գլխում ոչ մի հասարակօգուտ գաղափար և իւր սրտում ոչ մի կաթիլ կարեկցութիւն՝ նա իւր անթափանցիկ զիմակով ճարտար է ճառում մեծ նիւթերի մասին, տպաւորութիւն է գործում կարճատես մեծամասնութեան վրայ և նւաճում սրտերը։ Նրա աչքում աշխարհը մի շքեղ դիմակահանդիսական տեսարան է, իսկ կեանքը—մի կատակ, թեթեւ գաղափարախաղ։ Սերտած դերը նա կատարում է այնպիսի ճարպկութեամբ, որ ինքնագոհութիւնը չի հեռանում նրա երեսից, և մարդկային մոքի ամենախղէպլական փիլիսոփայական սխտեմը չի կարող համոզել նրան, որ կան ուրիշ աւելի ազնիւ, աւելի մաքուր նպատակներ։ Նա հոգով, սրտով հանգստանում է կլուբում։ Նրա մեծութիւնն ու յաղթանակը՝ ձեռք բերած պերճութեան և շքեղութեան մէջ է։ Նստումը ասպարիզին տիրող մարդկանց հետ՝ նրա փառասիրութեան և հպարտութեան գազաթնակէտն է, իսկ իղէալը, պարտականութիւնը մի նշանակ է, որով վարագուրում է իւր կասկածելի միտումները, մի զւարճախաղ, որ և շոյում է նրա մոտաորեւոր և աջողցնում նրա անձնական հաշիւները։

¹⁾ Տե՛ս, «Մարաքաղաքում կրթած հալ երիտասարդը», «Մեր նոր սերունդը», «Փառասէր» (վէպ)։

Իւր դիտողութեան անկատարութեամբ հանդերձ՝ Գ. Ք.-ան վշտանում է նոր սերունդի անգաղափարականութիւնից, որոշ չափով արտայայտում է մեր դժգոհութիւնը ինտելիգենցիայից, որի առաջ բաց է անում մի նոր, դադափարական ճանապարհ՝ ձգտել դէպի ժողովուրդը, մօտենալ նրան և պարտաճանաչ լինել դէպի այդ համեատ, բայց առողջ և զօրեղ տարրը։ Նա ոչնչացրեց այն անդունդը, որ բաժանում էր ժողովուրդը հասարակութեան միւս խաւերից, և դարձրեց մեր ուշքը նրա վերայ, ինչպէս մի նշանաւոր գործոնի՝ մեր պատմական գոյութեան շարատեութեան համար։ Նա բարձրացրեց այն ազնիւ և արդիւնաւոր գործիչների վարկն ու հեղինակութիւնը, որոնց վաստակները չէր գնահատում հասարակութիւնը, նա թեւաւորեց հայ վարժապետին, որ չլեզու է տալիս անլեզու ազգին, հայ հեղինակին, որ ազգի շարաւոտ վէրքերն է լւանում։

Թոյլ է շոշափել Գ. Ք.-ան մեր ինտելիգենցիայի այն տիպարի մարդկանց, որոնք երևակայում են իրանց լուսատու աստղեր և իրանց արտօնութիւնն է լոյս տարածել տղէտ հասարակութեան մէջ. «միայն ինքն է խելօք ու գիտուն, իսկ այլք՝ կռալիտ և տգէտ»։ Նոքա չունեն հաստատ համոզմունքների, զգացած իդէալ, որոշ հայեացք կեանքի վերայ, բայց մաքուր են բնութեամբ։ Խղճի և պարտականութեան զգացմունքը հանգստացնելու համար նոքա փորձ են փորձում գաղափարօրէն վերաբերել դէպի կատարող իրողութիւնները. բաւական է, որ իրականութիւնը դնի նոցա առաջ որոշ խնդիրներ, բաւական է մի փորձանք, որ նրանց թեւերը կտրեն։ Առաջին քայլափոխը ակներե է անում նոցա անձեռնհասութիւնը, առաջին խոչնդոտը զինաթափ է անում նոցա, և երբեմն լուսատու աստղերը ազօտանում են և հեռանում ասպարիզից։ Չունենալով ոչ բաւարար մտաւոր պաշար, ոչ բարոյական ոյժ դիմադրելու տիրապետող հոսանքին՝ նոքա խուսափում են կենդանի գործից և աննկատելի կերպով անձնատուր լինում իրանց անձնական բարօրութեան, և ամենալաւ դէպքում, դառնում են հասարակութեան այնպիսի անդամներ, որոնք ոչ վնասակար են և ոչ օգտակար շրջապատողների համար։

Այսպէս թէ այնպէս՝ Գ. Ք.-աի անխնայ հարւածները չեն

մնում անհետևանք: Նա ուղղում է իւր խարազանը մեր հասարակութեան բարձր խաւերի դէմ, մերկացնում է նոցա պակասութիւնները, և մորակում է հասարակակեցութիւնը պղտորող տարրերը, առաջադիմութեանը արգելող երևոյթները:

Հասարակական ոգու և մոքի խառնափնթոր ժամանակներում, առողջ և գաղափարական դասնանքների բացակայութեան օրերում, նրա քնարը կարող էր դործել միայն արթնացնող, զգաստացուցիչ ազդեցութիւն:

Ուր գաղափար կայ, այնտեղ և կեանք կայ: Յաջողակ միտքը, տաղանդաւոր խօսքը թափանցում է ամեն տեղ և չեղափոխում է հին սկզբունքները: Ոչ մի արգելք, ոչ մի ոյժ չի կարող կանգնեցնել կենդանի գաղափարի ընթացքը. նա գործում է դանդաղ, բայց հաստատ, նա աննկատելի է կատարում իւր կոչումը և տակից է սլայթեցնում իւր խռնուկները: Դժուար է թւաբանական ճշտութեամբ հաշուել հեղինակի վաստակները, դժուար է շօշափելի դարձնել նոցա. հարցասէր մարդը տեսող աչքով պիտի ըմբռնի մարդկային ոգու և գաղափարի էվոլյուցիան, նոցա աստիճանաբար կերպարանափոխումը և զարգացումը:

Եթէ այսօր կայ առաջադիմական տարր մեր հասարակութեան մէջ, եթէ կայ քաղաքակիրթ հայ շրջան, որ չի կարող ապաստանել միայն եկեղեցու մէջ, ապրել նեղ—ազգայնական շահերով, այլ և աւելի լայն հասարակակեցութեան շրջանակի պահանջ է զգում, այլ և ձգտում է ընդլայնել իւր մտաւոր ու բարոյական հորիզոնը ալեւոր Եւրոպայի քաղաքակրթութեան զիւտերով, եթէ կազմակերպւել է որոշ կերպարանքի հասարակութիւն, որի կարծիքը այսօր հնարաւորութիւն ունի զսպելու քմահաճոյքները և ողղամտութեան սկզբունքը պաշտպանելու, եթէ, վերջապէս, մեր մէջ զարգանում է հասարակակեցութեան ոգին—այդ նորաբողբոջ կեանքի նախագուշակ կարապետներից մէկը, այդ նոր հոսանքի, նոր տրամադրութեան և ձգտումների կենսատու աղբիւրներից մէկը Գ. Ք.-ան է: Նա արթնացրեց մտքերը զգացմունքների անմիջականութեամբ և անսասան հաւատարմութեամբ իւր գաղափարներին, ազատ և աներկիւղ յայտնելով ի լուր հասարակութեան, որ պարտաճանաչութիւնը պիտի տայ իրաւունքներ, և ոչ անհիմն ցան-

կութիւնը՝ քմահաճաբար իշխելու և կառավարելու: Նրա անկաշառ միտքը, օրինակելի պարզութեամբ և անկեղծութեամբ մեզ յանդիմանող զրիչը կատարեցին իրանց քաղաքացիական պարտքը:

IV

Մեծ է Գ. Ք.-յի ստեղծագործական ձիրքը, որոշ է նրա բանաստեղծական կերպարանքը. նա ազգային երգիչ է: Նրա իղէալը վերածնութեան զաղափարն է: Ամեն ինչ մղում է նրան դէպի այդ փշոտ ճանապարհը: Անպաճոյճ իրականութիւնը գերում է ու կաշկանդում նրան: Շրջապատող հեղձուկ օդը սահմանափակում է նրա նուրբ մտքի և հարուստ երևակայութեան թռիչքը. նրա մուսաները ստիպւած են պոտել հասարակութեան տարրական կարիքների շրջանում:

Հասարակական մտքի անհասունութեան միջոցին՝ իրերի վրայ տիրանում են զօրեղ կամքի անհատներ, որոնք իրանց փառամոլութիւնը և տիրապիւրական ծարաւը յազեցնելու համար՝ ձեռք են զարկում սանձարձակ կամայականութեան, ինչպէս մի բնական օրէնքի: Ոչ մի զիմադրութիւն, ոչ մի բողոք չի ազդում նոցա վրայ. նոքա կամենում են տիրազուլս լինել և հասարակական վիճակի ուղղիչ: Այս պայմաններում՝ պղտորում են տրամադրութիւնները, կիրթ միտքն անդամ միակողմանի ընթացք է բռնում, և թէ մաւուլը, թէ զրականութիւնը շեղում են իրանց իրական ճանապարհից, նա իրենցով առօրէականութեան խնդիրներին: Չերժ չէր մնում և Գ. Ք.-ան իրերի այդ դրութեան ազդեցութիւնից. նա հասարակ մահկանացւին յատուկ անկատարութեամբ՝ մաղձոտ և կրքոտ ժայթքում էր թունալից խօսքեր օրւայ հերոսների դէմ՝ զաւաճանելով արւեստի բարձր կոչմանը:

Դժուար է, նաև անհնարին է չափաւոր լինել և շնորհաշուք ձևերով խօսել այն դէպքերում, երբ շրջապատողները, զուրկ լինելով ամենատարրական բարոյական զգացմունքից՝ յեխոտում են ամեն մի ազնիւ գործ, բարի ձգտում: Բնութիւնը աղաղակներով է արտայայտում իւր կսկիծները, բանաստեղծն էլ հետևում է այդ բնական օրէնքին մարդկային և քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու ժամանակ, և դառն զգացմունքների բուռն յորձանքի ճնշ-

ման տակ նրա բաբախող սիրտը ճշով և կրքով է արտայայտում իւր բողոքը չարիքի ներկայացուցիչների դէմ:

Նա երգում է իբրև առաջաւոր քաղաքացի-բանաստեղծ, հրապարակախօսող բանաստեղծ, որ պարսաւում է իրերի հոսանքը, չի-շեցնում է մոռացւած խօսքերը— «գաղափար», պարտականութիւն», «պատիւ»։ երգում է երբեմն և իբրև հասարակ աշուղ, առօրեակա-նութեան միամիտ զաւակ: Հասարակական վշտի երգիչը ստիպւած է «քարշ գալ երկրումը» և սրա «ունայն գործերին» զոհել իւր Աստ-ւածատուր քանքարը, մինչևեւ նա ուզում է երբեմն հեռու սլա-նալ «ազատախօս թռչնակի» պէս, ազատել հոգեկան բեռի ծան-րութիւնից և ազատ շնչել: Երան, այս անշուք պայմանների մէջ նրա քնարը մեզ հետ է, նա մեզ կարեկից է և նւագում է մեր կսկիծները թեթևացնող երգեր, բայց երբ նրա զօրեղ հանճարը կարող էր ընդգրկել աւելի բարձր շահերի ասպարէզ, օրւայ չարիք-ները կարում էին նրա թւերը:

Ըստ իւր տաղանդի Գ. Ք.-ան պայազատ բանաստեղծ է, բայց նրան հազիւ է աջողում ազատ երգել արեւստի անմահական տա-ճարից, մենք հազիւ ենք տեսնում նրան իւր ամբողջ հանճարով: Մենք համամիտ ենք և սրտակից նրան, մենք ենթարկում ենք նրա մտքերի և տպաւորութիւնների ազդեցութեան. նրա զաւանանքը սրբազան է մեզ համար, բայց և այնպէս մենք զգում ենք, որ շնոր-հունակ բանաստեղծի ձիրքերը լիովին չեն արտայայտւում, որ նրան յայտնի են աւելի խորիմաստ եղանակներ, աւելի մեծ մտաթռիչք:

Բայց չէ, հասարակութիւնը քաղաքակրթութեամբ դեռ մա-նուկ է և թոթովախօս. նրա մէջ բացակայում են տարրական հաս-կացողութիւններ, և քաղաքացիական պարտականութիւնը ճանա-չող բանաստեղծը իրերի շնորհիւ միշտ մեզ հետ է: Նա լիովին ներշնչւում է ժամանակի պահանջների վշտով:

Նա երգում է սրտահառաչ, երբ ողբում է մեր ազգային պա-կասութիւնները, և խնդադին, երբ երգում է մեր կեանքի մէջ գէթ մի փոքրիկ մտիթարական երևոյթ. նրա երգերի մէջ գերիշխում է հասարակական եղանակը քնարերգական տրամադրութեամբ: Նրա բանաստեղծութեան հիմնական եղանակը քաղաքացիական վիշտն է, ոչ աղիւղորմ ու զանգատող, այլ զայրացող և բողոքող:

Գ. Ք. ան կենսութեամբ չէ, և ներկայում զգում է իրան մենակ, քայց ոչ յուսակաւոր: Նրա բողոքը, որ երբեմն նմանում է ձիւ և աղաղակի, բղխում է ոչ տեսական, այլ գործնական աղբիւրներից, ոչ զլիւից, այլ սրտի խորքերից, ոչ բացասականութեան ոգուց, այլ անսահման ներկածութիւնից իւր իզէալին, որի ճշմարտութեան միջ խորը համոզւած է: Այս է պատճառը, որ նրա մեղեդին ձայնում է թախծալի, երբեմն և դառնագին. նա ցաւում է, ազգայինների համար իւր սրտի բոլոր լարերով, և ոչ միայն ցաւակցում, նա երգիծաբանում է, և այդ երգիծաբանութիւնը սառն մտքի դիտողութեան արդասիւք չէ, այլ վշտաբեկ սրտի դառն կոծեր: Նրա մէջ բանաստեղծը անբաժան է քաղաքացուց: Նրբ բանաստեղծը տեսնում է, որ իւր ազգայիների «լատողութեանց փորձաքարը աղա Յհաններն են», իսկ երկնածիր քանքարի ազատ խօսքը անպատի բարբառ է, նա դառնացած սրտով չիշում է իրան վայել բնակատեղին.

«Երկինք թողած՝ երկիրումն ես քարշ գալի,
Ինչո՞ւ ձիւքք քո երկնային ու հողին,
Զբաղեցնում ես երկրի շնչին գործերով»:

Նա վրդովւում է մեր ազգայնութիւնից և անգաղափարականութիւնից: Ժամանակաւոր հիասթափում է պաշարում բանաստեղծին, որ սոսկալով երկրայինից՝ կամենում է մի նւազ սաւառնել դէպի հրկինք. բայց չէ, քաղաքացի Վամառ-Քաթիպան չի կարող երկար մեկուսանալ իրականութիւնից, նա չի կարող սառնասիրտ հանդիսատես լինել այն տխուր երեւոյթի, թէ ինչպէս հայը մոլեղին խաղ է բռնել ոսկի հորթի շուրջը. նա նոր եռանդով սկսում է մտրակել մեր կռաւրդաշունչութիւնը, սառած հողին. նա չի վշտում քարի վերայ իւր տախտակները, այլ չիչեցնում է մեզ մեր եղիպտական գերութիւնը և առաջիկայ դժւարին անցը անապատի միջով. կենսեռուն քաղաքացին, երկրի և երկրային վշտի զաւակը ձայն է տալիս իւր թևաւոր զինակցին և աղերսում նրա զուձը քարոտեալների համար՝

«Արտուտիկ, ինչո՞ւ թռչում ես վեր վեր,
Նրկնքէն ասում ես տըխուր տաղեր,

Պարտէզ ու այգի ինչու չես դնում,
Քնքոյշ ձաղերդ զրտեղ ես հանում:

—Ա՛խ շատ են, շատ են իմ կսկիծն ու ցաւ.
Իմ մտերիմը գնաց, հեռացաւ.
Հայ հողագործը—իմ սերտ բարեկամ,
Թշնամու ահէն գնաց դաղթական:

Տափի վրայ չունիմ ես հանգրստութիւն
Ու այլոր համար երկինք եմ թռչում:

Գաղթականութիւնը, այդ վտանգաւոր երևոյթը, ազգային-
ոյժերի այդ կազմալուծութիւնը վշտացնում է բանաստեղծ քա-
ղաքացուն: Հայ հողագործը փախչում է մայրենի հողից, դաշտերը
ամայանում են և փոշիով լցւում: Սրտուտիկը երկինք է թռչում
և, ողբալով իւր բարեկամ-հողագործի ակամայ փախուստը՝ աղեր-
սում է Աստուծոց գերեզարձ անել նրան:

Ճշմարտ հայրենասիրի կաթողին սէրը, զգացուն ու բարա-
խուն սրտի թախծալի կարօտը չի հաշուում օտարութեան հետ,
թող լինի սա եղեմական դրախտ: Հայրենիքի ճաճանչափայլ արե-
զակը և նրա ցոլուն շողերը, նրա կարկաչահոս առունները, կեն-
սատու անձրեւը ու մեղրածին ցողերը, հայրենի օդը, որ շունչ է
հրեշտակի, հայրենի ջուրը, որ մեղր է անուշակ, ամայացած
մայր երկիրը, որ պիտի ծաղկի, երբ ծծի իւր հարազատ զաւակ-
ների քրտինքը, ահա այս սրտամաշ կարօտով է յիշում բանա-
ստեղծը իւր հայրենիքը:

Գարնանային շունչը սթափեցնում է կիսամեռ դաշտերը խոր
քնից, արևի ծագումը հալածում է սգաւոր երկնքի մէջ ու մա-
ռախուղը և հրաւէր կարգում բնութեան զէպի նոր կեանք:

Զէ որ սառած ու կիսակենդան հայ միտքն էլ կարող է արթ-
նանալ այն կենսատու լուսից, որ անխոր ավուում է իւր շառա-
ւիղները ամբողջ աշխարհի վերայ: Այո, թարշամած հայ ծաղիկ-
ներն ու վարդերն էլ պիտի բացւին, որովհետև տիեզերապահ արե-
զակի ճառագայթները սկսում են թափանցել և հայ երկիրը:

Մանուկ հայ հասարակութիւնը «տուն ու կայեան» չունի, նա «մեր սրտի խորքումը ունի իւր հիմքը», նա, որ այժմ անշոշափելի է և ցնորք է կարծուում մուրացկանութեամբ ապրող թուլամորթներէց, պիտի մարմնանայ և տեսանելի լինի այն քաղաքացիներին համար, որոնց վստահութիւնը և հաւատը բղխում է իրանց եռանդից, որոնց յոյսը իրանց մէջ է.

Մեր յոյսը միայն մեզ վրայ լինի,
Զեն պէտք մեզ նպաստ մեծատունների.
Ողորմութեամբ թող մուրացիկն ապրի,
Մուրացողն միշտ ստրուկ է օտարին:

.

Հարկաւոր են միայն ազնւամիտ և անձնուրաց մարդիկ, հայ դիւղացին «իւր ջրոտ ձուքերով և անվեհեր սրտով», «իւր բահ ու հրացանով. հայ վարժապետը, «հայ ժողովրդի պաշտօնեայ ուսմպետը»

«Եւ օդ կարծեցած ձեր հայրենիքին,
Ո՞չք ոսկոր, մարմին ու արիւն տւին.
Ո՞վ տւեց լեզու անլեզու ազգին,
Կազդուրեց սիրաւ, վերածնեց հոգին,
Մէրտեց նոցա այն աւազանում,
Որի, մեր օրով, դպրոց է անուն:

.

Դամասկոսի քաղաքացիական ղաւանանքը պարզ է և ինքնուրոյն: Նա մարմնացնում է ազգային ոգին և աւաքինութիւնները դիւղականութեան մէջ ¹⁾. քրտնաջան մշակի սիրտն է այն արգաւանդ հողը, որ ծաղկելու է անշահասէր սերմացանների—հայ վարժապետի և հեղինակի ջանքերից. սոքա են այն վերածնիչ հողիները, որոնք պիտի հնչեն քաղաքացիական փողը, իսկ արձագանք տուողը, ոտքի կանգնողը պիտի լինի միայն հայ գիւղականութիւնը, ժողովուրդը: Զիպս յոյս բարձր խաւերից. հոգեորականութիւնը անձնասէր է և անսովոր դաղափարական հովապետութեան. ինտե-

¹⁾ Տե՛ս. «Շինականի երգը», «Մշակ», «Մշեցոյ հեկեկանքը», «Վանեցի կտրիճ», «Ղարիբ մշեցի», «Մշեցոյ նոր սերունդը» և այլն:

վիզենցիան չափազանց գործնական է և քաղաքացիորէն դեռ անհասուն. հայ փողաւորը աղայութեան հրապոյրքի մէջ է:

Երբ արւեստը հեռու է կեանքից և մարդկային կարիքներից, նա չի կատարում իւր իրական կոչումը, նա դառնում է եսական և չոր ու ցամաք: Արւեստը, գրականութիւնը, գիտութիւնը վեհ են այն ժամանակ, երբ նա ծաղկում են բաց օդում, կեանքի և հասարակութեան մէջ և նոցա ճիւղերի միջով փչում է քաղաքացիական կեանքի զովարար շունչը:

Գամառ-Քաթիպան ճանաչում է հայ ժողովրդին, գիտէ, որ անանցել է կրակի և արեան գետերի միջով, չարաբաստիկ պատմական անցքերի անսպասով, բաց չի ուրացել իւր պատիւը, չի կորցրել իւր ազգային կերպարանքը: Մի փոքր կարեկցութիւն մեր կողմից, մի փոքր լոյս տարածւի նրա մէջ, և նա իրան յատուկ անձնւիրութեամբ պիտի ջանայ ձեռք բերելու պատմական գոյութեան իրաւունքը:

V

Գամառ-Քաթիպան բովանդակում է իւր մէջ քնարեգակի և վիպասանի, երգիծաբանի և հրապարակախօսի քանքարները. նրան աջողում է այդ բոլոր ձիրքերը ներդաշնակ զուգաւորել, ոչ ՚ի վնաս, այլ ՚ի պաճուճանս իւր բանաստեղծական հանճարի:

Նրա վիպասանական երկերը նշանաւոր են իւր ժամանակի անգոյն, վիպական գրականութեան մէջ, որ աղքատ էր արծարծելի խնդիրներով և գեղարւեստական ճաշակով, արդիւնաւոր են բազմակողմանի բովանդակութեամբ, ծանրակշիւ և մտացածին վերաբերմամբ դէպի անշուք հայ իրականութիւնը: Նա աւելի հոգեբան է, վերլուծող հոգեբան մեր ընտանեկան և հասարակական կեանքի երևոյթների, քան սոցա կենդանազրոյ, նա դիտում է իրականութիւնը և ներշնչւելով նրա պատկերներով՝ աւելի հետախուզում է պատճառները և աղբիւրները, քան վերաստեղծում տեսածը:

Նա մատնանիչ է անում մեր ընտանեկան ղաստիարակութեան, որ արտադրում է այլանդակ բնաւորութիւններ, և այդպիսով դժնում դարոցական կրթութեան առաջ երբեմն անյաղթելի արգելքներ: Հայ ծնողը շտապում է զարգացնել իւր զաւակներին, աշխա-

տում է ուղղել նոցա՝ գործնական իմաստութեան ոգւով, կտրիճ և շրշաղ դարձնել, թողնելով առանց ուշադրութեան նոցա հոգեկան և մտաւոր զարգացման խնդիրը: Ընտանիքում ծուռ մեծացած հայ տղան չի դրստում դպրոց մտնելով, նա պահպանում է իւր յատկութիւնները, որ արւեստապէս պատւաստել են նրան իւր ծնողները: Իւր «Ձախօ» կլասսիկական պատկերի մէջ Պամառ-Քաթիպան վերաստեղծում է մի մութ և վայրենի աշխարհ, որի միահեծան իշխանը՝ մանկավարժ հայ տիրացուն է. նա երգիծաբանում է տիրացւական մանկավարժական սխտեմը, որ բթացնում էր աշակերտների միտքը, այլանդակում էր նոցա բնաւորութիւնը, անգամ անբարոյականացնում: Աշակերտը տառապում էր ծնողի և վարժապետի տգիտութիւնից. նա զուրկ էր քաղցր մանկական հասակի վայելքներից: Քերականութիւնը և սաղմոսը, ծեծը և վարժապետին սպասաւորելը—ահա այն կրթական միջոցները, որ ծաղրում էր անաստեղծը:

Երգիծաբանական եղանակը, որ առհասարակ նրա քնարի յատկանիշն է, ստանում է աւելի լայն ծաւալ, տիրապետող բնաւորութիւն նրա արձակ գրւածների մէջ: Շնորհիւ իւր անօրինակ դիտողականութեան և թափանցող խելքի՝ նա տեսնում է մեր անհատական և հասարակական կերպարանքը արատաւորող պատկերներ, տեսնում է մեծ խոչնդոտներ մեր ինքնագործունէութեան և յառաջադիմութեան ճանապարհի վրայ. նուրբ հոգեբանը հասկացաւ, որ իրականութեան պզտոր ջուրը պարզելու համար և խաւարի մէջ թափառող հասարակական միտքը լուսաւորելու՝ հարկաւոր է ծաղր, և նա անխնայ ծաղրում է. նա օրօրում է հայկեան ազգը, որ ապրում է հօրենական աւանդներով, որ ռուսի քաջեր, թէև մեռած, անհամար գրքեր, թէև չկարդացած, որ պարծենում է իւր Աստուածախօս լեզուով և անցեալի փառքով: Նա ծաղրում է հայ չինովնիկին, որ խիղճը ու ամօթը դէն դրած՝ ապահովում է իւր բարեկեցութիւնը և ապրուստը:

Երգիծաբանական գրականութեան ստեղծիչը ռուսահայերի մէջ Պամառ-Քաթիպան է, և նրա այդ տեսակ երկերը կ'ունենային աւելի մեծ նշանակութիւն, եթէ նոքա գրւած լինէին գրականական լեզուով, և ոչ դաւառական. բայց այնուամենայնիւ գեղարւես-

տական երկը, տաղանդաւոր մաքի աղգասիքը միշտ նշանաւոր է, ինչ բարբառով էլ գրւած լինի նա, ուստի հեղինակի վաստակը անհերքելի է: Նրա երգիծաբանական պատկերները հարթել են և պատրաստել ապագայ երգիծարանի ճանապարհը. նոքա կը լինին հիմնաքար յետագայ հեղինակների համար:

Գամառ-Քաթիպայի գրականական և հասարակական վաստակները այնքան մեծ են և բաղմատեսակ, որ դժւար է լիովին ընդգրկել նրա ստեղծագործութեան բոլոր կողմերը և կազմել նրա մասին մի ամփոփ և անթերի կարծիք: Նրա երկերի անչառ քննադատութիւնը և նոցա լիամասն գնահատութիւնը դեռ վաղածամ է. նրա մաքի բողոքները և սրտի զրգիւնները շարունակուած են յուզել հասարակութիւնը: Անհերքելի է, որ նրա բանաստեղծական երկերը մեր նորագոյն գրականութեան մէջ բռնուած են ամենափայլուն տեղը, որ նա չունէր և մինչև օրս չունի արժանաւոր մրցակից: Նրա գործունէութիւնը կազմուած է մի դարագլուխ, որ առատ նիւթ պիտի մատակարարի ազգային գրականութեան և հասարակական յառաջադիմութեան նախանձախնդիր քննադատներին: Նրա բանաստեղծութիւնը մի շքեղ յիշատակարան է մեր հասարակացութեան պատմութեան և ազգային ինքնաճանաչութեան:

Գամառ-Քաթիպան հայ քաղաքացու մարմնաւորեալ բողոքն է. նա ազգային երգիչ է, երգիչ անցեալ վառքի, վշտաբեկ երգիչ ներկայ անկազմութեան և նախագուշակ մարդարէ ապագայի: Նա տւեց կերպարանք անկերպարան ազգին, կապեց հասարակական շահերով ցիրցան, միմեանցից բաժան և միմեանց գոցութիւնը չճանաչող հայերին, յուսադրեց մոռացւած հայ գիւղացուն, ոգի ներշնչեց նրան և մարդոց շարքը դրեց: Նա գահընկեց արեց մեծամիտ աղաներին, խորտակեց նոցա ժայռոտ ինքնահաւանութիւնը և ցոյց տւեց նոցա վայել տեղը հասարակութեան մէջ. հանեց նաև անգործունեայ հոգեորականի պատրւակը: Գաղափարը և պարտականութիւնը ամեն իշխան հռչակեց, հասարակութիւն և հասարակական կարծիք ստեղծեց, բանաստեղծական լեզւի և ինքնուրոյն հայ բանաստեղծութեան հիմնադիրն եղաւ:

Սրտաշարժ է և խրատական նրա թախծալից պատկերը — մի ծերունի, հոգով հպարտ, քննաջոյզ հայեացքով, դադափարական

կռիւներէց կնճռւած, մի պատկեր, որ լիովին արտայայտում է ազգային վիշտը և ցոլացնում է իւր մէջ ամբողջ ազգը իւր ուրախ և տխուր օրերով: Կարծես, նա եկած լինի մի ուրիշ, աւելի կատարեալ աշխարհից, ուր մարդիկ ապրում են ոչ միայն հացիւ, այլ և բանիւ, ուր անձնւիրութիւնը և զաղափարականութիւնը տիրող տրամագրութիւնն է:

Բանաստեղծը նշանաւոր է իւր քռնքարով: Փայլուն մտքի թռիչքը հետեւանք է փայլուն մտաւոր ոյժերի, և երբ բանաստեղծը հրգում է ոչ միայն ըստ պահանջի բնածին ձիրքերի և քմահաճութեան մուսաների, այլ և ըստ իւր ներքին քաղաքացիական տրամագրութեան, այլ և հասարակութեանը ինքնաբերաբար ծառայելու վսեմ նպատակով, այն ժամանակ այդ փայլուն աստղը, այդ նախախնամած մտաւոր ոյժը երկպառիկ մեծանում է մեր առաջ, և մենք պատրաստ ենք երկրպագել նրան:

Այն ուղեղը, որ ապրում էր անշահասէր զաղափարներով, այն սիրտը, որ տրոփում էր ու աչրւում քաղաքացիական սիրոյ բոցով, այն մարդը, որ դառն կսկիծների և անձնական զոհերի գնով էր զործում, անմահութեան կատարեալ պատկերներից մէկն է, և աշխարհի ամենահաստատուն բարոյական սխտեմը պիտի տապալւած համարել, և թէ այսօրիսի զաղափարական կեանքը միայն իլլիւզիա է:

Խնկելի քաղաքացի էր Լ. Պատկանեանը, որ հայութեան վշտի ու տառապանքների բաժակը անձնւիրաբար խմեց, իսկ ապերախտ ազգը նրա «մի հատ սին փառքը» անկատար թողեց. անզուգական բանաստեղծ է մեր գրականութեան մէջ Գամառ-Քաթիպան, որ լւաց իւր ջերմ արտասուքներով մեր վէրքերը և բուժեց մեզ շատ դարեւոր ցաւերից:

Նա կանգնեց իրան անձեռագործ մահարձան և թողեց անմահութեան անշինջ յիշատակ: Նրա ոգին մեզ հետ է. նրա քաղաքացիական դրօշը փռվիւղում է մեր մէջ, և այսօր՝ աղէտալի և ողբերգական հանգամանքներում նրա ալեղարդ և վշտահար գուտանի մորմօքը ևս առաւել կենդանացնում է մեր առաջ այդ վիհ բանաստեղծական պատկերը:

Երգեմ ես, բայց թնշ,— երկաթեայ շղթան,
 Որ կաշխանդել է ձեռքըն իմ ազգին,
 Թէ ծանրը լուծը և կամ խարազան,
 Թէ հայի կըրած կեանքը դառնազին:

Աշխարհքում մընամց անէծք, թուք ու մոլ,
 Որ չըլինէին մեր վըրայ թափած,
 Թըշնամու ձեռքում մընամց զէնք կամ սուր,
 Որ հայ արիւնով չըլինէր ներկած:

Ուզում էք երգեմ կողոպտած գեղերն
 Մեր դրախտանքման խըղճուկ հայրենեաց,
 Թէ ոտնակոխած, աւերած ժամերն,
 Թէ հայ կուսանը դուշմանէն պըղծած:

Երգեմ բեղմնաւոր հող հայ մըշակին,
 Որ նորա ձեռքից թիզ թիզ են խըլում,
 Երգեմ հայերիս անտարբեր հողին,
 Որ տեսնում ենք այս և լուռ ենք մընում:

Երգեմ մեծատանց երեւն անամօթ,
 Որ օրնիբուն լոկ իւր վրայ են խորհում,
 Փոխանակ տալու մեզ զէնք, թընդանօթ,
 Զանգուլակներով կուրծքն են զարդարում...

Չէ, թող իմ նախնեաց ազնիւ բամբիւրը
 Թող մընայ յաւերթ լուռ, սլատին կախած,
 Քանց որ փարատէ ձեր սին ձանձիրը,
 Քանի որ հայի հողին է թըմրած:

Մոսկւա, 1896 թ. փետր. 18-ին:

ՀԱՅ ՊՈԷՏԻՆ

ԱՐԱՄ ԶԱՐԳԻՃԵԱՆԻ

Ես կ'ուզէի, որ երգէիր անլուռ
Թշուռ մարդկութեան հալածանքն անվերջ,
Կ'ուզէի նորա չափարանքն անլուռ
Արցունքով կարգաւ քո երգերի մէջ:
Բայց չէ, այդ չէի ես լոկ ցանկանում:
Կ'ուզէի, որ դու երգեր հիւսէիր
Սուրբ իրաւունքի կուռ դաշտերից.
Եւ այդ երգերով պսակ կապէիր
Հպարտ մահացած զինուորի ճակտին:
Բայց չէ, այդ չէ դեռ ցանկութիւնս բոլոր:
Կ'ուզէի տեսնել մի երգում ամփոփ,
Ինչպէս մեր ընկած կեանքի վիանքեր.
Խոր թշուառութիւն, մինչ ծաղր անամօթ.
Եղբօր սէր դադաղ, մինչ լպիրշ պարեր:
Բայց չէ, այս էլ չէ ցանկութիւնս բոլոր:
Կ'ուզէի կարգաւ քո երգերի մէջ,
Թէ ի՞նչ է մի մօր արցունքը աղի...
Կամ թէ օտարի շէմքերը մաշող
Բոկոտն որբի աղերսը հացի.
Բայց չէ, այս չէ ցանկութիւնս վերջին:
Կ'ուզէի, որ քո ազգիւ երգերով
Նոր կեանքի ուղին դու մեզ հարթէիր,
Սուրբ իդէալի յաղթութեանն անսուտ
Ինքդ հաւատացած մե՛զ քարոզէիր.
Եւ այդ կը լինէր ցանկութիւնս բոլոր:

ԱՆԴՐԾԻՐՄԵԱՆ ԻՂՁ

(Տապանադիր)

ԱՐԱՄ ԶԱՐԳՅԱՆԻ

Թէ հնար լինէր.

Երբ դրօշն է պարզւած եղբայրակցութեան,

Նւ մարդկութիւնը եղբայրասպան

Դաշոյնը կոտորած՝ յաւիտենական

Սիրոյ դաշն կնքում անսոս երդումով,—

Դրախտում անգամ, իբրեւ մի ըմբոստ,

Արարի կամքին կհակառակէի

Նւ կեանք կառնէի... Սրբազան սիրոյ,

Եղբայրակցութեան տօնին մասնակից,

Կրկնակի մահով զժոխք կ'երթայի....

1897 թ. 15 ապրիլի.

ՀԱՅԵՐԷՆԻ ՆԻԱԳԱՅՆՈՒԹԻՒՆԸ

(Լարդացւած Բերլինի հայ ուսանող, ժողովում 1896-ին եւ Հայդելբերգի հայ ուսանողական համագումարում 1897. ապրիլի 10-ին).

Գ. ՎԱՆՅԵԱՆԻ

Լեզուն մի հոգեբանական երևոյթ է, որ ծառայում է մարդկային մտքի փոխանակութեանը: Չնայելով որ հոգեկան երևոյթները համամարդկային են, մարդու մտածութեան կերպը ամեն տեղ կատարւում է նոյն օրէնքներով, — տրամաբանութիւնը ամենուրեք նոյնն է. — սակայն, տրամաբանական մտածութեան արտաքին ձևը, նորա արտայայտութիւնը ձայների միջոցով այնքան տարբեր է, որքան լեզուներ կան աշխարհիս երեսին: Այդ արտայայտութիւնը տարբեր է ոչ միայն զանազան ազգութիւնների մէջ, այլև միևնոյն ազգի, միևնոյն տէրութեան զանազան զաւառներում, շատ անգամ նաև միևնոյն քաղաքի մէջ. — այլ է օրինակ Թիֆլիզի կրթւած հայերի և այլ ժողովրդի լեզուն. նոյն երևոյթը նկատուի է համարեա բոլոր մեծ քաղաքներում — Պարիզ, Բերլին, Մոսկւա, ուր ժողովրդի քարձր և ստորին դասերը բոլորովին տարբեր ձևեր են բանեցնում իրանց մտքերը արտայայտելու, այնպէս որ այդ զասակարգերը շատ անգամ իրար դժւարութեամբ են հասկանում: Այդպիսով որքան լեզուն համայնական, ընդհանուր երևոյթ է, որով մարդիկ իրար հետ հաղորդակցւում են, որից զուրկ է ամբողջ մնացեալ կենդանական աշխարհը, իւր մասնաւորութեան մէջ նա նոյնքան նեղ-զասակարգային երևոյթ է, որ շատ անգամ սեղմւում հասնում է անհատականութեան. . . Բացի այն յայտնի երևոյթից, որ ամեն զասակարգ

ունի իւր լեզուն, անհասան էլ ունի իւր հոգեկան կարողութիւններին համապատասխան լեզու, որը այնքան տարբեր է իւր դասակարգի միւս անհատների լեզուից, որքան նորահոգեկան կարողութիւնները տարբեր են նոցանից: Լեզւի անհատականութիւնը զրականութեան մէջ կոչւում է ոճ.—այստեղից Բիւֆֆոնի այն առակաւոր դարձած ասացածի ճշմարտութիւնը թէ ոճը ինքը մարդն է (le style s'est l'homme):

Եթէ մի ազգութեան դասակարգերի և անդամների մէջ, որոնք շարունակ հաղորդակցութեան մէջ են միմեանց հետ, կարող է լեզւի այդպիսի տարբերութիւն գոյութիւն ունենալ, ապա հասկանալի է, որ ազգերի լեզուն այնքան աւելի տարբեր է լինելու, որքան նոքա ժամանակով ու տարածութեամբ միմեանցից հեռու են: Ձինարէնն ու հայերէնը, որ ոչ մի հաղորդակցութեան առիթ չեն ունեցել, ծագումով էլ պատկանում են լիովին տարբեր աղբիւրների, բնականօրէն ոչ մի նմանութիւն էլ չեն կարող ունենալ... Լեզուների տարբերութիւնը մի հանրաժանօթ և առօրեայ երևոյթ է. միտքը ամեն տեղ մնալով նոյնը, ամենուրեք կառավարւելով նոյն օրէնքներով, եթէ կարելի է այսպէս ասել, տարբեր է նորա պատեանը:

Նայելով ազգի ծագմանը, նորա կլիմայական և աշխարհագրական պայմաններին, նորա տեմպերամենտին, պարագմունքին ու կացութեանը, լեզւի այդ արտաքին պատեանը ունենում է իւր բնորոշ յատկութիւնները... Լեզւի այդ արտաքին կեղեւի մի քանի յատկութիւններն է նւիրւած այս յօդածը, յատկապէս՝ թէ ինչու մի քանի լեզուներ դուրեկան ու նւագային են, միւսները չոր ու աննւազային:

Ի՞նչ է իսկապէս լեզուն, եթէ ոչ մի քանի տասնեակ ձայների կուտակումն, որոնց փոխադարձ յարաբերութիւններով հազարաւոր և բիւրաւոր մտքեր են արտայայտուում: Լեզուների տարբերութեան հիմքը նոցա մէջ պարունակւած միտքը չէ, այլ այդ արտաքին ձայների, որ սովորաբար հնչիւններ են կոչւում, տարբեր կապակցութեան արդիւնքն է: Եւ նայելով թէ մի լեզւի հնչիւնները որպիսի կապակցութեան մէջ են մտնում, իրանք հնչիւնները որպիսի յատկութիւններ ունին, սուր կամ թեթեւ են, փափուկ կամ ծանր, զիւրին կամ զժլար արտասանելի, ըստ այնմ նոքա լեզւին տա-

լիս են մի արտաքին գոյն, որ դուրեկան կամ անդուրեկան, երգելու կողմից նւագային կամ աննւագային է կոչւում:

Լեզուների տարբերութիւնը հասարակօրէն ասենք, հնչիւնների տարբերութիւն է և այդ տարբերութիւնը նոյն իսկ մ'օտ ցեղական լեզուների մէջ լեզւին տալիս է արտաքին լիովին տարբեր կերպարանք:—Այդ է բարբառների տարբերութեան հիմքը. անգլերէնի բառերի ²/₃-ը գերմաներէնից է, բայց բառական է մի երկու անգամ լսել այդ լեզուները, և իսկոյն կը նկատուի, որ դոցա արտայայտութիւնը բոլորովին ջոկ բնաւորութիւն ունի: Գերմաներէնը համեմատաբար աւելի կոպիտ է և անդուրեկան, անգլերէնը աւելի փափուկ ու դուրեկան:

Երբ դոցա հետ համեմատում ենք լեզուների առաւել հեռաւոր խմբեր, նոցա միջի տարբերութիւնները էլ աւելի աչքի են զարնում... Մենք գտնում ենք, որ իտալերէնն ու ֆրանսերէնը աւելի դուրեկան են, քան գերմաներէնը, անգլերէնը կամ ռուսերէնը:

Այդ երևոյթը աւելի ակներև ու պայծառ կարող ենք դիտել, երբ ոչ միայն խօսակցութիւնն ենք լսում, այլ երգը, այն էլ միաժամանակ, միևնոյն բեմում, օպերաների մէջ, ուր շատ անգամ զանազան ազգի երգիչներ են մասնակցում իրանց մայրենի լեզուներով:

Այդ պարագաներում թիթե փորձառութիւն ունեցող լսողն էլ կը նկատուի, որ մինչ իտալերէնի կամ ֆրանսերէնի հնչիւնները ձուլւում, միանում և հոգի են տալիս եղանակին, գերմանական կամ ռուսական լեզուները հակառակը՝ շատ անգամ թուլացնում և նսեմացնում են եղանակի ոգին ու նորա ազդեցութիւնը, որ անկասօրէն աւելի վսեմ, ազատ ու պայծառ պիտի սաւառնէր...

Ուրեմն, բացի խօսելու ժամանակ դուրեկան կամ անդուրեկան լինելը, երգելու համար էլ ամեն մի լեզու միևնոյն չարմարութիւնը չունի: Իտալերէնն ու ֆրանսերէնը աւելի չարմար են երգելու, ուստի դոցա սովորաբար անւանում են նւագային լեզու, իսկ անչարմարները աննւագային:

Արդ՝ ինչու լեզուներից մի քանիսը դուրեկան են, ինչու նւագային են, իսկ միւսները ոչ դուրեկան, ոչ էլ նւագային:

Դորա բացատրութիւնը մեզ տալիս է ձայնաբանութիւնը և հարմոնիայի ուսումը: Ամենօրեայ փորձերից յայտնի է, որ ամէն

մի հնչիւն կամ ձայն միեւնոյն տպաւորութիւնը չի թողնում մեր վերայ. շատ բարձր և սուր, շատ ստոր ու բութ հնչիւնները մեր տկանջին անդուրեկան են: Այդ տպաւորութիւնները կարճ մենք արտայայտում ենք երկու բառով. *ճայն* և *աղմուկ*.—Ինչ որ մեզ հաճելի է, նա անւանում ենք ձայն, ինչ որ անհաճելի—աղմուկ (*խշխշոց, թրխկոց, լշլշոց, սուլոց և այլն*):

Ձայնը առաջանում է ձկուն մարմինների (լար, թմբուկ, զանգակ, կոկորդ) պարբերական տատանումից, իսկ աղմուկը՝ անպարբեր: Երբ մենք զանգակի ձայնը ուշադիր լսենք, մանաւանդ առաջին մի հարւածից յետոյ, կը նկատենք, որ նա բաղկացած է բազմաթիւ նման հնչիւններից, որոնք սակայն տարբեր բարձրութիւն ունին... զանգակի մի հարւածը մի հիմնահնչիւն արձակելուց յետոյ, չի կտրում իւր ձայնը, այլ շարունակ կրկնում է նոյն հնչիւնը, ղողանջում է, ինչպէս ասում են սովորաբար. այդ ղողանջիւնը, նոսիկին հիմնահնչիւնի կրկնութիւնն է, այն տարբերութեամբ, որ եթէ հիմնահնչիւնը մի որոշ ժամանակում կատարում էր մի տատանում, նորա հետեւիները միեւնոյն ժամանակում կատարում են 2, 3, 4 և այլն տատանումներ, այսինքն նոքա աւելի բարձր են հիմնահնչիւնից, ուստի կոչւում են վերնահնչիւններ. ահա այդ նման բայց տարբեր բարձրութիւն ունեցող հնչիւնների փոխադարձ յարաբերութիւնը և տատանումը այնպէս է, որ նոքա ձուլւում, մեռնում և միատարր ամբողջութիւն են կազմում:—այդպէս ահա ամեն մի հարմոնիայի (ներդաշնակութեան) հիմը թւաբանօրէն հետեւել կերպով է արտայայտւում. 1:2:3:4 և այլն... այսինքն՝ եթէ հիմնահնչիւնը (*grundton*) մի որոշ ժամանակում կատարում է մի տատանում, նորա հետ ձուլւող վերնահնչիւնները (*oberton*) կատարում են նոյն ժամանակում 2:3:4 և այլն տատանումներ:

Երբ ընդհակառակը հիմնաձայնի և վերնաձայնի տատանումները շեղւում են վերելի յարաբերութիւնից, ուրիշն իրար չեն ծածկում ու միանում, այլ արտայայտւում են խառն ու փնթոր, ապա առաջ է գալիս անհարմոնի (աններդաշնակութիւն), ինչպէս այդ նկատելի է կոտրած զանգակի հնչիւնի վերայ, որովհետև կոտրած զանգակը արդէն անընդունակ է հիմնահնչիւնի հետ ձուլւող

վերնաձայներ տալու, ուստի և նորա հնչիւնը այլ ևս ձայն չէ, այլ մի անդուրեկան զրնգոց, նւագային լեզուով ասենք, մի անհարմոնի (գիստոնանս)։ Մետալ դրամների ազնուութիւնն ու կեղծիքը ճանաչելու հիմը դորա մէջն է. ազնիւ դրամի ձայնը միատարր և հընչուն է, կեղծինը խառն և կերկերուն, որ հմուտ ականջը իսկոյն որոշում է...

Այս տեսակէտով ամեն մի լեզւի հնչիւններն էլ կամ ձայներ են և կամ աղմուկ, որ քերականութեան մէջ սովորաբար «ճայնաւոր» ու «քաղածայն» են կոչուում։

Ձայնաւոր կոչուում են այն հնչիւնները, որ ինքնուրոյն ձայն ունեն և այդ ձայնը երգել կարելի է առանց ուրիշի օգնութեան. ա, ու, ը և այլն. .

Բաղաձայն են այն հնչիւնները, որոնց միայն վայրկանաբար հնչել կարելի է, իսկ երգել ոչ. բ. թ, չ, խ և այլն...

Ձայնաւորները բնականաբար մեզ դուրեկան են, իսկ բաղաձայնները ոչ. — սորանից հասկանալի է, մի լեզու նոյնքան դուրեկան է լինելու, որքան նա ձայնաւորներ ունի և անդուրեկան՝ որքան հարուստ է բաղաձայններով։

Եւ երբ այս տեսական կանոնը հետադոտում ենք գործնականօրէն հաստատելու, նկատում ենք, որ իտալերէնը իրօք աւելի շատ ձայնաւորներ է դործ ածում քան գերմաներէնը կամ ռուսերէնը... իսկ այս վերջինները, ընդհակառակը, աւելի հարուստ են բաղաձայներով. ահա ուրեմն իտալերէնի նւագայնութեան զաղտնիքը։

Եթէ այնուհետեւ մեր զիտողութիւնը աւելի ընդարձակենք, համեմատենք հէնց ձայնաւորները միմեանց հետ, կը տեսնենք, որ նոքա ամենը հաւասար պայծառութիւն և յարմարութիւն չունեն երգելու, որ նոցա հնչունութիւնը (ЗВУЧНОСТЬ) ձայնի բարձրութեան զանազան աստիճաններում տարբեր է. օրինակ. ու ձայնը բարձր աստիճաններում բոլորովին կորցնում է իւր ձայնը և լսում է որպէս մի մթին ը... Երգեցողութեան տեսակէտով նա ուրեմն անյարմար է բարձր նոտերին. այն ինչ ի-ն ամենաբարձր նոտերում հնչում է պայծառ ու սիրուն, ուրեմն յարմար է այդ նոտերում երգելու. թէ երգիչների ամենօրեայ վարժութիւնները և թէ ֆիզիկայի վորձերը (շեւհոյց և սլք) զոյց են տուել, որ ու ամենից

յարմար է ստորին ձայներում երգելու. դորանից մի քիչ բարձր լաւ երգւում է օ, միջին ձայներում ամենից լաւ երգւում է ա—դորանից աւելի բարձր՝ ը, ապա՝ է, իսկ ամենաբարձր, որպէս ասացինք՝ ի:

Այստեղից հասկանալի է, մի երգ կամ մի լեզու, որ շատ ու կամ օ է պարունակում, անյարմար է բեմական երգեցողութեան, որովհետեւ բեմական երգը պահանջում է մի որոշ աստիճանի բարձրութիւն, որ ընդարձակ թատրոնի ամեն անկիւնում լսելի լինի հանդիսականներին: Աւելի յարմար և պայծառ լսելի կը լինի այն երգը, որ աւելի մեծ քանակութեամբ է և ի է պարունակում. սակայն շարունակ բարձր ձայները, որ այդ հնչիւններն են պահանջում պայծառ արտասանելու համար, երկուստեք անդուրեկան են, երբ երկար տւեն, թէ լսողների և թէ դերասանների համար, որովհետեւ զոքա լսողների ականջն են յոգնեցնում, իսկ երգիչների կոկորդը չափազանց լարում: Ուստի երգեցողութեան համար ամենից յարմար ձայնաւորը մնում է ա-ն, որովհետեւ նա միացնում է բոլոր մնացեալ ձայնաւորների աւաւելութիւնները առանց նոցա պակասութիւնների, կազմելով մի ոսկի միջուկ:

Ա երգելիս բերանը և կոկորդը այնպիսի յարմար դիրք են ստանում, որ մնացեալ ձայնաւորների համար անկարելի է, ուստի նորա երգելը դիւրին է, մանաւանդ նա պահանջում է ոչ չափազանց բարձրութիւն, ոչ էլ ցածութիւն, այլ միջակութիւն, որի ժամանակ նա հնչում է անասելի պայծառ, վսեմ և ընդարձակ. նա չի նեղացնում երգչին, չի լարում նորա կոկորդը, միևնոյն ժամանակ հաճելի է լսողներին:—Ա-ի այդ գերազանց նւագային յատկութիւնները շատ լաւ յայտնի են հմուտ երգիչներին, ուստի երբ նոցանից մէկը մի որոշ տպաւորութիւն է ուզում թողնել հանդիսականների վերայ, կամ դափնիներ է ուզում քաղել նոցանից, անպատճառ աշխատում է ձայնի շնորհը այնպիսի բառերի վերայ ցոյց տալ, ուր ա կայ:

Այդ է պատճառը, որ երգիչները իրանց երգածի բնագիրը սովորաբար փոփոխութեան են ենթարկում և ձայնաբարն էլ (կոմպոնիւտ) միշտ ջանք է թափում բնագիրը այնպէս ընտրել և խմբագրել, որ յարմար լինի երգեցողութեան: Ուստի և մեծ ստեղծագոր-

Ճութիւնները երբէք անմիջապէս նւագի չեն առնուում, այլ ձայնարարը նոցանից վերցնում է միայն նիւթը և այնպէս շարադրում, որ չարմար լինի երգեցողութեան. Գէօթէի Ֆաուստը, Լերմոնտովի Դեյր անունով միայն զոյութիւն ունին համանուն օպերաների մէջ. նոցա բնագիրը փոփոխած է անճանաչելի կերպով:

Այսպէս՝ պայծառ կամ հիմնական ձայնաւորները իրանց նւագայնութեան համեմատ հետևեալ կերպով են դասաւորուում. առաջին տեղը տալով Ա.-ին, նորան յաջորդում են զէպի վերև Ը, է, (ե), ի. զէպի ներքև՝ օ, ու (իւ).

Երկրորդները մէջ ձայնը սովորաբար այն հնչիւնի վրայ է ընկնում որ աւելի նւագային է. օրինակ եա, երգւում է՝ ե ա ւ ա... ե — այդտեղ հնչում է որպէս մի կարճ բաղաձայն, այ = ա ա ա ա, էյ = է է է էյ. օյ = օ օ օ օյ: Պահ մի տեսակ ձայնաւորներ, որոնք սովորաբար փափուկ են կոչւում, որից մեր զրական լեզուն համարեան զուրկ է, թէև բարբառներում նոքա շատ յաճախ են պատահում. այսպէս Փրանսիական Ա. գերմանական ä, ö, ü, ռուսական ё, ю, ъ, հայոց իւ և եօ մի քանի բառերում (եօթ տասնեօթ և այլն). Այդ ձայնաւորները վերին աստիճանի դժւար են երգւում և նսեմացնում են եղանակի պայծառութիւնը, որովհետև նոցա արտաբերելու ժամանակ բերանի անցքը սաստիկ նեղ է և բերանի փոսը ամբողջովին այնպիսի դիրք է ստանում, որ ոչ միայն երգելը, այլ և արտասանելը ահագին դժւարութիւնների հետ է կապւած, որպէս ռուսաց Է — ձայնաւորը, որ միևնոյն ժամանակ սաստիկ անդուրեկան է:

Այստեղից հասկանալի է, որ այն լեզուներն են նւագային, որոնք շատ պայծառ ձայնաւորներ ունեն, որպէս իտալերէնը, հայերէնը, մանաւանդ՝ որոնք շատ Ա ունին: Առհասարակ մի լեզուի նւագայնութեան առաջին փորձաքարը Ա-ի առատութիւնն է:

Այդ կողմից հազիւ թէ մի լեզու համեմատուել կարողանայ հայերէնի հետ, որովհետև Ա-ն հայերէնի ամենահիմնական հնչիւնն է և նորա կորուստը բաւական է հայերէնի արտաքին բնաւորութիւնը հիմնովին կերպարանափոխ անելու և անճանաչելի դարձը. նեղու համար, որպիսին մենք տեսնում ենք մեր բարբառներից մի քանիստում, ուր Ա ն մասամբ տեղի է տալիս Ը-ին: — Հայերէնի փա-

ցեալ կոպիտ կողմերը իւր առատութեամբ վարագուրող ու չէզոքացնողը մեր լեզւի այդ հիմնահնչիւնն է ¹⁾։

Ճաշնաւորներին նւագայնութեան աստիճանը ամեն մինը զիւրութեամբ կարող է ծանաչել եթէ մատը կոկորդին դնէ և ճաշնաւորները հերթով հնչէ. մարդ իսկոյն կը նկատէ, որ կատիկը (Kehlkopf) ու հնչելիս ամենից ցածր դիրք է ստանում, օ հնչելիս մի քիչ բարձրանում է, աւելի բարձր, իսկ է և ի հնչելիս նա ընդունում է ամենաբարձր դիրքը։—Ով մի քիչ հմուտ լսողութիւն ունի, կարող է և հետեւեալ կերպով համոզուել վերելը դրած փաստերի ստուգութեանը, մի որևէ եղանակի բառերի տեղ պէտք է հերթով դնել որոշ ճաշնաւորներ և երգել, առաջ, օրինակի համար, ու... յետոյ ա, ապա ի... և համեմատել նոցա թողած տպաւորութիւնը։

Ահասարակ ամեն մի երգող երբ մի բան է երգում առանց բառերի, հէնց բնազդաբար, առանց տեսական ուսման, միջին ձայներում միշտ գործ է ածում՝ ա, ա, ա... կամ լա, լա, լա, իսկ վերին աստիճաններում լէ, լէ, լէ...

Այստեղից հասկանալի է, որ ամեն մի նւագագէտ ու ճաշնարար երգի եղանակն ու նորա ճաշնաւորները մի որոշ ներդաշնակութեան մէջ պիտի ջանայ պահել. շատ բարձր ձայները նա պիտի դնէ է կամ ի ճաշնաւորների վերայ, միջակները ա և ը-ի վերայ,

¹⁾ Բաղմահմուտ Ալտընեանը իւր «Քննականի» մէջ դանդաղ է չափաւորում ա-ի առատութեան դէմ մեր լեզուում, համարելով նորան լեզուն դանդաղեցնող մի հնչիւն. եթէ չեմ սխալում, Աղայեանն էլ, նորանից առնելով, կարծեմ «Աղբւրում» ձիգ էր թափում մի ցօղած դրելու առանց ա-ի. Առանց մոռանալու երկու անձնաւորութիւնների էլ բարձր հեղինակութիւնը մեր լեզուում, պիտի նկատենք, որ թէ մինի անբաւականութիւնը և թէ միւսի ջանքը լիովին զուր էին... Ինչ չէր տալ անզլիացիին կամ գերմանացին, եթէ նորա լեզուն գէթ հալերէնի կիսի չափ ա պարունակէր...

Ծան. Հեղինակի։

Եւ չնայած դորան՝ մենք իս պնդում ենք, որ ա-երի չափազանց առատութիւն է մեր լեզուում, և կիրթ լսողութիւնը պահանջում է նոցա թւի կրճատումը, երբ միայն աչդ հնարաւոր է՝ առանց մեղանչելու քերականական կամ բառակազմութեան օրէնքների դէմ։ Այդ մասին խօսք կը լինի «Լեզական գրույցներ» մէջ։

Ծան. Խմբ.։

խի ստորին ձայները ու օ-ի վերայ.— իմ գիտեցած հայերէն երկերից «Հազար երանի քեզ մանուկ» երգի առաջին երկու տողերը այդ կողմից կարելի է օրինակելի համարել. նորա եղանակը և վանկերը (ձայնաւորները) իջնում և բարձրանում են մի զարմանալի հարմոնիայով, որով երգի տպաւորութիւնը կրկնակի զօրանում է: Պատարագի մէջ «Եղիցի անուն Տեառն օրհնեալ»—տաղը նոյնպէս եղանակի և ձայնաւորների մի հիանալի ներդաշնակութիւն ունի: Սովորական երգերում, սակայն, այս կանոնը պահպանել անհնարին է, դա գործադրում է առաւելաբար օպերաներում:

Հիմա փորձենք գտնելու բաղաձայն հնչիւնների նւագայնութեան աստիճանը.— Սակայն, հնչիւնների այս բաժանումը, որ իբրեւ աւանդ հին քերականներից մեզ է հասել և սովորական դառել, ներկայ հնչիւնաբանութիւնը (phonetik) չի ընդունում, որովհետեւ այն հնչիւններից շատերը, որ սովորաբար մենք բաղաձայն ենք համարում, իրանց բնաւորութեամբ աւելի ձայնաւորին են մօտ և շատ անգամ աւելի ձայնաւորի դեր են կատարում, քան բաղաձայնի: Մեր ը—հնչիւնը, օրինակ, կրկին, հետաքրքիր և այլ ուրիշ շատ բառերում աւելի ձայնաւոր է, նոյնպէս էլ ոյժ, գոյժ, այս, այդ բառերում յ—ձայնաւոր է, թէև մենք սովորաբար այդ երկու հնչիւններն էլ բաղաձայնների մէջ ենք դասում: Այդ հնչիւնները մի քանի հատ են, նոքա բռնում են ձայնաւորների և բաղաձայնների միջին տեղը. ուստի և նոցա սովորաբար անւանում են կիսաձայն կամ նայ հնչիւններ և հետեւեալներն են. լ, ղ, ո, ր, ն, մ — Թէև այդ շարքից դուրս են գտնւում, բայց նոյնչափ փափուկ ու դուրեկան են մեր յ և հ հնչիւնները:

Այդ հնչիւնների արտասանութիւնը բերանին և լիզին այնպիսի դիրք է սալիս, որ վերին աստիճանի նպաստաւոր և յարմար պայմաններ է ներկայացնում երգելու, նոցա ձայնը փափուկ, ազնիւ ու դուրեկան է. այդ է պատճառը, որ այնտեղ, ուր երգի բառերը պակասում են կամ բոլորովին չկան, նւագային վարժութիւնների մէջ, օպերական արիաներում և այլն... ձայնաւորները միշտ նայ բաղաձայնների ընկերութեամբ բնագրի տեղն են բռնում ու երգւում որպէս, լա, լա, աա, աա, րէ, րէ, նա, նա և այլն:

Երբ մենք գիտելու լինինք ժողովրդական երգերը, կը նկատենք

որ նոքա միշտ վերջանում են նա'յ նա'յ, լէ' լէ', հա'յ հա'յ-ներով. մայրը մանկանը քնացնելիս նա' նի'կ, նա'նա'ներ, օ'ր, օ'ր, օ'ր է երգում, սիրահարը իւր վիշտը արտայայտում է իմա՞լ էնիմ, իմա՞լ էնիմ, (ինչպէս անեմ) բացականչութիւններով. աշուղը իւր բառերի պակասը լրացնում է նէյնիմներով. աշխնքն ի՞նչ միայն կիրթ ճաշակի տէր նւագագէտը, այլ և հասարակ ժողովուրդը, ռամիկը, բնագդաբար, երգելիս՝ երբ նա բառեր չունի, ընտրում է իւր լեզուի ամենանւագային տարրերը, ձայնաւորներից ա, է կամ ի, բաղաձայներից լ կամ ն և կամ յ, հ...

Եթէ ուզենք այդ երեւոյթը անձնական փորձով ստուգել, ապա պիտի վարենք վերեւ դրած օրինակի համեմատ. օրինակ, եթէ կամենում ենք իմանալ թէ իրօք լ—աւելի նւագային է քան իւ կամ չ, բաւական է մի որ և է եղանակ երգել առաջ լա, լա, ապա իւա, իւա կամ չա, չա վանկերով իսկոյն համոզւելու, որ առաջինը անհամեմատ զուրկան և նպաստաւոր է երգելու, իսկ վերջինները թէ դժւար են երգւում և թէ մանաւանդ անդուրեկան են:

Նոյն համեմատութիւններին ու փորձերին ենք ենթարկում նաեւ միւս բաղաձայները և գալիս այն եզրակացութեանը, որ տարբեր հնչիւններ բաւականին տարբեր աստիճանի յարմարութիւն ունին երգւելու. օրինակ, ատամնային կամ սուլող հնչիւնները առհասարակ անյարմար են երգւելու, մինչև անգամ խանգարում են եղանակի ներդաշնակութեանը իրանց անդուրեկան սուլոցներով, որպիսի են ժ, ս, ց, շ, չ.—անյարմար և մանաւանդ անդուրեկան է երգելու և թէ խօսելու կոկորդային իւ. իսկ եթէ ոչ անդուրեկան, զոնէ սաստիկ անյարմար է երգւում նաեւ ֆ-ն: Այդ տեսակէտից, մի աւելի կոպիտ, աննւագային ու միւսնոյն ժամանակ անդուրեկան հնչիւն, որպիսին է ռուսաց III, անկարելի է երեւակայել:

Այդ տարբեր բաղաձայների համեմատութիւնն էր, որոնց զուրկան կամ նւագային լինելն ու չլինելը շատ դժւար չէր համեմատական փորձով որոշել. աւելի դժւար է և մեծ հմտութիւն է պահանջւում նման բաղաձայների նւագայնութեան աստիճանը որոշել. օրինակ. բ, պ և փ. կամ գ, կ և ք. դ, տ և թ. ձ, ծ և ց. թէև դա արդէն կարեւորութիւնից զուրկ է, որովհետեւ հէնց այդ հնչիւնների ձայնը միշտ հաստատ չէ և յաճախ դ—հնչում է տ

կամ թ. (օրինակ գրում ենք այդպիսի, վարդ, բայց կարդում՝ այլ-պիսի, վարժ)։

Դոցանից բ, գ, դ, ձ, ջ և այլն աւելի յարմար են սոտորին աստիճաններում երգւելու, պ, կ, տ, ծ, ճ, միջին, իսկ փ, ք, թ, ց և այլն բարձր աստիճաններում, որովհետեւ այդ տառերը հընչելիս նախկին մեթոդով մեր մատը եթէ դնենք կոկորդի վերայ, կը նկատենք, որ առաջին կարգը հնչելիս կատիկը ցածր դիրք է ստանում, միջին կարգը արտասանելիս միջակ, իսկ վերջին կարգը հնչելիս,—բարձր։

Ուրեմն միջին կամ փափուկ անւանեալ բաղաձայները (պ, հ, կ և այլն) աւելի պիտանի են նւագայնութեան քան իրանց զօրեղ ու չոր հարւանները։ Այդ պատճառով ահա Պոլսի գրական լեզուն աւելի փափուկ ու դուրեկան է թւում մեզ քան մեր սեփականը, որովհետեւ պոլսեցիք կորցրել են բ, գ, դ, ջ, ձ հնչիւնները փոխարինելով աւելի փափուկ պ, կ, տ և այլն հնչիւններով։

Այս բացատրութիւնից հասկանալի է դառնում թէ ինչու մի կարգ թլւատներ չեն կարողանում չ, ջ կամ ճ հնչիւնները արտաբերել, որ իրօք բաւական զժւար է, և նոցա տեղ հնչում են ծ, ց և կամ մի այլ համապատասխան առաւել փափուկ տառ, որով մի քանի թլւատների լեզուն աւելի փափուկ ու դուրեկան է, քան ուղիղ խօսողներինը (ծուր=ջուր. ցամից=չամիչ և այլն)։

Մանուկներն էլ, որ բնական թլւատներ են, լեզու ելնելիս աստիճանաբար միայն սկսում են մայրենի լեզւի հնչիւնները արտաբերել միշտ դիւրինից և փափուկից դէպի բարդն ու զժւարը դնալով. մանկան առաջին հնչիւնները մեծ մասամբ բաղկացած են ձայնաւորներից կամ նայերից, ա, ու, իա, ալա, աղու, անա, պապա, մամա, տատա և այլն... Մանկանց լեզուն առհասարակ մինչև նոցա 4—5 տարեկան դառնալը ամենանւագային տարրերից է բաղկացած։ Շատերը, որոնց լեզւի օրգանները կամ նոցա համապատասխան ուղեղի կենդրոնները դեռ զարգացած և կազմակերպած չեն, դեռ շատ ուշ են սովորում մայրենի լեզւի հնչիւնները անարատ հեգել և ոմանք մինչև իրանց մահը չեն կարողանում մի քանի զժւարութիւններին յաղթել և առ միշտ մնում են թլւատ. այդ տեղից մանկանց ձգտումը երկար բառերը կարճել, չժւարութիւնները

կոկել և մայրերի բնազդը՝ մանկանց հասկանալի դառնալու և լեզուի սովորեցնելը դիւրացնելու համար, խօսել նոցա փափկացրած և կոտորատած լեզուով:

Մինչև հիմա մենք ուսումնասիրեցինք լեզուի հնչիւնները ջոկ-ջոկ, իբրև առանձին մարմիններ, որ իրօք նոքա չեն. այդ հնչիւնները օրգանապէս կապւած են լեզուի բոլոր մնացեալ հնչիւնների հետ, նոքա կեանք ունին լոկ մնացեալ հնչիւնների կապակցութեան մէջ և նոցա նշանակութիւնը որոշ ու հասկանալի կը լինի լոկ այն ժամանակ, երբ մենք նոցա կը դիտենք իրենց դերի մէջ, ոչ առանձինն առած, այլ բառերի մէջ, այն է լեզուի ամբողջ հնչունական կազմը և նորա բնաւորութիւնը:

Մի լեզուի վայելչութիւնը նորա բառերի դիւրին արտասանելի լինելն է, իսկ դորա փորձաքարը մանուկներն են. ով աւելի է ունեցել դիտելու նոր լեզու ելնող կամ նոր կտրուալ սովորող մանուկներին, նա նկատած կը լինի, որ նոքա դիւրութեամբ են արտասանում, կարդում և միտը պահում այն բառերը, որոնք բաղկացած են փոխ առ փոխ բաղաձայնորով և ձայնաւորներով (Արարատ, վարդապետ, թաղաւոր, բաց ոչ սկզբունք, բժշկուհի կամ Verdauung, Haar)... Նոյն երևոյթը նկատելի է այն հասակաւորների վերայ, որոնք մի որ և է իրենց անծանօթ լեզու են սովորում:

Այստեղից հասկանալի է, որ հնչիւնների փոխադարձ չարաբերութիւնը, կամ մի որ և է լեզուի բառերի կազմութիւնը ահագին նշանակութիւն ունի ոչ միայն նորա նւագացնութեան համար, այլ և մանկավարժական, հասարակական և քաղաքական տեսակէտով. — Ֆրանսիացի մանուկը աւելի շուտ կը սովորի իւր մայրենի լեզուն խօսել և կարդալ, քան գերմանացին. Ֆրանսիական լեզուն աւելի շատ հաւանականութիւն ունի միջազգային լեզու մնալու իւր լեզուի հնչիւնական վայելուչ կազմութեանց շնորհիւ, քան գերմաներէնը:

Արտասանութեանը դիւրութիւն տուող էական պայմաններից մինն է նաև բառերի կարճութիւնը և փափկութիւնը, որ հետեւեալ օրինակից կը պարզուի Եթէ փորձենք մի մանկան կամ մի օտարականի արտասանել տալ ռուսերէն հետեւեալ նախադասու-

թիւնը, ապա ահադին դժարութիւնների պիտի հանդիպենք, գոցէ և երբէք չաջողւի ուղիղ արտասանել տալը. Общество вспомоществованія нуждающимся учащимся. Գորա պատճառն է. առաջին, բաղաձայների հարստութիւնը, այն էլ նոցա ընկերացած (կուտակած) դործադրութեամբ (СТВ, ВСП, СТВ). երկրորդ, նոցա կոպտութիւնը (III). երրորդ, այդ կարծ պարբերութեան մէջ սուլիչ հնչիւնների մեծ առատութիւնը (13 հատ с, ж, ш, ы) և չորրորդ, բառերից երկուսի երկարութիւնը. բառերի երկարութեան դասական օրինակներ գերմաներէնից կարելի էր բերել, որ մենք զանց ենք աւելում ընթերցողին անմատչելի լինել չուզելու համար:

Գերմաներէնը, որ ռուսերէնի նման հարուստ չէ III և ы (з) հնչիւններով, ունի մի այլ անյարմարութիւն. նորանում շատ առատ են з, ս և ы (sch, ss, z) հնչիւնները, այն էլ մեծ մասամբ ընկերացած, որ լեզւին տալիս են մի անդուրեկան արտայայտութիւն. մանաւանդ նա ռուսերէնից աւելի սակաւ է բանեցնում ձայնաւորներ և եղածներն էլ այնպիսի անաջող հիւսւած ունին, որ աւելի դանդաղեցնում են լեզուն մի կողմից և նսեմացնում նւագայնութիւնը միւս կողմից. (Verda u u n g, Bra u e r e i): Զայնաւորների և բաղաձայների ներդաշնակ հիւսւած ունեցող դասական լեզուն իտալերէնն է:

Այս բացատրութիւններից հասկանալի է, որ այն լեզուներն են փափուկ ու դուրեկան, որոնց բառերը սուլիչ ու կոպիտ հնչիւններ քիչ ունին, ընդհակառակը հարուստ են ձայնաւորներով ու նայերով. և այն լեզուներն են պիտանի դործածութեան, որոնց բառերը կարծ ու ամփոփ են և կազմւած են բաղաձայների ու ձայնաւորների ներդաշնակ խառնուրդով, և եթէ հիմա նորից համեմատենք գերմաներէնն ու ռուսերէնը ֆրանսերէնի և իտալերէնի հետ, կը տեսնենք, որ բոլոր առաւելութիւնները, վերջին լեզուների կողմն են, իսկ պակասութիւնները առաջին:

Սակայն, այդ լեզուներին անձանօթ ընթերցողը թող չկարծէ թէ իտալականը զերծ է ամեն պակասութիւնից, իսկ գերմանականը կամ ռուսերէնը ամեն առաւելութիւններից: Այդ լեզուներն էլ հարկաւ զուրկ չեն փափուկ ու նւագային տարրերից, միայն նոցա լեզւի շէնքը և բառերի հարստութիւնը ամբողջովին առած

շատ յետ են մնում ռոմանական լեզուներից: Ռոմանական լեզուների մէջ ամենից նւագայինն ու փափուկը համարւում է իսպաներէնը. մասնադէտները նորան գերադասում են նոյն իսկ իտալերէնից. և սակայն, իսկ հնչիւնը շատ էլ հազւագիւտ չէ այդ ազնիւ լեզւի մէջ, որպէս չ հնչիւնը իտալերէնում, այն էլ շատ անգամ երկու հատ չ միմեանց կողքին: Այն ինչ Ֆրանսերէնը, որ ոչ իսկ ունի, ոչ էլ չ, նւագայնութեան կողմից յետ է թէ իսպաներէնից և թէ իտալերէնից: Մի կամ մի քանի հնչիւնները, ուրիմն, և թէ նոքա չափաւոր քանակով են երևան դալիս լեզւի մէջ, անկարող են լեզւի ազնւութեանը փնասել, որքան և կոպիտ լինեն նոքա:

Այլ է մի լեզւի դուրեկանութիւնը, որ արդիւնք է նրա փափուկութեան, և այլ նւագայնութիւնը, որովհետև առաջինը մենք նկատում ենք լեզուն խօսելիս և կարդալիս, իսկ երկրորդը երգելիս. — իսկ երգն ու խօսակցութիւնը բոլորովին տարբեր երևոյթներ են. բաւական է մի քանի անգամ անգլերէն ու գերմաներէն լսել գլուխները համար, որ առաջինը աւելի փափուկ է. սակայն, երբ միևնոյն լեզուները երգելիս ենք լսում օպերաներում, արդէն բոլորովին հակառակ տպաւորութիւն ենք ստանում, որովհետև գերմաներէնը աւելի լաւ է երգւում իւր ձայնաւորների շնորհիւ, քան անգլիերէնը, որ երգեցութեան համար ոչ մի կանոնաւոր տարր չունի:

Այսպիսով նւագը կամ եղանակը շատ անգամ արտայայտում է լեզւի այն յատկութիւնները, որոնք խօսակցութեան մէջ աննկատելի են մնում կամ զոհ են գնում նորա միւս պայմաններին. և դա հասկանալի է, քանի որ խօսակցութեան ու երգի պահանջները շատ անգամ միմեանց դեմադրորալ հակառակ են: Երգի ժամանակ ձայնի ամբողջ ոյժը ընկնում է ձայնաւորների վերայ, բաղաձայնները հնչւում են միայն վաղրկենաբար. այդպիսով առաջին դերը պատկանում է ձայնաւորներին. այն ինչ խօսակցութեան ժամանակ ձայնաւորների հետ հաւասար, մինչև անգամ նոցանից էլ աւելի՝ դեր խաղացողը բաղաձայն հնչիւններն են. դա պարզ երևում է այն հանգամանքից, որ ամեն մի լեզւի մէջ բաղաձայնների թիւը մի քանի անգամ աւելի է ձայնաւորների թւից: Ուրեմն մի լեզւի

դուրեկան լինելը խօսակցութեան ժամանակ չի պայմանաւորում նաև նորա անպայման նւագային լինելը և մի լեզւի դուրեկանութիւնն ու փափկութիւնը չպիտի շփոթել նորա նւագայնութեան հետ, որ բաւական տարբեր երևոյթ է, որովհետև նւագի և երգի առաջին պայմանն է ընդարձակութիւնը, ծաւալը, տեւականութիւնը, որ հնարաւոր է ձայնաւորների միջոցով, մինչ խօսակցութիւնը ընդհակառակը պահանջում է կարճութիւն, ամփոփութիւն և արագութիւն, որին աւելի բաղաձայններն են համապատասխան։ Այդ պատճառով կենդանի լեզուն միշտ ձգտում է բառերը կրճատել, մոքին արագ ու յարմար արտայայտութիւն տալու համար, որ շատ անգամ կատարւում է ի վնաս լեզւի նւագայնութեան։ Ուրեմն խօսուն լեզւի և երգեցողութեան պահանջները ոչ միայն իրար չեն ծածկում, այլ շատ անգամ լիովին հակադիր են միմեանց։ Դա հասկանալի է, քանի որ խօսելու նպատակը բառերի արտաքին տպաւորութեան անուշութիւնն ու դուրեկանութիւնը չէ, այլ միտքը, մինչ երգեցողութեան մէջ բառերի արտաքին ձևերով մի հաճելի տպաւորութիւն պատճառելը արդէն նպատակ է դառնում։

Քիչ լեզուներ կան, որ զարգանալիս չփնասէին իրանց նւագայնութեանը և միացնէին կենդանի լեզւի թեթևութիւնը նւագի պահանջի հետ միաժամանակ, որպէս օրինակ Ֆրանսերէնը, որ զարգացել է ձայնաւորների հետ բազմաթիւ բաղաձայններ կորցնելով, որոնք առանց հնչւելու, իբրև մեռած վկաներ անցեալի, դեռ պահւանւում են Ֆրանսիական ուղղագրութեան մէջ, իրենց յաջորդող ձայնաւորների հետ երբեմն երևան գալու առիթ որոնելով։ Այդ ուղղագրութիւնից պարզ հասկանալի է, որ ներկայի Ֆրանսերէնը, երբ առաջին անգամ դրի էր առնւում, երբէք այսօրւայ փափկութիւնը չունէր, որին նա հասել է իւր զարգացման աջող պայմանների շնորհիւ, կորցնելով բառավերջի սուլիչ բաղաձայնները։ Այդ երևոյթը մենք մասամբ նկատում ենք և հայերէն բարբառներում, ուր բաղաձայնները կորստի են մատնւում։ մեղնէ, քեզնէ, ձեզնէ, բարբառներում դարձել է՝ մենէ, քենէ, ձենէ... Այդտեղ լեզւի զարգացումն ու նւագայնութիւնը առաջ են գնացել ձեռք ձեռքի տւած, սակայն առաւել գերիշխող է հակառակ երևոյթը մեր բար-

բառներում, ուր շատ անգամ այ դառնում է ը. այ դառնում է է, նայ դառնում է ն, որ լեզաբանօրէն մի քաջ առաջ է նշանակում, բայց նւագային տեսակէտից մի նոյնպիսի քաջ կուտ:

Գերմաներէնը բազմաթիւ բաղաձայններ փափկացնելով որոշ աստիճանի զուրեկանութիւն է պարունակում (ä, ö, ü) նւագային տեսակէտով. սակայն, դա մի կորուստ է, որովհետեւ այդ ձայնաւորները կորցրել են իրանց նւագայնութեան նախնի վսեմութիւնը:

Առողանութիւնն ու տրոհութիւնն էլ ահագին դեր են կատարում խօսուին լեզւի մէջ. նոքա են լեզւին գոյն տուողը. երգեցողութեան ժամանակ, սակայն, նոցա դերը հասնում է ոչնչութեան:—Շեշտը լեզւին տալիս է ելեէջ ու կենդանութիւն, մանաւանդ նա մի զարդ է յանգաւոր ու չափական ոտանաւորների համար, ուր ձայնի կանոնաւոր ելեէջը ոտանաւորի տալաւորութիւնը զօրացնում է մի աւելորդ հաճոյքով... Այդ է պատճառը, որ գերմաներէն և ռուսերէն ոտանաւորները աւելի զուրեկան ու հաճելի են քան հայերէն կամ Ֆրանսերէն, որովհետեւ առաջին լեզուները շեշտաւոր են, իսկ վերջինները ոչ, չնայելով որ հայերէնն ու Ֆրանսերէնը աւելի նւագային են առաջիններից: Սակայն շեշտը նւագի համար մի ծանր բեռ է, որովհետեւ շեշտաւոր լեզուն պահանջում է որ նւագի և լեզւի շեշտը միասին ընկնեն, որով մասամբ կաշկանդւում է նւագարարի ազատութիւնը, մինչ մի հայերէն կամ Ֆրանսերէն բնագիր ձայնագրելը այդ գեղարուութիւնը չունի:

Առողանութիւնն այն է, որ միւլենոյն բառը կամ նախադասութիւնը տարբեր ազգեր տարբեր կերպով են արտասանում. օրինակ, միայն գերմաներէն խօսելուց կարելի է իմանալ թէ խօսողը հայ, անգլիացի, ռուս կամ լեհ է.—ամեն մի լեզու ունի իւր առողանութիւնը, որ իւր ազդեցութիւնը թողնում է նոյն իսկ այն դէպքում, երբ մարդ մի բոլորովին օտար լեզու է խօսում: Այդ հանգամանքի շնորհիւ է, որ ռուսական հրէաները, չնայելով որ մի գերմանական ժարգոն են խօսում և փոքրութիւնից ընտել են թէ գերմաներէնին և թէ ռուսերէնին, բայց և այնպէս չեն կարողանում ոչ գերմաներէն կարգին արտասանել, ոչ էլ ռուսերէն: Եւ մի լեզւի զուրեկանութեան հարցում, բառերից անկախ, առողանութիւնը

ահագին զեր ունի. նա է լեզւի Ֆոնը, նա այն ցանցն է, որի վերայ հիւսւում է լեզւի կանւան հնչիւնների և բառերի միջոցով.— Պոլսի լեզուն, օրինակ, աւելի դիւրեկան է իւր փափուկ առողանութեան շնորհիւ. զոկերէնը, որ իւր նրբութեամբ Ֆրանսերէնի հետ կարող է մրցել, պարտական է մասամբ իւր նուրբ առողանութեանը:—Հայերէնի շատ բարբառներ կամ գաւառաբարբառներ տարբերում են միմեանցից ոչ այնքան քերականութեամբ, որքան առողանութեամբ. օրինակ՝ Ախալքալաքի գիւղերի և քաղաքի լեզուները տարբեր են միմեանցից ոչ քերականօրէն, այլ առողանութեամբ. հայերէն բարբառների առողանութիւնը, որպէս լեռնային ժողովրդի, առհասարակ կոպիտ է ¹⁾ (բացառութեամբ զոկերէնի և Շամախու բարբառի): Արարատեան գրական լեզւի առողանութիւնը դեռ կազմակերպւած է, ուստի նորա մասին մի որեւէ կարծիք յայտնելը դեռ վաղ է:

Կենդանի լեզւի արտաքին զոյնը իսկապէս մարմնանում է առողանութեան մէջ, որովհետեւ մի լեզւի հնչիւնները, վանկերը և բառերը մարդ ջոկ-ջոկ չի լսում, այլ այդ ամբողջի հիւսւածքը՝ առողանութեամբ: Մի անձանօթ լեզու լսելիս մարդ անկարող է իսկոյն նորա բառերը ջոկել, վանկել և հնչել... Ուստի և առողանութիւնը լեզւի արտաքին տպաւորութեան հարցում ահագին զեր ունի, մինչ երգեցութեան մէջ նա համարեալ իսպառ կորցնում է իւր նշանակութիւնը:

Միևնոյն բառի վանկերը երբեմն այն աստիճան իրարից հեռու են ընկնում կամ տարբեր բառերի հարևան վանկերը երբեմն այնքան մօտենում են միմեանց երկեցողութեան ժամանակ, ձայնի դադարները՝ կէտ, միջակէտ և վերջակէտ, որոնց շնորհիւ միայն կարելի է լինում բաղմնութիւ բառերի փոխադարձ յարաբերութիւնն

¹⁾ Պատճառը Հայաստանի լեռնոտ լինելն և ժողովրդի պարապմունքն է (հովութիւն, որսորդութիւն, երկրագործութիւն).—Ֆիզիկայից չափնի է, որ լեռներում օդը անհամեմատ նոսր է, քան դաշտավայրերում. իսկ նոսր օդի մէջ, չափնի է, որ ձայնը սովորականից նւազ է լսւում, ուստի միամիտաց լսելի լինելու համար լեռներում աւելի բարձր պէտք է խօսել: Այդ երևութիւն ժողովրդին շատ լաւ է չափնի. բարձր խօսողին՝ «նա ասում է «սարէն կուգաս»:

ու նոցա արտայայտած մտքերը հասկանալ, այն աստիճան անուշադրութեան են մատնուում, որ արդէն անկարելի է նոյն իսկ երգութեանը հասկանալ:

Այդ պատճառով օպերա գնացողը երբէք չոյս չի կարող դնել, թէ երգեցողութիւնը լսելով կարողանայ նորա բովանդակութիւնը բառ առ բառ հասկանալ, ուստի նա կամ բնագիրը պիտի առաջուց կարդացած լինի կամ հետը տարած, որ նորա վրայ հետեւել և հասկանալ կարողանայ բեմում երգւածը, մինչ մի դրամատիքներկացացում տեսնողը այդ հոգսից ազատ է:

Ուստի և մի լեզւի առողանութիւնը, նորա նւագայնութեան տեսակէտով, վերին աստիճանի երկրորդական տեղ է բռնում, և մի արտաքուստ կուպիտ առողանութիւն ունեցող լեզու կարող է վերին աստիճանի նւագային լինել:

Խօսուէն լեզւի ամենակարեւոր տարրերից մինն է և տրոհութիւնը, որ գրաւորի մէջ կէտադրութեամբ է արտայայտուում, որը նւագի մէջ արդէն բոլորովին կորսուում է, որովհետեւ նւագը, բնագրից անկախ, շնչառութեան համար ունի բոլորովին այլ պայմաններ ու պահանջներ:

Այս բացատրութիւնից պարզ է, որ մի լեզւի խօսելը լսելով շատ դժւար է նորա նւագայնութեան մասին մի դրական կարծիք յայտնել, այն ինչ նորա դուրեկան կամ անդուրեկան լինելը դժւար չէ իսկոյն գուշակել, եթէ մարդ մի քիչ զարգացած ականջ ունի: Եւ այսպիսի դէպքերում օտարականի կարծիքը, եթէ ի հարկէ նա բանիմաց է, առաւել նշանակութիւն ունի, որովհետեւ ծանօթ ականջը լեզւի մէջ չի տեսնում ձայների մի խառնաշփոթ կուտակումն այլ մտքերի մի շարք, մինչ անծանօթը գործ ունի լեզւի թողած արտաքին տպաւորութեանց հետ:

Հայերէնի վերաբերեալ երկու հարց կայ պատասխանելու. որքան նա դուրեկան և որքան նւագային է:

Առաջին հարցին, ստոյգն ասած, ես ինքս մի դրական և հաստատ պատասխան չեմ կարող տալ, այն հասարակ պատճառով, որ նորա առողանութիւնը դեռ կազմակերպւած չէ, չնայելով որ բազմաթիւ օտարականներից թեր և դէմ կարծիքներ եմ լսել: Ոմանք այերէնը այնքան փափուկ ու դուրեկան են զանում (խապաներէ-

նին հմուտ մի պրոֆեսոր), որ իսպաներէնի հետ են համեմատում, այլ ոմանք նմանեցնում են իտալերէնին, յունարէնին, ոմանք գտնում են չոր բաղաձայների հարստութիւն (ուրեմն անդուրեկան)...

Ընդհանրապէս առած հայերէնի տալաոորութիւնը մօտենում է ռոմանական, քան սլաւոգերմանական լեզուներին, ուրեմն զուրեկան է:

Այլ է հայերէնի տալաոորութիւնը, երբ նա երգում է. այդտեղ արդէն կարծիքների տարբերութիւն չկայ և չի կարող լինել, որովհետեւ երգի ժամանակ առաջ են գալիս հայերէնի բոլոր թագնաւած դանձերը, դնելով նորան առաջնակարգ նւագային լեզուների շարքը. այդ այն հասարակ պատճառով, որ հայերէնը հարուստ է նւագային ձայնաւորներով, ի մասնաւորի ա, է և ի. իսկ բաղաձայները ընկերաւու ընդունակութիւն չունին:

Եթէ նւագայնութեան կողմից հայերէնը ետ է իսպաներէնից և իտալերէնից, ապա նա բարձր է բոլոր սլաւոգերմանական լեզուներից (գերմաներէն, անգլերէն, ռուսերէն, լեհերէն և այլն): Դա մեր զիտողութիւնների և փորձերի վրայ հիմնւած խորին համոզումն է, որ կարող է հաստատել ամեն մի բանիմաց երգիչ:

Ա Ն Գ Լ Ի Ա Ն

ՎԻԿՏՈՐԻԱ ԹԱԳՈՒՀՈՒ ԳԱՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ

Նոր տոմարով յուլիսի 20-ին 1837 թվականի Անգլիայի թագաւորական զահը բարձրացաւ 18 տարեկան Վիկտորիա թագուհին, որ օրէնքով չափահաս էր: Նա աղջիկն էր Գէորգ III թագաւորի չորրորդ որդու՝ զուքս Կենսիի Գէորգ III վախճանեց 1820-ին, նորան յաջորդեց մեծ որդին՝ Գէորգ IV, որը վախճանեց 1830-ին անժառանգ, որովհետեւ նորա միակ զաւակը՝ պրինցուհի Շարլոտը՝ վախճանած էր Գէորգ IV-ին այդ պատճառով 1830-ին յաջորդեց իւր եղբայրը Վիլհելմ IV, (Գէորգ III-ի երկրորդ որդին), որը 1837 ին վախճանեց անզաւակ: Ամենամերձաւոր աղգականը մնաց իւր հանգուցեալ կրտսեր եղբոր աղջիկը, Գէորգ III-ի թոռ Վիկտորիան ¹⁾:

Մի հանգամանք մասնաւորապէս շատ ծանր էր երիտասարդ Վիկտորիայի համար, երբ նա զահ բարձրացաւ. թագաւորական տոհմը Անգլիայում արդէն զգալապէս կորցրել էր իւր հմայքը ժողովրդի աչքում. Գէորգ III († 1820) վաթսուն տարի թագաւորեց, բայց ղեռ 1765 թվից հոգեպէս խանգարւած էր,

¹⁾ Անգլիական օրէնքով զահը ժառանգում է ուղիղ գծով հօրից՝ որդին. քույր-եղբայրների մէջ գահաժառանգը աւագ եղբայրն է, իսկ եթէ գահակալը միայն աղջիկներ ունի—գահաժառանգը աւագ աղջիկն է. եթէ գահակալը որդիք չունի, ապա ժառանգը եղբայրն է, եթէ կա՛ւ եթէ կինդանի եղբայր չկա՛ւ՝ ապա զահը ժառանգում է ամենամերձաւորը (եղբոր տղայ, եղբոր աղջիկ), և այդպէս շարունակ: Եթէ գահակալը կին է և ամուսնանում է՝ մարդ-ամուսինը չի կոչւում թագաւոր և չի վաչելում կառավարութեան որ և է արտօնութիւն, բայց նոցա որդիները՝ իբրև գահակալ թագուհու որդիներ՝ ժառանգն են զահի:

իսկ 1811 թ-ին անբուժելի կերպով խելագարւեց. թագաժառանգը, յետագայում. թագաւոր Գէորգ IV, դարձաւ ռեգենտ մինչև հօր մահը. բայց նա վերին աստիճանի շւայտ ու զեղխ մարդ էր և նա պղծեց ընտանեկան սրբութիւնները. դորա հետ միասին խիստ պահպանողական կառավարութեան եղանակը ընդհանուր դժգոհութիւններ առաջացրեց երկրում, որ և արտայայտւեցին ժողովրդական ապստամբութիւններով և խառնակութիւններով: Վիկտորիան ախտահան արաւ արքունիքը Գէորգ IV-ի միազմներից, բարեփոխեց և զւարթացրեց Վիլհելմ IV-ի արքունիքում թիկնապահ գնդի ստեղծած մթնոլորդը և փոխանակ Գէորգ III-ի նեղ և հիւանդութիւններով հարկադրւած առաքինութիւններով՝ մէջ բերաւ իսկական առաքինութիւններ, որոնց պաշտամունքին նա հաւատարիմ մնաց իւր ամբողջ կեանքում: 1840 թւականին Վիկտորիան ամուսնացաւ իւր մօտ ազգական Սաքսէն-Կոբուրգ-Գոթայի պրինց Ալբերտի հետ, որը վախճանւեց 1861 թւականին. դորանից յետոյ թագուհին այրի մնաց մինչև վերջ, բայց նորա յիշատակը իրեն համար նւիրական մնաց և ոչ միայն իւր սրտի խորքում, այլ դորան մասնակից անելով իւր ժողովուրդը՝ յիշատակարաններով, որ նա հրատարակութեան տւաւ սիրող սրտի պարզութեամբ, ամենայն միամտութեամբ: Եւ որքան տաքտ էր հարկաւոր իւր ոչ-արքայ ամուսնու համար ընտանիքի մեծի զիրքը պահպանել, որ նրան, իբր տղամարդուն, յատկացնում է հասարակութիւնը և եկեղեցին, մինչդեռ սահմանադրութիւնը նորան արգելում էր կառավարութեան գործի մէջ խառնւել:

Վիկտորիա թագուհու, իբր մեծ կին-միապետուհու, ընտանեկան առաքինութիւնները ստեղծել են նորա համար մի նշանաւոր դիրք, որի ազդեցութիւնը անուրանալի պիտի լինի առնւազն այն բոլոր իշխանական տների վրայ, որոնց հետ ազգակցական և խնամական կապերով նա կապւած է. իսկ այսօր Վիկտորիան, այն կուէ եկած պառաւը, որին ման է ածում իւր պարտիզում մի փոքրիկ հեղ իշուկ, թագակիրներից շատերի համար մեծ մայր է:

Բայց աւելի պակաս չեն եղել Վիկտորիայի հասարակական-պետական առաքինութիւնները, որ նա գործադրել է թէ ներգործական և թէ չեզօք կերպով: Անդլիայում դարերից ի վեր հապ-

սատուած են երկու կառավարչական հասունացած կուսակցութիւններ՝ տորի (պահպանողական) և վիգ (լիբերալ, յառաջդիմական) անուններով. բայց Վիկտորիայի թագաւորութիւնն էր, որ վերջնականապէս նւիրագործեց և ամեն հակաճառութիւններից վեր կանգնեցրեց սահմանադրական միապետութեան եւ պարլամենտական կառավարութեան գործավարութիւնը: Գէորգ III և Գէորգ IV՝ անձնական քաղաքականութիւն ունէին. նոյն իսկ Վիկտորիա IV, 1834 թ-ին, քեց և լիբերալ մինիստրութիւնը, իսկ պահպանողական փոքրամասնութեան առաջնորդ Պիլիքս գլուխ կանգնեցրեց կառավարութեան:

Ներգործական դեր Վիկտորիան կատարել է աւելի արտաքին քաղաքականութեան մէջ. 1851 թւականից, երբ նա լորդ Պալմերստոնից տեղահանուեց, կանոն դարձրեց որ ոչ մի հեռագիր արտաքին գործերի մինիստրութիւնից չպիտի ուղարկուի առանց իրա, թագուհու, Վիկտորիայի (վաւերացման): Այլ և թագուհու կապերը եւրոպական արքունիների հետ առանց այն չէ որ որոշ ներգործութիւն արած չլինեն քաղաքական յարաբերութիւնների վրայ, առանց, ի հարկէ, որ դորանով պայմանաւորուէր իսկական քաղաքականութիւնը: Եւ արտաքին քաղաքականութեան մէջ չէ որ երևացել է անգլիական ազգի մէջ գործող կուսակցական երկու մեծ ոյժերի մրցումը. այդ գործում Անգլիան հետեւել է այն ուղղութեան, որի կռող կոփողը համաշխարհային պայմաններն են, որոնցից ամեն մի պետութիւն ձգտել է իւր օգուտը քաղել և ձգտել է իւր ազդեցութիւնը հաստատել: Դրսում ազդեցութիւն տարածելու ձգտումը յատուկ է ամեն մի պետութեան. նախօրօք կշռել կարելին և անկարելին, կարելին չափ ճիշդ կշռել իւր ոյժը հասնելիք նպատակի մեծութեան հետ, ջոկել առ երևոյթ փառաւորը՝ իսկական օգտակարից իւր ազգի համար, ձեռք բերել այդ ազդեցութիւնը կարելիին չափ նւազ արիւնով և դրամով—դա հիմքն է արտաքին քաղաքականութեան ընդհանրապէս. այդ հիմունքները անփոփոխ են. և քաղաքագէտները տարբերում են իրարից միմիայն այդ հարցերը լուծելու ընդունակութիւնով և համարձակութիւնով՝ գծած նպատակը ի կատար ածելու: Ազգի շահը այդ ուղղութեան զսպանակն է. և որովհետեւ ազդեցութիւն տարածելու ձգտումը տարրական ձգտումն է, այդ պատճառով արտաքին

քաղաքականութեան վրայ խորապէս չեն ազդում ներքին խնդիրներում բռնած ուղղութիւնները: Եւ ահա թէ ինչու նաև Անգլիայում արտաքին քաղաքականութեան մէջ անգլիական երկու կուսակցութիւնները — պահպանողականներ և լիբերալներ — միայն իրար գործն են շարունակել, լինէր կառավարութեան գլուխ մի Ռոբերտ Պիլ, թէ մի Պալմերստոն, մի Դիզրաէլի թէ մի Դլադստոն:

Կատարեալ սահմանադրականութեամբ յառաջացրած զուտ պարլամենտական կառավարութիւնը իւր բոլոր արժէքը ցոյց տուաւ Անգլիայի ներքին քաղաքականութեան մէջ: Վիկտորիա I-ի կողմից չեղօքութիւն պահպանելը կուսակցական պայքարների դիմաց թուլութեան հետեանք չէր, այլ դա հետեանք էր երկու պատմական զօրեղ կուսակցութիւնների վերաբերմունքի դէպի թագաւորական գահը մէկ կողմից, և դէպի իրար — միւս կողմից: Վերաբերմունքը դէպի գահական իրաւունքները երկու կուսակցութիւնների կողմից էլ կատարեալ պատկառանքի դրօշմն է կրում. գահը — երկուսի համար էլ մի ազգային հաստատութիւն է. և նորա — տօնը ազգային տօն: Բայց այդ հանգամանքը իւր արժէքի մեծ մասը կը կորցնէր, եթէ միայն չլինէր մի այլ հանգամանք, որ, կարելի է ասել, եզակի է ամբողջ Եւրոպայում. այդ այն է, որ յառաջդիմական կուսակցութեան պարագլուխները ունին մի զօրեղ զգացմունք կարգապահութեան համար, իսկ պահպանողականները՝ սէր ազատութեան և յառաջդիմութեան համար: Անգլիայում այդ երկու կուսակցութիւնները ոչ այնքան իրար թշնամի են, որքան իրար լրացնող: Լիբերալների նախաձեռնութեամբ սկսածը մենք տեսնում ենք երբեմն պահպանողականների ղեկավարների ձեռքով ի կատար ածած. 40-ական թւականներին անգլիական ամենակարեւոր ներքին խնդիրը՝ հացահատիկների վրայ 1815 թւականից պահպանած մաքսն էր, որ այնքան ձեռնտու էր հողատէրերին, արխատկրատիային և, որի պատճառով լիբերալ միախտրութիւնը վայր ընկաւ 1842-ին. և սակայն պահպանողականների պարագլուխ նոր միախտր-նախագահ Ռոբերտ Պիլն էր, որ ենթարկեց լիբերալների պահանջներին և 1842 թւականին մաքսը իջեցնելու առաջարկն արաւ, իսկ 1846 ին, մեծ մասամբ իւր կուսակցութեան հակառակ, հացահատիկների մասին ազատական օրէնքը անցկացրեց:

Այլ օրինակ. յառաջդիմականների առաջարկած ընտրողական ռեֆորմը 60-ան թւականներին, ընտրողների թիւը մեծացնելու համար, հանդիպեց զօրեղ ընդդիմադրութեան պահպանողականների և նոյն իսկ յառաջդիմականների մի մասի կողմից, որի պատճառով և յառաջդիմական Ռուսսէլի մինիստրութիւնը 1866 թւականին վաչր ընկաւ. բայց նորան յաշորկած Դերբի—Դիգրաէլի պահպանողական մինիստրութիւնը հարկադրւած տեսաւ ռեֆորմի մասին օրէնքը անցկացնել (1867-ին):

Բայց այն, ինչ իսկապէս բնորոշում է անգլիական պահպանողական կուսակցութիւնը, այդ այն է, որ յառաջդիմականների ձեռքով կամ ջանքերով ձեռք բերածը նա չի աշխատում քանդել, երբ ինքն է կառավարութեան գլուխ կանգնում: ¹⁾ Ոչ մի արմատական փոփոխութիւն այդ երկրում չի կատարւում ձեռաց, բայց և երբէք կարեւոր խնդիրները չեն ւժնում և վերջնական լուծումն ստանում են վերջ ի վերջոյ միլիոնաւոր ընտրողների պայքարով. մեծ է նաև ընդդիմադրական ոյժը, որի գլխաւոր յենարանը բարձր ազնւականների ժողովն է. բայց վերջինս ընդդիմադրում է միմիայն որքան կարողանում է. իսկ կարողանում է քանի որ դեռ որ և է ռեֆորմի համար չի կազմել ահեղ հոսանք. հոսանքը իւր ոյժը ցոյց է տալիս տարիների ընթացքում, շարունակ, և այն միտքը, որ տարիների քնացնող ոյժի դէմ արթուն է մնում և գնալով զօրեղանում,—նա արդէն դառնում է անդիմադրելի:

Որպէս եզակի է կուսակցութիւնների գործունէութեան եղանակը Անգլիայում, նոյնքան էլ եզակի է մի այլ երևոյթ, որ դորահետեանքն է. Անգլիայում չի լինում ուէակցիա, ուէակցիայի, յետադիմութեան շարժում, որ բոլոր այլ երկիրներում կայանում է նրանում, որ երբ իշխողը պահպանողական կուսակցութիւնն է, սա աշխատում է նախորդի ստեղծածը քանդել և հին կարգերը վերականգնել:

Անգլիայի կուսակցական-պարլամէնտական կեանքի այդ յատկուկութիւնը տալիս է Անգլիային մի առանձին տեղ բոլոր լուսաւոր մեծ ազգերի շարքում: Դեռ ևս 18-րդ դարում Անգլիան ուսում-

¹⁾ Համեմատեք այդ առթիւ մեր չօղածը «Գաղափարի մի յաղթանակ», Մուրճ 1892 թ. № 7—8:

նասիրում էր ֆրանսիական մեծ մտածողների կողմից. բայց Ֆրանսիան այդ ժամանակից դէս չտեսնեա՞ծ մեծ յեղափոխութիւն էլ կատարեց և ինչ ներքին և նոյն իսկ արտաքին կռիւներ չարաւ ազատութիւն հաստատելու համար աւելի քան մի դար շարունակ, — և դեռ այսօրայ օրս հանրապետականների ամենամեծ խնդիրը այն է, թէ ինչպէս անել որ ձեռք բերած ազատութիւնները ձեռքներից չփախչեն, ինչպէս անել որ վաղը-միւսօրը մի անսպասելի դիպածով ամեն ինչ շուռ ու մուռ չգալ, ինչպէս անել որ պետական օրգանիդը ամբողթիւն ստանայ և երբ և իցէ լինելիք ամենազօրեղ ուէակցիային դիմանայ, բայց և որի հովանուտակ ամեն լուրջ յառաջդիմութիւն կարողանայ կատարել: Եւ ահա Ֆրանսիայի նման ազատ երկրում դեռ մինչև օրս ուսանում են Անգլիայի կառավարութեան և կուսակցական կազմակերպութեան եղանակը — Անգլիան իբր իդէալ ճանաչելով:

Կուսակցութիւնների աջակէս գործելու եղանակը կատարելաւ հանգստութեան մէջ է դրել թէ ազգը և թէ թագուհուն. շնորհիւ յիշեա՞ծ հանգամանքների, լիբերալների յաղթութիւնը երբէք անհանգիստ չի անում ազգը ընդհանրապէս և ոչ թագուհուն մասնաւորապէս. նոյնպէս և սահայանողականների յաղթութիւնը, որովհետև լիբերալները կատարելապէս հանգիստ են, որ անցածի վերաբերմամբ ոչ մի վրէժխնդրութիւն չի լինելու. ինչ որ մի անգամ ձեռք է բերեա՞ծ ազատական ուղղութեամբ — նա մնալու է հաստատ:

Երկու կուսակցութիւնների էլ պարագլուխները բարձր հեղինակաւոր անձեր են եղած և կարողացել են պետական ղեկը վարել այդ ուղղութեամբ. պահպանողականներ՝ Ռոբերտ Պիլ, Դերբի, լորդ Բիկոնսֆիլդ (Դիզրաէլի), Սալիսբուրի, լիբերալներ՝ Ռուսսէլ, Պալմերստոն և Գլադստոն — ահա այս 60-ամեակի քաղաքական աստղերը:

Այս ամենով մենք ուզեցանք բացատրել թէ ինչպէս Անգլիան, Վիկտորիայի ժամանակ, կարողացաւ սահմանադրական միապետութեան և պարլամենտական կառավարութեան կատարելատիպ դառնալ:

Մեծ է և խորը այն քաղաքական ու մտաւոր յեղափոխութիւնը, որ կատարւել է Վիկտորիայի 60-ամեայ թագաւորութեան միջոցում Դեռ նոր էր, որ, 1832 թւականին, ընտրողական իրաւունքի փոփոխութեան պատճառով, Անգլիան՝ իւր նմանը չունեցող մի բարձր արիստոկրատիայի կառավարութիւնից անցել էր զէպի միջին դասակարգի, բուրժուազիայի, կառավարութեան աւելի լայն շրջանակը, որ աւելի ընդլայնւեց 1867 թւականի, ապա 1884 թ. ընտրողական օրէնքներով, ներկայ 1897-ին արդէն դիմկրատիական դառնալու համար: Այդ հսկայական քայլը, որ եւրոպական ամենաառաջաւոր պետութիւններում կատարւեց պետական կատակլիզմներով, բռնի յեղափոխութիւններով, Անգլիայում կատարւեց աստիճանաբար, ինչպէս յիշեալ թւականները ցոյց են տալիս: Եւ բնաւ չդիպչելով ոչ թագաւորի իրաւունքներին և ոչ բարձր պալատի (ազնւականների ժողովի) իրաւունքներին, Բիւրժուադրական ոյժը պահպանւեց նոյնը, բայց աստիճանաբար զօրեղացաւ յառաջատար ոյժը, համայնքների, այսինքն ժողովրդի ընտրած պատգամաւորների ժողովի ներքին ոյժը, հեղինակութիւնը, ազդեցութիւնը: Այդ հոսանքը դեռ ամենից առաջ իրեն նպատակ դրաւ ազատել ժողովուրդը այն ծանր հարկերից, որոնք կապւած էին հողատէր դասակարգի— արիստոկրատիայի— տնտեսական շահերի հետ: Հողը նոցանն էր, որ կապւով վերցնում էին ուրիշներ. կապալազինը բարձրացնելու համար պէտք էր հողի բերքի գինը բարձր պահել. և որովհետեւ Անգլիան իւր ունեցածի քչութեան պատճառով, վաղուց էր դեռ օտար երկիրներից չորեն բերում, ուստի ցորենի գինը բարձր պահելու համար՝ դեռ 1815 թւականից մաքս էր նշանակւած, որով արհեստական կերպով բարձր էր մնում նաև Անգլիայում արտադրած ցորենի գինը: Արիստոկրատիան, որ ամենազօրեղ էր օրէնսդրութեան մէջ, իւր սեփական օգտի համար այդպիսով հարստահարում էր ժողովրդին: Եւ ահա, երբ 1832 թ.-ին ընտրողական ռեֆորմ եղաւ, որով ընտրողների թիւը երկու միլիոնով աւելացաւ, հետևապէս համայնքների ժողովի (պարլամէնտ) հեղինակութիւնը զօրացաւ, ժողովրդական առաջին մեծ խնդիրը դառաւ հացահատիկների վրայ դրւած մաքսի վերացումը. պրոպագանդայի գլուխ կանգնեց հռչակաւոր Կոբդէն, որը այլ առևտրականների հետ

կազմակերպեց 1838-ին anti-cornlaw-league հռչակաւոր ընկերութիւնը, որի առաջ բերած զօրեղ շարժումով մաքսը մեղմացւեց 1842-ին, ապա 1846-ին ևս առաւել, մինչև որ 1849 թ. վերջնականապէս վերացւեց ներմուծող հացահատիկների վրայ դրած մաքսը, և ընկերութիւնը լուծւեց:

Այս իրողութեան կարևորութիւնը շատ մեծ էր. դա յաղթանակ էր մի ամբողջ տնտեսագիտական սիստեմի, տնտեսագիտական շկոլայի, որ կոչւում է ազատ առևտրի շկոլա կամ այլապէս՝ մանչեստերեան շկոլա: Այդ շկոլան պահանջում էր անպայման ազատութիւն, ու մի բանով չկաշկանդւած առևտուր և գործարանական գործունէութիւն. պետութիւնը պիտի պահպանի միայն արտաքին կարգ ու կանոնը, բայց պիտի ազատ թողնի որ մարդիկ, ինչպէս իրենց շահը կը թելադրի, գործեն և շահագործեն, և պետութիւնը երբեք չպիտի որևէ կերպ խառնւի իւր կարգադրութիւններով ու կանոնադրութիւններով բնակիչների տնտեսական կեանքի մէջ: Այդ էր մանչեստերեան կոչւած շկոլայի պահանջը, որ յարմարւում էր ոչ թէ առած կապիտալիզմի պահանջներին, որը գործելու ազատութիւն էր ուզում՝ աշխարհքը զարմացնելու համար թէ ինչ հրաշքներ կարելի է գործել կապիտալի ոյժով, երբ սա գործում է առանց որևէ սանձի:

Այդ սիստեմի տակ սնունդ առաւ անգլիական ձեռնարկող ոգին գործարանական և առևտուրի աշխարհում, որը Վիկտորիայի թագաւորութեան ժամանակ դարձրեց Անգլիան մի հզօր տնտեսական գործունէութեան երկիր, իւր հաւասարը չունեցող ամբողջ երկրագնդի վրայ:

Դորանից են բղիւում անգլիական շահերը, որոնց հետ սերտ կապ է ունեցել և շարունակում է ունենալ նաև արտաքին քաղաքականութիւնը: Ոչ մի այլ երկրում արտաքին քաղաքականութիւնը այն աստիճան չի թելադրւել մայր երկրի տնտեսական անդիմադրելի պահանջներով, որքան անգլիական ներքին քաղաքականութիւնը. և հէնց այդ պատճառով ոչ մի այլ երկիր այնքան զարգացած արտաքին քաղաքականութիւն չունի, որքան Անգլիան. այն, ինչ մի այլ երկրի համար մի քաղաքական սիստեմի խնդիր է, — այդ նոյնը Անգլիայի համար, այսպէս ասած, հացի խնդիր է: Նա

շուկաներ է որոնում, որ իւր ապրանքը ծախի. նա իւր կապիտալներէ համար զործադրութեան ապահով տեղեր է որոնում. նա աշխատում է դէպի հեռաւոր շուկաները տանող ծովացիին ճանապարհները, որ ասել է թէ այդ ծովացիին ճանապարհների վրայ զոնւող ամուր զիրքերը և կղզիները բռնել, ճանապարհի վրայ զոնւած երկիրներից ոմանց հետ բարեկամութիւն հաստատել, ոմանց վրայ ազդեցութիւն ձեռք բերել և ոմանց... նւաճել, եթէ հնարաւոր է և եթէ այդ երկիրների ներքին դրութիւնը այնքան աշխատակ է և թույլ, որ նւաճումը նոյն իսկ բարերարութիւն կարող է համարուել: Թէև ազդեցութիւն տարածելու, ընդարձակելու բնազդը յատուկ է բոլոր պետութիւններին, բայց ոչ մի այլ պետութիւն չունի ներքին պահանջ այդ բնազդը այնքան արթուն պահելու, որքան Անգլիան, շնորհիւ գերազանց զարգացման հաւցրած իւր տնտեսական կեանքի:

Ազատ մրցման թէօրիան, որ հիմք եղաւ տնտեսական նոր քաղաքականութեան, լոկ տնտեսագիտական թէօրիա չէր, այլ ընդհանուր աշխարհացեցողութեան մի թէօրիա էր. ազատ պէտք է լինէր ոչ միայն արհեստ և զործարան բանեցնելը, առուտուր անելը, և պետութիւնը չպէտք է այդ ամենին որ և է խոչնդոտ կանգնեցնէր (հովանաւորող մնքսերով, բանւորներին հովանաւորող օրէնքներով և այլն և այլն), այլ այդ նոյն ազատ մրցումը պիտի հիմք ծառայէր նաև ոգեկան աշխարհում. կրօնը—ազատ. գիտութիւնը—ազատ. ուսուցանելը—ազատ. ազատ պէտք է լինէր մարդ ուսանել կամ տգէտ մնալ, որպէս զպրօց ուղարկել—թէ չուղարկել. պարտադիր—ոչինչ. նոյն իսկ գինւորական ծառայութիւնը—կամաւոր, ազատ կամքին թողած. ազատ պիտի լինէր նաև ժողովներ կազմելը, ընկերութիւններ կազմելը:

Անգլիան ճանաչեց կլասիկական երկիր ամեն տեսակ ազատութիւնների. բայց պէտք է ասել, որ Անգլիան կատարեալ ստորուկ չմնաց այդ թէօրիայի: Անգլիական ազդի առողջ բնազդը, նոյն իսկ ազատ մրցման թէօրիայի կատարեալ չաղթանակի տարիներին, սկսեց մոտճել, աւելի վաղ քան այլ երկիրներ, քանուորական օրէնսդրութեան վրայ: Կատարեալ ազատութիւնը թույլատրում էր կապիտալիստին բանեցնել մարդ, կին, երեխայ—ինչ պայմաններ

քում և կատարելի այդ, միայն թէ կապիտալիստը դորանում շահ գտնի. և պէտք է ասած, որ կապիտալիստ զասակարգը կարողացաւ երկար ժամանակ զիմագրել, որպէս զի օրէնսդրութիւնը չխառնի այդ գործերում. այդ պատճառով գործարանական օրէնսդրութիւնը դանդաղաքայլ առաջ դնաց, բայց և այնպէս նա սկիզբ առաւ դեռ ևս 1842 թւականին, մի օրէնքով՝ հանքերում, զետնի տակ բանող կանանց և տասը տարեկանից պակաս երեխաների վերաբերմամբ. մօտ քսան տարի անցաւ, մինչև որ հարստահարութեան ծայրահեղութիւնը ստիպեց վերսկսել բանւորական օրէնսդրութեան պորձը 1860-ին, 1864-ին, 1867-ին, 1872-ին և այլն: Սա մի նիւթ է, որ միայն յիշատակելով ենք բաւականանում, որովհետև բանւորական օրէնսդրութիւնը մենք կը կամենանք որ Մուրճ'ում, մի ալ ժամանակ, լինի նիւթ մի ընդարձակ տեսութեան: Առաջժամ այս յիշատակութիւնն էլ բաւական է ցոյց տալու եղած ներքին հոսանքների ուղղութիւնը Վիկտորիայի ժամանակ:

Բայց բանւորական խնդրում միայն օրէնսդրութեան սկզբնաւորութիւնը չէ որ արժանի է յիշատակութեան: Այն ազատութիւնից, որ տնտեսական օրէնսդրութեան հիմք էր ընդունւած, օգտուեցին ոչ միայն կապիտալիստները՝ մարդկային աշխատանքը հարստահարելու համար, այլ օգտուեցին նաև ըանւորները՝ զօրեղ ընկերութիւնների մէջ կազմակերպւելու համար, ընկերութիւններ, որոնք հռչակեցին ամբողջ աշխարհում տրէդ-ունիոն (աշխատաւորների միութիւններ) անունով: Այդ տրէդ-ունիոնների նպատակն է բանւոր զասակարգը կազմակերպել՝ ընդհանուր ոյժերով բանւորական շահերը պաշտպանելու և անսանձ կապիտալի անողոք պահանջներին զիմարելու համար: Եւ ահա, մինչդեռ եւրոպական ցամաքային մեծ պետութիւններում քաղաքացիք իրաւունք չունէին ազատ կերպով ժողովներ ու կապակցութիւններ կազմելու, Անգլիայում տրւած էր այդ ազատութիւնը դեռ ևս 1824 թ-ին. և թէև բանւորական կազմակերպութիւնները դեռ ևս իրաւաբանական մարմիններ չէին ճանաչւած, տրէդ-ունիոնները, այնուամենայնիւ, ասոցիացիայի ազատութեան օրէնքի հովանաւորութեան սակ, օրը ցերեկով, կազմակերպում էին բանւոր զասակարգի ընտրեալ մասը,

կանոնաւորում և կրթում էին զօրծարանական կռիւը, և վերջը, մոռալքը բացելով առհասարակ բանւորների և զուտ սոցիալիստական վարդապետութիւնների համար, բոլոր անգլիական միլիոնաւոր բանւորներին ոտքի կանգնեցրին և, արդէն մեր օրերում, նոցա մօտեցրին եւրոպական ցամաքի զինակիցներին, չնայած նոցա մէջ եղած ահագին տարբերութիւններին:

Ազատ մրցման թէօրիան շատ բաներում չէինմացաւ բարդած կեանքի պահանջներին. մենք արդէն յիշատակեցինք բանւորական օրէնսդրութեան սկզբնաւորութիւնները. դորա լրացուցիչ մասը պիտի լինէր աղքատների ինստիտուտումն ունեցողը, որը Անգլիայում մեծ խնդիր է և ամենասերտ կերպով կապւած է համայնական ինքնավարութեան հետ, մի հաստատութիւն, որի զարգացումը ոչ մի տեղ այնքան հաստատ հիմքերի վրայ չի դրւած և այնքան առաջ չի տարւած, որքան Անգլիայում:

Կրթական գործում Անգլիան նոյնպէս չկարողացաւ կատարեալ ազատութեան սկզբունքին հետեւել. 1870 թւականին տրեց դպրոցական մեծ օրէնքը, որ նորերս ձեւափոխեց յօգուտ կրօնական դաստաւութեան ազատութեան, և դպրոցական կրթութիւնը աստիճանաբար դառաւ պարտաւորիչ և ձրի:

Կրօնական գործում մի շարժում տեղի ունեցաւ, որը կրօնական կեանքին մի նոր կենդանութիւն տւաւ. մեր խօսքը պոլիուզիսմ (Puseyisme) կոչւած կրօնական ուղղութեան զարգանալու մասին է, որը մի շարժում է անգլիկան եկեղեցուց դէպի կաթոլիկ եկեղեցին 1833 թ-ից սկսած, և որի հետեւողները 1860 թ-ին հիմնեցին English church Union (անգլիական եկեղեցական միութիւն): Նեուման (Newman) և Մեննինգ (Manning), անգլիկանութիւնից կաթոլիկութեան դարձած (առաջինը 1845-ին, երկրորդը 1850-ին, երկուսն էլ վախճանւած 1890-ական թւերին) եկեղեցականները եղան կաթոլիկ հոգեւորականութեան ծալրերը, իբր արքեպիսկոպոսներ, և իրենց բարձր առաքինութիւններով ու անձնական մեծութեամբ զօրեղ ազդեցութիւն զործեցին ժամանակակից կրօնական կեանքի վրայ Անգլիայում:

Գիտութիւններ և գեղեցիկ գրականութիւնն ու գեղարւեստները մի այնպիսի փալլ են տալիս այս 60-ամեակին, որ կարելի

էր Վիկտորիայի դարի մասին խօսել, եթէ միայն այդպիսի անւանակութիւնները հնացած չլինէին շնորհիւ այն անկախութեան, որ Եւրոպայում ձեռք է բերել մարդկային միտքը: Բանաստեղծ Ուոլթսուորթ († 1850 թ.) Վիկտորիայի թագաւորութեան առաջին տասնամեակին անց էր կացնում իւր ութսունամեայ գոյութեան վերջին տարիները՝ Տեննիսոնիին և Բրաունինգիին, Ռոզետտիին, Մորրիսիին թողնելով բանաստեղծութեան հօւրը վառ պահել. պատմաբան և կրիտիկոս Մակոլէյ († 1859 թ.) ունեցաւ իւր շարունակողները յանձին Ֆրիմանի, Լեքիի և այլն. Դիկկինսի († 1870) և Թեկկերէյի անունները, վիպագրութեան մէջ, այնքան հանրածանօթ են, որ մնում է մեզ միայն նոցա ժամանակակիցների անունները տալ՝ Գասկէլ, Ռիդ, Բուլւէր, Լայտոն և նոցա յաջորդներից՝ Ջորջ Էլիոտ և ուրիշներ. մի Բոկլ փորձեց պատմութեան սինթէզ անել. մի Հերբերտ Սպենսեր (այժմ ծերունի) և Ջոհն Ստիւյարտ Միլլ († 1873) սերունդների մտքերի վրայ իշխանութիւն ձեռք բերին. Գարսին († 1882) եկաւ է. ոլիւցիայի թէօրիան անխախտելի կերպով հիմնաւորելու, որով գիտութիւնների համար՝ նոր դարադրուխ բացւեց:

Բայց Վիկտորիայի 60-ամեայ թագաւորութեան յօբելեանը միայն անցնալի յիշողութիւններին չէ նւիրւած. այս յօբելեանը իւր փառահեղութեամբ գերազանցում է բոլոր մեծ հանդէսները, որ երբ և իցէ կատարւել են աշխարհքիս որ և է տեղում: Այս շտաւնըւած մեծութեան հանդէսը պէտք է պատկերացնէր Մեծ-Բրիտանիայի իշխանութեան այժմեան մեծութիւնը և այն առաջնակարգ զիւրքը, որ նա բռնում է երկրագնդիս վրայ թէ քաղաքական ոյժի և թէ քաղաքակրթութեան կողմից:

Մեր խօսքը մի յեղաշրջման մասին է, որ կատարւել է այս վերջին քառորդ դարում անգլիական իշխանութեան խնդրի մէջ: Բնաւ նոր չէ անգլիական իշխանութեան ընդարձակութիւնը, թէև ներկայ թագաւորութեան ժամանակ Անգլիան նորանոր լայնածաւալ հողեր է գցել իւր տիրապետութեան ներքոյ: Բայց այն, ինչ նոր է, այդ այն կապն է, որ կայ մայր-երկրի և նորա մեծ իշխանների մէջ: Սա մի համոզմունք էր, որ տիրապետում էր նոյն

խակ Անգլիայում, — և ոչ միայն լիբերալներին, այլ և պահպանողականների մէջ, — թէ Անգլիայի կոլոնիաները պիտի անջատուեն մայրերկրից, ինչպէս անջատուեց անցեալ դարու վերջին քառորդում Հիւսիսային-Ամերիկայի մեծ կոլոնիան, այժմեան Հիւս. Ամերիկայի Միացեալ Պետութիւնները (Միացեալ-Նահանգներ): Այդպիսի հայեացք ունէին ներկայ թագաւորութեան սկզբում Բրայտ, Կորքէն և լիբերալները. այդ նոյն համոզումից բղխած վախը ունէին աւելի ուշ նաև Դիզրաէլի և այլ պահպանողականներ: Այդ հաւանականութեան դէմ ծագեց բրիտանական «կայսերականութեան» (իմպերիալիզմ) ձգտումը, որի նպատակն էր ընդդիմադրել բաժան-բաժան լինելու ձգտումին: Սիմբոլական կերպով այդ անբաժանելիութիւնը արտայայտուեց Հնդկաստանի նկատմամբ, որի համար լորդ Բիկոնսֆիլդի մի փոքր ռոմանտիկական ձգտումով ու հնարազիրութեամբ Վիկտորիան «Հնդկաստանի կայսրուհի» տիտղոսն ընդունեց: Այդ իմպերիալիստական քաղաքականութիւնը այժմ Վիկտորիայի 60-ամեայ թագաւորութեան յօբելեանին տօնում էր իւր յաղթութիւնը: Հանդէսին ներկայ էին Մեծ-Բրիտանիայի ինքնավար կոլոնիաների առաջին մինիստրները և այդ կոլոնիաների զօրքերի ներկայացուցիչները: Նոցա մասնակցութիւնը ստիպողական չէր և ի պատիւ նոցա տրւած բանքերին յայտնուեց, որ այդ ինքնավար կոլոնիաները (Վանաուա, Նուվանուա, Աւստրալիա), շնորհիւ իրենց ձեռք բերած կամ նոցա տրւած ներքին կառավարչական և օրէնսդրական ազատութիւնների, ամուր կպած են Անգլիայի գահին: Որ ժամանակով այդ կայսերականութեան դադափարը կարող է փոխարկուել գաշնակցականութեան — Ֆեդերալիստական — սիստէմի, այդ դեռ ապագայի խնդիր է. բայց որ անգլիական ինքնավար մեծ կոլոնիաների առաջին մինիստրների և նոցա զօրքերի մասնակցութիւնը մեծ հանդէսին ամենանկատուած բանն էր և ամենամեծ հրապոյրը անգլիական ազգի համար, — այդ անկասկած է, և մի ազգ չի կարող չպարծենալ ամենահեռաւոր և զօրեղ կոլոնիաների հաւատարմութեան այդքան շօշափելի ցոյցերով:

Անգլիայի կառավարութեան եղանակը իւր մեծ կոլոնիաներում քաղաքական մեծ հասունութեան արդիւնք է: Եթէ ի նկատի առնենք այն, որ ամբողջ երկրաշնչի ազդաբնակութեան աւելի

քան մի հինգերորդը մնացը (շուրջ 350 միլիոն) Անգլիայի հպատակներ են, ապա հասկանալի կը լինի թէ ինչ համաշխարհային շահեր են կապւած քաղաքական յառաջագիծ հայեացքների զարգացման հետ Անգլիայում. այլ և թէ, շնորհիւ իւր առաջնակարգ դիրքին, ինչ բարոյական ազդեցութիւն է գործում Անգլիան իւր այդ զարգացումով նաև բոլոր այլ պետութիւնների վրայ: Անգլիան թէ իւր ներքին քաղաքական և թէ իւր կոլոնիական քաղաքականութեան զարգացումով մի անզուգական դիրք է բռնում հին թէ նոր համաշխարհային պատմութեան մէջ. նա իւր հաստատութիւններով և նոցա ներշնչած ոգով կլասիկական երկիրն է այն քաղաքականութեան, որի ամենայն ձևակերպութիւնը կարելի է գտնել Բենթամի դարուս սկզբում արտայայտած հռչակաւոր թէև մի փոքր մատերիալիստական Ֆորմուլայի մէջ—«ամենաքիչ զոհաբերութեամբ՝ ամենամեծ բարօրութիւն»:

Բայց արեգակի վրայ բիծը—այդ՝ Իրլանդիայի ու-մասնակցութիւնն էր բրիտանական մեծ հանդէսին: Եւ արդարև, այս երկար թագաւորութեան ժամանակ Իրլանդիան կար և մնաց անգլիական իշխանութեան խորթ քոյրը, թէև Իրլանդիայի ինքնավարութեան գաղափարը զգալի յառաջդիմութիւն է արել նոյն իսկ անգլիացոյց մէջ:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲԱՅԿԵՆՅ, Գ.—Նորեկ, վէպ. 1897 թ. Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռոտինեանցի: Արտատպած «Մուրճ» ամսագրից. 211 մեծ երես, գինն է 70 կոպէկ:

Մեր նորագոյն վիպագրութեան մէջ նորերումս լոյս տեսած Գ. Բաւկենցի «Նորեկ» վէպը խոշոր տեղ պիտի բռնի: Վէպիս նիւթը հեղինակը վերցրել է հալ գաւառական կեանքից, որ մի ուրոյն կերպարանք է կրում շնորհիւ բազմազան պայմանների, որոնք չառաջացել են ժամանակների ընթացքում: Հալկական կեանքը գտնուում է աչնպիսի պատմական պայմաններում, որոնք թէ հասարակական և թէ բարոյական տեսակէտներից ներգործական դեր են կատարում հալկական քաղաքակրթութեան վրայ: Չարքաշ հալութեան պատմական վիճակը աչն աստիճան բարդւել է, որ հալ տարրը ամենուրեք ենթակալ է գոյութեան կռիւ անսովոր պայմանների: Աջնուամենաչնիւ հալկական հասարակական և տնտեսական կեանքը քաղաքակրթութեան աչն աստիճանի վրայ է, ուր նա գլխաւորապէս չառաջադիմութեան զինքով կարող է իր գոյութեան առանձնաւատկութիւնները

պահպանել և ամրացնել: Հալ տարրը գիտակցելով իր գոյութեան անհրաժեշտութիւնը՝ ընդունակ է վերապահել իրան աչն դերը, որ նրան չատկացրել է արիւնեան աղգերի պատմութիւնը: Այս պաշտօնը վեհ է և պէտք է ժամանակակից սերունդներին տողորի նորան բոլոր ուժերով նւիրելու: Հէնց «Նորեկ»-ը աչն վէպերից է, ուր ուսումնասիրւած է հալ երիտասարդի տիպը, որ տողորած է իր հարազատ հասարակութեան բարւոքմանը ծառայելու գաղափարով: Ալէքսանդր կոչւող համալսարանաւարտ երիտասարդ հալը եկել է իր հալրենի Թշւառոց գաւառում գտնուող Խնութ գիւղի մէջ գործելու: Ալէքսանդրը որոնում է մի գործ, սակայն չգտնելով իր երկրում չարմարաւոր գործ, նա աշխատում է ստանալ գիւղական պրիստաւի (բարձր ոստիկանի) պաշտօնը: Ի հարկ է պրիստաւութիւնը լոկ մի միջոց պիտի ծառայէր Ալէքսանդրին իր գաղափարին նւիրելու: Շնորհիւ իր

նոր պաշտօնի՝ Ալէքսանդրը շփուում է զանազան գաւառական շրջանների հետ, մանաւանդ թուրքերի հետ, որոնք իրանց ազդեցութեամբ տիրապետել են մարդկանց մտքերն ու գործերը։ Արդարեւ մի կրթւած «նորեկ» կը հանդիպի աշալիսի մի պաշտօնում երևութների, որոնք կը պարզեն նորան ալն անհարթ շաւիղը, որ խոչնդոտ է հանդիսանում բարեւաւ կեանքի հոսանքին։ Այսպէս Ալէքսանդրը կեանք մտնելիս՝ դիտում է, որ իր հայրենի գիւղին նախ չափազանց պակաս է լուսաւորութիւնը։ հետեւաբար նա նախատեսնում է ուսումնարանի անհրաժեշտութիւնը։ Այժմ նա վարչութեան ներկայացուցիչ լինելով՝ պաշարած է իրաւաբանական գիտութիւններով, որոնք իր, համեմատաբար ստոր, պաշտօնից աւելի լալն ծաւալ ունեցող գործունէութիւն են պահանջում։ Նրա աշխարհակացքը սակաւն աւնքան լալն է, որ կարող է դիտողութիւններ անել ոչ միայն գաւառական լուսաւորութեան շատ լեռամասց վիճակի վերաբերմամբ, այլ նոյնպէս հասարակական, տնտեսական և վարչական վերքերի մասին, որոնց իր հայրենի բնակատեղը ենթակալ է։ Հասարակական վատթար պալմաններումն է, ի միջի ալոց, միրաւութիւնը, գիւղացիների մէջ ջրի բաշխման գործը, որ Ալէքսանդրի աչքին է զարնում իր ազադակող անարդարութեամբ։ Եթէ ջրի բաշխումը խստօրէն օրինական սահմաններում կատարւէր, անարդարութիւնը գուցէ սլնքան չէր երևալ։ Բանը նրանում է, որ միրաւութեան գլուխը, մի սին

Փիր-Մուրադ Սուլթան, թուրք է, որ ի կատար է ածում օրէնքը ինչպէս ինքն է հասկանում, առանց պատասխանատուութեան հոգսը քաշելու։ Միրաւութիւնը շատ շահաւէտ պաշտօն է համարում, որի համար գիւղացիները ընտրում են իրանց մէջ ազդեցիկ մարդկանցից։ Որովհետեւ ազդեցիկ մարդիկ Ալէքսանդրի հայրենիքում գլխաւորապէս թուրքերն են, պարզ է, որ շահաւետութիւնը և ազդեցութիւն պահպանելու ձգտումը աչքի առաջ ունենալով՝ ալո պաշտօնի համար պէտք է թուրքերը աշխատեն ընտրել։ Ալէքսանդրի գաւառում, պրիստաւի պաշտօն ստանալուց լետո՞ ազդեցիկ թուրքերը ոկում են նրան չհաւանել, նրա մասին աննպաստ կարծիքներ և կասկածներ չալտնել, անգամ իրար մէջ բողոքել նորա պրիստաւութեան դէմ։ Չէ որ նոր պրիստաւը լուսաւորած մի հալ մարդ էր, որ պիտի երևան հանէր ալն գիւղական ցաւերը, որոնք գոլացել են ազդեցիկ թուրքերի անօրէն արարքներով և մութ դործերով։ Վերաւորապէս Փիր Մուրադ Սուլթանն է, որ Ալէքսանդրի դէմ մեքենալութիւններ է սարքում և հալածում նրան ոչ միայն իբրև պրիստաւի, այլ նոյնպէս իբրև հալի, որին նա չի սիրում։ Երեսանց Փիր Մուրադ Սուլթանը թուրքին չատուկ ձեւերով պրիստաւին շողոքորթում և մեծահոգի խօսքեր է շալլում և հալին անվերջ գովասանքների արժանացնում, գովելով նորա գիւղ գալը։ Իսկ լետերից նա ոչ մի միջոց չի խնայում Ալէքսանդրին վնասելու Փիր-Մու-

րադ Սուլթանը աշխատում է Ալէքսանդրի մասին վատ համբաւ տարածել և պատճառներ սրտնել, որ նա պաշտօնադուրկ լինի: Նա մինչև անգամ ուզում է լանցաւոր միջոցներով Ալէքսանդրին ոչնչացնել: Ով թուրքերի մէջ բնակւել է, նրան աւելորդ է պատմել, թէ վրէժը նրանց մօտ ինչ լանցանքներ է առաջացնում:

Ահա դալիս է նոր միրաւի ընտրութեան ժամանակը, և Փիր-Մուրադ Սուլթանը ուզում է անպատճառ վերընտրել: Իսկ եթէ Փիր-Մուրադը չը վերընտրւի, մեղաւորը նրա աչքում կ'երևալ Ալէքսանդրը, որին նա ճանաչում է իբրև իրան չկամեցող: Մինչդեռ Ալէքսանդրը անաչառ է և ոչ մի խտրութիւն հալի և թուրքի մէջ չըդեմութիւն կը կամենար միրաւի տեղը ընտրած տեսնել արդար և չիտակ մարդ, քանի որ անարդար ջրաբաշխութեան պատճառով՝ իր հալոյնի գիւղի բնակիչները շատ են նեղանում և շատ բան կորցնում: Ընտրութեան պաշարում Փիր-Մուրադի հետ քէլարկուղը մի հալ է, որ շատ ցանկալի է երևում հալ գիւղացիներին: Բայց չնայած սոցա աշխատանքին նրան ընտրելու, հալ թեկնածուն սևանում է, իսկ Փիր-Մուրադ Սուլթանը դարձեալ վերընտրւում: Այլ հետեանքի սպասել անկարելի էր, որովհետև թուրք բէգի կողմնակիցները թւով շատ էին և իրանց շահերով կապած էին նրա միրաւութեան հետ, որ ժողովրդի համար շարունակ անողութւն էր մնում: Վերընտրւած

թուրք բէգը չի բաւականանում իր չաղթութեամբ: Նա վճռել է անպաշտան հեռացնել Ալէքսանդրին: Եթէ Ալէքսանդրը մի քիչ երկար բնակի գաւառում պրիստաւութեան պաշտօնով, նա ունի պատրաստականութիւն մի առ մի վերլուծել և ուսումնասիրել գիւղական տնտեսական կեանքի երևութները: Այս աշխատանքը Ալէքսանդրին կը հասցնի աչն եղբակացութեան, որ դի.դական տնտեսական կեանքի պայմանները շատ ստոր են, բայց որ պիտի կերպարանափոխւեն: Երբ կը ճանաչեն գոյութեան աղ պայմանները, իսկոյն կը պարզեն աղղեցիկ անձնաւորութիւնների կատարած դերերը ներկալ հարստահարող պայմանների վերաբերմամբ: Իսկ այս գործը կորստեան կը մատնի գիւղական ջոջերին:

Ալէքսանդրը զիտէր, որ նա ոխերիմ թշնամիներ ունի, որոնք նրան շատ բաների մէջ մեղադրում էին: Եւ ամեն մի գործած սխալը նրա կողմից կ'արդարացնէր իր մոլեռանդ թշնամիների մեղադրանքները: Հակառակ այս վտանգին՝ Ալէքսանդրը զոհ է դնում մի բարոյական սխալի, որ բացատրելի կը լինէր ողբկան աշխարհի շարժառիթներով, թէև բարոյապէս վիրաւորական և դատապարտելի է թւում: Ալէքսանդրի ծնողների տանը մի քուրդ ծառայկալ, որ սիրահարելով գաւառում չալտնի մի քուրդ աւաղակապետի աղջկան՝ Գուլէ'ին՝ փախցնում է ստրան և հետն ամուսնանում: Մի քիչ ժամանակից չետոյ Ալէքսանդրը չափաւորութեան է ալս քրդուհի կնոջով, որ

նոցնպէս սկսել էր փոխադարձաբար սիրել իր երիտասարդ տիրոջ: Սոցա սիրող գաղտնիքը թէն լալտնի չէր ոչ ոքին, բայց Փիր·Մուրադ Սուլթանը, կամենալով շնորհել Ալէքսանդրին, հաւանական է դըտնում մի ալդպիսի բան և դորանով Գուլէի հայր Սլօ զաչաղին զինում պըրիստաւի դեմ, թէն սա անմասն էր քրդուհու լալիշտակութեանը: Ի հարկէ քրդուհու աւազակ հայրը խրախուսում է արիւնով վրէժ հանել Ալէքսանդրից: Ոճրագործութեան ընտելացած քուրդ աւազակը ընկերներով մի գիշեր լարձակում է Ալէքսանդրի տան վրայ: Յարձակ ման վալրկեանին Ալէքսանդրի մայրը տանից դուրս ելնելով՝ սպանում է: Այս բոլոր անցքը հասնում է նոյնպէս գաւառապետի գիտութեան, որ Ալէքսանդրին իր պաշտօնից հրաժարեցնում է: Ալդ ժամանակ մեռնում է Ալէքսանդրի հայրն էլ: Սոսկալի է Ալէքսանդրի դրութիւնը, երբ որ նրա գաղափարական իղձերը ի դերն են ելնում տեղական կեանքի ալս պալմանների մէջ: Ալդ դրութիւնը աւելի ևս պիտի սաստկանար, երբ որ նորա զրկանքը բարդում է իր սիրելի ծնողի մահով, որ միանգամայն անմեղ է բոլոր զրամալի մէջ: Անհուն է Ալէքսանդրի զարհուրանքը ալն շրջապատող պալմանների առաջ, ուր նախանձը, մարդկալին ծալրալեղ կիրքը, մոլեռանդութիւնը և ոճրագործութիւնը աշխատում են խեղդել ամեն մի նորոգիչ միտք և գործունէութեան: Բարկեցը լուրջ ուսումնասիրած է ալդ միջավայրը, որ ջլատում է գիտու-

թեամբ զինւած մարդու հաստատ կամքն և ուժը՝ օրինական սահմաններում ընդհանրութեան գործին ծառայելու: Բարկեցի ներկայացրած իրականութիւնը շոշափում է ալն հասարակական երևութները, ուր կամայականութիւնը և բռնութիւնը արմատ են գցել օրինազանց միջոցներով ոչինչ չարտադրող գոյութիւններ չարունակելու նպատակով՝ ի հաշիւ հասարակութեան լալն խաւերի քրտնաջան աշխատանքի: Ալէքսանդրի վէպի հերոսին չի լաջողում զիմադրել իրերի զօրութեանը, զա դեռ չի նշանակում, թէ կուեւը հնարաւոր չէ հասարակական վէրքերի դէմ: Մեր «նորեկը» իր նպատակի համար հունէր ալն ժամանակը, որ հարկաւոր է մաքառման կուլի համար լանուն լառաջադիմութեան վնս սկզբունքի: Դէպքերը պատահական կերպով չխթալեցին, որոնք «նորեկից» խեցին գաւառական արժանաւոր գործիչի անունը: Բարկեցը իր վէպում ալս գատողութեամբ չէ զրազում, որ և հեղինակի համար գլխաւոր խնդիրը չէ, ալ նա երևութներ է գիտում՝ շոշափելի հետեւեցներ ստանալու համար, թէ գործունէութեան ինչ տեսակ պալմաններ են սպասում գաւառում կրթւած նորեկին, որի իղէալը ժողովրդի բարօրութիւնն է համարում: Այս հասարակական տեսակէտից Բարկեցի ներկալ վէպը մեր վիպական գրականութեան խոշոր գործերիցն է: Վէպիս լեզւի մի քանի անհարթութիւնները և գեղարւեստի տեղ-տեղ հոգեբանական պակասութիւնները չեն խանդարում ընթերցողին Բար-

կենցիկ կենտրոնական միտքը լաւ ըմբռնելու: Ի հարկ է ամեն մի գրական գործ պահանջում է գեղեցկութիւն, որ գրածքին տալիս է գեղարւեստական առաւելութիւն: Այս վերաբերմամբ քննադատութիւնը իրաւունք կ'ունենայ Բաբկենցի վէպին անել ոչ անտնդի նկատողութիւններ: Այնուամենայնիւ վէպը կարդացում է մեծ հետաքրքրութեամբ և նոյն իսկ չափաւորութեամբ: Բաբկենցի երկը աչն մեծ առաւելութիւնն ունի, որ մեր առաջ դնելով ժողո-

վըրդի խուլ կռիւը իր բարօրութեան համար, «նորեկի» դադափարական սիրով մեզ փշեցնում է ինտելիգենտի պարտիքը դէպի մեր բարդ կեանքից ծագած խնդիրները: Մենք կարծում ենք, որ դա վիպագրողի ամենագլխաւոր պաշտօնն է, որով նա ընդունակ է լինում իր անունը միացնել աչն օղակներին, որոնցով անցնում է ժողովրդական—հասարակական կեանքը դէպի իր կանոնաւոր զարգացումը:

Գ. Վարդանեանց:

ՏԷՐ.ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յով.—Աբրեհնարան առանց ուսուցչի կարդալ սովորելու համար, 94 պատկերով: 1897. Նոր Նախիջևան, տպ. Ա. Զամինեան և Վ. Քիրլեան. 68 ութածալ էջ. զինն է 35 կոպ.

Ներկաչ ալբրեհնարանի հեղինակը, վերջին ժամանակներս, որպէս երևում է, իրեն նւիրել է առանձնապէս ժողովրդական գրագիտութեան և ընթերցանութեան խնդիրներին: Նա նոր վերջացրեց իւր մի աշխատութիւնը Մուրճ'ում՝ «Ժողովրդի ընթերցանութեան գործը», որին կը նւիրի առանձին գրախօսութիւն: Նա լուս տեսաւ նաև առանձին գրքովով: Այդ աշխատութիւնը ցուց է տալիս, որ հեղինակը ամենաչն լրջութեամբ զբաղւում է ժողովրդական գրագիտութեան և ընթերցանութեան վերաբերեալ խնդիրներով: մեր գրականութեան մէջ աչդ աշխատութիւնը միակն է աչդ խնդրին վերաբերեալ:

Միակն է մեր գրականութեան մէջ

նաև աչս «Աբրեհնարանը» հեղինակի առաջադրած նպատակի նկատմամբ: Նպատակն է՝ հասակաւոր անգրագէտներին հայրէն կարդալ սովորեցնել: Հեղինակը աւելցնում է՝ առանց ուսուցչի կարդալ սովորեցնել: Համաձայն չենք գրքի վերնագրի աչդ խօսքին. բայց ոչ միայն մենք չենք համաձայն, աչլ բարեբախտաբար համաձայն չէ դորան նաև գրքի չառաջաբանը, աչլինքն հեղինակը ինքը: Եւ իրօք, չառաջաբանի մէջ մենք ամեն քալափոխում հանդիպում ենք ցուցմունքների, «որոնցով պէտք է սովորեցնել անգրագէտին օգուտ քաղել այս ձեռնարկից». չառաջաբանից տեսնում ենք, որ «անգրագէտին պարբերաբար միայն մի քանի ցուցմունքներ պէտք է անել...»:

Սակայն ինչ է նշանակում պարբե-

դաքար, եթէ ոչ աչն, որ մէկը պէտք է լինի, որը կանոնաւորապէս հետեի հասակաւոր սովորողին և ամեն անգամ, հարկ եղած ժամանակ, ցուցմունքներ անի նրան: Դէ ալդ արդէն դառաւ մէկը ուսուցիչ, միւսը աշակերտ, թէև թէ մէկը և թէ միւսը աչս գործում չեն գտնուում դպրոցի կանոնաւորած հանգամանքներում:

Բայց մեզ համար կարևորը վեր նագիրը չէ, ալ գործը ինքը. մեզ համար անկասկած է, որ հեղինակը, հասակաւոր անգրագէտին կարդալ սովորեցնելու համար, ամեն ջանք գործ է դրել որ անգրագէտը կարողանալ կարդալ սովորել, կարելի ինչափ քիչ դիմելով ուսուցչի, և աչն պէս, որ աչս գործում ուսուցիչ կարողանալ հանդիսանալ խելը զլսին ամեն մի դրամանալ մարդ պատանի, թէ հասակաւոր, արհեստաւոր, վաճառական թէ քահանայ:

Ալդ ենք եզրակացնում գրքի չառաջաբանից և նրանից, թէ ինչպէս է գործնած ներկալ Ալբրենարանը:

Եւ ահա հէնց ալդ ձգտումը մենք գտնում ենք ժամանակակից, օգտակար, անհրաժեշտ. խնդիրը ուրեմն նրանումն է, թէ ներկալ Ալբրենարանը որքան չարմարում է ալդ նպատակին:

Ինչպէս տեսանք, ցուցմունքներ անող ղեկավարողներ պիտի լինեն, Դոցա համար է որ գրած է չառաջաբանը: Բայց որովհետև ուսուցիչը աչս ղէպքում պիտի լինի ոչ անպատճառ վիպչած ուսուցիչ, հետևապէս յառաջաբանը պէտք է գրած լինէր աչն ձեռով, որ ամեն ցանկացող գրագէտ կարողանալ հեղինակի տւած

խրատներին օգտուել, սխտեմը լաւ ըմբռնել: Եւ ահա մենք գտնում ենք որ այդ տեսակ ուսուցանողների համար յառաջաբանը գրած է ոչ բաւականաչափ պարզ ոճով: Պէտք էր չառաջաբանը գրել շատ պարզ լեզուով և տըպագրել աւելի խոշոր տառերով:

Գալով ցուցմունքներին (տես էջ 5, ա. բ. գ. և ալն) մենք գտնում ենք մոռացութեան տրւած ամենասկզբնական ցուցմունքը, որ և պէտք է առաջին տեղը բռնէր. ալդ աչն է, որ նախ քան անգրագետալը պատկերը տեսնելով նորա կողքին դրած անունը կարդալ փորձէր, պէտք է դեռ ուսուցանողին պարտաւորեցնել, որ սա օգնէ անգրագետալ պատկերը ճանաչել: Եւ իրաւ, ամբոխի աշխարհում նոյն իսկ լաւ պատկերները իսկոյն չեն ճանաչում: Մեզ պատահել է տեսնել մարդիկ, որոնց առաջը ալբոմ ենք դրել և նոքա իրենց ծանօթիների լաւ դուրս բերւած պատկերները շատ թէ քիչ դժւարութեամբ են ճանաչել: Նոյնը և աւելին կարելի է ասել «Ալբրենարանի» մէջ ղիտեղւած պատկերների մասին: Մենք կարող ենք հաւատալ մի գրախօսի, որը պնդում է թէ կատուն ընդունել են շան տեղ, օձը՝ թռկի տեղ, ընկուզը — ձմերուկի տեղ, և ալն: Բայց դորանից մենք չենք անիլ աչս եզրակացութիւնը, թէ, ուրեմն, առաջարկւած մեթոդը անպէտք է. ալդպիսի եզրակացութիւն դուրս բերելու համար պէտք էր շատ փութկոտ եզրակացութիւնների հակւած լինել: Յիշած հանգամանքից աչս եզրակացութիւնը պիտի անել միաչն, որ անգրագետալներին

նախ պէտք է ճանաչել տալ պատկերները, իսկ դա հեշտ բան է. անգրագէտը եթէ սկզբում կը սխալւի՝ սխալը ուղղելուց չետոյ շատ հեշտութեամբ կը ճանաչի պատկերները, անհամեմատ աւելի մեծ հեշտութեամբ, քան նա կարող է մտքում պահել ալբրենարանի քանի մի տասնեակ տառերի ձեերը և կամ կը սովորի վանկերը կարդալ:

Մի քանի պատկերներ կան, որ մենք ինքներս ալ բանի տեղ կարող էինք ընդունել՝ օրինակ, էջ 32 ընկուղը, որ հեշտութեամբ կարելի է լիմոնի պատկեր կարծել. դժուար են հասկացում նաև նուռը և նշխարքը (էջ 17). կարելի էր կովի (էջ 37) աւելի բնական պատկերը դնել:

Լա է արած, որ պատկերներից մի քանիսը կրկնած են. մեր կարծիքով հարկաւոր էր անել աւելի չատերի համար:

Ներկալ «Ալբրենարանը» պէտք է կարծել որ պիտի մեծապէս տարածւի ժողովրդական իսաւերի մէջ, որով միջոց կը տրւի լօրինողին նորանոր տպագրութիւններով կատարելագործել ալս ձեռնարկը, օգտուելով կատարած վործերից: Պատկերների օգնութեամբ տառերը և վանկեր կազմելը սովորելուց չետոյ՝ սովորողը անցնում է նախադասութիւններին, վերջրած ժողովրդական առածներից կամ առօրեայ կեանքից. ապա զրւած են կարդալու

կտորներ ժողովրդին ծանօթ բաներից, որպէս են ամենապատշաճ աղօթքներ, ժողովրդական երգեր, լաւտի ազգային երգեր և ոտանաւորներ և ալլն, որոնց կարդալը ժողովրդի մարդու համար բնական հետաքրքրութիւն է արթնեցնում: Ամենից վերջը զրւած է Ալֆոնս Գոդէի մի փոքրիկ պատմածքը («Ալբրէն դասը»): Հարց կարող է լինել, թէ հասակաւոր անգրաճանաչը կարող է Ալբրենարանում զրւած վարժութիւններից լետոյ ալդքան արագ հասուն լինել ալդ պատմածքը կարդալու համար, որ զրւած է կատարելապէս օտար կեանքից և զուտ գրական ոճով, թէև լօրինողը աշխատել է տեղ տեղ ժողովրդական խօսքերով բառերը բացատրել. և աւելի լաւ չէր լինի, եթէ դուրս տեղ հակական կեանքից մի պատմածք դնէր, օրինակ, Պաօլեանից, Ալպալեանից:

Հրաւիրում ենք ժողովրդասէրների ուշադրութիւնը պ. Տէր-Միրաքեանի ալս վերին աստիճանի հետաքրքրական ձեռնարկի վրալ. գրքի լալն տարածումը անգրաճանաչների շրջաններում և զրագէտների փորձերը ալդ ձեռնարկով պիտի գան անշուշտ գրքի նորանոր տպագրութիւններին նպատուելու, որով կ'ապահովի նորա կատարելագործութիւնը:

Որպէս երևում է լառաջարանից, պ. Տէր-Միրաքեանը պատրաստում է ալժմ Ալբրենարանի երկրորդ մասը: Ա. Ա.

ՀԱՅԿՈՒՆԻ, Ս.—«Մօքոս», ժողովրդական վէպ Չարսանճազի բարբառով. պատմեց Մինաս Բապար, գրի առաւ Ս. Հ. Ս. Էջմիածին, 1896 թ. 88 էջ, գինը 25 կոպէկ:

Այս գրքի հետ միաժամանակ ոտացալ պ. Բալասանեանի «Ռոստոմն ու Սալմանը» և պ. Յար. Միրիմանեանցի փոխադրած «Ընձենաւորը», Շահնամէների, «Ընձենաւորի» և մեր «Դաւիթ ու Մհերի» առնչութիւններն ակներև էին, բայց չգիտեմ ինչո՞ւ սպասում էի, որ «Մօքոսն» էլ պէտք է մանէր ալդ արեւելեան միժ ու խորհրդաւոր առասպելների հիւանալի շարքի մէջ: Թե՛րևս գրախօսութիւններից ստացած մի անորոշ տպաւորութիւն էր ալդ կամ զուտ երևակաութեան արդիւնք: Չեմ էլ լիշում թէ արդեօք «Մօքոսի» մասին կարդացել եմ մի բան, կամ թէ ինչ տեսակէտից են նրա մէջ արժանիքներ տեսել: Ես «Ճախապաշարած» մտքով սկսեցի կարդալ և ահա՛ լառաջաբանն ու սկզբնաւորութիւնը կարծես արդարացնում են լուսերս. այստեղ էլ «Դաւիթ ու Մհերի» և սրա զանազան վարիանտների պատմածի պէս հարաւից (Բաղդատից) գալիս են հօրից դժգոհ թագաւորազուններ, քաղաքներ են հիմնում Հալաստանի մէջ, չէնցնում և աչն՝ Սասունից ոչ չառ հեռու տեղեր: Բայց առնչութիւնը հէնց այսքանով էլ վերջանում է: Որքան աւելի էջեր ես կարդում, աչնքան աւելի հեռանում է «Մօքոսը» սպասածիցդ: Վերջիվերջ երեք վիւցազնեղութեանց մասին դիտաւորութիւն ունիւմ նորից

գրելու, երբ լրացուցիչ նիւթերը ձեռք կ'անցնեմ, իսկ աշտմ «Մօքոսը» զատելով նրանցից՝ մատնանիչ լինենք մի առնչութեան վրայ էլ, որ մենք նկատեցինք սրա և Բալասանի «Ռոստոմ ու Սալմանի» մէջ: Մինաս Բապարը պատմում է ի միջի ալլոց, որ Յօրոք անունով մի աւերակ քաղաք է եղել, որ ամեն տարի մի անգամ «կօրուի», տակը վրայ կըլլի: Տաճկահայերի «Ռոստոմ ու Սալման» ժողովրդական աւանդութեան մէջ էլ պատմում է, որ ալդ երկու տիտանների մեհամարտութիւնից տարին մի երկու անգամ շարժւում է գետինը:

Ինչպէս երևում է, «Մօքոսը» հին ժողովրդական վէպ է, գուցէ նա եղել է Դաւիթ ու Մհերի պէս մի գեղեցիկ բանահիւսութիւն, բայց հետեւելով քրիստոնեակ ժողովրդների նմանօրինակ արտադրութեանց ընթացքին՝ իւր ներկայ գրութեամբ նա մի խառնուրդ է ներկայացնում հնի և նորի, հեթանոսականի և քրիստոնէականի: Այս վէպի մէջ հերոսներն աւելի են ապաւինում աղօթքին ու քրիստոնէական հրաշքին՝ քան Սասունցի Դաւթի հերոսները:— «Մօքոսի» հերոսները նեղութեան մէջ ընկնելով լուսահատութիւնից՝ «կը պաշլալին լացը»: Աւելի քաջարի են երևում զիւցազնուհիները, բայց սրանք էլ առանց խարդախութեան

միշտ չեն կարող գործ առաջ տանել։ Սրանից զատ առասպելական ուժերն էլ ազդու դեր են կատարում՝ խօսող թռչուններ, հրաշագործ ձիեր և այլն։

«Մօքոսը» կարծես կցկտուր պատմութիւնների մի ժողովածու է արւեստական կապերով հիւսւած կամ աւելի ճիշտ կը լինի գուցէ ենթադրել՝ մի մեծ աւանդութեան աղաւա-

ղած փշրանքներ։

Այս բանահիւսութիւնը լոյս տեսնելու ամեն արժանիքն ունի՝ ապագային թերեւ նորանոր վարիանտների շնորհիւ աւելի մեծ կարեւորութիւն ստանալու լուսով։ Գնահատելի է պատկառելի ծերունի վարժապետի անխոնջ գործունէութիւնը և ամենալն խրախուսանքի արժանի։

Յ. Տ. Մ.

ՅՈՎՀԱՆԵԱՆ, Վ. Մխիթ. Ուխտէ. Հետազոտութիւնք նախնեաց Ռամկօրէնի վրայ. գրեց Հ. Ղևոնդ, Մասն Ա. Վիեննա 1697 թ. ութօր. 272 եր.

Մեր դասական անւանեալ մատենագրութիւնը, չատկապէս նորա մի քանի ականաւոր ներկայացուցիչները՝ Խորենացի, Բիւզանդ, Ագաթանգեղոս և այլք իրանց պատմական նիւթի կարեւորութեամբ, Նզնիկ, Նզիչէ, Փարպեցի և այլք իրանց պերճ ու փարթամ լեզուով աչնքան են գրաւել հաշ բանասիրութեան ուշը, որ ստորին դարերի մեր ռամկախառն կամ զուտ ռամիկ գրականութիւնը սակաւ բացառութեամբ մնում է փոշու մէջ թաղւած մի անծանօթ գանձ։ Սև իրաւ, մի սովորական բանասէր, որ մեր ձեռագիրների հաւաքածոներին և նոյաբովանդակութեանը անձամբ ծանօթ չէ, բնաւ տեղեկութիւն անգամ չի կարող ունենալ, որ մենք բացի դասականից ունենք և մի ալ թէև ոչ ապագէս փալուն ու վսեմ գրականութիւն, որ «ոսկի» կամ «արծաթ»

անունը վաչելէ կարողանար, բացի իւր պարզութեամբ, իւր ձևերի, ոճերի և բազմաթիւ նոր բառերի զանձով, որից զուրկ են գրաբարը և արդի աշխարհաբարը, մանաւանդ իւր ընտանութեամբ, իւր անմիջական մօտիկութեամբ ներկայի կենդանի բարբառներին, շատ բաներով աւելի օգտակար և պիտանի կարող էր լինել քան ոսկէ դարու երկերը...

Ուստի՝ «Հետազոտութիւնք նախնեաց Ռամկօրէնի վրայ»—գրքի երևան գալը, ուր նախնի ռամկօրէնի հմուտներ և ուսումնասիրութիւններ կան ժամանակի կարգով, ոչ միայն պատմական լուսաբանութեան տեսակետով, ալ և մեր աղքատիկ աշխարհաբարը հարստացնելու համար գործնական նշանակութիւն կարող է ունենալ, որ և առանձնապէս շնորհալի է հեղինակը իւր առաջաբանում։

Այդ ռամիկ գրականութիւնը տարբերում է դասականից ոչ միայն իւր լեզուով ու ձևով, այլև նիւթով ու պարունակութեամբ. դասական գրականութեան երկերը անհատական երևութիւններ են, նոցա հեղինակները մեծ մասամբ արտասահմանում կրթւած, ժողովրդից մասամբ հեռացած, բարձր նիւթերով զբաղւած անձեր են:

Նոցա լեզուն պաշտական միեռ և բարձր շրջանի լեզու էր, գրութեան նիւթը պատմութիւն, փիլիսոփայութիւն կամ կրօնական հարցեր: Նորա մէջ ժողովուրդը չկալ...

Ռամիկ գրականութիւնը ընդհակառակը հաջ ժողովրդի մտաւոր կացութեան եթէ ոչ իսկական, գէթ նորա ամենամօտ պատկերն է տալիս միջին դարերում. նորա չափանիշներից մինն էլ այն է, որ հեղինակները մեծ մասամբ աշխարհական անձեր են, որոնց մէջ նուց իսկ մի սպարապետի անւան ենք հանդիպում (Ամբատ գունդատապլ — Թագաւորի եղբայր և զօրապետ). Այդ գրականութեան բովանդակութիւնը առօրեայ կեանքի անմիջական պիտոյքներն են. բուժականութիւն, մեղապահութիւն, դատաստանագրեր, արտօնագրեր, դիւանական գովումներ, երգեր, հանելուկներ, առակներ, թեթև դիւրահաս պատմութիւններ և այլն: Ի նկատի ունենալով, որ այդ ամեն տեսակէտով հարցասիրական նիւթերից հազիւ մի երկուսը լոյս են տեսել առանձին տպագրութեամբ, հանգուցեալ հալը Յովնանեանի ալս գործը արժանի է խորին շնորհակալութեան:

Դեռ երեսուն տարիներ առաջ բազմամուտ Ալտընեանը ցոյց տաւ նոյն իսկ հինգերորդ դարու հեղինակների մէջ ռամկօրէնի գոչութիւնը, իսկ հալը Յովնանեանը իւր բերած նմուշներով ցոյց է տալիս, որ նոյն Ռամկօրէնը գէթ 12-երորդ դարում մի հաստատուն և համարեա կադմակերպւած գրական լեզու էր, որի գործածութիւնից չէր խորշում նոյն իսկ մեր արծաթեայ դարու ամենափալուն աստղը — Շնորհալին... Դա չատ խրատական է, որովհետև մի երեք տասնեակ տարի առաջ տաք բանակուի կար թէ արդեօք կարելի է կամ պէտք է աշխարհաբար գրել, մինչ մեր նախնիք առանց աղմուկի դեռ 12-րդ դարում աշխարհաբար էին գրում, որի վերայ սակայն, ժամանակի անաջող պալմանները և Ռուբինեան հարստութեան կարճատև կեանքը մահացու ազդեցութիւն ունեցան և նա թառամեց առանց աճել ու զարգանալ կարեւորաւ... Թէև բերած նիւթերը չատ սակաւ են, բայց հէնց եղածն էլ բաւական է տեսնելու, թէ որպէս դրաբարի բազմաթիւ ձևերը լեզւի աստիճանական զարգացմամբ հասել են այն դրութեանը, որ մենք այսօր գտնում ենք կենդանի բարբառներում: Միջնադարեան Ռամկօրէնը հին գրաբարի և մեր նորագոյն աշխարհաբար լեզուների միջին օղը և մանաւանդ արեմտեան լեզւի (Պոլսի) անմիջական ծնողը կարելի է համարել: Այդ Ռամկօրէնը չնայելով իւր հնութեանը չատ բաներով աւելի աշխարհաբար է քան այսօրւայ մեր ու Պոլսի գրական լեզուները. տեղ-

տեղ նորա մէջ ցոլում է կենդանի լեզու, պատկերը իւր բոլոր իստակութեամբ, որպէս Արարատեան բարառը Աբովեանի և Պառչեանի երկերում, և չունի աչն խորթութիւններն ու անհարազատ բարդութիւնները, որոնցով հարուստ է մանաւանդ մեր լեզուն: Ոգու և ոճի կողմից, չնայելով բաղմամբիւ օտարազգի բառերի գործածութեան՝ ալդ լեզուն բուն հայերէն է:

Եթէ ալ միջնադարեան հայերէնը մեզ աչնպէս ծանօթ լինէր որպէս գրաբարը, ապա կարիք չէինք ունենալ շատ նոր և անաչող բարդութիւններ հնարելու կամ սխալ գործածելու, որպէս ալօր. օրինակ 12-րդ դարում հայերը մեղապահութեան համար ունէին պարամայր (պարամայր կամ պարուց մայր), մարի և ործ բառերը աչն մեղունների համար, որոնց մենք ալօր չինովի և անաչող բառերով անւանում ենք թաղուհի, աշխատուոր մեղու և բոռ. շարժական կալքը նոքա անւանում էին շարժուն իր և ալին... Բանասէրը առօրեալ կեանքի, իրաւաբանական, բուժական և դիւանագիտական բաղմամբիւ ընտիր և հաստատուն տերմիններ կարող է գտնել ալդ դրականութեան մէջ, որոնք մենք մուրաժու բառերով ենք արտապատում:

Ալդ գրքի ամենամեծ պակասութիւնն աչն է, որ օտարազգի բառերից միաչն Փրանսերէնի թարգմանութիւնը կալ, մինչ արաբերէն, լուսարէն և ալ բառերը մնում են անաչն բացատրութեան: Յուսանք որ գրքի երկրորդ հատորը ալդ պակասութիւնից զերծ հրատարակւի:

Առթից օգտւում ենք «Թարգմանել» բառի միջնադարեան նշանակութեան մասին երկու խօսք ասելու. թարգմանել բառը Շահնազարեան

վարդապետին առիթ է տւել կարծելու, իբրև թէ Սըմբատ սպարապետը իւր տարեգրութիւնը օտար լեզու է գրել և ապա հայերէն թարգմանել: Գրքիս հեղինակը աշխատում է հերքել ալդ կարծիքը, ջանալով ցոյց տալ, որ Սըմբատը չէր կարող օտար լեզուով գրած լինել իւր պատմութիւնը. և սակայն կարևոր թարգմանիչ բառը մնում է անհերքելի: Մեր կողմից կարող ենք աւելացնել, որ հէնց ալօր Բարձր-Հալքի գիւղական ժողովուրդը (Ախալքալաք) թարգմանել կամ «թարգմանել» բառը գործ է ածում չօրինել, շարադրել, հեղինակել, հնարել բառերի նշանակութեամբ. նոչն մտքով է բանեցրել անտարակուս և Սմբատ զօրապետը:

Ալդ հաստատւում է նորանով, որ նոչն Սմբատը մի քանի ալ տեղերի ուր խօսքը խակական թարգմանութեան մասին է, բանեցնում է փոխել բառը, ալօպէս էջ 201. «Այս բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի մեր հեշտալուր բառս», 202. «և ձեռօք իմովք աշխատեցալ և փոխեցի զսա», մի անգալտ անձն ասում է. «ղի ոս (Սմբատ) ետ մեղ փոխել ի վիւր լուսաւորեալ գրոյցն» (202). Ամիրսովլաթը, մի բոլորովին ալ անձնաւորութիւն, 55-րդ երեսում ասում է.

«աչնոր համար» որ ալս գիրքս ի յայլ լեզու է փոխել է» Սմբատը անսիղներ թարգմանութեան մասին ասում է. «և ես աշխատեցալ և փոխեցի ի հալ լեզուս (190)... և հալածեցալ ի փոխելն և երբ փոխեցի ես...» Բոլորը՝ թարգմ. բառի մտքով.— Ուրեմն հին Բամիլօրէնում փոխել նշանակում էր թարգմանել, իսկ թարգմանել՝ հեղինակել, չօրինել:

Գր. Վանցեան:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

II

Նահանգական և դատաւական (առւտերէն՝ զեմստային կոչւած) ինքնավարութեան մասին, որի համար ներկայումս հարց կայ խնդրել կառավարութեան որ մտցնելի Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում, մենք անցեալ ամիս որոշեցինք մեր հայեցակէտը և կարծիք յայտնեցինք նաև, որ նոյն իսկ եթէ առայժմ միայն երկու նահանգներում այդ ինքնավարութիւնը գործադրուի, դա բարեբար ազդեցութիւն կ'անի մեր երկրի նաև մնացած (թրքա-հայ) նահանգների վրայ: Մենք խոստացանք ուշադրութեամբ հետևել այդ վերին աստիճանի կարևոր խնդրի ընթացքին: Համաձայն դորան՝ մենք ներկայումս ենք ընթերցողներին 1) նախ մի մինիստրական հաղորդագրութիւն, վերաբերեալ Հիւսիսային Կովկասի Ստաւրապոլ նահանգին, բայց որը պարզում է բարձր կառավարութեան հայեացքը զեմստային ինքնավարութեան մասին առհասարակ. 2) Թիֆլիսի նահանգի ազնւականաց ժողովում տեղի ունեցած վիճաբանութիւնները—զեմստային հաստատութիւնները Թիֆլիսի նահանգում մտցնելու պրոէկտի մասին, և վերջապէս 3) վրաց մամուլի վերաբերմունքը դէպի խնդիրը ¹⁾:

Ներքին գործերի մինիստրը պահանջել էր զանազան տեղի-

¹⁾ Այդ ամենի համար մենք օգտուում ենք Նովոյե Աբաղրենի լրագրի տւած տեղեկութիւններով, որի խմբագիր իշխ. Գ. Թումանով Թիֆլիսի ազնւականաց ժողովի անդամ է և զաւառական ինքնավարութեան խնդրի չարուցանողը և պրոէկտ կազմողն է:

կութիւններ Ստաւրապոլի նահանգի նկատմամբ, աչն մտքով որ մտադրութիւն կար այդ նահանգում զեմսուլային հաստատութիւններ ներմուծել: Որովհետեւ նոյն խնդիրը վերջին ժամանակներս յարուցել էր նաեւ Քութայիսի և Թիֆլիսի նահանգների ազնւանաց ժողովներում, ուստի Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը ուղարկեց այդ երկու նահանգների պետերին մինիստրութեան վերոյիշեալ առաջարկը. Ահա այն.

«Յւրոպական Ռուսիայի 34 նահանգներում զեմսուլային (գաւառական ինքնավարութեան) հաստատութիւններ մտցնելիս, յանձնարարւած էր ներքին գործերի մինիստրութեան հոգս տանել նաեւ կայսրութեան միւս նահանգներն ևս մտցնել այդ օրէնսդրութիւնը. Այդ մտադրութիւնը սակայն չէր կարելի իրագործել մի քանի նահանգներում, այն ժամանակաւ քաղաքական պայմանների պատճառով, իսկ միւս նահանգներում՝ նոցա տեղական առանձնաշատութիւնների պատճառով: Մինչդեռ ներկայումս անհրաժեշտ կարիք կայ բարեփոխելու տնտեսական կառավարութիւնը այն նահանգներում, ուր չի գործում զեմսուլային օրէնսդրութիւնը, որովհետեւ այնտեղ գործող տնտեսական օրգանները, որոնք զեռ. ևս այս դարու առաջին կիսումն են հաստատւած և մինչև վերջին ժամանակներս գրեթէ ոչ մի փոփոխութեան չեն ենթարկւած, այնքան հնացել են, որ ոչ միայն այլ ևս չեն համապատասխանում ոչ տեղացի ազգաբնակչութեան և ոչ կառավարութեան շահերի պահանջներին, այլ և անկարող են այն բոլոր պաշտօնները կատարել, որ բարձում են նոցա վրայ նոր հրատարակող օրէնքները:

Նախառեֆորմեան կարգերի վերոյիշեալ անյարմարութիւնները այն նահանգներում, ուր մտցրած չէ զեմսուլային օրէնսդրութիւնը, քանիցս իրենց վրայ են դարձրել բարձրագոյն կառավարութեան ուշադրութիւնը, և պետական խորհրդի պետական տնտեսութեան ղեպարտամէնտը հարկ դատեց յանձնել ներքին գործոց մինիստրութեան, մինչև որ կը լրանայ զեմսուլային (գաւառական) նախահաշւի 1896—98 թ. եռամեայ ժամանակամիջոցը, յարաբերութեան մէջ մտնել ում հետ որ հարկաւոր է, քննել և պետական խորհրդի հաւանութեանը ներկայացնել իւր գիտումները այն հիմնարկութիւնների բարեփոխման մասին, որոնք կառավարում են հարկային գործերը:

զեմատուային հաստատութիւններ չունեցող նահանգներում, և այն միջոցների մասին, որոնք կարող կը լինէին նպաստել՝ զեմատուային տնտեսութիւնը այդ նահանգներում ուղիղ հիմքերի վրայ դնելու:

Այդ պատճառով ժամանակացարմար դատելով քննել խնդիրը Ստաւրապոլի նահանգում 1890 թ-ի զեմատուային օրէնսդրութիւնը մոցնելու մասին, ներքին գործոց մինիստրը զիմեց Կովկասի գըլխաւոր իշխանութեան հարցով, թէ սորա, այլ նաև նահանգական իշխանութեան կարծիքով, կարելի չէ արդեօք յիշեալ նահանգում մոցնել 1890 թ-ի զեմատուային օրէնսդրութիւնը իւր ամբողջ ծաւալով և կամ որ և է փոփոխութիւններով, տեղական պայմանների համաձայն:

«Բացի այդ, սենատոր Գորեմիկինը» (ներքին գործոց մինիստր) «պահանջում է այդ խնդրի համար հետեւեալ տեղեկութիւնները. ա) յիշեալ նահանգի ազգաբնակչութեան թիւը և նորա դասաւորութիւնը ըստ տեղերի և դաւանութիւնների. բ) թէ ինչպէս է բաժանւած հողային սեփականութիւնը առանձին կալաճատերերի և դիւղական համայնքների մէջ, ցոյց տալով թէ որքան դեսետին հողի սեփականութիւնը կարող կը լինէր ձայնի իրաւունք տալ ընտրողական ժողովներում. գ) Ֆիզիկական և իրաւաբանական անձերի թիւը, որոնք կարող կը լինէին օգտւել զեմատուային ժողովներին մասնակցելու իրաւունքից, ցոյց տալով ազնականների թիւը, որոնք կարող կը լինէին մասնակցել առաջին ժողովում, և այլ անձերի թիւը՝ երկրորդ ժողովի համար. դ) վոլոստների (դիւղախումբերի) թիւը, որոնց, համաձայն զեմատուային հաստատութիւնների օրէնսդրութեան 51-դ յօդւածի, կարելի կը լինէր իրաւունք տալ դիւղական համայնքների կողմից իրաւասու (ձայնաւոր) ընտրել, և նոցա դասաւորութիւնը ըստ դաւանութիւնների և ե) այն ամեն ստատիստիկական տեղեկութիւնները, որոնք յիշեալ նահանգում զեմատուային կարգ մոցնելու խնդրի համար անհրաժեշտ են»:

Թիֆլիսի նահանգի ազնականաց ժողովը, իւր նիստում առ 3-ն յունիսի, զբաղւեց Թիֆլիսի նահանգում զեմատուային (գաւառական ինքնավարութեան) հաստատութիւնները մոցնելու խնդրով: Ահա

նիստի մանրամասն արձանագրութիւնը, որը ջանձնարարում ենք մեր ընթերցողների ուշադրութեանը.

Նախածանօթութիւն. Թիֆլիսի Նահանգի ազնականաց անցեալ հերթական ժողովը (1894 թ-ին) ջանձնարարել էր իշխ. Գէորգի Միխ. Թումանովին ղեկուցում կազմել նորա յարուցած խնդրի մասին, վերաբերեալ Թիֆլիսի Նահանգում զեմստուալին հաստատութիւններ մտցնելու գործին, և աչն ներկայացնել ազնականութեան պարագլուխներից կազմած լանձնաժողովին: Այդ լանձնաժողովը գումարեց ներկայ տարւոյ մալխի 27-ին և վճռեց քննել իշխ. Թումանովի նորան ներկայացրած պրոէկտը—ըստ գաւառների, առանձին լանձնաժողովներում: Երեք անդամներ—Սիգնալի գաւառական պարագլուխ իշխան Ի. Ռ. Անդրոնիկով և ղեկուտատներ պ. պ. Սաւանէլի և Ջապարիժէ—մնացին առանձին կարծիքի: Խոստովանելով ինքնավարութեան ամբողջ օգուտը, լիչեալ անձերը աչնու ամենաչնիւ վաղաժամ են գտնում մեզնում զեմստուալին հաստատութիւններ մտցնելը, ազգաբնակչութեան անպատրաստ լինելու պատճառով՝ չոցա տած բարիքները վաշելիլու համար, ալ նաև տնտեսական դրութեան պատճառով, որը չի թույ տալիս կրիլ աչն ծախքերը, որոնք կապած են զեմստուալին հաստատութիւնների հետ:

Իշխ. Գ. Մ. Թումանով:—Զեմստուալին հաստատութիւններ մեզնում ներմուծելու խնդիրը ունի իւր պատմութիւնը, որ երկար է և ցաւալի: Նա չարուցւած էր դեռ ևս 1871 թ., երբ մեր երկիրը եկաւ ի Տէր հանգուցեալ Ալաք Ալէքսանդր II. Աչն մասնաժողովը, որ ազնականութիւնը ընտրեց որոշելու համար թէ ինչ խնդիրքներ տրւին կառավարութեան, գերադասեց խնդրել որ պրիկազում ¹⁾ ունեցած պարտքերը ներեն, և մի կողմ թողաւ զեմստուալի խնդիրը, որովհետև վերջինս իբր թէ կարող էր խանգարել առաջին խնդիրքին: Այսպէս գոնէ հազորւում էր ինձ լիչեալ լանձնաժողովի անդամներից մէկը: Զեմստուալի խնդիրը նորից չարուցեց 1882 թ.: Նորից լանձնաժողով կազմեց, բալց նա ևս չաջող հետեանքների չհասաւ: Այդ ժամանակ բարձրագոյն կառավարչական հաստատութիւններում վերաքննուում էր 1864 թ-ի զեմստուալին օրէնքը և չալտնի չէր, թէ ինչով պիտի վերաքննութիւնը վերջանար: Միւս կողմից Անդրկովկասում ազնականութիւնից ոչինչ չէր առնուում գաւառական պիտուքների և հաստատութիւնների համար, և զեմստուալին հաստատութիւնների ներմուծումը երկիւղ էր տալիս թէ հարկ կը նշանակւի նաև ազնականների վրայ: Այդ ժամանակից դէս հանգամանքները էապէս

¹⁾ Պրիկազը պետական կալւածական վարկի մի բանկ էր, ուր նահանգի ազնականութիւնը կալւածներ էր գրաւ դնում՝ փոխառութիւն անելու համար: Այժմ ալ պետական հաստատութիւնը վերայըրած է:

փոխել են, կառավարութիւնը արդէն վերջացրեց հին օրէնսդրութեան վերաքննութիւնը և 1890-ին հրատարակեց նոր օրէնք՝ Բացի ալդ ներմուծեց կալւածական հարկ նաև ազնականներին: Ալդ հանգամանքները, որպէս նաև ալն տխուր իրողութիւնը, որ ազնականութիւնը, առանց զեմստալին ինքնավար հաստատութիւնների, չի կարող իւր անհրաժեշտ պիտոյքներին բաւարարութիւն տալ—ինձ առիթ տւին անցեալ հերթական ժողովում 1894 թականին զեմստալի խնդիրը նորից վարուցանել: Այն ժամանակ, որպէս և ալժամ, ժողովում ալքի անցրին կարևորագոյն հասարակական գործերի մասին եղած մեր խնդիրքները, որոնց համար իշխանութիւնը բաւարարութիւն չէր տւել, որովհետև ալդ խնդիրքները պատճառաբանած չէին: Ալդպիտով պարչւեց, որ մեր ամենաէական շահերը վնասուած են, որովհետև բացակայում են հաստատութիւնները, որոնք քննողական կը լինէին նոցա ինչպէս հարկն է պաշտպանել: Իրբև ալդպիտի միտական և ձեռնհաս օրդաններ, ասում էի ես ալն ժամանակ, կարող կը լինէին լինել միմիայն զեմստալին հաստատութիւնները: Մեզնում ինքնավարութիւն վաւելում են բոլոր դասակարգերը, բացի ազնականութիւնից: Գիւղացիք ունին գիւղական վարչութիւն, քաղաքները—քաղաքալին ինքնավարութիւն, բայց երկրագործական դասակարգը, լանձին աղներական պարագլուխների և դեպուտատների ժողովի, չունին ալն, ինչ տալիս են ինքնավարութեան ալ տեսակները, ալն է իրաւունք մեզ ինքներնիս վրալ հարկ զնել և կարգադրութիւն անել ալն գումարների վրալ, որ մեզնից առնում են տեղական պիտոյքների համար ¹⁾: Ալդ պատճառով ոչ միայն կարևորագոյն խնդիրները անշարժ են մնում, ալ և մեր ամենապարզ հասարակական պիտոյքները բաւարարութիւն չեն ստանում, որովհետև նոցա համար միշտ որ և է գումար է հարկաւոր: Ամին մի գործ, որ ծախք է սահանջում, պէտք է բազմաթիւ ատեաններ անցնի նախ քան կ'իրագործուի, և ալդ դժւար է, որովհետև եթէ նոյն իսկ մեք ինքներնիս հարկի ենթարկել ուղենանք—առ ալդ պէտք է Բարձրագոյն թուլտուութիւն: Այս ամենի պատճառով ես հարց չարուցի զեմստալին հաստատութիւնները մեզնում ներմուծելու համար: Ազնականաց ժողովը չանձնեց ինձ զեկուցումներ պատրաստել, որ ես $1\frac{1}{2}$ տարի առաջ ներկայացրի նահանգի ազնականաց պ. պարագլխին: Բայց ալդ իմ թղթերը միայն այս օրերս քննեցին, երբ Թիֆլիս գումարեցին ազնականաց դաւառական պարագլուխները: Նոքա իմ պրոէկտը ըստ էութեան չքննեցին և վճե-

¹⁾ Նկատենք, որ վաւառական (զեմստալին) հարկերը վերցւում են նաև գիւղացիներից, և ալդ գումարների վրալ մեզնում կարգադրութիւն անողը միայն վարչական իշխանութիւնն է, ալնպէս որ մեք համաձայն չենք գիւղական դասակարգը, իւր տւած հարկերի վերաբերմամբ, ինքնավար համարելու:

ցին ալն լանձնեւ դաւառական լանձնաժողովներին: Իսկ փոքրամասնութիւնը զեմտաւային հաստատութիւնները մտցնելուն հակառակ կարծիք լայունեց: Այդ փոքրամասնութիւնը ստում է թէ մեր երկիրը բաւականաչափ պատրաստած է ալդ ուեֆորմի համար: Բայց իրաւացի է ալդ արդեօք: 23 տարի առաջ (1864 թ.), երբ ռուսաց նահանգներում առաջին անգամն էին մտցնում զեմտաւային հաստատութիւնները, ալնաեղ կրթութիւնը ամբողջի մէջ աւելի էր զարգացած, քան ալժմ մեղնում: Եւ սակայն, ոչ միայն աղնակաճները, ալ և անգրաճանաչ գիւղացիք, որոնք առիթ են ունեցել զեմտաւային վարչութիւններում անդամ լինել, օգուտով են ծառայել հասարակաց գործին: Ալդ նրանից է, որ զեմտաւային տնտեսութիւնով զբաղելը չի պահանջում մասնագիտական ուսում կամ լալն ընդհանուր կրթութիւն. զեմտաւային վարչութեան անդամը բաւական է որ որոշ գործնական տեղեկութիւններ ունենալ, տեղական կեանքը ճանաչի, ունենալ առողջ դատողութիւն և ցանկութիւն շիտակօրէն ծառայելու ընդհանուր գործին: Մթթէ մեր մէջ ալլալիսիք չեն դտնել: Գանգատում են ամբողջի կրթութեան ստորութեան մասին. բայց կրթութիւն տարածելու համար հէնց հարկաւոր են զեմտաւային հաստատութիւններ: Հէնց նոքա են որ հոգս են տանում դպրոցների շատանալու մասին: Մեզ ասում են թէ տնտեսապէս մեք անկարող ենք և մեղնում կարծիք է տարածւած թէ զեմտաւային հաստատութիւնների ժամանակ հարկերը պիտի ծանրանան: Բայց մոռանում են, որ զեմտաւային համար պարտաւորիչ ծախքերը, ինչպէս ալժմ էլ լինում են գաւառի հաշիւ, ալնալէս էլ ապագայում նոքա լինելու են, անկախ նորանից թէ զեմտաւային հաստատութիւններ կ'ունենանք թէ ոչ: Իսկ ինչ վերաբերում է ոչ-պարտաւորիչ ծախքերին, մեք սոցա կ'աւելցնենք մեր կամքով, որքան որ նոքա անհրաժեշտ կը լինեն մեր պիտոլքների համար: Յաջողակ կերպով մտցրած հարկերը ոչ միայն չեն քանդում բնակիչներին, ալ և բարձրացնում են նոցա տնտեսական վիճակը: Եթէ մեր զեմտաւային հաստատութիւնները գնալու լինեն ռուսաց նահանգների զեմտածների ուղիով, եթէ բարւոքեն և բազմանան ճանապարհները, ապա մատչելի կը լինի գիւղական արդիւնաբերութեան վաճառումը քաղաքներում. եթէ բժշկական օգնութիւնը կազմակերպւի գիւղերում, ապա կալւածատէրերը իրենց գիւղերից չեն փախչիլ. եթէ զըպրոցները կ'աւելանան, ապա բնակիչներին հարստահարելը աւելի դժւար կը լինի, և ալլն, և ալլն: Ալդ ամենին չի կարելի հասնել առանց հարկերի: Թէ որքան զեմտաւային հաստատութիւնները տնտես են ծախքերի մէջ—ալդ լուտաբանում է Գ. Գոլովայէւի գիրքը „Десять лѣтъ реформъ“ (էջ 192): Պարտաւորիչ ծախքերը զեմտաւային հաստատութիւնները արդացել են մի քանի տասնեակ հազար ռուբլով կրճատել! Ալդ հաստատութիւնները մեր մէջ մտցնելով՝ երբեմն կարող են ոչ մի-

աչն ծախքերը կրճատել, ալլ և ևկամոտները աւելանալ: Գաւառական տնտեսութիւնը, կառավարութեան ձեռքում, ոչ մի կոպէկ չի ստացել պետական և արքայական (УДѢЛЪН.) հողերից. մինչդեռ, օրէնքով, նոքա ևս ենթարկում են կալաւածական հարկի լօգուտ զեմստօի, որպէս և մասնաւորների հողերը: Միայն ալժմ են չիչեալ կալաւածները հաշւի առնւած գաւառական ելումուտքի համար, բայց շատ աւելի պակաս հարկի են ենթարկւած, քան ազնւականների հողերը, թէև պետական և արքայական հողերը Թիֆլիսի Նահանգում շատ աւելի կան, քան ազնւականների հողեր, և օրէնքի հիման վրա նոքա բոլորը պէտք է հաւաքար հարկի ենթարկւեն: Ռուսաց նահանգներից մի քանիսը վճարում են զեմստօի օգտին ամեն ղեսեատին հողից 8 կոպէկ, իսկ մեզ համար միջին հաշուով հարկ առաջադրւած է 7 կոպէկ, աւելացրէք դրա վրա նաև 1 կոպէկ դպրոցական հարկը, որ մենք առաջարկում ենք—և ահա ստացում է աչնքան, ինչքան բաւարար է համարում զեմստաւին մի քանի Նահանգներում: Բայց զանազանութիւնը ալժման կառավարչական-ոստիկանական վարչութեան և զեմստաւին հաստատութիւնների մէջ չի կապնում հարկերի սխտեմի և քանակի մէջ: Զանազանութիւնը նրանումն է, որ զեմստաւին (գաւառական) հարկերի, նոցա բաշխման և ծախսելու վրա կարգադրութիւն անողները ալժմ կառավարչական-ոստիկանական հաստատութիւններն են, իսկ զեմստաւին հաստատութիւնների ժամանակ զեմստաւին տնտեսութիւնը կ'անցնի տեղական հասարակութեան ձեռքը: Մենք, ճարտներս, ինքներս մեր փողերի կարգադրողը կը լինենք: Մենք աւելի լաւ դիտենք մեր պէտքերը և աւելի լաւ բաւարարութիւն կը տանք նոյա: Ահա զեմստաւին ինքնավարութեան գաղափարը, որ մեզ չնորոմ է օրէնքը, և հասարակութիւնը չի կարող ալլ հուզենալ, եթէ միայն նա իւր շահերը հասկանում է: (Մտախաբութիւններ):

Իշխ. Գ. Ի. Օրբելեանի.—Զեմստաւին ինքնավարութեան գաղափարը լաւ է, բայց չ'րապուրւենք էժանադին լիբերալիզմով և խոստովանենք, որ մենք ալլպիսի ինքնավարութեան համար պատրաստւած չենք: Զեմստաւին հաստատութիւններ պահելը թանկ է նստում: Ամենաարդիւնատէտը ոչ-պարտադիր ծախքերն են—դպրոցի, բժշկութեան, ճանապարհների համար, բայց մենք ալլ ամենի համար միջոցներ չենք ունենալու: Հարկերի ծանրութիւնը ընկնում է հողի վրա, և ալլ մանաւանդ զգալի է լինելու, որ մեզնում չկան գործարաններ, որոնք ալլ նահանգներից նշանաւոր ևկամուտ են տալիս: Մեզ ասում են թէ մեզնից է կախւած ալս կամ աչն ծախքը ընդունել, բայց ալլ ալլպէս չէ: Ժողովը մի ծախք կ'ընդունի, հարկ կը դնի—և ալլ կը լինի պարտաւորիչ ամեն մէկիս համար, թէև մենք կամենալու չլինենք թէ ալլ ծախքը և թէ ալլ հարկը: Աչնպէս որ մենք ծախքերը կը րաչենք, բայց օգտուելու

ենք մեր իրաւունքներից? Օրինակ, մենք չենք կարող ունենալ աջնալիս՝ դպրոցներ, որ մենք կամենում ենք: Մեր նախանգը տարբեր ցեղերից է. չալանի չէ թէ որ լեզուով պիտի կատարւի գործերի քննութիւնը զեմտաւային ժողովներում. մեր շահերը շարունակ իրար են զիպչելու:

Իշխ. Գ. Մ. Թուումնով հակաճառում է ասելով թէ զեմտաւային հաստատութիւնները միանգամից չեն բուսնում, և նոցա պահպանման ծախքը աւելանում է նոցա գործունէութեան ընդարձակելովը: Բիւջէն եթէ մեծ է — պահպանման ծախքը ծանր չէ: Գործարանները ռուս նախանգներում հարկ են վճարում միայն իբր շինութիւններ և աշխատանքի մեծ եկամուտ չեն տալիս զեմտաւային, ինչպէս կարծում է իշխ. Օրբելեանի: Եթէ ալժմ հողաւային հարկը ծանր է դառնում, ալդ չի թեթեւանալու եթէ մենք հրաժարենք զեմտաւային հաստատութիւններից: Հողաւային հարկը ալժմ էլ աւելանում է, համեմատ մեր պիտոյքների: Իսկ է, դպրոցական գործում մեր իրաւունքները սահմանափակւելու են օրէնքով, բայց օրէնքով թողատրտող դպրոցների տիպարներ ընտրելը մեզնից կը լինի կախած: Մեր կարիքների համաձայն էլ մենք կը հիմենք գիւղատնտեսական կամ ալլ դպրոցներ, ինչ վերաբերում է մեր նախանգի ցեղերին՝ սոքա աշխատանք էլ զանազան չեն, ինչպէս կարծում են: Նախանգում ձխող մեծամասնութիւնը — վրացիք են. եթէ իրաւասունները ամենքն էլ ռուսերէն չգիտենան, օրէնքը չի արդելում տեղական լեզուն գործ ածել: Այդպէս անում է նաև մեր երկրի մի քանի քաղաքների խորհրդարաններում ¹⁾: Թուրքերին վիճաբանութիւնները թարգմանում են իրենց լեզուով. իսկ նախանգական զեմտաւային ժողովում անդամներ լինելու են շատ թէ քիչ ինտելիգէնտ, ռուսերէն հասկացող և ալդ լեզուով խօսելու ընդունակ մարդիկ: Բացի ալդ, ես լսել եմ ակնարկներ, թէ մեզ ընծալելիք ինքնավարութիւնից կարող են օգտուել մարդիկ, որոնք ոչինչ ընդհանուր բան չունին ինքնավարութեան հետ ²⁾: Այդպիսի երկիւղ կրելով մենք խօ պիտի հրաժարւէինք մեր կալւածներից: Չէ որ նոցանից էլ կարող են օգտուել ուրիշները, մեզ համար օտար մարդիկ: Միթէ ալդ ենթադրութիւնը մեզ պիտի հարկադրի մեր բոլոր բարիքներից հրաժարուել: Իսկ զեմտաւային ինքնավարութիւնը նոյնքան թանկագին մի բարիք է, որը ոչոքին չպիտի զիջել — ոչ հարստահարիչներին և ոչ կանցեկարիստներին, (Մափաճարութիւններ):

Իշխ. Գ. Իլ Օրբելեանի: — Ալդ պատճառաբանութիւնների հետ ես ոչ

¹⁾ Ալժմ, երբ արդէն մեր երկրի բոլոր քաղաքներում ինքնավարութիւն կալ, տեղական լեզուների գործածութիւնը խորհրդարաններում երկի միայն մի քանի տեղ չէ, ալլ շատ տեղերում:

²⁾ Ակնարկ հալ կապիտալիստների վրա, որոնց ձեռքը կարող են ընկնել վրացի աղնականների հողերը:

մի կերպ համաձայնել չեմ կարող: Ֆակտերը հակառակն են ցոյց տալիս. հէնց միայն չիչեցէք մեր քաղաքային ինքնավարութիւնը: ¹⁾

Իշխ. Գ. Զ. Մելիքով:—Չեմստուալին հաստատութիւնների խնդիրը միայն ազնականաց խնդիր չէ, այլ ընդհանուր, ամբողջ հասարակութեան: Դս համաձայն եմ դեպուտատների ժողովի առաջարկին, որ խնդիրը լանձնել մասնաժողովին, բայց ոչ գաւառական, այլ նահանգական մասնաժողովին:

Իշխ. Իլիա Գ. ճառատածէ ²⁾: Մեր քննութեանը առաջարկած խնդիրը աչնքան էլ բարդ չէ: Այդ կարելի է վճռել նաև հէնց այս ժողովում: Մեզ առաջարկում են մեր փողերի տէրը դառնալ: Մենք հէնց հիմա էլ վճարում ենք նահանգական զեմստալին գանձարանին տարեկան 600.000 ռուբլի: Ինչու մենք ինքներս չստանանք այդ գումարը որ աչն գործադրենք, ինչպէս մենք կը կամենայինք: Ո՞վ կարող է սորա դէմ խօսք ասել (Մասնաժողովներ):

Նախագահ Իշխ. Կ. Ի. Բագրատիոն-Մուխրանսկիյ:—Ես կարծում եմ որ այս խնդիրը պիտի քննել մասնաժողովում և ժամանակ որոշել նրբիայ տարւայ հոկտեմբերը: Ապա արտակարգ ժողով կը գումարւի, որը և կը վճռի խնդիրը:

Այդ մասնաժողովի համար ընտրւեցին. Թիֆլիսի գաւառից Իշխ. Նիկ. Ե. Արդութեան-Նրկաչնաբազով և Ա. Ի. Արջեանիձէ. Գուշեթի գաւառից՝ Ա. Ի. Կոբիեւ և Զ. Զ. Գեղեւանով. Թելաւի գաւառից՝ Իշխ. Իլ. Գ. Ճաւճաւաձէ և Իշխ. Ա. Զ. Չելոկաեւ. Բորչալուի գաւառից՝ Իշխ. Գ. Զ. Մելիքով և Իշխ. Գ. Ի. Օրբեկեանի. Գորւայ գաւառից՝ Խ. Ի. Մամաչեւ և Գ. Գ. Ժուրուլի. Սղնախի գաւառից՝ Իշխ. Ն. Գ. և Ի. Ռ. Անդրոնիկովներ:

Վրացի թերթերից ինչ վերաբերում է Իւերիային, նորա կարծիքը խնդրի մասին ծանօթ է նորա խմբագիր Իշխ. Ճաւճաւաձէի խօսքերից, որ մենք վերը առաջ բերինք:

Ուշադրութեան արժանի է վրացի լաւտնի հրապարակախօս պ. Նիկոլաձէի կարծիքը (Մոսմբէ ամսագրի չունիսի Ձեռնում), որի էական մասը ահա.

«1894 թ. Թիֆլիսի նահանգի ազնականաց ժողովում, սլարագլուներ ընտրելուց առաջ, մեծ կարնորութիւն ունեցող մի խնդիր արծարծւեց: Իշխ. Գ. Մ. Թումանով աչն միտքը լաւտնեց թէ ժամանակ է որ խնդրել

¹⁾ Ակնարկ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան մէջ հայերի գերիշխող թւերի վրայ:

²⁾ Վրաց Իւերիա լրագրի խմբագիրը:

մեղքում գաւառական (գեմատաւային) հաստատութիւններ մտցնելու մասին: Ժողովը ալդ ժամանակ սէր չունէր ալդ գործով զբաղելու: Ժողովը հասկացաւ, որ ալդ առաջարկը ոչ ոքին ոչ կ'աւելցնի և ոչ էլ մէկից կը խլի սպիտակ քւէներ, ալ միայն կ'երկարեցնէր նիստերը, և ձևացաւ կարծիս երբէք չի էլ լսել թէ ալդ ինչ հաստատութիւն է՝ գեմատա՛ւ: Միաձայն խնդրեցին իշխ. Թումանովից ապագայ ժողովի համար մանրամասն զեկուցում կազմել գեմատաւային հիմնարկութիւնների էութեան և օգտակարութեան մասին և ալին: Այսպիսով մի քանի բոլոր անգամ մեր ազնականներէից ուշադրութիւն չխլեց աջնպիսի մի գործ, որը մ'ը համար պիտի համարւի ամենաանհրաժեշտ և պողարեր:

«Առաջին անգամը չէ որ վրաց ազնականաց ժողովում ալդպիսի առաջարկ է անում: 25 տարի սրանից առաջ (1871 ին), երբ Թիֆլիս գումարեց մեր (վրացոց) հասարակութեան ծաղիկը, մեզ մօտ հիւր եկած կախար Ալէքսանդր II-ին դիմաւորելու համար, աչն ժամանակաւ մամուլն ու երիտասարդութիւնը զարթեցրին ալդ խնդիրը, որպէս ամենաանհրաժեշտն ու կարևորը մեր ազգաբնակչութեան համար: Բայց բոլոր ջանքերը աչն ժամանակ զուր անցան: Աչն ժամանակաւ հասարակութեան ղեկավարները վճռեցին, թէ գաւառական ինքնավարութիւնը (գեմատաւ) կը ծանրաբեռնի հողը: Ալդ նկատողութիւնը շատ զիպաւ ազնականներին, որոնք առանց էն էլ վշտացած էին գիւղացիների ազատութիւնով: «Մի ալդ էր պակաս!»—բացականչեցին գեմատաւի հակառակորդները: Իզուր երիտասարդութիւնը համոզում էր, որ ալդպիսի վերաբերմունքը ղէպի գաւառական ինքնավարութիւնը չի փրկիլ մեր հողը հարկատուութիւնից:

«Հողալին հարկը, որպէս ցայտնի է, խոլո չտաւ ազնականներից. մենք չունինք գաւառական ինքնավարութեան հաստատութիւններ. բայց արդէն ազնականների հողը հարկատու է: Հարկը մեղնից առնւում է, բայց նորա վրա կարգադրութիւն անելը տրւած է ոչ թէ մեզ, ալ ոստիկանութեան:

«Յետամնաց, բոլորովին տգէտ և աղքատ երկիրներում ժողովուրդը և կառավարիչները բաւականաճում են միայն ոստիկանութիւնով: Աչնտեղ կեանքը աչնքան անբարդ է և անշարժ, որ ոստիկանութիւնը կարող է կառավարել ամենը և ամեն բանի հասնում է: Աչնտեղ ոստիկանութեանը հաւատացած են թէ նորա ուղղակի գործը և թէ ամեն ուրիշ բան. նա դատաւոր էլ է, ճանապարհներ շինող էլ է, և առևտրի հովանաւոր է և առողջապահութեան պահապան և ալին:

«Բայց որքան ժողովուրդը հարստանում է և լուսաւորւում, նորա կեանքն էլ աւելի բարդ է դառնում, և դորա հետ՝ ձեռք են բերում աւելի ու աւելի մեծ թւով հաստատութիւններ՝ իւր բազմազան կարիքները լրացնելու համար: Ալդպիսի երկիրներում ոստիկանութիւնը հաստատութիւնների երկար շարքի բազմաթիւ օղակներից մէկն է միայն:

«Բարեկարգ երկիրներում բարձրագույն իշխանութիւնը հաւատում է նոր հաստատութիւնների կառավարութիւնը հասարակութեան իրեն և նորա ընտրածներին, Դորան համեմատ 1864 թ. նաև Ռուսիայում ոստիկանութիւնից խլեցին մի կողմից դատաւորական պարտականութիւնները, և միւս կողմից—տեղական հասարակութեան անսեռական կարիքներին բաւարարութիւն տալու հոգսը: Այդ գործերը լանձնեցին ընտրած անձներին՝ ազնականութիւնից, հոգևորականութիւնից և գիւղական դասակարգից:

«Կասկած չկայ, աչն կանոնադրութիւնը, որ Ռուսիայում հրատարակեց 1864 թ-ին, գաւառական ինքնավարութեան վերաբերեալ, պակասութիւններից զերծ չէ: Եթէ մեզնից ամեն մէկին լանձնած լինէր գործը դնել աչնպէս, ինչպէս մենք կը կամեի՝ ալինք, գուցէ որ և է մէկը մի աւելի լաւը հնարէր: Բայց պետական և հասարակական գործը աչնպէս չէ զնահատուած: Քննադատութիւնը աչն ժամանակ միաչն պետքական է, երբ քո իշխանութեամբ կարող ես որ և է բան ուղղել կամ որ և է բանից խուստալ: Հակառակ դէպքում աչնպիսի վերաբերմունքը հաւասար է բնութեան օրէնքների քննադատութեան:

«Զեմստաւային հիմնարկութիւնների համար նոր օրէնսդրութիւնը, համեմատած 1864 թ-ի օրէնսդրութեան հետ՝ նշանաւոր չափով սղմում է զեմստուօյի գործունէութիւնը: Բայց նաև աչդ նոր օրէնսդրութիւնն էլ մեծագին օգուտ կը բերի: Երեխաւորութիւն կը լինէր՝ եթէ մէկը սկսէր մի առ մի թւել նորա բոլոր պակասութիւնները և կամ համեմատէր լաւագույն օրինակների հետ: Նորա հետ մեզնում միաչն մի բան կարելի էր համեմատութեան դնել. աչդ—մեր ներկաչ կարգ ու կանոնն է: Ահա հէնց համեմատութեամբ ներկաչ կարգի հետ, մեր ներկաչ դրութեան հետ՝ նոր զեմստաւային օրէնսդրութիւնը մեծագին է և անկասկածելի մի քաչ է դէպի առաջ: Աչդ պատճառով չի կարելի չհամաձայնել իշխ. Թումանովի հետ, թէ զեմստաւային օրէնսդրութիւնը, ինչ պակասութիւններ և նա ունենաչ, մեզ համար էլի օգտակար կը լինէր:

«Շատ էլ որ ուզենաչ՝ ոստիկանութիւնը չի կարող զեմստաւային (գաւառական) գործը կատարել, որովհետև դորա համար նա ոչ աչատ ժամանակ ունի, ոչ անհրաժեշտ գիտութիւններն ունի և ոչ միջոցները: Եթէ գաւառական գործերը տեղական ազգաբնակչութեան ձեռքում լինէր, վերջինս թէ աչատ ժամանակ կ'ունենար, թէ տեղական կարծիքները կը գիտենար և թէ մանաւանդ միջոցների պակասութիւն չէր զգալ:

«Մեզնում դեռ չկան զեմստաւային հաստատութիւններ, բայց հասարակութիւնը արդէն իւր կամքով իրեն հարկատու է չինել. մի տեղ՝ դըպրոցներ բանալու համար, աչ տեղ՝ ճանապարհներ չինելու, երրորդում՝ Զուր անցկացնելու համար, և աչն և աչն: Երբ որ մեր գաւառները ինքնավարութիւն կ'ստանան, աչն ժամանակ գուցէ ընդհանուր կարիքների մա-

սին ունենալիք հոգսը կ'օգնի որ եկամուտների նոր աղբիւրներ բացւեն: Այլ կարող է հաշուել թէ որքան նոր աղբիւրներ է բացել ռուս զեմստօն, առանց ծանրաբեռնելու ժողովուրդը: Որքան անգամ ցաջողութիւն են գտել զեմստօնների խնդիրքները կառավարութեան մօտ՝ աշխարհի արտօնութիւնների, աշխարհի աջակցութեան, աշխարհի խանգարիչ կանոնների վերացման համար, որի մասին ոստիկանական պաշտօնեան, երևի, երբեք չէր էլ մտածիլ:

Յետոյ պ. Նիկողաձէն մանրամասնաբար թուում է այն ծառայութիւնները, իրօք շատ, որոնք մատուցել են տեղական ազդաբնակութեանը ներքին նահանգներում մոցրած զեմստային հիմնարկութիւնները:

Վերջը նա նկատում է, որ այդ հիմնարկութիւնները զեմաւելիէլ մեծ ծառայութիւններ կարող են անել մեր երկրին: Ռուսիայի հարթավայրերում ճանապարհները չունին այն նշանակութիւնը, ինչպէս Կովկասում: Լեռների և ջրերի պատճառով մեր անձանապարհ կացութիւնը այն հետեանքն ունի, որ Ռուսիայի այլ տեղերից բերած հացը մեզնում աւելի էժան է, քան մեր սեփականը: Շատ անգամ երկաթուղու մօտ ընկած գետինը բոլորովին անմշակ է և մոռացւած միայն նրա համար, որ որեւէ կամուրջ չկայ և մարդ չկայ այդ մասին հոգացող: Եթէ մեզնում լինէր զեմստօն (զաւառական ինքնավարութիւն), այդ դատարկ հողերը նոյնպէս կը կենդանանային, ինչպէս նոքա, որոնք երկաթուղու գծի վրայ են: Զեմստօն կարող էր ճանապարհներ շինել մասամբ իւր միջոցներով, մասամբ պետական զանձարանի, երկաթուղու կամ մասնաւոր ընկերութիւնների միջոցներով: Աջապիսի դէպքերում ոչ այնքան հարկաւոր է փող, որքան ձեռներէցութիւն, հոգացողութիւն, զեկավարութիւն և եռանդ: Ռուսաց զեմստօն այդ ապացուցել է արդէն գործով:

Կալի շաբաթաթերթը (խմբագիր պ. Գէօրգի Մերեթելի) մանրամասն ծանօթացնելով ընթերցողներին զաւառական ինքնավարութեան հիմունքների հետ, իւր № 24-ում անցնում է այդ ինքնավարութիւնը մեր մէջ մոցնելու խնդրին: Զեմստօն մեր երկիրը մոցնելուն, ասում է նա, հալաւակում են մեզնում միայն

առևտինացի կողմնակիցները: Որպէս միշտ այդ դէպքերում պատահում է, ասում է նա, նոր և առողջ միտքը իւր ճանապարհին հանդիպում է խոչնդոտներին—Կալի'ն բողոքելով բողոքում է թէ իբր մեր երկրի ժողովուրդը պատրաստ չէ ինքնավարութեան համար:

Ապա Կալի'ն պատասխանում է զեմտւոյի այն հակառակորդներին, որոնք պնդում են, թէ ինքնավարութիւնից կ'օգտւեն մեր հասարակութեան ոչ ցանկալի տարրերը: (Այդ նկատողութիւնը հայերի հասցէին էր արւած, որոնք իրենց ձեռքն են գցել Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը): Կալի'ն պատասխանում է:

«Յիշեցէք զարեւից ի վեր մեր (վրացոյց) բնածին հերոսութիւնը, և դուք կը կարողանաք պաշտպանել ձեր 'իրաւունքները, և ոչ թէ փախուստ տւէք՝ հէնց որ կը փորձեն ձեր բարիքներին ձեռք մեկնել»:

Դորան մենք կը պատասխանենք. քաջ եղէք, վրացիք, և ամուր պահպանեցէք այն, ինչ որ իրօք ձերն է, և հայը ձեզ միայն կը ծափահարի. բայց դորա համար հարկ չկայ դիմելու բնածին հերոսութեան՝ որը զեմտւոյից շատ աւելի լայն ասպարէզ է պահանջում. բաւական է միայն համեստ աշխատասիրութիւն, և... քիչ գոռոզութիւն...

Ա. Ա.

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

ՅՈՒՆԻՍԻ Յ.Ի ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ

Սա մի շատ տխուր իրողութիւն է, որ մեզնում օրաթերթերը իրենց թույլ են տալիս, որ և է անձնական նպատակով ինտրիգներ սարքել և ինտրիգանքներին հովանաւորել, խրախուսել և մարդկանց դէպի ինտրիգներ զրդել: Ահաւոր, ուր թերթի խմբագրութիւնը ինքը տեղեակ է դործին, նա թույլ է տալիս որ և է մէկին իւր թերթում տպել և պնդել մի բան, որի անհիմն լինելը խմբագրութեանը յայտնի է. և այդ խմբագրութիւնը տպում է անհիմն գրածքը—առանց որ և է ծանօթութեան իւր կողմից, ծեւանալով հասարակութեան առաջ անմեղ, իբր թէ իրեն ոչինչ չալտնի չէ և իբր թէ, յանուն աւգարութեան, թույլ է տալիս իւր թերթում թեր և դէմ խօսել—ճշմարտութիւնը պարզելու համար! Սէ, ի հարկէ, շատ անգամ ճշմարտութիւնը չի պարզում աչն հասարակ պատճառով, որ ոչ պնդողը և ոչ հերքողը եղելութիւնը չեն հիմնում—և մեծ մասամբ չի էլ կարելի հիմնել—գրաւոր դոկումէնտների վրայ. իսկ եթէ խօսքը հիմնում է վկաների վրայ—ապա այդ վկաները զլանում են հրապարակ դալ և լրագրի մէջ իրենց վկայութիւնը տպել. իսկ դործին տեղեակ խմբագրութիւնը—չեղօք ծեւանալով—միայն տպում է ուրիշների գրածները: Հարկւրաւոր օրինակներ է տւել մեր մամուլը, երբ թեր և դէմ վիճաբանական գրածքներ տպելուց չետո՛ց՝ աչնուամենայնիւ վիճելի խնդիրը չի պարզել: Սէ շատ անգամ—ուղղակի խմբագրութիւնների ինտրիգասիրութեան պատճառով:

Յունիսի Յ-ին պ. Վրոյրը մի ներկայացում տւաւ: Մեծ աղմուկ—լրագրութեան մէջ. այդ առթիւ Մշակ'ում լուս տեսաւ մի նկատողութիւն լուրերի մէջ, բայց երգիչ պ. Ամիրջանեանցի բերանից. երկու գրութիւն՝ նոյն Ամիրջանի ստորագրութեամբ. երկու գրութիւն՝ պ. Վրոյրի ստորագրութեամբ. Արձագանք'ում մի ընդարձակ մեղադրական պ. Վրոյրի դէմ՝ զերասան Արաքսեանի ստորագրութեամբ և ապա մի պատասխան՝ Վրոյր ստորագրութեամբ, պատասխան, որ տպւած էր զարհուրելի կրճատումներով, ալ էլ՝ զրաքննական կոմիտէի որոշմամբ, հետևապէս հակառակ ցանկութեան Արձագանք'ի խմբագրութեան: Այսքան գրութիւններ՝ թեր և

դէմ՝ սկսեց Մշակի հաղորդած մի ինտրիգային լուրից, որ հետեւեալն է.

«Երգիչ Բեզլար Ամիրջանեան, որ այժմ հիւր է մեր քաղաքում ¹⁾, խնդրում է մեզ չափանել, թէ նա չէ մասնակցում աչն ներկայացման, որ տրուում է այս երեկոյ վրաց ազնականութեան թատրոնում, և թէ աֆիշաներում և թէ չափաբարութիւններն մէջ նրա մասնակցութեան մասին հրատարակած լուրը միանգամայն սխալ է» ²⁾.

Սա մի վրաւորական ձև է պ. Վրուրի հասցէին ուղղած, երբ թէ ուրեմն պ. Վրուրը, առանց որ եւ է հիմք ունենալու, յայտարարել է լրագիրներում թէ երգիչ պ. Ամիրջան յունիսի 3-ի ներկայացմանը երգելու է «Աջ վարդ» և «Լուեց ամպերը»։ Ինչ վիրաւորանք մի դերասանի համար, որի կարեորութիւնը մեր կեանքի համար տասը և զուցէ հարիւր անգամ աւելի մեծ է, քան թէ պ. Ամիրջանի կարեորութիւնը, որ ոչ միայն իւր քաղղը հալութիւնից հեռու բռնելի վրայ է որոնել և գտել, այլ և որին բաւական է մուտքի կողմից մի հոտ անաջող կոնցերտ, որպէս զի հրապարակով ամենքին չափանել, թէ նա այլ ևս երգէր չի երգելու Թիֆլիսում, իւր հայրենի քաղաքում, հաշ կեանքի կենտրոնում!

Այսպիսի վիրաւորական ձև բանեցնում է մի աշխատատու հաշ դերասանի հասցէին աչն խմբագրութեան կողմից, որը զիտէր թէ աչն օրը, երբ նրան չափաբարութիւն տւին, պ. Ամիրջանեանը հիմք տւած է եղել իւր մասնակցութեան մասին չափաբարելու Մենք աւելին կ'ասենք. նոյն իսկ պ. Ամիրջանից իմանալով, որ նա դէթ պայմանական խօսք տւած է եղել պ. Վրուրի ներկայացմանը մասնակցելու, Մշակի խմբագրութեան մէջ պ. Ամիրջանեանին ասել են՝—խորհուրդ չենք տալիս աչդ ներկայացմանը մասնակցելու. իսկ զորանից առաջ խմբագրութիւնը նոյն իսկ պ. Վրուրից իմացած էր որ ներկայացումը տրուում է լօզուտ մի գրադէտի, որը վաղուց աշխատակից չէ Մշակին...

Նզրակացութիւն?...

Բայց ահա ինտրիգան անցնում է Արձագանքի էջերի վրայ.

Պր. Վրուրի ներկայացմանը մասնակցելու խօսք տւած է եղել Արձագանքի աշխատակից, թատրոնի սցենարիստ պ. Ադ. Սարգալեան-Արեշատեանը, Մոդա է քա-ի չարդարողը։ Պր. Սարգալեան երկու անգամ մասնակցում է «Բաղդասար աղբար» պիեսի կրկնութիւններին, փաստաբանի դերում։ Այդ իրողութիւնը զիտէր և դերասան պ. Արաքսեան, և աչն աստիճան լաւ դիտէր, որ մինչև անգամ նա եղել է յորդորոններից մէկը, որ պ. Սարգալեան ետ կանգնի իւր խօսքից ու չխաղալ պ. Վրուրի հետ, որը աչն քան անողորմ կերպով բողբել էր «Մոդա է քա»-ի ներկայացման դմ. Աֆիշը, սակաւն, ցրած էր արդէն։ Եւ չնայած իւր տւած խօսքին, չնա-

¹⁾ Ինչ պատիւ Թիֆլիս քաղաքին! ²⁾ Ստորագծումը մերն է։

լած որ երկու-երեք անգամ կրկնութիւններին մասնակցել էր, պ. Սարգս-
րեան ետ է կանգնում և չափում որ չի խաղալու: Եւ ալդ ասում է ներ-
կայացումից միայն 47 ժամ առաջ! Պաբգ է, որ պ. Սարգսրեանի, Արաք-
սեանի և ընկերութեան հաշիւներով—ներկայացումը չպիտի կարողանա-
րալ ևս տրել: Եւ սխալեցին! ներկայացումը տրեց, բայց նոր աֆիշաներ
պատրաստել ու ցրելու համար ժամանակ չեղաւ, ապա թէ ոչ՝ պ. Սար-
գսրեանի անունը չէր «փալլիլ» ալդ աֆիշաների վրա, և փոխանակ
պ. Ամիրջանեանի—աֆիշայում կը չիշէր երաժիշտ պ. Ն. Տիգրանեանցի
անունը, որից պ. Վրոյր բնաւ «օղուտ» չքաղեց, որովհետեւ հասարակու-
թեանը ժամանակ չկար չափարարելու ոչ լրագիրների և ոչ աֆիշաների
միջոցով: Այսպիսով Արաքսեան-Սարգսրեան ինտրիգը շատ ակներե էր:

Բայց ալդ բաւական չէր. պ. Արաքսեան, պ. Վրոյրի բաւականին
չաղող ներկայացումից լետու, ասպարէզ է գալիս Արձագանքի էջերում՝
ամենաանպատկառ լեզուով պ. Վրոյրի դէմ: Իբր թէ ինչու պ. Վրոյր ապել
էր աֆիշաներում պ. Սարգսրեանի անունը, քանի որ սա չխաղաց! Եւ
ծեւանում իբր ինքը ոչինչ չգիտէ աչն բանի մասին, թէ պ. Սարգսրեան,
ի միջի ալոց նաւ իւր՝ Արաքսեանի զրդմամբ, ներկայացումից միայն 47
ժամ առաջ ետ կանգնեց իւր խօսքից:

Թող ալդ ետ կանգնելը նոյն իսկ լուրջ հիմք ունեցած լինէր՝ ալս
րոպէին խնդիրը աչն չէ թէ ինչու նա ետ կանգնեց, ալ աչն, թէ ինչ-
պիսի ինդրիգասիրութիւն է հարկաւոր, որ գործի բոլոր հանգամանքնե-
րին տեղեակ մի գերասան ասպարէզ գալ լրագրի էջերում և նոյն աչն չա-
րաբաստիկ աֆիշան պատրաւ բռնէ ու ամենաանպատկառ լեզուով խօսել
չանդգնէ մի գործիչի հասցէին, որը, վերջ ի վերջու, մեր գերասանական
խմբերի մէջ ամենաաչքի ընկնողներիցն է, և որը նաւ թատրոնական
գրականութեան մէջ ապացուցել է իւր կիրթ հաշակը...

Բայց մեր խօսքը զլսաւորապէս լրագիրներին խմբագրութիւնների
մասին է:

Մեզ համար միանգամաչն բաւական է ալդ մի հատ իրողութիւնը
լուսաբանել, որպէս զի ցուց տանք թէ ինչ է աչն մամուլը, որը կարող
է ալդպիսի ինտրիգներ սնուցանող լինել: Այնպէս չէ. ալդ էլ մի դեր է,
որ կատարում է հալ մամուլը, որը իւր շկոլան 80-ական թւականներին է
ամրացրել:

Ա.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ՅԱԶՈՐԴ ԳՐՔՈՒՄ (№ 7—8) տեղ են գտնելու, ի միջի ալլոց, հետեւեալ զրւածքները. Մանուէլեանցի «Խորտակած կեանք» վէպի երկրորդ մասի սկիզբը. Փափաղեանի Անյաղը պատմածքի վերջը. Տուրգենևի «Անտառ եւ Դաշտավայր (Թարգմ.)». Վիքտոր Հիւգօի Դարերի լեզնդաներ-ից «Խիղճը», Թարգմ. Յ. Տէյ-Գէորգեանի. Յովհ. Խոջակէնաթեանի Գիւղական ցուեր. Միք. Յովհաննիսեանի Էյուլիցիայի դադափարը (չար.). Ֆր. Մարդանեանի Նաւթագործների XI ժողովի առիթով. Նիկ. Աղբալեանի քննադատականը «Աղէլեանի Տգիտութեան զօր» վէպի մասին, և ալլն:

ՊՐ. Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ (ուսուցիչ Մոսկւայի Լազարեան ճեմարանում) ընդարձակ լօղւածը Ռ. Պատկանեան-Գամառ-Քաթիպայի մասին վերջանում է ներկայ համարումս Սորանով երկրորդ լուրջ փորձն է անւում ուսումնասիրելու Գամառ-Քաթիպային Մուրճի մէջ. առաջին փորձը սկսել էր պ. Նզիշէ Մաղաթեան, (տես Մուրճ 1892 թ. № 10, 11, 1893 թ. № 4), որը, սակաւն, իւր դործը չկարողացաւ շարունակել, հաւանօքէն ալն ողբեկան զրութեան պատճառով, որ լետու ողբեկան հիւանդութեան զարգացաւ Բալց ալս երկու աշխատութիւնները գրւած են տարբեր պլաններով. Մաղաթեանի ծրագիրը աւելի լաւն էր. նա սկստի ընդգրկէր Գամառ-Քաթիպայի բաղմակողմանի քննադատութիւնը և գնահատութիւնը. պ. Կուսիկեանը տալիս է նորա ընդհանուր բնագիծը. մէկը լատկացրել էր բանաստեղծին «Ազգի երգիչ» տիպոսը, միւսը՝ պ. Կուսիկեանը՝ խորագրել է իւր լօղւածը «Բանաստեղծ քաղաքացի» անունով. Պատկանեանի ոտանաւորները սակաւն աւելի «ազգային» ջղին են զիպլում, քան «քաղաքացիութեան»:

Յուսալով որ մեր նշանաւոր բանաստեղծը դեռ ևս կը շարունակի լուրջ ուսումնասիրութիւնների նիւթ լինել, մենք ալժմ հարկաւոր ենք համարում պ. Կուսիկեանի լօղւածի մի տողի առթիւ և ալն էլ մի բոլորովին կողմնակի կէտի մասին մեր նկատողութիւնն ածել՝ ամեն թիւրիմացութեան դէմ առնելու համար. պ. Կուսիկեան (Մուրճ № 5, էջ 673, տող 6—7) ասում է. «Յալտնի վիպասան

Շիրվանզադէն իրաւամբ համարուում է ներկայումս ժամանակակից դրականական լեզւի ամենափալտուն ներկայացուցիչը: Ստորագծած բառերը ենթադրել են տալիս թէ խօսքը մի բանի մասին է, որը իբր թէ անվիճելի է և ընդհանրութիւնից խոստովանւած: Մենք պէտք է նկատենք սակայն, որ պ. Կուսիկեան աչն խօսքերով, որ մենք ստորագծել ենք, միմիայն ընդհանրացրել է իւր սեփական մասնաւոր կարծիքը:

ԱՊԱՌԻԻԿՆԵՐԻ. Խմբագրութիւնս հարկ է համարում լիջեցնել իւր աչն բաժանորդներին, որոնց վրայ աչ տարւալ ապաւիններ կան, որ կիսամեակը լրացած լինելով՝ փութան բաժանորդագլինը ուղարկել, եթէ կամենում են որ այսուհետև համարները իրենց կանոնաւորապէս ուղարկեն:

ԽՆԱՄՔՈՎ, ՁՆՈՒՄԻՐՈՒԹԻՒՆ, Պարտք ենք համարում նորից լիջեցնել մեզ ձեռագիրներ ուղարկողներին, որ տպւելիք նիւթերը պէտք է գրւած լինեն աչնքան որոշ, որ ամեն մի տառը հնչտուծիւմ կարդացելի պարտք ենք համարում զիտել տալ, որ չպէտք է արագագրութիւնը ի չարը գործածել և աչնպէս գրել, որ սրբագրողներն ու գրաշարները աչ ու աչն գծերի ինչ տառ լինելը նախադասութեան մտքից հանկանալու հարկի մէջ դնեն: Բազմ աչն, ինչի վրայ գրողը պիտի նախ իբրև արգելւած բանի վրայ, այդ՝ անուններ, գաւառական և օտար բառեր արագագրութեամբ գրելն է: Ոչ մի խմբագրութիւն պարտաւոր չէ և չի էլ կարող ամեն աշխարհագրական, պատմական, հեղինակների վէպերի գործող անձերի անունները գիտնալ, և ոչ էլ կարելի է պահանջել, որ խմբագրութիւնը ամեն գաւառական բառ լմանալ: Այդ զէպերում մանաւանդ նոքա, որոնց չի չաջողում արագագրութիւնը պարզորոշութեան հետ միացնել, երբէք չպիտի արագագրութեան սովորութիւնից օգտու քաղեն: Այդ գէպերում բառը և անունը պէտք է զրել շատ որոշ և նոյն իսկ նմանեցնելով տպագրական տառերին, գոնէ երբ գրութեան մէջ խօսքը, անունը առաջին անգամն են պատահում: մենք ենթադրում ենք որ ոչ ոք չի կամենալ իւր գրածը սխալ տպւած տեսնել և կամ խմբագրութեանը տառեր ջոկելով գրադեցնել, մի աշխատութիւն, որը չաճախ նոյն իսկ չաջողութեան միտքարութիւնն էլ չի տալիս:

ՆՈՐ ՕՐԷՆՔԸ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ. Ներկալ յունիսի 12-ին Բարձրագոյն հաստատութիւն գտաւ Պետական խորհրդի որոշումը հայոց եկեղ. ծխական, թմական դպրանոցների և Գէորգեան ձեմարանի մասին, որով Հայոց եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք մինչև

աչսօր կառավարում էին հաշվառակարական հոգևորականութեան ձեռքով, աչսուհետեւ պէտք է կառավարեն ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան ձեռքով, ընդհանուր հիման վրայ, վերապահելով հաշվառակարական հոգևորականութեան իրաւունք՝ հսկել աշակերտեալների կրօնական կրթութեան վրայ ալ դպրոցներում:

Հաշ կոնսիստորիաները և հոգևոր վարչութիւնները ալ դպրոցների և նոցա մէջ դասաւանդող ուսուցիչների ցուցակը կազմելու և պահելու պարտաւորութիւնից ազատ են կացուցանում:

Հաշոց հոգևոր դպրանոցների և հոգևոր ձեմարանի մասին դրութիւն ունեցող կանոնադրութիւնները պահպանում են իրենց նախկին զօրութեամբ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Գանձակի նահանգապետ նշանակւած է գեներալ-մայոր Կիրէն. ի տեղի իշխ. Նակաշիձէի, որը ալ պաշտօնը վարում էր 18 տարի շարունակ:

Բորչալուի (Գանձակի նահանգում) գաւառապետ իշխան Սումբատով արձակւած է պաշտօնից:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐԱՅ ՄԱՐՄՆԻ ԿՈՄԱՆԴԻՐ Նշանակւած է գեներալ-լէյտենանտ Էդուարդ Էդուարդովիչ Զեզեման, ի տեղի իշխան Իւան Գիւրի Ամիլախարի՛ի, իշխան Ամիլախարի (վրացի) չաւնի է մանաւանդ իւր բարոյական չափութիւններով և մեծ պարգուծիւնով:

Նոր կոմանդիր Զեզեման Կովկասեան զօրքի ամենալալտնի գեներալներից է. նա Կուրլանդացի է և ծնւած է 1836 թ.: Գեներալ-լէյտենանտ նա նշանակեց 1888 թ.. 1892-ից նա պետ էր Կովկասեան գրեհագրեան գիւղիպի: 1877—78 թ. պատերազմում նա մասնակցեց Կարսի պաշարման և ռմբակոծմանը, Զիւլինի Կիզիլ-Թափալի և Ալաջաղաղի և ալ կռիւներում. ի միջի ալլոց նա նշանակեց Էրզերումի կոմենդանտ: Գեներալ Զեզեման նաև ղեկավար է եղել մի քանի կարևոր ճանապարհների շինութեան զօրքերի ձեռքով Կարսի և Բաթումի շրջաններում, Սև-ծովեան ափի խճուղու Ռուսաց կառավարութեան կողմից նա ղեկեցատ է եղել Էրզրումում և Օլթիում՝ մի քանի սահմանալին խնդիրներ վճռելու համար:

ԷՋՄԻԱՇՆԻՑ:

ՎԷՏ. Կաթողիկոսը ալցելել էր Սեան և մտադրութիւն ունէր Տաթև ուղնորելու. բայց ուսումնարանական նոր օրէնքի մասին միջնորդական հաղորդագրութիւնը ստանալով՝ Սեանից վերադարձաւ Ս. Էջմիածին, թողնելով առ ալժմ Տաթև գնալու դիտաւորութիւնը:

Խորէն եպ. Ստեփանէ կարգւած է Ղրիմու Ս. Խաչ վանքի վանահայր:

Մաշթոց վարդապետ Փափազեան (եղբայրը վիպասան Վ. Փափազեանի) կարգւած է հովիւ Ամերիկայի Ուտտ քաղաքի հալ ժողովրդի:

Վաղինակ վարդապետ Սիսակեան կարգւած է հովիւ Ամերիկայի Պրովիդէնս քաղաքի հալ ժողովրդի:

Յովհաննէս Վարդ. Բազունի կարգւած է վանահայր Մակաւ Ս. Թաղէոս վանքի:

Նոր արեղայ Նիկողայոս Տէր-Աւետիքեան արեղալ է ձեռնադրել (Նիկողայոս արեղա) և նշանակել միաբան Տաթևի վանքի: Նորընծան Գէորգեան ձեմարանի Նախկին սաներից է, երկար ժամանակ խմբագրական աշխատակից է եղել «Աղբիւր» մանկական ամսագրի և պարապել է ուսուցչութեամբ:

ԳՊՐԱՆՈՅՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ: Վեհափառ Կաթողիկոսը հալոց թեմական դպրանոցների համար էջմիածնում մշակած ծրագիրը առաջարկել է պատշաճաւոր իշխանութեան հաստատութեան:

ՄՈՒՐԱԳ-ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԼԻՅԵՅՈՆԸ (Վենետիկի Մխիթարեանի վարժարանը) խաւիթի թաղաւորի հրովարտակով արտօնութիւն է ստացել, որով ալդ վարժարանը աւարտողները առանց քննութեան պիտի ընդունւին իտալական համալսարանների բոլոր բաժիններում, ի բաց առած իրաւագիտական, գեղեցիկ դպրութիւնների և ֆիլոսոֆիական բաժինները, ուր, ընդունւելու համար, պահանջւելու է լուսարէն և լատիներէն լեզուների համար վկայագիր: Բաղմովէպի ասելով լիցէօնը նոյնպիսի արտօնութիւն վաղուց վայելում է Ֆրանսիայում:

ՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻԻՆԸ: Որպէս չալտնի է, թիւրք կառավարութիւնը չհաստատեց Գրիգորիւս հպ. Ալէքսթեանի օրինական ընտրութիւնը և դորա հակառակ խրախուսեց, որ Յովհաննէս եպիսկ. Ղազանձեան ապօրինի կերպով դրաւ Սիսի կաթողիկոսութեան թափուր մնացած գահը: Իրադէտով 5-ից լուսիսի ալդ ապօրինութիւնը վերջապէս ճանաչւած է և հրամայւած Ղազանձեանին թողնել Աղանա և հեռանալ Բէլլութ, և Կ. Պոլսի Հալոց պատրիարքարանը պիտի ձեռնարկի Սիսի համար նոր կաթողիկոս ընտրելու գործին:

ԳՐՈՒԹԻԻՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ:

Ռեֆորմների գործադրութիւնը: Թիւրք կառավարութիւնը տպագրեց մի պաշտօնական չալտարարութիւն փոքր-Ասիայի վեց նահանգների բարենորոգումների առթիւ: Գրութիւնը կարող էր ըռնել ամսագրիւս երեք երեսը, Կատարեալ մեռելութեան հոտ է փչում ալդ ամբողջ պաշտօնականից, ուր շարունակ հանդիպում ենք ալս խօսքերին՝ (ալս ինչ բանը) քննւելու վրալ է, վաւերացւելու վրալ է, կատարւելու վրալ է: Իբր իրօք կատարւած, թիւրք կառավարութիւնը ներկայացրել է հետևեալը:

Գայմսդամներ քրիստոնեաներից (ասւած է ոչ-խլամ) նշանակւել են Բիթլիսի Նահանգի Կինճ և Մուշ, Սւազի Նահանգի Թոքատ և Գարահիսարը-Շարզի գաւառներում: Գայմսդամի օղնականներ քրիստոնեաներից նշանակւած են Շիրւան, Արարկիր, Խարբերդ, Մարգլան, Կիւրին, Կաւաշ և Շատախ գաւառակներում. քրիստոնեայ պաշտոնեաների թիւը Խարբերդի նահանգում հասած է 39 ի, Դիարբքքի նահանգում 70, Սւազի նահանգում 30, Էրզրումի նահանգում 45, Վանի նահանգում 41:

Գիւղախմբերի կազմութիւնը աւարտւած է միայն Էրզրումի նահանգում: Գիւղերի մոխտարները և ծերունիների ժողովները ընտրւած են բոլոր վեց նահանգների մէջ:

Ոստիկանութիւնը գաւառակների կենտրոններում: Ամեն մի ալիպիսի կենտրոնում մի ոստիկան պիտի գտնւի. դոցա ընտրութիւնը կատարւած է միայն Էրզրումի նահանգում, բայց աջպէս որ դոցա ամսաթուակների խնդիրը չի վճուած (որ ասել է թէ դեռ ալ ոստիկանները չեն գործում):

Նահանգներում ընդհանրապէս նշանակւած են ոստիկաններ՝ Էրզրումի նահանգում 57, Դիարբքքի նահ. 66, Խարբերդի նահ. 62, Բիթլիսի նահ. 87 և Վանաշ նահ. 82, Սըւազի նահանգում եղածների վրալ աւելցրած են 37 ոստիկան. դոքա նշանակւած են թիւրքերից և քրիստոնեաներից (չի ասւած որից որքան):

Ոստիկան զինւորներ և ոստիկան սպաներ պիտի լինին Էրզրումի նահանգում 1191, Սըւազի նահ. 1500, Վանի նահ. 1002, Բիթլիսի նահ. 1130, Խարբերդի նահ. 1282, Դիարբքքի նահ. 1329, որոնցից քրիստոնեաներ պիտի լինէին առաջնում 207, երկրորդում 255, երրորդում 347, չորրորդում 280, հինգերորդում 200, վեցերորդում 168. բայց, ասում է թիւրք պաշտօնականը, քրիստոնեաներից հարկաւոր չափով փափազողներ չեղան (թիւրք կառավարութիւնը հնար եղածին չափ երիտասարդներին կոտորել տւաւ, իսկ կենդանի մնացածների մի խոշոր մասը փախաւ օտար աշխարհներ). աջպէս որ քրիստոնեաներից ոստիկան-զինւոր գրեցին նահանգների վերեւի կարգով Էրզրումի նահ. 60, Սւազի 162, Վանում ?, Բիթլիսի 160, Խարբերդի 83, Դիարբքքի նահ. 144:

Հարկատուքներ կազմւել են Էրզրումի նահ. 88, Սըւազի 155, Վանի 68, Խարբերդի 88, Բիթլիսի 81, Դիարբքքի նահանգում 87—խլամ և ոչ-խլամ հպատակներից, ժողովրդի թւի համեմատ:

Տարապարհակը (անկարիա, կոռ ու բեղեառ, ձրի աշխատութիւն) բոլոր ալդ նահանգներում վերացւած է:

Պարբերից: Պալուի գաւառի գիւղերը (Խարբերդի նահանգ) ամենամեծ մա-

սով աւերած են. օրինակ խարբերդի մօտ մի գիւղում 155 տնից մնացել են միայն 30 ամենաողորմելի խրճիթներ: Մարդկանց մօտ մնացել են միայն մի քանի լաթի կտորներ և մի քանի կաւեաց ամաններ: Չեն կործանւած, բայց հիմնովին կողոպտւած են աչն գիւղերը, ուր հալերը թիւրքերի հետ միասին են ապրում: Խսաբէջ գիւղում, ուր բոլոր տները քանդւած են, և եկեղեցին հողի հետ հաւասարեցրած, հալերը մի քանի տներ են շինել, ուր միասին ապրում են:—Վանքերից շատ ձեռագրեր կողոպտւած և ոչնչացրած են: Պալուի աւերակ դարձրած եկեղեցու խուցերից մէկում գերմանական նպաստող ընկերութեան գործակալ Յիմմէր տեսել է մարդկանց դաճգեր և ոսկորներ, ալդտեղ մեռցրած էին 20-ի չափ կանաչք, երեխաներ և տղամարդիկ: Նոյնը ալցել է աչն ահագին գերեզմանը որ ժամանակ չէ եղել խոր փորելու, ուր 600 մարդիկ միատեղ թաղւած են. հիմա ալ գերեզմանի վրայով ճանապարհ է անցնում. անձրենները և սարերից եկած ջրերը տեղ տեղ բացել են ոսկորներ, չորի կտորներ և մազեր: Վաղաքի ամենահարուստ հալերը ալ ժմ ցնցոտիների մէջ մուրում են: Ուսումովա գիւղում 36 կանաչք և աղջիկներ 25 ոտաչափ բարձրութիւնից իրենց գցել են Նիրատ, անպատուութիւնից աղատւելու համար:

Գերմանական նպաստող ընկերութեան գործակալ դոքտ. Հերլէ վկայում է, իւր նամակով 7-ին ապրիլի (նոր տոմ.), որ թէ Պալուլում և թէ Մալաթիայում թիւրք աստիճանաւորները վերին աստիճանի բարեկամական կերպով են վարւում ընկերութեան գործակալների հետ:

ՏԱՃԿԱ.-ՀԱՅ ՏԵՂԱՑԻՆԵՐԻՆ ԵՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ:

Պարսկաստան: Էնդելիի հալերը ուղարկել են Թիֆլիս, Հալոց Բարեգ. ընկերութեան 539 ռուբլի:

Հայերին նպաստող գերմանական ընկերութիւնը, նախաձեռնութեամբ դոքտոր Լեպսիուսի, մինչև 1-ն մայիսի 1897 ժողոված էր 1.072.000 մարկ (մօտ կէս միլիոն ռուբլի): Ընդամենը ընկերութիւնը պահում է 1.250 որբ: Տաճկաստանում, Պարսկաստանում, Բուլղարիայում և Գերմանիայում: Մենք չուս ունինք որ դալ անգամ պիտի կարողանանք մանրամասն տեղեկութիւն տալ ընկերութեան գործունէութեան մասին:

Հայաստանը սիրողների միջազգային ժողովը Լոնդոնում: Մայիսի 19-ին Լոնդոնի Սէն-Մարտէնս Թովըն-հալում մի միջազգային ժողով կապացաւ, ուր պիտի պարզէր զանազան երկիրների մասնակցութիւնը հալերին օգնելու գործում: Ժողովին մասնակցում էին պատգամաւորներ Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Շվեյցար-

րիալից, Բեղլիալից և Ամերիկալից: Նախագահում էր Հերեֆորդի եպիսկոպոսը: Ներկայ էին Ֆրանսիալից հալը Շարմլտան, Կերմանիալից զոքտ, Լեպսիուս, Անգլիալից, ի միջի ալլոց, Նախկին մինիստր Զեմս Բրալս, պարլամենտի կամ անգլո-հալկական ընկերութեան անդամներ Ստիւենսոն, Զոն Կեննեւէլ, Շւանն, Մոր, Արտիւր Օ'Կոննոր, Սամուէլ Սմիթ: Հալը Շարմլտանին, զոքտ, Լեպսիուսին և պատտոր Ապպիալին մի-մի բրոնզեալ մատուցարան ընծալ տրեց, խորհրդաւոր քանդակներով: Ստիւենսոն Նոլն օրը երեկոյեան Դիւտնշիր կլուբում բանքետ տւաւ ի պատիւ օտար պատգամաւորներին:

Հայոց պատրիարքարանում Պատրիարք հօր Նախագահութեամբ կազմած է «Արարոտելոց եւ Որբոց մնայուն յանձնաժողով» (փոխանակ մինչև ալժմ գործող «Որբոց առժամանակեալ խնամակալութեան» անդամներ ընտրած են՝ Վահրամ եպ. Մանկունի, Գէորգ Ժ. վարդ. Նրէցեան, տեարք Գրիգոր Խտրեան, Միհրան Սէթեան, Սահակ Ղազարեան, Սարգիս Թաշճեան և Մանուկ Արզեան:

Վճռած է բոլոր առաջնորդանիստ տեղերում որբանոցներ հիմնել:

Թիւրքիայի նպաստը: Թիւրքիայում կառավարութեան կազմած «Պետական Նպաստամատուց լանձնաժողովը», հալոց պատրիարքարանն է ուղարկած 65.000 զրուշ հալ կարօտեալներին բաշխելու համար: Այդ առիթով է որ կատարեց վերը չիշած փոփոխութիւնը հալոց պատրիարքարանի կազմած լանձնաժողովի մէջ:

Օր. Բաք, անգլուհի, Պշլիս է եկած և մտադիր է իւր հաշուով որբանոց բանալ Կիպրոսում կամ ծովեղբեալ որ և է յաղաքում:

Նոր-Բոյազէղ եկան փախստականներ, սկսած չունիսի 17-ից) Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ և ապաստանեցին Նախկին հալոց զպրոցի շինութեան մէջ: Եկածներին թիւն է 105 հոգի, մեծ մասամբ ծերեր և երեխաներ: Տեղացիք նոցա հազուստ բաժանեցին և ուտելիքի հոգսը քաշում են:

Սալմաստի հալոց նոր առաջնորդական փոխանորդ տէր Աւետիք քահանալ Շաղոյեան, մի փոքրիկ գումար ստանալով նոր եկած Հանս Ֆիշէրից և միւստր Մ. Ն. Հօուէրից, ուղևորեց Խոլ. գումարը զաղթական-փախստականների մէջ բաշխեց և երկու օրից չետոլ վերադարձաւ:

Միստրը Հօուէր չէզացի բողոքական միսիոնէր, Պարսկաստան զնաց փախստականներին որբանոց հիմնելու համար: Հօուէրի խեամատարն է պ. Արմենակ Յոխիկեան, բաղէչցի: Հօուէր մտադիր է որբանոց պահել առաջին տարին 20—30 երեխայոց համար: հիմնելու է Նաև արհեստանոց:

Վանի մօտ, Վարազայ վանքում կազմել է մի հողաբարձութիւն, հետեւեալ անդամները՝ Նախագահ Արսէն վարդ. Մ., ատենապետ Արրահամ Աղւանեան, ատենադպիր Յ. Պուղեան, հողաբարձութիւնը վերաբացել է ժառանգաւորաց վարժարանը, ուր հաւաքել է 15 որբեր, որոնց խնամում է միաջն մարդասիրական միջոցներով, աշխատելով վնասուած վանքի հողագործութեան միջոցներով ապահովել նոցա ապրուստը և կրթութեան ծախքերը: Հողաբարձութիւնը կոչումն է անում ամենքին, որ օգնեն իրեն. նա չափարարում է, որ ամեն մի որբի համար բաւական է 3 ոսկի տարեկան ուստի, 1 ոսկի զոհասի և անկողնի պիտուքների, 1 ոսկի կրթութեան պիտուքների համար. ընդամենը ուրեմն 5 ոսկի (40 ռուբլի). հետեւապէս նա չանձն է առնում իրենց հասցրած գումարների չափով որբեր պահել, կերակրել և կրթել ամեն մէկը չանուն աջն բարեբարի, որը նշանակած գումարը կ'ուզարկի: Գործը զբաղած է Պատրիարք հօր հովանաւորութեան ներքոյ, աչնպէս որ «որդեգիր ուղող բարեբարները կարող են իրենց հաճութիւնը չափել լրագրութեան միջոցաւ կամ ուրիշ ունէ կերպերով և գումարը չանձնել Ամեն. Ս. Պատրիարք Հօր», Կ. Պոլիս: Հողաբարձութիւնը ամեն բարեբարին պարտաւորում է ուզած ժամանակ հաշիւ ներկայացնել, իսկ տարւալ վերջը, Պատրիարք հօր ուղարկելուց չետոյ, ընդհանուր հաշիւ տպագրել:

Որս յայտնի գրագէտները հրատարակեցին մի ժողովածու „Братская помощь пострадавшимъ въ Турціи Армянамъ“, որի արդիւնքի մի մասը ուղարկւեց Կ. Պոլիս՝ ռուսաց դեսպան Նելիդովին. վերջինս պատասխանեց թէ գումարը չանձնեց Հալոց Պատրիարքին՝ թաղական հողաբարձութիւնների միջոցով կարօտ հաւերին բաժանելու համար:

ՊԱՐՍԿԱՍՏՆԻՑ:

Թաւրիզի տաճկական հիւսկատոսը գնացել է Սաւմատ քաղաքը ամառը անցկացնելու: Այդ հանդամանքը տեղական հաւերին երկիւղ է ներշնչում. կասկածում են որ նա պիտի աշխատի պարսիկ և հալ ժողովուրդները իրար դէմ թշնամացնել:

Էնզելի և Ռաշտ իրար հետ միացնում են հեռախօսի թելով:

Թեհրանում, Հայկազեան երկու սեռի դպրոցների օգտին, հալ թատերասէրները չունիսի 3, 5 և 8-ին ներկայացրեցին Մուխերի «Սկապենի խարդախութիւն» պիեսը պարսկերէն լեզուով: Ներկայացումը իւր հովանաւորութեան ներքոյ էր առել արտ. գործ- մինիստր Միւշիրէզ դովլէ'ն, որը վեհ. շահի 250 թուման հււելից խրախուսած՝ մինիստրների և բարձր շրջանների շրջանում ժողովեց 2.500 թումանից

աւելի: Յունիսի 5-ի ներկայացմանը ներկայ էին միայն չիչեալ մինիստրի հրաւիրւածները: Սարքւած էր նաև բուֆետ: Ծախքը դուրս գալով մնաց 1.800 թուման: Ներկայացմանը մասնակցեցին տեսչի ամուսին տիկ. Պապեան, տեղացի օր. Բ. Գոլոֆեան, պ. Յ. Մարտիրոսեան և ուրիշներ:

Ուրմիայի ասորիների մէջ ոռոսադաւանութիւն է տարածուում. այդ նպատակով Ուրմիա է գնացել հայր Սինադակի, որը դործում է ասորի քահանայ (կաշա) Շմունի հետ. Ուրմիայի մօտ գտնւած Սփուրդան գիւղում, ուր կենում է ալսօրիների խալֆա (առաջնորդ) Մարեօնանը, որի հետ նոքա տեսակցութիւն ունեցան, մեծ չաջողութիւն են գտել, ոռոսաց ուղղափառութեան դարձնելով մինչ 1000 հոգի. արդէն ոռոս քահանաներ եկան Ուրմի նորադարձներին հովելելու համար:

Ամերիկայի բողոքականները, նիւթապէս անկարող լինելով՝ փակել են իրենց զպրօցները. Ուրմի քաղաքում և Սօուդուլադում: ՆԻԷՐՆԵՐ և ԿՏԱԿՆԵՐ:

Ալէքսանդր Զալինեանց (Գուշէթի քաղաքացի), վախճանւած չունիսի վերջերքը, կտակով կարգադրել է 1) Վլադիկաւկազում (ուր նա երկար տարիներ առևտրական դործեր ունէր) գտնւած իւր բոլոր կալքերը ծախել և փողը չանձնել արքունական բանկը չաւտե՜նական ժամանակով, իբրև անձեռնմխելի դրամադուլս, որի սոկոսով հաշ լուսաւորչական սաներ պիտի պահեն միջնակարգ ուսումնարաններում և համալսարաններում. Գուշէթում ունեցած կալւածների եկամուտով սաներ պիտի պահեն տեղի հայոց ծխական դպրոցում, իսկ եթէ ալդպիսի դպրոց չլինի ալնտեղ՝ արքունական հաժապատասխան դպրոցում: Սաները պիտի ընտրեն հանդուցեալի ազգականներից—իսկ երբ ալդպիսիք չլինեն՝ այդ Գուշէթ քաղաքի և դաւառի հաշ լուսաւորչական բնակիչների զաւակներից: (Հանգուցեալը իւր կնոջը կտակել է ցմահ ամսական 100 ո. թոշակ և բոլոր շարժական կալքը): Կտակակատարներ նշանակւած են Վլադիկաւկազում պպ. Տէր-Տէրևանց և Մամուլեանց, Գուշէթում պպ. Ալլահիբեգեան, Տէր-Յովհաննիսեան և Անդրէեւ. Ամբողջ կարողութիւնը ենթադրում է 80.000 ո.:

Հանգուցեալ իշխ. Նիկողայ Ճաւնաւածէի (վրացի) թողած կարողութիւնից իշխան Դաւիդ Մելիքով (վրացի) 1000 ոռուբլի ուղարկեց Թիֆլիսի արհեստաւորների աւագին և պիտի դործ դնել Թիֆլիսի արհեստաւորների ապագայ հիւանդանոցի համար:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Թիֆլիսի քաղաքային լրացուցիչ ընտրութիւններին, որ տեղի ունեցան

լուծիսի 1-ին, ըստ տեղեկութեան քաղաքային վարչութեան, մասնակցեցին 584 հոգի, որոնցից 30-ը երկուսական ձայնով, ուրեմն բոլոր ձայները հղել են 614. Վիշեալ 584 հոգուց՝ հայեր եղել են 404 անձ (որոնցից 24-ը երկուսական ձայնով), վրացիք 77 անձ (որոնցից 2-ը երկուսական ձայնով), ռուսներ 71 անձ. (չոցանից 3 հոգի երկուսական ձայնով), մահմեդականներ 17 անձ, գերմանացիք 8 հոգի և լեհացիք 7 անձ:

Առաջին ընտրութիւններին ներկայ էին 1047 հ. 1096 ձայնով: Նահանգական ատեանը հաստատեց մալխ 18 և լուծիս 1-ին կատարած ընտրութիւնները, առանց հետեանքի թողնելով հղած բողոքները, որոնցով ոնանք (Ագապիեւ, Սոբհէսկի, Ալ. Թամամչեան) խնդրում էին աչգ ընտրութիւնները քանդել:

ԱՐՄԱԻԻ գիւղի համար, Կուբանեան նահանգում, զինւորական վարչութիւնը խնդիր է բարձրացրել քաղաք դարձնելու:

ՀՈԳԱՔԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆՈՒՄ:

Երեւանի թեմական դպրոցի նոր հոգաբարձութիւն ընտրելու համար, որպէս մեզ գրում են, Երեւանում տեղի ունեցան ծխական պատգամաւորների ընտրութիւնները մալխ ամսին: Ընտրւեցին 21 պատգամաւոր, որոնց վրա աւելանում են 6 երեցփոխներ: Հոգաբարձական ընտրութիւնը եղաւ լուծիսի 8-ին: Ընտրւեցին հոգաբարձու՝ Գր. Ամիրեանց (վերընտրւած, Զաք. Գէորգեան (վերընտրւած), Տիգր. Աֆրիկեան, Տիգր. Տէր-Յակոբեանց, Կար. Կամսարական և Արտաշ. Գաբրիէլեանց. ընտրւեցին անձնափոխանորդ՝ Գէորգ Անտոնեան (վերընտրւած), բժ. Յովհաննիսեան, Եգոր Տէր-Սահակեան և Յովհ. Զաթալբաշեան:

Ընտրութիւնների մասին մեր ստացած ընդարձակ թղթակցութիւնը, պ. Գէորգ Ղարաջեանից, ուշ հասած լինելուն համար՝ նորա տպագրութիւնը թողնում ենք զալ անգամին, ի նկատի ունենալով որ նորանում շոշափւած են հանգամանքներ, որոնք նաև տևողական նշանակութիւն ունին:

ՄԱՄՈՒԼ: Եգիպտոսի մայրաքաղաք Կալիքէ'ում, խմբագրութեամբ Կ. Պոլսի Նախկին Արևելք օրաթերթի աշխատակից Յ. Ալփարի, ներկայ տարւալ $10/22$ մալխից սկսաւ հրատարակել Փարոս լրագիր աղագային, գրական և քաղաքական, թերթը հրատարակւում է շաբաթը երկու անգամ՝ չորեքշաբթի և շաբաթ օրերը: Բաժանորդագիրն է Եգիպտոսի համար 80 դահեկան. օտար երկիրներ 25 ֆրանկ: Հասցէ՝ Direction de Journal Pharos, Bazar Mourour, au Caire (Egypte):

ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌԻ գիւղերից տասնհինգի բնակիչներին վճուած է պետական գանձարանից տալ 29.500 ռուբլի, իբրև փոխատուութիւն, աչն

պալմանով որ ալն վերադարձնւի 5 տարւալ ընթացքում, առաջին երեք տարիները առանց տոկոսի, մնացած երկու տարիները 3% հաշւելով:

Մեր ընթերցողները չիշում կ'լինեն, որ Մուրճ'ում Կոթի գիւղը, որի տնտեսական հանգամանքները հետազօտել էր պ. Մադաթ Պետրոսեան, առաջ էր բերւած իբրև մի նմուշ Ղաղախի գաւառի գիւղացոց թշւառութեան:

Այս թշւառութիւնը ի միջի ալոց չառաջանում է գիւղացոց անվարկ դրութիւնից, որի պատճառով նոքա ստիպւած են լինում փոխատուների ամենածանր պալմաններն ընդունել (24—60 %!), Դորա դէմն առնել կարելի է միայն էժանագին վարկ ստեղծելով չատկապէս գիւղացիների համար, հիմնելով գիւղական բանկեր, մի խնդիր, որի մասին քանիցս խօսել է Մուրճ'ում: Դորա սկզբնաւորութիւնը կարող է կատարւել թէկուզ ալն գիւղատնտեսական ֆոնդի ձևով, որ ալնքան չաջողութեամբ սկսել է իրագործել Թիֆլ. Նահանգապետ իշխ. Շերաշիձէն: (Տես ստորև «ցորենի ամբարներ»:

ՅՈՐԴՆԻ ԱՄԲԱՐՆԵՐԸ Թիֆլիսի Նահանգում 1895 թ. Թիֆլիսի Նահանգապետ իշխ. Գ. Գ. Շերաշիձէ, որպէս չալտնի է, առաջարկեց նահանգի գիւղական համալնքներին իրենց կամքով շինել ցորենի ամբարներ, և առատ տարիները ցորենի որոշ տոկոս տալ ալն ամբարները, որպէս զի վատ տարիները ժողովուրդը կարողանալ նոցանից օգտուել. իսկ ամբարներում հաւաքւած աւելորդ ցորենը ծախել և դումար դարձնել, նոլն նպատակի համար Ալժմ հրատարակւած է ալն գործի հաշիւը „Вѣдомости о состояніи сельскохозяйственных капиталовъ и хлѣбныхъ складовъ въ Тифлисской губерніи къ 1-му января 1897 года. Դորանից երևում է որ Նահանգի 314 գիւղախումբերից 271-ը ունին ամբարալին կապիտալներ. ալն գիւղախումբերը շինել են 405 ամբարներ. առ 1-ն չունւ. 1897 թ. նոցանում կար աշնանացան ցորեն 177.390³/₄ փութ, դարձանացան՝ 29.592 փ.: Բացի ալն՝ մինչև նոլն ալն օրը կար կազմւած ամբարալին կապիտալ 972.754 ռ. 5 կոպ.: Ալն գումարից ծախւած է շինութիւններ կառուցանելու և հողեր ձեռք բերելու և ալն վրալ 13.163 ռ. 67 կ.:

ՂԱԶԱՐԻ ԱՅԳԻՆՆԵՐԸ ալս տարի չաջող բերք են խոստանում, շնորհիւ երաշտութեան և գործ դրւած միջոցների՝ միլիոն և ալ վաղալին հիւանդութիւններ գէթ առ ալժմ չկան, մինչդեռ չբնակալ գիւղերի ալգիները դարձան սկզբում ցրտերից փչացան: Մի քանի ալգիների բերքը ալժմեանից վաճառւեց հաշւելով չիրալի վեդրոն 1 ռ. 10 կ., մինչդեռ անցեալ տարի դինը 40 կոպէկից չբարձրացաւ: **ԱՐՀԵՍՏԱՆՈՅ ԱԽԱԼՔԱԼԱՔՈՒՄ:** Հալոց բարեգ. ընկերութեան Ախալ-

քաղաքի ճիւղը ներկայ չունեալ ամսից բացել է մի արհեստանոց, ուր տաճկա-հալ փախստականներինց Գիւմիշխանցի երկու ամուսիններ տեղական չքաւորներ աղջիկներին սովորեցնում են գործել բամբակից մանուսո, թաւոտ երեսորքիչներ, բաղանիքի սաւան, փեշ-տմալ, և պիտի սովորեցնեն բրդից Վանալ շալ, տիֆուիկից (ալծի փորի վրալ եղած փափուկ մաղ) բաշլըղներ, Ալթմ մտաղիւր են կանոնադրութեան մշակել, կառաւարութիւնից թուլտուլթիւն ստանալ և արհեստանոցը կատարելութե ան շաւղով առաջ տանել:

Յիշեալ ընկ. Ախալքաղաքի վարչութեան նախագահ պ. Ջալալ Տէր-Գրիգորեանի շնորհիւ՝ մենք առիթ ունեցանք յիշեալ գործածքները մեր խմբագրատանը տեսնելու: Մի աղջկիսի հիմնարկութիւնից, եթէ կանոնաւոր ճանապարհի վրալ դնել, մենք սպասում ենք ժողովրդի համար մեծ օգուտներ:

ՄԵՇԶԱՆՆԵՐԻ ԳԼԽԱՀԱՐԷՐՎ վերացւում է 1898 թւականից սկսած (մեշ-չաններ կոչւում են ամեն կարգի քաղաքացի մանրավաճառները) և նոր հարկ կ'առնել նոցա անշարժ կալքերից, (Թիֆլիսի նահանգի քաղաքների համար 134.000 ռ.)

ԷԺԱՆԱԳԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԸ Թիֆլիսում, Քաղաքումս Սոլուակ թաղում գործում է մի ճաշարան, որի կառավարիչն է տիկ. Ծովիանեան, ծնեալ իշխանուհի Արղութեան: Ներկայ տարաւա պարիւր 15-ից բացւած է նաև մի ճիւղ՝ Հաւաքար թաղում, մասնաւորապէս հալ փախստականների համար: Ալթմ հրատարակւած է հաշիւը 1-ից մալիսի 1896 թ մինչև 1-ն մալիս 1897 թ., Ընդհանուր մուտք եղել է 9.584 ռ. 6., որից աւղամակցական վճարներ 1.408 ռ., միանապ ուպաստներ 6.072 ռ. 99 կ. (այս վերջինից 1.300 ռ. ստացւել է Կովկասեան կառավարչապետից՝ հալ փախստականներին ձրի ճաշ տալու համար). տոկոսներ 540 ռ. 12 կ., դիմակահանդէսից 1.854 ռ. 75 կ., ալ և ալ տեղերից 608 ռ.: Ծախս եղել է երկու ճաշարանների համար 6.009 ռ. 56 կ. (չորս-նից Հաւաքարի ճաշարարի հաւար 507 ռ. 26 կոպ.):

ՔՈՒԹԱՅԻՍԻ ՀԱԿԱ-ՀՐԷԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ԴԱՏԱՐԱՆԸ, 1895 թ. հոկտ. 16-ին Գութալիսում, որպէս իւր ժամանակին հաղորդել էինք, մի դէպքի պատճառով, ուր մի վրացի հալածւել էր, տեղական վրացի ամբոխը չարձակեց հրէաների թաղի վրալ, ուր աւերեց 108 տուն և շատ հրէաների ծեծի ենթարկեց: Ալդ գործը քննեց դեկտ. 16, 1896 թ. Գութալիսի նահանգական դատարանում և 38 հոգի ոմանք աքսոր, ոմանք բերդարդելութեան դատապարտւեցին. բաց դատախաղի և դատապարտւածներից 13 հոգու բողոքի պատճառով, գործը անցաւ դատական պալատը Թիֆլիսում, որը ալ գործը քննեց ներկայ լուսիսի 10-ին: Պալատը բողոքողներից միայն մէկին արդա-

բացրեց, իսկ բոլոր միւսների համար հաստատեց Վուլթալիսի նահանգ-
գատարանի վճիռը:

ՇՈՒՔԵՐԸ: Ռէօմիւրի ջերմաչափը ներկայ լուսիսին և չուլիսի սկզբները
ցոյց էր տալիս սենեակում առառաւելն 25 աստիճան տաքութիւն,
երբեմն միայն, երեկոյեան հովերին, իջնելով մինչև 19—20 աստի-
ճան. իսկ սովորական շոքերին ցոյց էր տալիս 22—23 աստիճան:

ՅՈՅՆ-ՏԱՃԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ:

Թագաւոր-Կալսեր հեռագիրը, որից լիտու սուլթանը զինադա-
դար արաւ, հետեւեալն է.

«Յարսկօե Սելօ, 1897, մայիսի 8/17.

«Ձեր Կալսերական Մեծութիւնը չի զարմանալ, եթէ մեր մէջ
գոլութիւն ունեցող անկեղծ բարեկամութեան և բարի դրացիութեան
լարաբերութիւնները թելադրում են ինձ կոչում անել Ձեր ամենա-
վեհ զգացումներին և ինձ հաստատ լուս են ներշնչում, թէ Ձեր Մե-
ծութիւնը չի չապաղի մի հերոսական կռուում իւր քաջարի զօրքերի
տարած լաղթութիւնը պսակել՝ կատարելապէս հաւատարիմ մնալով
ալն չափաւոր և խաղաղասիրական դիտաւորութիւններին, որ Դուք
լաւտարարեցիք պատերազմի սկզբում:

«Դադարեցնել տալով Ձեր զօրքերի չառաջխաղացութիւնը Յու-
նաստանում և նպաստաւոր կերպով ընդունելով մեծ պետութիւնների
միջնորդութիւնը խաղաղութեան վերահաստատութեան համար, Ձեր
Կալսերական Մեծութիւնը մի նոր տիտղոս ձեռք բերած կը լինի
ալն բարձր չարգանքի, որով շրջապատւած էք Դուք և խո-
րին իմաստութեան մի գործ կատարած կը լինի, որի վիշտակը Նս-
անձնապէս չաւիտեան կը պահէի:

«Խնդրեմ Ձեր Կալսերական Մեծութեան հաւատալ իմ անսո-
փոխ բարեկամութեան»:

ՆԻԿՈԼԱՅ»:

Ձինադադարից լիտու, որ տեղի ունեցաւ մայիսի 9/21-ին, զեսպանները
մի կողմից և Բ. Դուռը միւս կողմից բանակցութիւններ ունեցան հաշ-
տութեան դաշն կռուութեան համար, մինչև զինադադարը որոշած նախ-
նական պայմանների համաձայն: Բայց զինադադարից ահա անցնում
է երկու ու կէս ամիս,— զեսպանները 9 անգամ նիստ են ունեցել, բայց
գործը առաջ չի գնացել: Թիւրքիան կամենում է Թեսալիայի մի մասը
իւր ձեռքում պահել, սահմանը որոշելով Պինէզ գետը, որի համար սուլ-
թանը զիմել է բոլոր մեծ պետութիւնների պետերին: Սակայն մեծ
պետութիւնները վճռել են միմիայն թող տալ սահմանը ստրատեգի-
կական մտքով ուղղելու. ալի մտքով կոմս Մուրաւեիով նոստա ուղար-
կեց, որ խոր տպաւորութիւն արաւ Թիւրքիայի վրայ, զեսպանները

հրահանգ են ստացել փութացնել հաշտութեան գործը: Բայց ամեն բանից երևում է որ Թիւրքիան պատրաստուում է մինչև ծալք կամառել Թեաւլիալում մնալու համար, չուսալով որ իցէ թէ մինչ ալդ ժամանակ եւրոպական կոնցերտի մէջ որ և է անհամաձայնութիւն պատահի: Բայց եւրոպական կոնցերտը, որպէս երևում է, միաձայն է ալդ խնդրի մէջ:

ՆՈՐ ԿՈՒՐՍ ԳԵՐՄԱՆԱՅՈՒՄ: Գերմանիալում քաղաքականութիւնը նոր ընթացք է բռնում: Կատարեց մի խոշոր մինիստրական փոփոխութիւն: Մինիստր Մարշալ, վերջին ներկայացուցիչը նախկին կանցլէր կոմս Կապրիւլի ժամանակից, ստիպւած եղաւ հեռանալ պաշտօնից աչն ինքնապաշտպանութիւնից վտոյ, որ նա արաւ քաղաքական զաղտնի ոստիկանութեան նախկին չէֆ Տաուշի դէմ, որին դատարանը անպարտ արձակեց. աչժմեան պետական կանցլէր իշխան Հոհէնլոէ, ըստ երևութիւն, ալ ևս ներգործական դեր չի կատարում. պրուսական մինիստրութեան ոգին աչժմ կազմում է Միքէլ, որ առաջ էլ ֆինանսական մինիստր էր, բայց որը աչժմ նշանակւած է նաև պրուսական մինիստրութեան փոխ-նախագահ (նախագահը կանցլէրն է): Փոխ Մարշալի տեղը նշանակւել է Հոմմի նախկին դեսպան ֆոն Բիւլով: Նոր քաղաքականութեան գլխաւոր գծերն են՝ մօտիկութիւն իշխ. Բիւսարկին, սահմանափակումն ժողովներ կազմելու իրաւունքի Պրուսիալում և ճովալին ոյժի զարգացումը:

ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ԱՂԱՄԱՆԴԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ: Վիկտորիա թագուհու 60-ամեայ թագաւորութեան չօրելեանը կատարեց մի շաքաթ, սկսած նոր տոմարով լոնիսի 20-ից. ալդ օրը, կիրակի, լրանում էր 60-ամեայ թագաւորութիւնը. ամենագլխաւոր օրը — չօրելեանի մեծ տօնը — կատարեց լոնիսի 22-ին (Նոր տոմար): Խր փառահեղութեամբ ալդ տօները գերադանցել են բոլորը, ինչ մինչև աչժմ տեսնւել է: Ներկայ են եղել Անգլիական ինքնաւար մեծ կոլոնիաների առաջին մինիստրները և զօրքերը, պետութիւնների արտակարգ ներկայացուցիչները, Անգլիալի քաղաքների ներկայացուցիչները և ալն: Մոտաւորական հաշուով Լոնդոն եկած են եղել Անգլիալից և ալ երկիրներից 1 միլիոն 800 հազար հոգի: Հանդէսը անցնելու փողոցներում մեծ էստրադներ էին շինել մասնաւոր մարդիկ. տեղերը վարձու էին տրւում անասելի թանկ. օրինակ՝ ալդպիտի շինութիւններից մէկը, որ 4000 տեղ ունէր, տեղը վարձու էր տրւում 520 ֆրանկ (200 ռ. աւելի). պ. Աստոր, ամերիկացի չախնի միլիոնատէրը, 12 ժամաչ համար տուն էր վարձել 37.500 ֆրանկով. մի ուրիշը 40.000 ֆր.

Թագաժառանգը բանքէտ տւաւ 1.600 հրաւիրածների համար, որոնք ամենաբարձր անձնաւորութիւններ էին: Նոյնը աղքատ-

ների ճաշ էր պատրաստել տւել Լոնդոնի զանազան մասերում 100.000-ից աւելի հոգու համար, որ տմանք նոյն իսկ 300.000-ի են հասցնում, երեկ չափազանցնելով:

Յօրեւեանը երկու ամենամեծ օրեր ունեցաւ. չունիս 22 և 26 (նոր տոմար): Յունիսի 26-ին մեծ օրը Լոնդոնում չէր, ալ Պորտսմութ պատերազմական Նաւահանգստում: Այդ Նաւալին հանդէսը դերադանցեց բոլոր նաւալին հանդէսները որ տեսնւած են մինչ օրս: Անգլիական պատերազմական նշանաւոր նաւերը ալդտեղ 146 էին, բաժանւած չորս շարքի. 5-րդ շարքը կազմում էին օտար պետութիւնների նաւերը, ընդամենը առաջինների հետ 165 պատերազմական նաւեր. դոցանից զորս կալին 100-ի չափ տորպիլէօրներ և մօտ 300 եսխտեր ու առետրական նաւեր, Պատերազմական նաւերի տեսութիւն անողն էր թաղաթառնգ իշխանն Ուէլսի, ուղեկցութեամբ բազմաթիւ օտար իշխանազուներ և ծովապետութեան բարձրագոյն պաշտօնեաների: Տեսութիւնը տեւեց մի ժամ. ալդ մի ժամում 8.904 թնդանօթալին հարւածներ տրեցին թէ նաւերից և թէ ամրութիւններից. եսխտերի և առետրական նաւերի տւած հարւածներով միասին—դոցաթիւը հասաւ մինչև 14 հազար, ուրեմն ամեն մի բողբոսում լսում էր աւելի քան 200 թնդանօթալին հարւած: Ուէլսի իշխանը ապա ընդունեց նաւում 244 ալցեղու: Երեկոյեան, երբ Ուէլսի իշխանը և հրաւիրւածները ուղևորեցին Լոնդոն՝ նորից 4.452 թնդանօթալին հարւած տրեցի: Լորդերի ժողովի և Համալսարանների ժողովի անդամները առանձին նաւերի մէջ հանդիսատեսների թւումն էին: Ծովալին հանդէսների համար պատրաստութիւններ տեսնւում էին երկու ամիս և ալդ նստեց չորջ տասը միլիոն ֆրանկ կամ 8 միլիոն շիլլինգ (4 միլ. ռուբլի):

Թագուհին ալդ նաւալին հանդէսին բացակայում էր:

Ապա նշանաւոր օր էր թագուհու ընդունելութիւնը Բուկինգհամ պալատում:

ՆՈՐ ՆԻԱՃՈՒՄՆԵՐ:

Անգլո-չինական դաշնադիր: Լորդ Սալիսբերի մի դաշն կապեց Չինաստանի հետ, որը պիտի ուժ տտանայ չուլիս 4-ից (ն. տ.), Դաշնագրով Չինաստանը տւաւ ի կատարեալ սեփականութիւն Անգլիայի հարաւալին Չինաստանից 400.000 քառակ. մղոն տարածութիւն: Բացի ալդ՝ Չինաստանը մշտնջենական կապալով տւաւ մի ալ երկիր, որ ընկած է բրիտանական Բիրմանիայի և Չինաստանի միջև և որի սահմանները դեռ պիտի որոշեն: Ալ և Անգլիան ալդ դաշնագրով իրաւունք է ստացել երկու հիւպատոս պահելու իւն-Նան չինական ընդարձակ նահանգում և դորա սահմանի վրայ գտնւող երկու

քաղաքներում արնքան ազատ առուտուր անել, ինչպէս մի քանի նաւահանգիստներում ալդ լինում է, դաշնագիրներէ դօրութեամբ Բացի ալդ՝ Չինաստանը խոստանում է, եթէ երկաթուղիներ շինեն իւն-Նան նահանգում, դոցա միացնել բիրմանական երկաթուղիներին հետ:

Ալդպիսով, երբ շինւած կը լինի հնդկական Դակկա-Բհամօ գիծը, անմիջական հաղորդակցութիւն կը սկսել Հնդկաստանի Բենգալիայի հետ, որը 60 միլիոն բնակիչ ունի, և հարաւային Չինաստանի հետ, ուր նոյնքան բնակիչ կա, և միւս կողմից, ի հարկէ, Բիրմանիայի հետ, որը արդէն անգլիական է:

Հիւսիսային Ա. Բերկայի Միացեալ Պետութիւնները միացրին իրենց հետ Հաւայի կոչւած կղզիներին խումբը (Սանդալիեան կղզիներ): Հաւայիան թագուհին բողոքեց: Սա առաջին դէպքն է որ Հիւս. Ամերիկան մի որ և է կալւածք է ձեռք բերում ծովի վրայ և միացնում իւր հետ:

ՍՏՈՔՀՈԼՄԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ, Ներկայ տարւալ սեպտեմբերին Շեդիալի Օսկար թագաւորը տօնելու է իւր թագաւորութեան 25-ամեակը: Յորեկանից առաջ ներկայ տօնիսին բացել էր մի ցուցահանդէս, որին հրաւիրեւ են և մասնակցում են Շեդիալի մերձաւոր հարևանները՝ Նորեգիա, Դանիա և Ռուսիա. բաց գեղարուեստների բաժինը միաջն համաշխարհային է. ցուցահանդէսը շինւած է մի կղզու վրայ, որ կոչւում է Djurgaarden (կենդանաբանական ալդի), որ ստորհոլմցիների ամենալաւ զբօսավայրն է, մանաւանդ կիրակի օրերը. ցուցահանդէսը կղզու ալն մասումն է, որ միացրած է քաղաքի հետ կամուրջով: Տեղը երեք քառորդով շրջապատւած է ջրով, ալնպէս որ ցուցահանդէսի զանազան մասերը հաղորդակցում են նաւերով, որոնք շարժւում են ելեքտրականութեամբ: Ցուցահանդէսի զլխաւոր շինութիւնը իւր գմբեթով 100 մետր բարձրութիւն ունի և շինւած է փայտից. մեծ գմբեթի տակը հանքային և ելեքտրոգործական բաժանմունքն է: Շեդիալի ամենազլխաւոր արդիւնաբերութիւնն է փայտը և երկաթը, Շեդիան մեծ ապագալ ունի իբր արդիւնաբերող երկաթի. երկրի հիւսիսային մասում, վալրի լապոնիայի լեռներում կան հանքեր, որոնք կարող են ամբողջ աշխարհին երկաթ տալ դարեր շարունակ. հանքի մէջ երկաթը 60% է կազմում. արդէն սկսել են շահագործել Գելլիւարա՛ի հանքերը մինչև ուր երկաթուղի է շինւած և որի արտադրութիւնը 1892-ին էր 135.000, իսկ 1895-ին 385.000 մետրային թոն. հարևան հանքերը Ռուստիւարա՛լում և Կիրունաւարա՛լում աւելի էլ ընդարձակ են: Մնում է մի նաւահանգիստ ունենալ Նորեգիայի ափում, ուր Գոլֆստրեմ կոչւած ովկիանական

տաք հոսանքի պատճառով կարելի է ամբողջ տարին բաց նաւահանգիստներ ունենալ:

Գեղարւեստների բաժնում, որը համաչխարհային է, օտարների մէջ ամենամեծ տեղը տրւած է ֆրանսիացոյց:

Գիտութիւնների, դպրոցական կրթութեան և ալլն հանդէսը տեղաւորւում է Հիւսիսային մուգէ կողմէ շինութեան մէջ, որը միալու է իբր թանգարան նաև ցուցահանդէսից փետոյ և ուր հաւաքւելու են մալրաքաղաքի զանազան տեղերում ցրւած ժողովածուները, վերաբերւալ արհեստների, քարքերի, անցեալ ու ներկայ կեանքին և ալլն: Այդ մուգէլի ստեղծողն է դոքտոր Արթուր Հաղելիւս, որը ալլ գործը զլուխ է բերել 2-3 տասնեակ տարի աշխատելով և ամեն զժաւրութեան չաղթելով: Նա շինել է ցուցահանդէսին կպած «սկանսէն» ասւած տեղը, ուր կալ կենդանաբանական ալլի, հին դարերի տներ, որ շինւած են անցած դարերի տների ճիշտ նմանութեամբ, լապնական չաղիրներ և ալլն:

Ցուցահանդէսը ունի և ալլ բաժանմունքներ, օրինակ, ձկնորսութեան, որին ջերմ մասնակցում են նորւեգացիք:

Ցուցահանդէսի առթիւ կալացաւ (նոր տոմարով լունիսի 25-ին) մամուլի չորրորդ միջազգային կոնգրէսը, ուր նկատելի էր որ կոնգրէսի ամեն մի անդամի համար առանձին հեռախօս էր շինւած, մի բան որ դարմանալի չէ Շւեդիայում, ուր 14—15.000 հեռախօս կալ, ալլինք ամեն 20 բնակչին՝ մի հեռախօս:

Ցուցահանդէսի կոմիտէի նախագահը թագաժառանգն է:

ՀՐԷԱԿԱՆ ԿՈՆԳՐԷՍԸ կալացնելու համար նշանակւած էր Միւնիխէն, որպէս հաղորդել էինք անցեալ ամիս. բալց խոչնդոտների պատճառով՝ կոնգրէսի տեղը որոշւած է Բաղէլ (Շւէյցարիայում), ժամանակը՝ օգոտոսին:

ԱՆԳՂՈՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻԻՆ: Լոնդոնում կաղմւած է անգլոֆրանսիական մի ընկերութիւն, որը նպատակ ունի երկու աղգերլ իրար աւելի լաւ ծանօթացնելով, բարեկամացնել և ալլպիսով քաղաքական բարեկամութիւն առաջ բերել: Նա աշխատելու է նաև որ հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆոր ալցելութեամբ զալ Վիկտորիա թագուհու մօտ:

ՄԵՍ ԳԻԻՏ—ՆՈՐ ՀԵՌԱԳԻՐ: Երիտասարդ խալացի Մարկոնի մեծ գիւտ է արել, որը փորձեց Լոնդոնում մեծ չալիսերով և փորձը սաւա շատ չալող հետեանքներ: Մարկոնին գործիք է գտել, որով, առանց հեռազրաժելի, հեռագիր է սալիս ելակտրականութեամբ, և ալլնպէս որ ոչ մի խոչնդոտ (քամի, լեռներ, դռներ և ալլն) չեն խանգարում գործին: Ալլ գիւտը, ինչպէս և Ռէնտգէնի անալտ ճառագալթները, ունենալու է գորնական մեծ հետեանքներ:

ՍՈՎԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ, որի մասին ամիսներ առաջ հաղորդել էինք, ունի մեծ չափեր: Հնդկաստանի փոխարքայի պաշտօնական ղեկուցումից երևում է, որ սնդի պակասութիւն են քաշում Մադրասի շրջանում մինչև 3.569.000 հոգի, Բոմբէյի շրջանում մինչև 7.100.000, Բենգալի շրջանում մինչև 11.600.000, հիւսիս արևմտեան Նահանգներում մինչև 2.550.000, Պենջաբում 3.600.000, կենտրոնական Նահանգներում մինչև 6.167.000, Բիրմանիայում և Բեգար'ում մինչև 3.150.000 հոգի, ընդամենը, ուրեմն, մօտ 35 միլիոնի հոգի: Գոցանից 4.240.337 հոգի սնունդ ստանում են այն վաստակից, որ կառավարութիւնը տալիս է ճոցա չինութիւններ կառուցանելով:

ՅիկլՈՆ ՊԱՐԻՋԻ ՄՕՏ: Ներկայ լուսիսի 19 (նոր տոմար) Պարիզի մօտերքը ցիկլոնը արհաւիրք բերաւ սկսած Բուա-դը-Վոլտը'ից մինչև Սէն-Դենի'ից դէնը՝ դէպի Կուրնէօւ, մանաւանդ մեծ վնաս տալով Անիէռ (Asnières) ամառային Յիկլոնը քամու նման մի երևութ է, բայց քամուց տարբեր ծագումն ունի, և դեռ ևս չափերի չէ թէ ինչից է գոչանում. այդ պատճառով էլ չի իմացւում առաջուց թէ ցիկլոն կը լինի: Յիկլոնը գոչանում է և գործում ըոպէսպէս և վերջանում. բայց այդ մի ըոպէսում ուր նա անցնում է՝ քանդում է, աւերում. տների տանիքները պոկւում են և հեռու դէն չարտւում, ծառերը արմատից հանւում են, տները քանդւում, մարդիկ փախչում են այն տեղերից, ուր բռնում է ցիկլոնը, բայց առարկաները, ցիկլոնից չարտուելով, լաճախ դիպչում են մարդկանց և անասուններին և սպանում կամ վիրաւորում:

Յիկլոնները Եւրոպայում չոր են. նոքա լաճախ պատահում են Ամերիկայում, մանաւանդ Միսիսիպի մեծ գետի հովիտում, ուր Սէն-Լուի քաղաքը իւր աւերակներից չոր ծնւում է՝ չոր ցիկլոնի զոհ գնալու համար. ցիկլոնները լաճախ են Նան Հնդկական ովկիանոսում: Անցեալ տարի ցիկլոն եղաւ Պարիզում երկու անգամ, լուսիսին և սեպտեմբերին. բայց այս անգամ նորա մօտերքում եղածը աւելի մեծ վնասներ տուաւ. մարդկանցից սպանւած են հինգ հոգի և վիրաւորւած մի քանի տասնեակ հոգի:

ՌԵՆՏԳԷՆԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ Ֆրանսիայում մի չոր և նշանաւոր գործադրութիւն են դառնում մաքսատան մէջ. առանց արկղները բացանելու, իքս ճառագայթներով իմացւում է կապոցների պարունակութիւնը:

«ԳԵՐՏՐՈՒԴ» «? Շեքսպիրի այդ հրաշակերտը, Ռուսահայ բարբառով ներկայացեցաւ խուռն բաղմութեան առջև»: Այս խօսքերը կարդացինք Պոլսի «Մատիս» օրաթերթի «Իզմիրեան քրոնիկ»-ում: Այդ ո՞ր հրաշակերտն է Շեքսպիրի, «Դերտրուդ» անունով, որ մենք չգիտենք, մտա-

ծեցինք մենք. սակայն մեր տարակուսը շուտով փարատեց: Կարդալով ներկայացման քննադատութիւնը, տեսանք որ «Գերտրուդ»-ի մէջ գործող անձերից լիշատ են «Խլխան», «Ոֆելիա»: Պարզ էր որ «Խլխանը» Համլէտն է, որի անունը սուլթան Աբդուլ Համիդի երկրում արգելւած է արտասանել, որովհետեւ նոյնանուն պիեսում արքայասպանութեան մի տեսարան կալ: Եւ այսպէս «Համլէտ» ողբերգութեան անունն էլ դրել են «Գերտրուդ»:

† ՔԱՆԱՆԵԱՆ ԳԵՈՐԳ, վերատեսուչ Մոսկալի Լազարեան ճեմարանի, ծնւած 1836 թ., վախճանեց լուսիսի 6-ին: Հանգուցեալը աւարտել էր Մոսկալի համալսարանի պատմական-լեզուագիտական ֆակուլտէտը, ուր և հրաւիրւեց մնալ պատմական ամբիոնի և մագիստրոսի քննութեան համար պատրաստելու. նա եղաւ ուսուցիչ Մոսկալի գիմնազներում, և երբ 1861 թ-ին հաջգէտ էմին ճեմարանի տեսչութիւնից հեռացաւ, Քանանեանը նշանակեց տնայլ պաշտօնակատար, իսկ քսան տարուց շատ նշանակեց նոյն ճեմարանի վերատեսուչ: Հանգուցեալը ունի մի քանի տպւած աշխատութիւններ ռուսերէն լեզուով, Լազարեան ճեմարանին և հաջերին վերաբերեալ:

† ՏԵՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ, Դիմիտրի, գեներալ-լէյտենանտ, վախճանեց Վիլնոսում, լուսիսի 2 ին: Հանգուցեալը իւր զինուորական ծառայութիւնը սկսել էր Դաղստանի դէմ կռիւների ժամանակ և մասնակցել է 1873-ին Խիւլալի արշաւանքին. ապա նա նշանակեց Կիււի զինուորական շրջանում հեծելազոր բանակի հրամանատար: Հանգուցեալը մասնակից է եղել Կովկ. Հալոց Բարեգ. Ընկերութեան հիմնարկութեան գործում ու մի ժամանակ եղած է խորհրդի փոխնախագահ և նախագահ:

† ՇԱՐԼՈՏ ՎՈՂՏԵՐ (Wolter) նշանաւոր գերմանական ողբերգու գերասանուհին վախճանեց: Վոլտէր'ը խաղում էր Վիեննայի կախերական «Բուրգթէատէր» թատրոնում, որ առաջինն է Աւստրիայի մայրաքաղաքում: 1887-ին Վոլտէրը տօնեց իւր 25 ամեակը աֆն օրից, (12 լուսիս 1862 թ. նոր տոմար) երբ նա առաջին անգամ խաղաց աղ թատրոնում, ուր Վոլտէրից առաջ հռչակւած էր Ժիւլի Ռետտիխ: Նորա մալը լւացարար էր գերմանական Քէօլն քաղաքում, և նորա մօտ ծառայում էր. ապա մտաւ զանազան թատրոններ իբրեւ խորիստուհի, Ֆիզուրանտ և այլն. ապա նա ուրիշների հետ խաղաց Ունգարիայում, ուր նա ամեն տեսակ դերեր էր կատարում. աղ ժամանակ նա 23 տարեկան էր. մի դէպքով նա հրաւիրւեց Վիեննայի Կարլթէատէր, սուբբետի դերերի համար: Այդտեղ նորան նկատեց Բուրգթէատերի գիրեկտոր Կալտնի Լաուբէն, որը նորան կըրթելու համար հալթալթեց հրաւերներ դերմանական զանազան քա-

ղաքներից, տաւ նորան ողբերգու ռեպերտուար և չորս տարից չե-
տոյ հրաւիրեց Բորգթէատեր, Վոլտէր ունէր թաղուհու կամ մի
սոստածուհու քալլածք. ֆրանսիական դերասանուհիներից նա
ամենից շատ նմանում էր Աղարին, որը նոյնպէս սկսել էր ցածից՝
կաֆէ-կոնցերտում, բայց ունէր չկուլա, որ չունէր Վոլտէրը. Վոլտէրի
ձախը ունէր բոլոր ելեջները. նորա ռեպերտուարից գլխա-
ւորներն էին Ֆէդր, Մեդէ, Սաֆո, Հերմիոն, Իֆիգենի, Էդի Մակբէտ,
այլ նաև Աղրին և Լըկուտէօր Ֆեդորա (Սարդուր):

† ԿՆԱՅՊ, Սերաստիան, դերմանացի պատուր, հռչակաւոր իւր ջրաբու-
ժական մեթոդով, վախճանեց սոյն չունիսին և 22 չունիսի (նոր
տոմար) թաղեց Վերիսոֆէնում. Կնապի ջրաբուժական մեթոդը
հանրածանօթ է և նորա անունով կազմել են գերմանական երկիր-
ներում բազմաթիւ «Կնապեան ընկերութիւններ»:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԻՆԸ

- 1) «ՆԻԼՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ», Ուիլյա.—Նելլօն և Պատրաշը. Թարգմ. ռու-
սերէնից. 1897 թ. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանի, գինն է 10 կ.
- 2) ԱՀԱՐՈՆԵԱՆ, Ա.—Հոօ կինը. Նիւթեր մեր ժողովրդական կեանքի
ուսումնասիրութեան համար. հրատ. Թիֆլ. Հ. Հր. Լնկ. 1897 թ.,
տպ. Յ. Մարտիրոսեանի, գինն է 40 կոպէկ:
- 3) ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ, Մեսրոպ վարդ., միաբան Ս. Էջմիածնի.—Սոկրա-
տաւ Սքուլաստիկոսի եկեղեցական պատմութիւն. թարգմանեաց Փի-
լոն Տիրակապի, և Պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիս-
կոպոսին Հռովմալ, թարգմանեալ Աբասուն Գրիգորի Ձորափորեցու,
հատոր Ա. և Բ., 1897 թ. Վաղարշապատ տպ. Մալր Աթոռոյ Ս.
Էջմիածնի, գինն է 2 ռուբլի:
- 4) ՁԻԼԻՆԿԱՐԵԱՆ Ա. և ՌԱՇՄԱՃԵԱՆ Տ.—Ընտանի կենդանիներ. Հրատ
Տիկ. Եղիս. Արամեանցի. 1897 թ., Ալէքսանդրապոլ, տպ. Գ. Սա-
նոեանցի. գինն է 5 կոպ.
- 5) ԱՐԾՐՈՒՆԻ ԲԺ. Վահան.—Ժանտախտ.—1897 թ. Վաղարշապատ, տպ.
Մալր Աթոռոյ Ս. Էջմիածնի, գինն է 20 կոպ.
- 6) Հեղինակ ?—Որբ. Թարգմ. Ան. (Նէր ընթերցասէր մանուկներին).
1897 թ., Թիֆ., տպ. Մել. Շահնազ, գինն է 5 կոպ.
- 7) ՄԷՆԷՎԻՇԵԱՆ. Հ. Գաբրիէլ վարդ., Մխիթ. ուխտէ.—Պատկերազարդ
բնական պատմութիւն. Ա. Կենդանաբանութիւն (480 պատկերներով).
1897 թ., Վիեննա, Մխիթ. տպ., գինն է կազմած 1 ռուբլի 85
կոպ. (4 ֆր. 25 սանտ.):
- 8) Նոյնը.—Պատկերազարդ բնական պատմութիւն. Բ. Բուսաբանութիւն
(373 պատկերներով), 1897 թ., Վիեննա Մխիթ. տպ., գինն է կազ-
մած 1 պ. 85 կոպ. (4 ֆր. 25 սանտ.):

- 9) ԼԵՐՄՈՆՏՈՎ, Թարգմ. Սիմ. ՀՈՎԻՆԱՆ.—Հաջի Արրէք: 1897 թ., Բաքու տպ. Ա. Ղազարեանի. գինն է 5 կոպ.
- 10) ЭМИНЪ, Н. О.—Переводы и статьи по духовной армянской литературы (за 1859—1882 гг.); апокрифы, житія, слова и др., съ тремя приложениями.—Издание „Этнограф. фонда имени Н. О. Эмина, при Лазар. институт. Вост. языковъ. выпускъ III. 1897 г., Москва. гինն է 2 ռուբլի:

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ.

Թիւրինդն: Պր. Արամ Զարդճեան: Ձեր ուղարկած ոտանաւորներից, որ մի պոէմալի հետ ստացանք ներկալ լուծիսի միջերը, ալս անդամ տպագրում ենք երկուսը:

Երեւան: Պր. Վարդան Յակոբեանին: Հասցէն փոխելու համար մենք պահանջում ենք միայն 28 կոպէկ. հետեապէս 21 կոպէկ աւելի էք ուղարկել. զորա փոխարէն ուղարկում ենք Ձեզ մի օրինակ «Ամուսնական առողջապահութիւն» բժ. Թ. Զաքարեանցի:—Մուրճ № 5 Ձեզ ուղարկել է Թաւրիզ:

ՎՐԻՊԱԿ, Մուրճ № 5-ում:

էջ 581 (Ստրկի երազը, առաջին տան 6-րդ տող տպւած է՝ տեսնում էր. ուղղել՝ դիտում էր:

էջ 684 տող 13 տպւած է՝ վարչամեան, Աղ. 591 սև, ուղղել՝ 691 սև:

էջ 728 (Յոն-առճկական պատերազմը), տող 20 տպւած է 1884. ուղղել՝ 1881 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

Կոստանեցիէրորդ Հիւսիսային

1897 թ. № 1, 2—3, 4, 5, 6:

№ 1

- | | |
|-----------------------------------|---|
| 1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ | 5 Ինչ էինք ժառանգել: |
| 2 ՇԱՆԹ | 13 Անտառին երգը (բանաստ.): |
| 3 » | 15 Մահիկը (բանաստ.): |
| 4 » | 16 Վէճ (բանաստեղծութիւն): |
| 5 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ | 14 Խորտակած կեանք (միծ լէպ): |
| 6 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ | 36 Հին երգ (բանաստեղծութ.): |
| 7 ԲԱԲԿԵՆՑ, Գ. | 37 Նորեկ (լէպ, չարունակ): |
| 8 ԴԵՄՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ | 59 Կեանքի խորթ որդիքը (բանաստ.): |
| 9 ԱԴԵԼԵԱՆՑ, Ա. | 61 Տգիտութեան զոհեր (չարունակ): |
| 10 ԱԹԱՅԵԱՆՑ, ԱՐՇԱԿ | 87 Կէս գիշերին (բանաստեղծ.): |
| 11 ՄՈՊԱՍԱՆԻՑ—ՀԵՂ. ՇԱՀԱԶ. | 89 Անցեալը (պատմ.): |
| 12 ԱՊՐԹ | 97 Յիշողութիւններ Պարսկաստանից: |
| 13 ԶԱՔԱՐԵԱՆՑ, ԹԱԳԷՈՍ, ԲԺ. | 110 Ամուսն. առողջապահութիւն (չար.) |
| 14 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ | 121 Ուստիայի արդիւնաբերութիւնը և զրամական ռեֆորմը I: |
| 15 ԱՂԲԱԼԵԱՆՑ, Ն. | 131 «Նա» (պատկեր): Պռոչեանի: |
| 16 » | 133 Գարշինի—«Գոռող արմաւենին և «Ճոնապարհորդ զորա»: |
| 17 » | 136 Դիկենսի—«Վերադ. լանցաւորը»: |
| 18 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա. | 139 Ժամանակակից տեսութ.—Քաղաքային ընտրութիւններ և առիթով: |

- 19 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԳԱՐԵԳԻՆ ԲԺ. 149 Բժշկական զրուցներ:
- 20 ԽՄԲ. 155 Զանազան լուրեր — Հալիական
խնդիր — Կրեաթ: Կոմս Մուրաւսով — Ֆրեդէ — Կաղթականներ և
նոցա պահպանումը զաւառներում — Նպատակներ — Դանդաղաց: Ժանտ-
ախտը — Իւանենկու — Շամախու աւագ: Նին. Նախիջևանի աւագ —
Օրդուբաթի քաղաք. ընտրութիւնները — Թելաւի աւագ: Ոստիկա-
նութեան պահպանումը — Հալոց զպրուցներ: Մամաւաթի զպրուց-
ներ: Ն. Էրներ — Խորէն եպիսկ. Ստեփանէ — Նոր վարդապետներ: —
Արարատի խմբագրութիւնը — Աղբիւր-Տարաղի պրիմաները: — Խա-
չատուր Արսիկանի երկերը: — Կարծիքներ Մուրճի մասին: — Բաղմա-
վէպ: — Երկրաշարժ Շամախում: — Աստուրաղի հալոց եկեղեցին: — Աշ-
խատանոց Երևանում: — Յրտերը Երևանում: — Միօրեալ ժողովրդապու-
թիւնը: Պուշկինի մահւան 60-ամեակը: — Արօրի օրացույցը: — Հալ պաշ-
տօնեաները Կովկասում: — Բաղաքական միջնորդ պատարան: — Յու-
նաց պատրիարք. Կրիզիտ — Եպարնիսպի աղդաբնակութիւնը: — Դե-
տիւսիւ Ռիւմին: — Դիդիա Թամամէկան: — Նոր ստացւած գրքեր: —
Մուրճի պատարկը: — Վերապահներ:

№ 2—3

- 1 ՄՈՊԱՍԱՆՆԻՑ ԴԵՄԻՐՃԵԱՆ. 183 Միտոնութիւն (պատմաւ. ք.):
- 2 ՆԱԴՍՈՆՆԻՑ ՏԵՐ-ԳԵՈՐԳԵԱՆ 190 Քրիստոնէական (պոէմա):
- 3 ԱԴԵԼԵԱՆՑ, Ա. 197 Տգիտութեան զոհեր (վերջ):
- 4 ՇԱՆԹ. 252 Փիլիսոփաները, Կեանք տուր ին-
ժի, Սերենազ մը, Սրինգը (բա-
նաստեղծութիւններ):
- 5 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. . . 257 Խորտակւած կեանք (վէպ շար.):
- 6 ՊՐՈՒՏԿՈՎՆԻՑ—ՅԱԿՈԲԵԱՆ, Յ. 283 Եթէ դու տեսնես (բանաստ.):
- 7 ԲԱԲԿԵՆՑ, Գ. 284 Նորեկ (վէպ. շարունակ.):
- 8 ԲԵՕՐԵՍՈՆՆԻՑ-ՀԵՂ. ՆԱԲԱԹԵ. 303 Արծալի բոլն (զրույց):
- 9 ԶԱՔԱՐԵԱՆՑ ԹԱԴԵՍՍ, ԲԺ. 307 Ամուսն. առողջապահութ. (վերջ):
- 10 ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԳՐԻԳՈՐ. . . 319 Ռուսիայի արդիւնաբերութիւնը և
զբաղման ռեֆորմը II:
- 11 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա. 326 Լեզական զրուցներ:
- 12 ԱՂԱԼԵԱՆՑ, Ն. 332 Փափաղ. «Տուրիստի վիշտութիւն»:
- 13 " " " " " 337 Ինդրահամր «Աղիւնայի նամակներ»:
- 14 Յ. Տ.-Մ. 340 «Կենդան. բնազդն և հատկացողու-
թիւնը» «Զրուցներ բնութեան
մեծ ու ահեղ երևոյթների մասին»:
«Զարմանալի որդ»:

- 15 ԱՂԲԱԼՆԱՆՅ, Ն. 344 «Ալալի կարապետներ», «Ալիսէնն ու Մարգարիտը», «Գոհարիկն ու Աստղիկը»:
- 16 ԱՐԱՍԽԱՆՆԱՆՅ, Ա. 350 Ժամանակ, տեսութ. Հակ. խնդ.:
- 17 Ա. Ա. 368 Կովկ. կառավարչ. լիազօրութիւնը:
- 18 ԼՈՒՍԻՆԻ. 374 Գրական արարեակ:
- 19 ՍԵԼԵԱՆ, Հ. 381 Թատրոնի շուրջը, XI, XII:
- 20 Ա. Ա. 385 Գործերի ընթաց. Կրեւտի խնդ.:
21. ԽՄԲ. 393 Զանազան լուրեր: — Աղեւեանի «Տղիտութեան զոհեր»: — Տաճկահայ փախտականները: — Նոր կոստրած: — Սիսի հայոց կաթողիկոս: — Իզմիրեանին թուշակ: — Խորէնի հայ. Ստեփանէ: — Ժանտախտ: — Հալեբի բարեկամների միջազգային ընկերութիւն: — Ռուսահայկական մի ընկերութիւն: — Կաւկասի լրագրի քիւրդ: — Քաղաքացիին ինքնավարութիւն: Ալէքսանդրապոլ: Սիմֆերոպոլ: Նոր-Բաղդէդի աւագ: — Մաղկահատութիւնը Շուշում: — Նոր-Նախիջևանը: — Ուրմիայի կառավարչ: — Նւէրեբի կոտակներ: — Ներսէսեան զպրանոցի տարեկան աւտը: — Ղամբարեան մրցանակը: — Գործարանական տեսչութիւնը: — Գառակարգային միութիւնները Թիֆլիսում: — Թիֆլիսի վաճառականաց ընդհ. ժողովը: — Յրտերը Նրեանեան Նահանգում: — Խաչատուր Աբովեան: — Նոր լրագիր Բաքում: — Բաքուի Մարդաս. ընկ. երեկոյթը: — Պետերբուրգի հայ ուսանողութեան օգտին: — Գրադկաներին օգնելու մի խնդիր: — Օգնութիւն գրագէտներին: — Հայոց բարեգ. ընկ. տարեկան ընդհ. ժողովը: — Մի հերքում Նրեանից: — Հաջի Ակոբ Աբրահամեան: — Ամանեցոց ծածկախօսութիւնը: — Թիւրքիայի ելմոացուցը: — Կանանց իրաւունքը Անգլիայում: Մաղազասկարի թաղուհին: — Սերբիայի թաղաւորը: — Տրանսկասիլի նախագահ: — † Մալկով: — † Մանսուրով: — Նոր սոսցւած զըրքեր: — Մուրճի պոստարիդ:

№ 4

- 1 ՄԱՆՈՒԷԼՆԱՆՅ, ԼԵՒՈՆ . . . 419 Խորտակած կեանք (վէպ. չար.):
- 2 ՇԱՆԹ 445 Դրիչը (բանաստ.):
- 3 " 446 Աստղիկը (բանաստ.):
- 4 " 447 Անցաւ (բանաստ.):
- 5 " 448 Դիչերապահը (բանաստ.):
- 6 ՓԱՓԱԶԱՆ, Վ. 450 Արաը (Տուրխտի լիչոզութիւնից):
- 7 ԴՐ ՄԻԻՍՍԷ, ԱԼՖՐԷԴ . . . 454 Մալիսեան զիչեր (պոէմա):
- 8 ԲԱՐԿԵՆՅ, Դ. 462 Նորեկ (վէպ, չարունակ):
- 9 ԴԵՄԻՐՃԱՆ, ԴԵՐՆԵԻԿ . . . 488 Քանի ժամանակ (բանաստ.):

10	ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ	489	Էւոլիւցիայի գաղափարը:
11	ԱՂԲԱԼԵԱՆՑ, Ն.	504	Սժեշկօ՝—«կախարդը»:
12	ԼՈՒՍԻՆԻ.	508	Թիֆլ. Հալոց հրատ. ընկերութիւնը:
13	»	518	Լէօի պատասխանի առիթով:
14	ՍԵԻՆԱՆ, Հ.	528	Թատրոնի շուրջը, XIII:
15	ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, Յ.	530	Մարդահամար:
16	ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ.	536	Հալ փախստականն. Վառնայում:
17	Զ.	542	Անցքերը Կրետէիում:
18	ԽՄԲ.	548	Զանազ. լուրեր.—Շանթի.—Մուրճը նւիրողները—Աւստրիայի կայսրը Պետերբուրգում.—Քաղկանեան քա- ղաքականութիւնը.—Պարսկաստան.—Վհափառ կաթողիկոսը.—Քա- ղաքային ինքնաւարտութիւնը.—Թիֆլիսի ընտրողական ցուցակը: Երե- ւանի քաղաքագլուխը.—Յօդուտ թիւրքա-հալ փախստականները— Զհաստատուած ընկերութիւնը.—Նւէրները.—Քահանաների ձեռնադրու- թիւնը.—Լէօ.—Գերմանիայի կայսրը.—Կոնստ. Ֆիլչերի լոբբիւանը.—Ատ- տենտաւտ.—Քաղկանեան դաշնակցութիւնը.—Նոր ստացւած գրքերը— Մուրճի պատարկիդ:

№ 5

1	ԲԱԲԿԵՆՑ, Գ.	559	Նորեկ (վէպ, շարունակ. և վերջ):
2	ՇԱՆԹ	576	Արձանը (բանաստ.)
3	»	577	*** (բանաստ.):
4	ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.	579	Մերկ Դերեիշը:
5	ԼՈՆԳՅԷԼՕ՛ԻՑ Գ. Տ.-ԳԼՈՐԻՆԵԱՆ	583	Ստրկի երազը (բանաստ.):
6	ԲԵՐՐԵՍՈՆԻՑ ՀԵՂ. ՇԱՀԱՋԻՋ.	585	Հաւատարմութիւն (պատմւածք):
7	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՈՆ.	589	Խորտակւած կեանք (վէպ շար.):
8	ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ	620	Քեզ ինչ պատահեց... (բանաստ.):
9	ԵՐԿԱՅԵԱՐ.-ԱՐԴՈՒԹԵԱՆ, Ս.	621	Հաւատն ինձ կը վրկի (կան. խնդ):
10	ՄԱՐԴԱՆԵԱՆՑ, Ֆ.	636	Առևտուր. գիտութ. անհրաժեշտութ.
11	ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ	646	Էւոլիւցիայի գաղափարը (շար.):
12	ԿՈՒՍԻԿԵԱՆ, Կ.	661	Բանաստ. քաղաքացի Ռ. Պատկան.
13	ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	675	Լումպի «Պարօի ընտանիքը»:
14	»	679	Դիկինսի «Ժլատ Սկրուջը»:
15	ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա.	981	Ժամանակ. տեսութ.—Գաւառակ. ինքնաւարտութեան խնդիրը Կով- կասում:
16	ԼՈՒՍԻՆԻ.	683	Թիֆլ. քաղաք. ընտրութիւնները:
17	ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՄԱԴԱԹ.	705	Գաւառ. համակներ. Կոթի գիւղը:
18	ՍԵԻՆԱՆ, Հ.	714	Թատրոնի շուրջը, XIV:

- 19 Թ. Տ.-ՄԻՐԱՔԵԱՆ 719 Լեզական զրույցներու Նամակ խմբ.
 20 Շ 721 Թոն-տանկական սլաոներազմը:
 21 ԽՄԲ. 790 Զանազան լուրերու—Մուրճի զատը
 Մշակի դէմ:—Բարկենցի «Նորեկ» վէպը:—Մուրճի Նէրներ:—Իշխ.
 Օրդինսկի:—Ֆրանսիա և Ռուսիա:—Տաճկա. Հալաուսանում:—Հալ
 փախստականներու—Ներուժը հալ փախստականներին:—Ռուսիայի
 մարդահամարը:—Պարսկաստան:—Ռուս մամուլը հալոց եկ. ծխական
 դպրոցների մասին:—Նէրներ և կտակներ:—Արաասանմանի հալ ու
 սանողների կոնգրէս:—Ժընևի հալ ուսանողների ընկերութիւն:—Հա
 լոց բարեգ. ընկ.:—Աղգազրական հանդէս:—Մամուլ:—Պոլիտեխնի
 կում Կիւեում:—Նաւթագործների IX ժողովը:—Հալ երկտասարդ կու
 տակցութիւնը Թիֆլիսի քաղաք. ընտրութիւններում:—Ամուսնական
 առողջապահութիւն:—Մեծ հրդեհ Պարիզում:—Մեծ հրդեհ նաւթի—
 Հրէական կոնգրէս:—Աերբիան Զերնոգորիա:—Գերմանիա և Օրան
 ժիան:—Վիկտորիա թագուհու լօբելիանը:—† Գուքս զ'Օմալ:—Նոր
 ստացած գրքեր:—Մուրճի պատարկը:

№ 6

- 1 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ. 741 Անլաղը (վիլլիտիական զրույց):
 2 ՊՈՒՇԿԻՆ'ԻՑ Թ. ՏԵՐ-ԳԵՈՐԳ. 774 Աւազակ եղբայրներ (սլոմա):
 3 ԱՐԴՈՒԹԵԱՆ, ՍՈՖԻԱ ԻՇԽ. 782 Հաւասան ինձ կը փրկի: Կանանց
 խնդիր. (վերջ):
 4 ՇԱՆԹ. 802 Ֆանթազի (բանաստեղծութիւն):
 5 » 803 Տուր նաւածքը (բանաստեղծ):
 6 ԿՈՒՍԻԿԵԱՆ, Կ. 804 Բանանտեղծ քաղաքացի:—Ռ.
 Պատկանան (վերջ):
 7 ԶԱՐԴԳՃԵԱՆ, ԱՐԱՄ. 827 Հալ պոէտին (բանաստեղծութ.):
 8 » 828 Անդրչիտիան իղձ (բանաստեղծ):
 9 ՎԱՆՅԵԱՆ, Գ. 829 Հալերէնի Նաղաչնութիւնը:
 10 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա. 848* Անդլիան վիկտորիայի ժամանակ:
 11 ՎԱՐԴԱՆԵԱՆՅ, Գ. 862 Գ. Բարկենցի—«Նորեկ»:
 12 Ա. Ա. 866 Տէր-Միւրաքեանցի—«Արքեանարան»:
 13 Թ. Տ.-Մ. 869 Հալկունու—«Մօքոս»:
 14 ՎԱՆՅԵԱՆ, Գ. 870 Թոմիանեանի «Հետադատութիւնը
 Նախնաց ուսմիօրէնին վրայ»:
 15 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա. 873 Ժամանակակից Տեսութիւն:—Գա
 լառական ինքնավարութեան
 խնդիրը Կովկասում. II:
 16 Ա. 886 Թատրոնի շուրջը:

17 ԽՄԲ. 889 Զանազան լուրերու—Պր. Կ. Կուսիկ-
հանի ընդարձակ չօղածը.—Խնամքով ձեռնագրութիւն.—Նոր օրէնք
հայոց դպրոցների մասին.—Կովկասեան կառավարութիւն.—Կովկաս-
եան զօրաց մարմնի կոմանդիր.—Էջմիածնից.—Իպրոցների ծրա-
գիրը.—Մուրադ-Ռաֆայէլեան 1,իցէօնը.—Սիսի կաթողիկոսութիւնը.
—Դրութիւնը Տաճկաստանում.— Օդնութիւն Տաճկաստանում.— Օգ-
նութիւնը փախտողականներին.— Պարսկաստանից.— Նւէրնէր և կտակ-
ներ.— Բաղաքալին ինքնավարութիւն.— Հոգաբարձական ընտրու-
թիւնը Սրեանում.— Մամուլ.— Ղաղախի դաւառի գիւղերից.— Յորենի
ամբարներ թիֆլիսի նահանգում.— Ղաղախի աղիները.— Արհեստանոց
Ախալքալախում.— Մեչէանների գլխահարկը.— Էփանդին ճաշարան-
ները թիֆլիսում.— Քութայիսի Հակա-Հրէական շարժումը և դատա-
րանը.— Յոյն-Տաճկական պատերազմ.— Նոր կուրս Գերմանիայում.—
Վիկտորիայի աղամանդեալ չօքելեանը.— Նոր նւաճումներ.— Ստոքհոլ-
մի ցուցահանդէսը.— Հրէական կոնգրէսը.— Անգլո-Ֆրանսիական բա-
րեկամութիւն.— Մեծ դիւտ. Մարկոնի'ի հեռագիր.— Սովը Հնդկաստա-
նում.— Յիկլոն Պարիզի մօտ.— Ռէնտգէնի ճառագայթները.— «Գեր-
արուդ».— Ժ. Բանանեան.— Ժ. Տէր-Ասատուրեան.— Ժ. Շարլոտ Վ. չլոէր :
— Ժ. Կնայպ.— Նոր ստացած դրքեր.— Մուրճ'ի Պոտտարկը.

18 ԽՄԲ. 910 Բովանդակութիւն Մուրճ N 1—6:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառար էն հետեւեալ գներով

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ	4 ռ. — կ.
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ	5 » — »
«ՄՈՒՐՃ» 1891 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ	9 » — »
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1894 թ. անկազմ	7 » — »
«ՄՈՒՐՃ» 1895 թ. անկազմ	8 » — »
ԲՈՒՈՐ 7 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ	45 » — »
» » » » կազմով 14 հատոր	50 ռ. — »

ՎՃԱՐԸ ԿԱՆԽԻԿ

Ճանապարհածախքի համար ուղարկուած է մի-մի ուրբի
ամեն տարւոյ համար:

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Պատիւ ունիմ յայտնել յարգելի հասարակութեան, որ ես հիմ-
նել եմ Թիֆլիսում, Միքայէլեան փողոցում, տուն № 120,

ԲՈԼՈՐՈՎԻՆ

ՆՈՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՐԱՆ


ԱՐԻԵՏՏԱԿԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԶՐԵՐ

ՊԱՏԲԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գործարանս ունի խոշոր մեծութեամբ մի ապարատ ջուր
թորելու համար, որը միջոց է տալիս ինձ պատրաստել բոլոր աե-
սակ լիմոնադները և թէ այլ բժշկական հանքային ջրերը միմիայն
թորած ջրով:

Աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան
մէջ և վերաբերւում եմ դէպի գործս ամենայն ճշգրութեամբ և
բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է
համոզւել այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Մ. Միհրանեանց:





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 ռուբլի, կամ 30 ֆռանկ:
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Վելիամինևան փողոց, տուն № 8: Այլ քաղաքների
ից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.
Արտատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“ և կամ հեռուկալանձերին.

ԲԱՔՈՒ—պ.պ. Ֆրիդոն Մարգարևեան՝ Հ. Մեղիքեանի գրասենեակ:

ԲԱԼԱԽԱՆԻ.—պ. Մկրտիչ Եհրամճեան:

ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան և պ. Ալեքս. Խոջամբրեան:

ԵՐԵՒԱՆ—պ. Գեորգ Ղարաջեանց:

ԿԱՐՍ—պ. Աբել Ապրեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—պ. Զալալ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԻԻ—պ. Աբրահամ Բունիաթեան:

ՂԱԶԱՐ—պ. Ստեփ. Սողոմոնեան:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան:

ՄՈՍԿՒԱ—պ. Ալեքսանդր Ծատուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Բրիտ. Բաշինջաղեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալեքս. Յովսէփեան, Ռէշտ, անգլիական բանկում:

